

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ ԱՐՄԵՆԻ

**ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅԱՆ
ԼԵԶՎԱՃԱՆԱԶՈՂԱԿԱՆ ՄՈԴԵԼԱՎՈՐՈՒՄԸ**

Ժ.02.07 «Ռոմանագերմանական լեզուներ» մասնագիտությամբ
բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Գիտական խորհրդատու՝
բ.գ.դ., պրոֆեսոր **Ե.Լ. Երզնկյան**

ԵՐԵՎԱՆ 2017

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն	5
---------------------------	---

ԳԼՈՒԽ I. ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅԱՆ ԳՈՅԱԲԱՆԱԿԱՆ ՄՈԴԵԼԱՎՈՐՈՒՄԸ

1.1. Տնտեսական իրադարձությունը՝ որպես լեզվաճանաչողական մոդելավորման ենթակա միավոր.....	18
1.2. «Իրադարձություն» հասկացույթի սահմանումը.....	23
1.3. Տնտեսական իրադարձությունը՝ որպես աշխարհի տնտեսական պատկերի տարր.....	35
Ծանոթագրություններ.....	38

ԳԼՈՒԽ II. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴԻՍԿՈՒՐՍԸ՝ ՈՐՊԵՍ ՍԱՀՄԱՆԱԿԱՐԳԱՅԻՆ ԴԻՍԿՈՒՐՍԻ ՏԵՍԱԿ

2.1. Դիսկուրսի և տեքստի սահմանման չափանիշները.....	42
2.2. Տնտեսական դիսկուրսը՝ որպես սահմանակարգային դիսկուրսի առանձին տեսակ.....	48
2.3. Մեդիադիսկուրսի առանձնահատկությունները.....	60
2.4. Տնտեսական դիսկուրսի և մեդիադիսկուրսի հատումը՝ որպես հնարավոր այլընտրանքային աշխարհ.....	65
2.5.1. Տնտեսական մեդիադիսկուրսի առկայացումը «լրագրային հոդված» ձևաչափում.....	72
2.5.2. Տնտեսական մեդիադիսկուրսի մեկնաբանության մեթոդաբանություն	77
Ծանոթագրություններ.....	84

ԳԼՈՒԽ III. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅԱՆ ՄՏԱՊԱՏԿԵՐՈՒՄԸ

3.1. Ֆրեյմը՝ որպես մտավոր տեղեկույթի կառույց	92
3.2. Ֆրեյմ–սցենարը՝ որպես տնտեսական իրադարձության ճանաչողական կառուցվածքայնացման միջոց.....	97
3.3. Տնտեսական իրադարձության հասկացության ղաշտի ձևավորման գործընթացն իրադրային կադապարների կիրառմամբ	113
Ծանոթագրություններ.....	125

ԳԼՈՒԽ IV. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅԱՆ ՖՐԵՅՄ–ՍՑԵՆԱՐԻ ՍԼՈԹՆԵՐԻ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

4.1. Գործողություն կատարողը՝ որպես տնտեսական իրադարձության ֆրեյմ–սցենարի միջուկային սլոթ.....	133
4.2. Փոփոխությունը՝ որպես տնտեսական իրադարձության ֆրեյմ–սցենարի միջուկային սլոթ.....	138
4.3. Ժամանակը՝ որպես տնտեսական իրադարձության ֆրեյմ–սցենարի միջուկային սլոթ.....	142
4.4. Տարածական տեղորոշումը՝ որպես տնտեսական իրադարձության ֆրեյմ–սցենարի միջուկային սլոթ.....	152
4.5. Գործողությունն իր վրա կրողը (օբյեկտը)՝ որպես տնտեսական իրադարձության ֆրեյմ–սցենարի պայմանական սլոթ.....	159
4.6. Պատճառահետևանքային կապերը՝ որպես տնտեսական իրադարձության ֆրեյմ–սցենարի պայմանական սլոթ.....	164
4.7. Արժևորումը՝ որպես տնտեսական իրադարձության ֆրեյմ–սցենարի պայմանական սլոթ.....	173
4.8. Կանխատեսումը՝ որպես տնտեսական իրադարձության ֆրեյմ–սցենարի պայմանական սլոթ.....	189

4.9. Տնտեսական իրադարձության ֆրեյմ-սցենարի առկայացումը տնտեսական մեդիադիսկուրսում.....	196
Ծանոթագրություններ.....	203

ԳԼՈՒԽ V. ՀԱՄԱԻՐԱԴԱՐՁԱՅԻՆ ՓՈԽԱՆՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅԱՆ ԸՆԿԱԼՄԱՆ ՀԻՄՆԱՐԱՐ ՀՆԱՐ

5.1. Ճանաչողական փոխանունությունը՝ տարբեր տեսությունների դիտանկյունից.....	206
5.2. Համաիրադարձային գոյականները՝ որպես տնտեսական իրադարձության անվանման միջոց.....	220
5.3. Ճանաչողական-փոխանվանական կաղապարների տիպաբանությունը....	229
Ծանոթագրություններ.....	248
Եզրակացություն.....	255
Օգտագործված գրականության ցանկ.....	263
Բառարաններ և տեղեկատուներ.....	288
Աղբյուրների ցանկ.....	290

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Տնտեսական վերելքի և համաշխարհայնացման այս դարաշրջանում ժամանակակից հասարակական–տնտեսական ոլորտին առնչվող թեմատիկան դառնում է ավելի ու ավելի արդիական և հեռանկարային: Ակնհայտ է, որ մի շարք տնտեսական խնդիրների լուծումներ գերակայորեն կապված են դրանց պատշաճ լեզվականացման փաստի հետ: Լեզուն մարդակենտրոն է, ինչն արտահայտվում է այն փաստով, որ տնտեսական երևույթներն ուսումնասիրվում են նախևառաջ մարդու համար դրանց դերով, նրա կենսագործունեության մեջ՝ դրանց նշանակությամբ, անհատի զարգացման և կատարելագործման համար՝ դրանց գործառույթներով: Ակամայից ընկղմված լինելով տնտեսական աշխարհում կատարվող իրադարձությունների հորձանուտը՝ մարդը դառնում է հաշվարկման կետ այս կամ այն տնտեսական իրադարձության վերլուծության դեպքում, անմիջականորեն ներգրավվում այդ վերլուծության մեջ՝ որոշելով դրա հեռանկարները, հետևանքներն ու վերջնական նպատակները: Մարդակենտրոնությունը թափանցում է լեզվական բոլոր կառույցները, որոնց միջոցով արտահայտվում են մտածական գործունեության շատ հետևանքներ, և տեղեկություն է ստացվում գիտակցության կառուցվածքի մասին: Լեզվաբանական այս մոտեցման ուշադրության կիզակետում են մարդու գործունեության ընթացքում շրջակա աշխարհի ընկալմանն ու կարգայնացմանը, գիտելիքի կուտակմանն ու կիրառմանը վերաբերող բազմաթիվ խնդիրներ: Այս առումով, առաջանում է տնտեսական իրույթների, երևույթների և իրադարձությունների լեզվական արտահայտման խորաքնին վերլուծության, լսարանի վրա նրանց ազդեցության, ինչպես նաև մարդկանց մոտ վերջիններիս մտապատկերման առանձնահատկությունների ուսումնասիրության խիստ անհրաժեշտություն: Այլ կերպ ասած, տնտեսական իրադարձության ուսումնասիրությունը ենթադրում է շրջակա աշխարհի մեկնաբանումը մարդու մտքում և դրա վերարտադրումը լեզվում:

Սույն հետազոտության **թեմայի** ընտրությունը պայմանավորված է վերոնշյալ համատեքստով, և ուսումնասիրությունը նվիրված է իրական աշխարհի մի հատվածի՝ տնտեսական իրադարձության լեզվաճանաչողական մոդելավորմանը:

Տնտեսական իրադարձությունն աշխատանքում սահմանվում է որպես մի երևույթ, որն ընդգրկում է այն ամենը, ինչ կատարվում է համաշխարհային, ինչպես նաև առանձին վերցրած երկրների տնտեսություններում և ներառում է տնտեսական անկում և վերելք առաջացնող իրավիճակներ, որոնք հասարակությունն արժևորում է որպես տնտեսական աշխարհում էական, կարևոր փոփոխություններ:

Տնտեսական հարաբերությունները հասարակական ողջ գործունեության հիմքն են և առօրյա կյանքում շոշափում են յուրաքանչյուրիս շահերը: Համաշխարհային տնտեսության զարգացումը, արտաքին տնտեսական հարաբերությունների ձևավորումը, տնտեսական տեղեկույթի ներհոսքը, այս կամ այն հիմնախնդրի լուծման ճիշտ ընտրությունն ընդհանուր առմամբ ներգործում են ինչպես ողջ հասարակության, այնպես էլ ամեն մի պետության կայունության և առաջընթացի վրա:

Համաշխարհային տնտեսության մեջ կատարվող գործընթացները, ինչպես նաև յուրաքանչյուր երկրի տնտեսական փոփոխություններն ու կարևոր իրադարձությունները լուսաբանվում են զանգվածային լրատվության միջոցներում՝ մամուլում (լրագրեր, ամսագրեր, գրքեր), ռադիոյով, հեռուստատեսությամբ, համացանցում և այլն: Ժամանակակից ԶԼՄ-ները մարդու կեցության անբաժանելի մասն են, շրջակա աշխարհի իրադարձություններին հասու լինելու հիմնական ձևը: Իրադարձությունների էական հատկանիշների իմացությունն ու ըմբռնումը մարդու համար փորձ են և աշխարհում կողմնորոշվելու ունակություն: Դրանք մարդու բանականության վրա ազդեցության հզոր գործիքներ են: Այսպես՝ հենց պարբերականներն են իրազեկում աշխարհի տնտեսական լուրերի, նշանակալից երևույթների մասին և ձևավորում դրանց նկատմամբ արժեքային վերաբերմունք:

Զանգվածային տեղեկատվության միջոցների լեզուն առավել արագորեն է արձագանքում հասարակական գիտակցության բոլոր փոփոխություններին՝ արտացոլելով դրա վիճակն ու ներգործելով վերջինիս ձևավորման վրա: Լեզուն աշխարհահամաչափության հիմնական գործիքներից մեկն է, որը մատչելի է դարձնում տարբեր մակարդակների բարդության և վերացարկման հասկացույթներից կազմված գիտելիքների համակարգը և իրականացնում ընկալման, կարգայնացման և աշխարհի իմաստավորման գործընթացները:

Տնտեսական իրադարձությունների լուսաբանումը ՁԼՄ-ներում իրականացվում է *տնտեսական դիսկուրսի* (խոսույթի) միջոցով, որը սույն ատենախոսության մեջ սահմանվում է որպես տնտեսության և տնտեսագիտության ոլորտին առնչվող բանավոր կամ գրավոր խոսք, որն արտացոլում է տնտեսական աշխարհի իրողությունները և պատկերում դրանում տեղի ունեցող յուրաքանչյուր հաղորդակցում: Արդյունքում ի հայտ է գալիս մի յուրօրինակ՝ մեդիա և տնտեսական դիսկուրսների համաձուլվածք, մի առանձնահատուկ այլընտրանքային աշխարհ, որն ունի իր սեփական կանոնները, խնդիրներն ու նպատակները:

Տնտեսական ուղղվածությամբ տեքստը, լինելով իր ստեղծմանը նախորդող տնտեսական գործունեության լեզվական արդյունք, նախատեսված է տնտեսական գիտելիքների ամրագրման, պահպանման և հաղորդման համար: Դրա յուրահատկությունը բնորոշվում է տնտեսական որոշակի իրադարձության վերաբերյալ տեղեկատվական հազեցվածությամբ, խելամիտ դատողության և փաստարկման արդյունավետ հնարների և ձևերի առկայությամբ: Տնտեսական տեքստի մեկնաբանության հնարավորությունը որոշվում է ոչ միայն արտակա, այլև ներակա ձևով ներկայացված տեղեկությամբ, որը ձևավորում է տվյալ տեքստի քողարկված իմաստների որոշակի համակարգ:

Սույն ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ տնտեսական իրադարձությունը հարաշարժ երևույթ է, որն ընթանում է որոշակի հանգամանքների ներքո, որոշակի սցենարով, և հետևաբար՝ ընկալվում ֆրեյմ-սցենարի միջոցով (Minsky, 1974, Schank, Abelson, 1977): Վերջինս պարունակում է սլոթներ, որոնք իրենց էությամբ երկու տեսակի են՝ միջուկային և պայմանական/այլընտրանքային: Միջուկային մասի շնորհիվ հնարավոր է սցենարի ընկալում իրադրության մեկնաբանության գործընթացում, իսկ պայմանական մասն այլընտրանքային տեղեկություն կրողն է: Շրջակա աշխարհի հետ մարդու փոխազդեցության ժամանակ կատարվում է ֆրեյմ-սցենարի հղկում՝ ըստ որոշակի իրադրության, կախված անհատի՝ օբյեկտիվ իրականության մասին գիտելիքից:

Ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս նաև եզրակացնելու, որ տնտեսական իրադարձության համապարփակ ըմբռնման համար մեծ դեր ունի ճանաչողական փոխանունությունը՝ որպես իրականության ընկալման և

կարգայնացման որոշակի մեխանիզմ: Հայտնի է, որ մարդու յուրաքանչյուր գործունեություն կապված է տեղեկատվության ստացման և մշակման հետ: Շրջակա միջավայրի առարկաներն ու իրողությունները սկզբնապես մեկնաբանվում են դրանք ընկալող մարդու կողմից, ապա անմիջապես, որոշակի ձևով արձագանք ստանում և ամրագրվում նրա հիշողության մեջ: Առարկայի մասին տեղեկությունները, որոնք ստացվում են արտաքին աշխարհից, անցնում են գործընթացների երկար շղթայով, ապահովելով դրա հատկանիշների բազմակողմանի արտացոլում, յուրահատկությունների առանձնացում և կարգերի ներառում համապատասխան համակարգում: Այս առումով, ժամանակակից լեզվաբանության մեջ կարևորվում են այն ուսումնասիրությունները, որոնց նպատակը ճանաչողական գործընթացների իրականացման հնարների և մեխանիզմների վերհանումն է:

Աշխատանքում, որպես օբյեկտիվ իրականության հատվածների հասկացությամբ դաշտի ձևավորման հիմնարար հնար, հանդես է գալիս մեր մշակած համաիրադարձային փոխանունության ճանաչողական մեխանիզմը: Ճանաչողական մոտեցման տեսանկյունից, աշխարհի վերաբերյալ իրադարձային պատկերացումը ենթադրում է վերջինիս ուսումնասիրություն՝ որպես մի մեխանիզմի, որը հնարավորություն է ընձեռում վերաիմաստավորելու կարգայնացման նպատակով գործածվող համաիրադարձային լեզվամիավորները: Հետազոտությունը ցույց է տալիս, որ համաիրադարձային փոխանունությունն իբրև ճանաչողական կաղապար մասնակցում է տնտեսական իրադարձությունների ընկալմանը, իմաստային շարունակականության ձևավորմանը, որոնց արդյունքում համաիրադարձային բառերը, կանոնավոր կերպով առաջացող ճանաչողական փոխանվանական կաղապարների միջոցով, կարգայնացնում են լեզվական համակարգում չամրագրված իրադարձություն: Գոյություն ունեն կանոնավոր կերպով առաջացող ճանաչողական կաղապարների որոշման մի շարք օրինաչափություններ. կաղապարներ, որոնք այս կամ այն իրադարձությունը/իրադարձությունները կարգայնացնող համաիրադարձային լեզվամիավորների վերակարգայնացման և/կամ բազմակարգայնացման արդյունք են:

Հիմք ընդունելով վերոհիշյալ հայեցակետը՝ աշխատանքում **ուսումնասիրության առարկա** են դարձել «տնտեսական իրադարձություն» հասկացույթը և անգլերեն զանգվածային լրատվամիջոցներում վերջինիս լեզվական ու մտավոր պատկերման

հնարները:

Թեմայի **արդիականությունը** պայմանավորված է մի քանի հանգամանքներով:

Նախ՝ դա անդրադառնում է այն խնդիրներին, որոնք մի շարք գիտակարգերի ուսումնասիրման կիզակետում են և կապված են լեզվաճանաչողության, մտածողության գործընթացներում լեզվի դերի և աշխարհի տնտեսական պատկերի ձևավորման սկզբունքների հետ:

Երկրորդ՝ արդիականությունը պայմանավորված է նաև տնտեսական ուղղվածությամբ տեքստերի նկատմամբ օրեցօր աճող հետաքրքրությամբ, ընդհանուր առմամբ, տնտեսական իրադարձության լեզվականացմանը և մտապատկերմանը վերաբերող հատուկ հետազոտությունների սակավությամբ, տնտեսական՝ որպես սահմանակարգային (ինստիտուցիոնալ) դիսկուրսի հատուկ տեսակի ուսումնասիրության անհրաժեշտությամբ: Տնտեսական մեդիադիսկուրսի վերլուծությունը կապված է համաշխարհային հասարակական արդի գործընթացների, առանձին երկրների և, լայն առումով, աշխարհի գոյության ու զարգացման պատմության մեջ տնտեսական խնդիրների, տնտեսական նոր հայեցակարգերի լեզվարտահայտչական միջոցների ուսումնասիրության կարևորության հետ:

Երրորդ՝ հետազոտությունը կատարված է միասնացված՝ ճանաչողական-խոսության մոտեցման լույսի ներքո, ինչը ենթադրում է հասկացույթի բովանդակային կառուցվածքի, դրա էական հատկանիշների, մտապատկերման միջոցների բացահայտում, ինչպես նաև լեզվականացման բազմազան ձևերի և մեդիադիսկուրսում գործելու առանձնահատկությունների վերհանում:

Չորրորդ՝ թեմայի արդիականությունը հիմնավորվում է իրականության ընկալման ճանաչողական հիմունքների, մասնավորապես՝ համաիրադարձային փոխանունության՝ որպես օբյեկտիվ իրականության հատվածների կարգայնացման և հասկացության դաշտի ձևավորման հիմնարար հնարի համակողմանի վերլուծությամբ:

Աշխատանքի **նպատակն է** տնտեսական իրադարձության համապարփակ ուսումնասիրությամբ վեր հանել տվյալ երևույթի լեզվաճանաչողական հայեցակարգը,

ինչն իրականացնելու համար աշխատության մեջ առաջադրվել են հետևյալ գերակա **խնդիրները.**

- բացահայտել «իրադարձություն» հասկացույթի էությունը և որոշել դրա բնորոշ հատկանիշները,
- բնորոշել տնտեսական իրադարձությունը՝ որպես անհատի կողմից աշխարհի տնտեսական պատկերի ձևավորման ու համալրման համար անհրաժեշտ տարր,
- վերլուծել «տնտեսական դիսկուրս» հասկացության մասին գոյություն ունեցող մեկնաբանությունները և հիմնավորել դրա՝ որպես հաղորդակցական-ճանաչողական յուրօրինակ երևույթի սահմանման մեր ընտրությունը՝ տարանջատելով այն սահմանակարգային դիսկուրսի այլ տեսակներից,
- ներկայացնել ժամանակակից տնտեսական մեդիադիսկուրսի կառուցվածքն ու ստեղծման ռազմավարությունը, ինչը թույլ է տալիս համակողմանիորեն նկարագրել տնտեսական իրադարձությունը,
- ճանաչողական մակարդակում մոդելավորել տնտեսական իրադարձությունը՝ որպես գիտելիքի միավոր,
- կառուցվածքայնացնել տնտեսական իրադարձության ֆրեյմ-սցենարը և բացահայտել վերջինիս միջուկային և պայմանական սլոթները,
- մանրազնին ուսումնասիրել առանձին սլոթների ներկայացման և վերձանման առանձնահատկությունները,
- հետազոտել տնտեսական իրադարձության հասկացութային դաշտի ձևավորման գործընթացն իրադրային կադապարների կիրառմամբ,
- սահմանել տնտեսական իրադարձության հասկացութային դաշտի կառուցվածքայնացման համար անհրաժեշտ համաիրադարձային փոխանունության ճանաչողական մեխանիզմի սկզբունքները,
- մշակել համաիրադարձային լեզվամիավորների միջոցով կանոնավոր կերպով առաջացող ճանաչողական-փոխանվանական անցումների կադապարների տիպաբանություն:

Առաջադրված խնդիրների իրագործման համար կիրառվել են լեզվաբանական զննման և նկարագրական, վիճակագրական, հասկացութային և դիսկուրս

վերլուծության **մեթոդներ**, իսկ տնտեսական իրադարձության մտապատկերման կադապարների մշակման նպատակով՝ ճանաչողական մոդելավորման ֆրեյմային վերլուծության մեթոդը:

Հետազոտության իրականացման համար **մեթոդաբանական** առումով հիմնարար նշանակություն են ունեցել իրադարձությանը՝ որպես ճանաչողական միավորի նվիրված ուսումնասիրությունները (Ն. Արուսյունովա, Վ. Դեմյանկով, Դ. Դևիդսոն, Օ. Իրիսխանովա, Վ. Շաբես, Զ. Կիմ, Զ. Վենդլեր և այլք), իմաստաբանության ոլորտի աշխատությունները (Յու. Ապրեսյան, Ի. Առնոլդ, Վ. Գակ, Ե. Երզնկյան, Է. Մեդնիկովա, Վ. Յառոցևա, Ն. Շմելյով, Ա. Ուֆիմցևա և այլք), ճանաչողական լեզվաբանության նվաճումները (Ն. Արուսյունովա, Ն. Բոլդիրև, Ե. Կուբրյակովա, Մ. Մինսկի, Յու. Ստեպանով, Ռ. Շենկ, Ռ. Աբելսոն, Ռ. Զեկենդոֆ և այլք), դիսկուրսի տեսության ձեռքբերումները (Ն. Արուսյունովա, Ի. Գալպերին, Վ. Դեմյանկով, Թ. վան Դեյք, Տ. Դոբրոսկլոնսկայա, Ա. Զուդինով, Ե. Շեյգալ, Գ.Գասպարյան, Ա. Սիմոնյան, Շ. Պարոնյան և այլք), ինչպես նաև լեզվական և ճանաչողական փոխանունության ոլորտի ուսումնասիրությունները (Ա. Բարսելոնա, Վ. Կրոֆտ, Դ. Զիրերտս, Զ. Կովեչես, Զ. Լակոֆ, Զ. Ռադեն, Ֆ. Ռուի դը Մենդոսա, Ն. Բոլդիրև, Լ. Նովիկով, Ե. Պադուչևա, Ս. Գասպարյան և այլք):

Հետազոտության գիտական **նորույթն** այն է, որ այստեղ առաջին անգամ.

- կատարվում է տնտեսական իրադարձության՝ որպես տնտեսական մեդիադիսկուրսի միավորի համակողմանի վերլուծություն լեզվաճանաչողական առումով,
- մշակվում և ներկայացվում է տնտեսական իրադարձության ճանաչողական կադապար, որի նպատակն է լեզվի միջոցով ներթափանցել գիտելիքի տարբեր կադապարներ և նկարագրել դրանց և լեզվի միջև գոյություն ունեցող փոխկապակցությունը,
- սահմանելով տնտեսական իրադարձության ֆրեյմ-սցենարը՝ հանգամանորեն ուսումնասիրվում են ինչպես վերջինիս համար պարտադիր, այնպես էլ պայմանական սլոթների բնույթը,
- ճանաչողական-խոսութային մոտեցման շրջանակներում, տնտեսական մեդիադիսկուրսի նյութի հիման վրա ներկայացվում է ճանաչողական

փոխանունության առանձնահատուկ տարատեսակ՝ «համաիրադարձային փոխանունություն» անվանմամբ, որը բնորոշվում է որպես տնտեսական իրադարձության ընկալման համար անհրաժեշտ, կանոնավոր կերպով կադապարներ ստեղծող հիմնարար հնար,

- առաջարկվում է համաիրադարձային փոխանունության ճանաչողական մեխանիզմի շնորհիվ առաջացող ճանաչողական-փոխանվանական կանոնավոր կադապարների համապարփակ տիպաբանություն,
- տնտեսական իրադարձության մտապատկերման գործընթացը մեկնաբանվում է համաիրադարձային փոխանունության համատեքստում՝ այդպիսով նոր կարգավիճակ շնորհելով համաիրադարձային լեզվամիավորներին՝ որպես օբյեկտիվ իրականության որոշակի հատվածների ընկալման գերակա միջոցներ:

Հետազոտության հիմնական **նյութը** քաղված է անգլալեզու հեղինակավոր լրագրերի, ամսագրերի, շաբաթաթերթերի և առցանց կայքերի տնտեսական թեմաներով հրապարակումներից (ընդհանուր թվով՝ տնտեսական իրադարձություն լուսաբանող 5880 հոդված), որոնցում արձարծվում են հանրային-տնտեսական այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են համաշխարհային տնտեսության զարգացման ժամանակակից միտումները, համահարթեցման կարևորագույն ուղղությունները, նման պայմաններում երկրների հասարակական, տնտեսական և քաղաքական առաջխաղացումները, միջազգային տնտեսական հարաբերություններին տարբեր երկրների մասնակցությունը, արտադրողական ուժերի և տնտեսական հարաբերությունների արդի կառուցվածքը, օրինաչափությունները և այլն:

Աշխատանքում **պաշտպանության են ներկայացվում հետևյալ դրույթները.**

1. Տնտեսական իրադարձությունը մտապատկերմանը ենթակա օբյեկտիվ իրականության մի հատված է, կազմորոշված ճանաչողական կադապար, և անհատների գիտակցության մեջ ամրագրված է որպես կայուն գիտելիքի միավոր: Իրազեկվելով տնտեսական աշխարհի իրադարձություններին՝ անհատն անմիջականորեն փորձում է կերտել համապատասխան երևույթների մտավոր կադապարները, ներգրավվում է դրանք վերլուծելու գործընթացի մեջ, այսինքն որոշում է դրանց հնարավոր հեռանկարները, հետևանքներն ու վերջնական նպատակները,

արդյունքում՝ կառուցում կամ ամբողջացնում է աշխարհի տնտեսական իր պատկերը: Այսպիսով՝ տնտեսական իրադարձությունը հանդես է գալիս որպես անհատի կողմից աշխարհի տնտեսական պատկերի համալրման համար անհրաժեշտ և անքակտելի տարր:

2. Տնտեսական իրադարձությունը հարաշարժ երևույթ է, որի լեզվաճանաչողական մոդելավորումը իրագործվում է ֆրեյմ-սցենարի միջոցով: Սցենարը սահմանվում է որպես կանխորոշված, կարծրատիպային գործողությունների հաջորդականություն, որն ընդհանրացված ու ամփոփ ձևով արտացոլում է իրադարձության կառուցվածքը: Մարդը, փորձելով ճանաչել նոր իրադրությունը կամ նորովի դիտարկել արդեն հայտնի իրադրությունը, իր հիշողությունից ֆրեյմ է ընտրում, որպեսզի առանձին բաղադրիչների փոփոխությամբ դա հարմարեցնի երևույթների կամ գործընթացների ավելի լայն դասի ընկալմանը:

3. Տնտեսական իրադարձության ֆրեյմ-սցենարը դիտարկվում է որպես որոշակի տարրերի հավաքածու, որի միջոցով տեղի է ունենում իրադարձության ընկալում: Սցենարը, նկարագրելով որոշակի իրավիճակ, թույլ է տալիս կանխատեսել պարտադիր տարրեր և առաջացնել սպասումներ ոչ պարտադիր տարրերի վերաբերյալ, անգամ եթե դրանք բացահայտ կերպով արտահայտված չեն: Համապատասխանաբար, տնտեսական իրադարձության ֆրեյմ-սցենարը պարունակում է միջուկային և պայմանական սլոթներ: Միջուկային սլոթներն անհրաժեշտ են տնտեսական իրադարձության հիմնական ընկալման համար, սակայն համապարփակ ընկալումը պահանջում է որոշ (ամեն անգամ տարբեր) պայմանական սլոթների ակտիվացում:

4. Առավել ծավալուն իրադարձությունները կարող են ներկայացվել մակրոսցենարներով, որոնք, իրենց հերթին, պարունակում են մեկից ավելի միկրոսցենարներ: Դրանցից առաջինն առանցքային է տվյալ իրադարձության ընկալման համար, մինչդեռ մնացյալը լրացնում է իրադարձությունը տարաբնույթ տեղեկատվությամբ:

5. Տնտեսական իրադարձության հասկացությային դաշտի համակողմանի կառուցման նպատակով, բացի ֆրեյմ-սցենարում միջուկային և պայմանական սլոթների ներգրավվածությունից, պահանջվում է նաև անհատի դրվագային

(էպիզոդիկ) հիշողության մեջ պարփակված, անհատական գիտելիքի և փորձի հիման վրա գործող իրադրային կադապարների կիրառում: Իրադրային կադապարը ներառում է ինչպես որոշակի իրադրության մասին, այնպես էլ նախորդ փորձից կուտակված գիտելիք: Այս իրադրությանը վերաբերող յուրաքանչյուր նոր տեղեկատվություն կարող է օգտագործվել տվյալ իրադրային կադապարների ընդլայնման, համալրման, վերափոխման համար:

6. Տնտեսական մեդիադիսկուրսում տնտեսական իրադարձության հասկացությանը դաշտի ձևավորման հիմնարար հնարներից է համաիրադարձային փոխանունությունը: Այն դիտարկվում է որպես բարդ մտավոր գործընթաց, որի ժամանակ գործի են դրվում անհատի ճանաչողական գործընթացները որևէ երևույթների միջոցով այլ էության/էությունների հասկացությանը դաշտը ձևավորելու և իմաստավորելու համար: Այս գործընթացում համաիրադարձային լեզվամիավորները, ծառայելով որպես «հղման կետ» և հասկացույթ-աղբյուր, ճանաչողական-փոխանվանական կադապարների միջոցով մտավոր ներթափանցում են իրականացնում հասկացույթ-նպատակ: Փոխանվանական անցումները զուգորդման հիման վրա առաջացած ճանաչողական գործընթացների արդյունք են և աշխարհընկալման միջոց:

7. Համաիրադարձային փոխանվանական անցման գործընթացում կարող են ակտիվանալ ինչպես մեկ, այնպես էլ միաժամանակ մեկից ավելի հասկացության տիրույթներ: Համաիրադարձային լեզվամիավորների ֆրեյմների բովանդակությունը փոփոխական է և, շնորհիվ ճանաչողական-փոխանվանական անցումների, ամեն անգամ հստակեցվում է: Դիսկուրսում այս լեզվամիավորների իմաստային բովանդակությունը կազմորոշվում է նշալի ճանաչողական-հասկացության ֆրեյմի (ՆՃՀՖ) սահմաններում, որտեղ կատարվում է համապատասխան տեղեկույթի վերակարգայնացում կամ բազմակարգայնացում: Վերակարգայնացման գործընթացում հասկացույթ-աղբյուրը մտավոր ներթափանցում է իրականացնում մեկ հասկացույթ-նպատակ, մինչդեռ բազմակարգայնացման գործընթացը ենթադրում է մեկից ավելի հասկացույթ-նպատակների ակտիվացում:

8. Տնտեսական մեդիադիսկուրսում համաիրադարձային գոյականների միջոցով անվանվող նշալ տնտեսական իրադարձության բովանդակության

վերծանման նպատակով անհատը կիրառում է մի շարք վերլուծական եղանակներ, այդ թվում՝ դեդուկտիվ և ինդուկտիվ մտածողության մեթոդները. այսկերպ համալրվում է տվյալ լեզվամիավորների ֆրեյմների չլրացված սլոթների պարունակությունը և ստեղծվում տվյալ իրադարձության վերջնական մտավոր կաղապարը:

9. Համաիրադարձային փոխանունության ճանաչողական մեխանիզմը, որպես օբյեկտիվ իրականության որոշակի հատվածի մտավոր կառուցվածքայնացման գործընթաց, իրականացնում է որոշակի գործառույթներ՝ ճանաչողական, դիսկուրսի ձևավորման, լեզվական միջոցների տնտեսման, ընդհանրացնող, բացատրական և գործաբանական:

Աշխատությունն ունի **տեսական արժեք**. դրա հիմնական դրույթներն ու ուսումնասիրության արդյունքները հեռանկարային են լեզվաբանական այն ոլորտների համար, որոնց ուշադրության կենտրոնում դիսկուրսի տարբեր տեսակների դիտարկումն է: Հետազոտությունը կատարված է որոշակի տեսակի դիսկուրսի մեծածավալ նյութի հիման վրա, ինչը հնարավորություն է ընձեռում ավելի խորությամբ ուսումնասիրելու ինչպես ընդհանրապես դիսկուրսի, այնպես էլ դրա առանձին տեսակների ձևավորման գործընթացները: Հետազոտության արդյունքները թույլ են տալիս նաև ընդլայնել տնտեսական դիսկուրսի, տնտեսական իրադարձության լեզվականացման ձևերի մասին գոյություն ունեցող պատկերացումները և նպաստում են լեզվի տեսության հետագա մշակմանը: Այն որոշակի ավանդ է ներդնում ինչպես ճանաչողական լեզվաբանության, մարդու կողմից գիտելիքների յուրացման գործընթացների, մասնավորապես՝ նրա կենսագործունեության համար կարևոր՝ «տնտեսական իրադարձություն» հասկացույթի կարգայնացման հիմքերի ձևավորման հիմնախնդիրների հետագա դիտարկման գործում, այնպես էլ ճանաչողական լեզվաբանության այն ուղղության զարգացման մեջ, որի խնդիրն է իրականության ընկալման և կարգայնացման ճանաչողական մեխանիզմների բացահայտումն ու նկարագրությունը: Հետագա զարգացում է ստանում փոխանունության՝ որպես իրականության ընկալման ճանաչողական մեխանիզմի մեկնաբանությունը, բացահայտվում և նկարագրվում են իրադարձության ներկայացման ճանաչողական-փոխանվանական կաղապարները, համաիրադարձային փոխանունության հիմնական գործառույթները, ինչը կարող է նպաստել ճանաչողական փոխանունության

տեսության կատարելագործմանը:

Ատենախոսության **գործնական նշանակությունն** այն է, որ դրա հիմնական դրույթները կարող են օգտագործվել ընդհանուր և ճանաչողական լեզվաբանության դասընթացներում, իսկ արդյունքները՝ կիրառվել մամուլի լեզվի առանձնահատկությունների ուսումնասիրությանը նվիրված ձեռնարկներ կազմելիս և տնտեսական թեմատիկայով տեքստերի վերլուծության գործնական աշխատանքներ կատարելիս: Տնտեսական տեքստի վրա իրականացվող աշխատանքը զարգացնում է լեզվամտածողությունը, լեզվազգացողությունը, ձևավորում ձևի և բովանդակության միասնությամբ խորաքնին վերլուծություն կատարելու հմտություններ:

Հետազոտության նյութի փորձաքննությունը: Ատենախոսությունում արձարծվող հիմնախնդիրներն արտացոլվել են միջազգային և հանրապետական գիտաժողովներում (Թելավի, 2011 թ., Մոսկվա, 2013 թ., Մոսկվա, 2015 թ., Մոսկվա, 2016 թ., Նովոսիբիրսկ, 2016 թ., Սմոլենսկ, 2016 թ., Երևան, 2006 թ., Վանաձոր, 2011 թ., Երևան, 2013 թ., Երևան, 2014 թ.): Ատենախոսությունում արձարծվող հիմնախնդիրներն արտացոլվել են հրապարակված հոդվածներում, ինչպես նաև քննարկվել տեսական սեմինարներում, ԵՊՀ անգլիական բանասիրության, անգլերեն լեզվի թիվ 2 և ՀՊՏՀ լեզուների ամբիոնների նիստերում:

Ատենախոսության կառուցվածքը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, հինգ գլխից, որոնք ըստ անհրաժեշտության բաժանվում են ենթագլուխների, եզրակացությունից և գրականության ցանկից:

Ներածության մեջ ներկայացվել են հետազոտության թեման, նորույթն ու արդիականությունը, հիմնահարցերը, նպատակներն ու խնդիրները: Հիմնավորվել է ուսումնասիրության մեթոդաբանական հիմքը, տեսական ու գործնական արժեքը:

Առաջին գլխում՝ «Իրադարձության գոյաբանական մոդելավորումը» վերտառությամբ, որոշարկվել է «իրադարձություն» հասկացույթի գոյաբանական կարգավիճակը և վերջինիս իրականացման համար անհրաժեշտ հիմնական տարրերի առանձնահատկությունները: Սահմանվել է տնտեսական իրադարձությունը՝ որպես անհատի կողմից աշխարհի տնտեսական պատկերի համալրման անքակտելի տարր:

Երկրորդ գլխում, որը կոչվում է «Տնտեսական դիսկուրսը՝ որպես սահմանակարգային դիսկուրսի տեսակ», առանձին ուսումնասիրության է ենթարկվել

տնտեսական դիսկուրսի և մեդիադիսկուրսի հատման հնարավորությունը: Արդյունքում ձևավորվել է մի խոսութային այլընտրանքային աշխարհ՝ տնտեսական մեդիադիսկուրս, որն առանձնահատուկ է և ունի իր սեփական կանոնները: Որոշարկվել են տնտեսական թեմատիկայով տեքստի՝ որպես տնտեսական մեդիադիսկուրսի միավորի կառուցվածքային առանձնահատկությունները, ինչպես նաև քննարկվել է դիսկուրս վերլուծության կարևորությունը տնտեսական դիսկուրսի ուսումնասիրության գործընթացում:

Երրորդ գլխում՝ «Տնտեսական իրադարձության մտապատկերումը», տնտեսական իրադարձությունը ուսումնասիրվում է «իրադարձություն» հասկացույթի գոյաբանական հենքի վրա և դիտարկվում որպես հարաշարժ իրողություն, որն ընթանում է ըստ որոշակի սցենարի: Այս գլխում ֆրեյմ–սցենարը համարելով առանցքային գործիք տնտեսական իրադարձության ճանաչողական մոդելավորման համար, բացահայտվել են տնտեսական իրադարձության ֆրեյմ–սցենարի սլոթները: Տնտեսական իրադարձության ընկալման գործընթացը վերլուծվել է նաև իրադրային կադապարների տեսության կիրառմամբ:

Չորրորդ՝ «Տնտեսական իրադարձության ֆրեյմ–սցենարի սլոթների տիպաբանությունը» գլխում խորքային վերլուծության են ենթարկվել առանձին սլոթներ՝ դրանց լեզվականացման և կարգայնացման միջոցները վերհանելու նպատակով:

Հինգերորդ գլխում՝ «Համաիրադարձային փոխանունությունը՝ որպես տնտեսական իրադարձության ընկալման հիմնարար հնար», շեշտադրվել է այն միտքը, որ համաիրադարձային փոխանունության ճանաչողական մեխանիզմը գերակա է տնտեսական իրադարձության շարունակական ընկալման համար: Այդ նպատակով ուսումնասիրվել են կանոնավոր հիմքերով առաջացող ճանաչողական–փոխանվանական կադապարներ, որոնց շնորհիվ համաիրադարձային լեզվամիավորներն ունակ են իրագործելու տվյալ գործառույթը և առաջարկվել է վերջիններիս տիպաբանությունը: Վերլուծվել են նաև համաիրադարձային փոխանունության հիմնական գործառույթները տնտեսական մեդիադիսկուրսում:

Եզրակացության մեջ ամփոփվել են ուսումնասիրության արդյունքները:

ԳԼՈՒԽ I

ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅԱՆ ԳՈՅԱԲԱՆԱԿԱՆ ՄՈԴԵԼԱՎՈՐՈՒՄԸ

1.1. Տնտեսական իրադարձությունը՝ որպես լեզվաճանաչողական մոդելավորման ենթակա միավոր

Տնտեսական իրադարձությունների առավել արդյունավետ ու վերլուծական մեկնաբանման պայմաններից մեկը տնտեսական աշխարհի մտավոր կաղապարի ստեղծումն է, ինչը թույլ է տալիս կողմնորոշվել հասարակության մեջ և լինել հաջողակ ինչպես անհատական, այնպես էլ սոցիալական զարգացման առումներով: Այդ նպատակին հասնելու համար գործադրվում են ճանաչողական այնպիսի մեխանիզմներ, որոնց օգնությամբ հնարավոր է մասնատել ամբողջական պատկերը և ստեղծել որոշակի առարկաների աստիճանակարգություն՝ ըստ անհատի համար դրանց ունեցած նշանակության:

Մարդու իմացական կարողությունը կենտրոնական տեղ է զբաղեցնում ճանաչողաբանության մեջ՝ հաճախ մեկնաբանվելով և՛ որպես գիտելիքի ձեռքբերման ճանաչողական գործընթաց, և՛ որպես այդ գործընթացի արդյունք՝ այսինքն՝ հենց գիտելիք [1]: Ճանաչողությունն անձի մտավոր ունակությունների դրսևորումն է՝ ներառելով ինքնաճանաչումն ու աշխարհի արժևորումը, վերջինիս աշխարհապատկերի՝ այն ամենի ստեղծումը, ինչը նրա արդյունավետ և իմաստավորված վարքագծի ելակետն է: Մարդու ողջ կենսագործունեությունը որոշվում է նրանով, թե ինչպես է նրա ուղեղում արտացոլվում աշխարհը, գիտելիքի ինչ կաղապարներ են ձևավորվում և պահպանվում նրա գիտակցության մեջ [2]:

Ճանաչողական բնույթի ուսումնասիրությունները ցույց են տվել, որ յուրաքանչյուր գործունեության հիմքում նմանատիպ՝ այս կամ այն կերպ արտահայտված մեխանիզմներն են: Այս առումով, գիտության մեջ մշակվել են «կաղապար», «մոդելավորում» հասկացությունները՝ հիմնված աշխարհի մասին տեղեկատվության ընկալման, պահպանման և փոխանցման ճանաչողական կառույցների ուսումնասիրման վրա [3]:

Ճանաչողաբանության մեջ «կաղապար» հասկացությունը, որպես երևույթների հասկացությանին դաշտի ձևավորման ճանաչողական ամենաարդյունավետ մեթոդներից մեկը, արտացոլվում է մարդու ամենօրյա գործունեության մեջ՝ որպես նրա փորձի մի հատված [4]: Այս մոտեցումը հիմնված է այն ենթադրության վրա, որ մարդը չի ընկալում աշխարհն անմիջականորեն, և մեր աշխարհընկալումն կաղապարային բնույթ ունի. այն ձևավորվում է մարդկանց օբյեկտիվ իրականության մասին կաղապարված պատկերացումների հիման վրա: Յա. Նեույմինի ձևակերպմամբ՝ մեր բոլոր պատկերացումները բնության, աշխարհի, հասարակության, տեխնիկայի, ինչպես նաև գիտելիքները մեր, մեր մտածողության և դրա օրինաչափությունների մասին կաղապարային բնույթի են, և այդ կաղապարները միշտ մոտավոր կերպով են համընկնում նախատիպի հետ (Неймин, 1984: 45-49): Այսպիսով՝ ճանաչողական լեզվաբանության մեջ մոդելավորման մասին խոսելիս հարկ է նկատի ունենալ լեզվի յուրաքանչյուր կրողի՝ իրադրության կաղապարի, աշխարհի մի հատվածի մասին առավելապես լեզվի միջոցով մտապատկերումն ինչպես անհատական, այնպես էլ հանրային գիտակցության մեջ [5]:

Տնտեսականը, ինչպես դիսկուրսի ամեն մի տեսակ, ձևավորվում է լեզվամիավորների շնորհիվ՝ որպես հատուկ մտավոր կաղապար և, իբրև համակարգ, կիրառվում տնտեսական թեմատիկա պարունակող բոլոր տեքստերում: Տնտեսական աշխարհընկալումը կամ աշխարհի տնտեսական պատկերը վերջինիս մասին պատկերացումների համակարգն է՝ հիմնված տնտեսական ոլորտի փաստերի և իրադարձությունների արդյունավետ ու վերլուծական մեկնաբանման վրա:

Տնտեսական բովանդակությամբ յուրաքանչյուր տեքստ, որը նկարագրում է ինչ-որ իրադարձություն, կարող է համարվել կաղապար: Մեր վերլուծության արդյունքում պարզվել է, որ տեքստի ընկալման հիմնական աջակցող տարրերից մեկն իրադարձության կաղապարն է, որը ներգործում է գիտակցություն ներթափանցող տեղեկատվության ընտրության և կառուցվածքի վրա: Մտավոր կաղապարներն ու դրանց միջև հարաբերությունները ձևավորվում են լեզվամիավորներով, որպես կառուցողական սկիզբ, հնարավորություն ընձեռելով ստեղծելու տարբեր բարդության կաղապարներ:

Հասկացութավորումը (концептуализация) անքակտելիորեն կապված է լեզվի

հետ [6]: Մարդը շրջակա աշխարհից մշտապես տեղեկատվություն է ստանում, որի բացատրությունը, պատկերացումը, հասկացութավորումը և կարգայնացումը տեղի են ունենում [եզվի միջոցով [7]: Լեզուն, որպես այդպիսին, ըստ էության, անքակտելի է մարդկային գործունեությունից և ներկայացնում է դրա բացարձակապես բոլոր, այդ թվում՝ ճանաչողական ձևերը, հետևաբար՝ ճանաչողական կադապարների լայն տիրույթը, որին մինչ օրս անդրադարձել են համապատասխան գիտությունների հետազոտողները, կարող է առնչվել ոչ միայն ճանաչողական գործունեության ձևերին, այլև դրա զարգացման փուլերին:

Իրականության լեզվական արտացոլման հիմնախնդիրն առնչվում է զանազան գիտակարգերի ու գիտական ուղղությունների՝ աստիճանաբար փոխակերպվելով [եզվի և իրականության փոխազդեցության, լեզվական կադապարների ստեղծման հիմնահարցի: Այդ իսկ պատճառով էլ ճանաչողական լեզվաբանությունը ուսումնասիրում է իմաստաբանությունը ճանաչողական կադապարավորման տեսակետից: Այսինքն՝ տեղեկատվության տարբեր տեսակների ներկայացումը բազմազան լեզվամիավորների միջոցով ինքնըստինքյան դառնում է ճանաչողական լեզվաբանության հիմքը:

Լեզվական կառույցները յուրատիպ բանաձևեր են, որոնց միջոցով հնարավոր է հաղորդել հսկայական քանակությամբ տեղեկատվություն: Ինչ վերաբերում է ընկալման գործընթացին, ապա հարկ է նշել, որ վերջինս, լինելով փնտրտուքների արդյունք, հանդես է գալիս որպես անձի հիշողության մեջ պահպանված փորձի հատվածների ընտրություն, դրանց միասնացում ու հարմարեցում տվյալ փուլում ստացվող տեղեկատվությանը [8]: Ինչպես իրավացիորեն նշում է Ե. Կուբրյակովան, ճանաչողական լեզվաբանության նպատակը ոչ միայն յուրաքանչյուր լեզվական նշանին համապատասխանող համանման ճանաչողական կադապարի ստեղծումն է՝ այդպիսով բացահայտելով դրա իմաստը կամ բովանդակությունը որոշակի ճանաչողական կառույցվի միջոցով, այլև տվյալ բովանդակությամբ «փաթեթի» ընտրության պատճառների հիմնավորումը (Кубрякова, 2004: 16):

Այս ամենով հանդերձ, ճանաչողական լեզվաբանությունը մյուս համանման գիտություններից տարբերվում է իր ուսումնասիրության նյութով՝ հետազոտելով մարդու գիտակցությունը [եզվի հիմքի վրա (այլ ճանաչողական գիտություններ

ուսումնասիրում են գիտակցությունը՝ սեփական նյութի վրա հենվելով), ինչպես նաև ուսումնասիրության մեթոդներով՝ ճանաչողական գործընթացների վերլուծությամբ բացահայտելով մարդու գիտակցության մեջ մտապատկերների ստեղծումը: Ընդ որում, լեզվաբանության վերլուծական մեթոդների կիրառումը զուգորդվում է ճանաչողական ուսումնասիրության արդյունքների հետ (Попова, Стернин, 2010: 9):

Այսպիսով՝ կարող ենք վստահաբար շեշտել, որ օբյեկտիվ իրականության որոշակի հատվածների լեզվաճանաչողական վերլուծությունը, ինչը մեր ուսումնասիրության պարագայում վերաբերում է տնտեսական իրադարձությանը, հնարավորություն է տալիս բավական պարզ ու արդյունավետ ճանապարհով վեր հանելու վերջինիս բնորոշ գծերը և կադապարելու տվյալ հայեցակարգը: Դիսկուրսում որևէ երևույթի լեզվաճանաչողական վերլուծությամբ, անդրադարձ կատարելով առավել խորքային կառույցներին, հնարավոր է բացահայտել կապը մի կողմից տեքստային, մյուս կողմից՝ գիտելիքի միավորների պահպանման ու ներկայացման կառույցների միջև: Խորքային կառույցները արտացոլում են առավելապես դիսկուրսի լեզվաճանաչողական շերտը, քանի որ անմիջականորեն կապված են անհատի գիտակցության, այն գիտելիքների և պատկերացումների հետ, որոնցում ներկայացված են տվյալ երևույթը նկարագրող դիսկուրսի առանձնահատկությունները:

Այսպիսով՝ դիսկուրսում որևէ իրողության հասկացության դաշտի ձևավորումն անքակտելիորեն կապված է այնպիսի գործոնների հետ, ինչպիսիք են հասցեատիրոջ գիտելիքն ու փորձը և վերջիններիս կառուցվածքի վերլուծությունը: Դիսկուրսում արտացոլված իրադարձության հայտնի և անհայտ տարրերի միջև կապերի վերհանման եղանակների որոնումը, դրանց հավաքագրումն ու կիրարկումը որակվում են որպես ընկալման գործընթացներ: Ընդ որում, իրադարձության մոդելավորմամբ հնարավոր է պարզել անհատի ճանաչողական ներուժը նոր տեղեկատվության՝ արդեն հայտնի տեղեկույթի հետ միասնացման, համատեղման և համակարգման, այսինքն՝ իրադարձության կառուցվածքայնացման առումով: Ուստի, կարող ենք փաստել, որ յուրաքանչյուր իրադարձության մտապատկերման գործընթաց մեծապես պայմանավորված է դրա հասցեատիրոջ՝ տարբեր իրադարձային հասկացության դաշտեր մեկնաբանելու և կառուցվածքայնացնելու ունակությամբ:

Հայտնվելով ցանկացած իրադարձության բովում՝ մարդու մեջ խթանվում են մտածողության գործընթացները, որոնց արդյունքում առաջանում են մի շարք տպավորություններ, որոնք կարող են հիմնված լինել այնպիսի հարաբերությունների վրա, ինչպիսիք են երևույթների մոտ կամ համանման լինելը [9]: Ըստ այդմ էլ, ինչպես հայտնի է, ստեղծվում են փոխանունության և փոխաբերության կաղապարները՝ առանց որոնց անհատը չի կարող կառուցել պահանջվող մտապատկերը: Այս համատեքստում հետաքրքրական է Ռ. Յակոբսոնի բնորոշումը (Якобсон, 1990): Ըստ նրա՝ եթե փոխաբերությունը թույլ է տալիս անհատին ընտրել որոշակի նշանակությամբ բառեր և դրանք փոխարինել իմաստով մոտ այլ լեզվամիավորներով, այսինքն՝ ապահովել որևէ երևույթի լեզվականացման միջոցների բազմազանություն, ապա փոխանունությունը հնարավորություն է ընձեռում բառերից կազմելու հաջորդական շղթաներ և դրանք շարահյուսորեն ճիշտ դասավորելու՝ այսպիսով երաշխավորելով մտքերի կապակցվածություն, արտացոլվող երևույթի շարունակական ընկալում և, իհարկե, բովանդակային տարրերի միասնացմամբ՝ մտապատկերի ամբողջացում:

Այսպիսով՝ փոխանունության, ինչպես նաև փոխաբերության հասկացույթները նպաստում են ոչ միայն մեր խոսքի, այլև մտածելակերպի կերտմանը՝ համապատասխան տեղեկատվության ներկայացման և կառուցվածքայնացման համատեքստում: Ճանաչողական փոխանունությունը հնարավորություն է տալիս տվյալ իրադրության շրջանակներում առկայացնելու մտքերը՝ հասցեատիրոջ ուշադրությունը սևեռելով հասցեագրողի տեսանկյունից գլխավոր հանգամանքի կամ իրողության վրա [10]: Ինչպես նշում են Ջ.Լակոֆն ու Մ. Ջոնսոնը, փոխանունությունը որոշ չափով ծառայում է այն նույն նպատակներին, ինչ փոխաբերությունը և օգտագործվում է նույնկերպ, սակայն, միաժամանակ, թույլ է տալիս ավելի ճշգրիտ կերպով ուշադրությունը սևեռել նշյալ երևույթի որոշակի հատկությունների վրա [11]: Փոխանունությունը, ինչպես և փոխաբերությունը, ոչ միայն բանաստեղծական կամ հոետորական հնար է, հետևաբար՝ սոսկ լեզվի ուսումնասիրության ոլորտին չէ, որ վերաբերում է: Փոխանվանական հասկացույթները մեր առօրյա մտածողության, խոսքի և վարքի անբաժանելի մասն են: Ինչպես ճանաչողական փոխաբերական հասկացույթները, փոխանունությունն արմատավորված է մեր փորձում, և հենց

կանոնավոր բնույթի փոխանունություններն են ներկայացնում ամբողջական համակարգեր (Lakoff, Johnson, 1980: 36-40):

Այսպիսով՝ կարող ենք ասել, որ մեր հայեցակարգում, ներմուծելով «համաիրադարձային փոխանունություն» եզրույթը, մենք դիտարկում ենք ճանաչողական փոխանունությունը ոչ միայն որպես հոետորական հնար, որը խոսքը համեմում է արտահայտչականությամբ, այլ իբրև հիմնարար ճանաչողական մեխանիզմ, որի միջոցով ամբողջանում են մեր մտքերը, կազմվում է մեր կարծիքը, մտավոր կաղապարների ստեղծմամբ ձևավորվում է պատկերացում աշխարհի մասին ընդհանրապես և, առհասարակ, կառուցվում է խոսքը:

Այս հետազոտության մեջ փորձելու ենք իրականացնել տնտեսական իրադարձության լեզվաճանաչողական վերլուծություն՝ նպատակ ունենալով բացահայտելու և որոշելու այն ռազմավարությունները, մեխանիզմներն ու մեթոդները, որոնցով առաջնորդվում է անհատն այս երևույթի մտավոր կաղապարը ստեղծելու, կատարելագործելու, այլ կերպ ասած՝ տնտեսական աշխարհի պատկերն ամբողջացնելու նպատակով [12]:

1.2. «Իրադարձություն» հասկացույթի սահմանումը

«Իրադարձություն» հասկացույթին նվիրված ուսումնասիրություններում այն առավել հաճախ զուգորդվում է «փոփոխություն», «գործողություն», «գործընթաց» և «փաստ» հասկացությունների հետ, ինչն անհրաժեշտություն է առաջացնում սահմանազատելու և տարբերակելու դրանք և բացահայտելու դրանց միջև առկա փոխհարաբերությունները:

Մարդու գիտակցության մեջ փաստերը փոխկապված են իրադարձությունների, դեպքերի հետ: Ընդ որում, այս սերտ կապի մասին են վկայում բառարանների մեծ մասի սահմանումները: Համոզվելու համար բավական է համեմատել event (a thing that happens, esp. something important) և fact (an event or thing known to have happened or existed) լեզվամիավորների սահմանումները, որոնք հավաստում են իրադարձության ու փաստի նմանության մասին (OED): Հետևաբար՝ կարևոր է բացահայտել ոչ միայն այն,

թե ինչով են իրարից տարբերվում իրադարձություններն ու փաստերը, այլև այն, թե ինչն է նրանց միավորում կամ հնարավոր դարձնում այդպիսի փոխարինելիությունը: Իրադարձությունների և փաստերի տարբերությունները և նմանությունները քննարկելիս ի հայտ են գալիս տարբեր տեսակետներ: Այսպես՝ Դ. Դևիդսոնը, փորձելով սահմանազատել փաստերն ու իրադարձությունները, գրում է, որ «Կեսարի մահը» (the death of Caesar) որպես իրադարձություն, չի կարելի շփոթել «Կեսարի մահվան» (Caesar died) փաստի հետ (Davidson, 1969: 82): Հեղինակը կարծում է, որ փաստերն արտահայտվում են ամբողջական նախադասություններով, իսկ իրադարձությունները՝ տերմիններով (օրինակ՝ «the death of Caesar») [13]:

Որպես իրադարձության օրինակ բերելով «Columbus discovered America in 1492» նախադասությունը, Ն. Վիլսոնը փորձում է համեմատել իրադարձության ու փաստի գոյաբանական կառուցվածքները: Իրադարձությունը պարունակում է հետևյալ տարրերը՝ *Columbus, America*, բացահայտման գործողությունը և ժամանակը՝ 1492 թ.: Որքան էլ զարմանալի է «Columbus discovered America in 1492» փաստը ևս կազմված է այդ նույն բաղադրիչներից: Այս պնդումը թույլ է տալիս հեղինակին եզրակացնել, որ իրադարձությունները չեն տարբերվում փաստերից (Wilson, 1974: 317):

Այդուհանդերձ, գիտնականների մի պատկառելի խումբ էլ այն համոզմունքն է արտահայտում, որ փաստերը որակապես տարբերվում են իրադարձություններից: Այսպես՝ Զ. Վենդլերը, ուսումնասիրելով անգլերենում իրադարձություն ցուցանող լեզվամիավորների հնարավոր համադրությունը, այս հակադրությունը ձևակերպում է զուտ լեզվաբանական տեսանկյունից և նշում, որ ոչ թե փաստերը, այլ իրադարձություններն ու գործընթացներն են պատահում, սկսվում, շարունակվում և վերջանում: Դրանք կարող են լինել հանկարծակի, աստիճանական, բուռն կամ երկարաձգվող: Գիտնականը պնդում է, որ աշխարհում փաստեր գոյություն չունեն, դրանք «աշխարհի մասին են» (Vendler, 1967: 141, 144–146): Ն. Արուտյունովան գրում է, որ փաստերը մարդկանց գիտակցության արտացոլանքն են և առկա չեն իրական գոյաբանական աշխարհում: Իրադարձությունները տեղի են ունենում իրական աշխարհում, իսկ փաստերը դրանց արդյունքն են մարդու գիտակցության մեջ: Իրադարձությունը պատկանում է իրականության տիրույթին, և փաստը չի կարող

փոխակերպվել իրադարձության, քանի որ կարելի է ականատես լինել իրադարձության, բայց ոչ փաստի: Իրադարձություններն ու փաստերն ունեն արժևորման տարբեր հիմքեր. «Այն հաճույքը, որ կարող է տալ ընթրիքը, ունի այլ բնույթ, քան այն բավարարվածությունը, որ տալիս է այն փաստը, որ ընթրիքը կայացել է» (Арутюнова, 1980: 353, 1998: 504–505):

Իրադարձությունը, ի տարբերություն փաստի, գոյություն ունի ժամանակի և տարածության մեջ: Մարդը տարանջատում է իրականության հատվածը, կարգայնացնում է այն, կառուցվածքայնացնում է դատողության կաղապարով, վավերացնում է և արձանագրում է փաստը: Այլ կերպ ասած՝ փաստը, որպես այդպիսին, գոյություն չունի իրականության մեջ. դա մարդու կողմից իրականության մասին տեղեկությունների իմաստավորումն է կամ վերամշակումը: Սա են նշում նաև մի շարք գիտնականներ, փաստը սահմանելով որպես իմացականորեն ձևակերպված իրադարձություն (интеллектуально сформулированное событие) (Лангер, 2000: 239), որը պատկանում է գիտելիքի աշխարհին, այսինքն՝ տրամաբանության ոլորտին՝ ի տարբերություն իրական աշխարհի տարածաժամանակային ոլորտին պատկանող իրադարձությանը (Рассел, 1957: 7): Ըստ Լ. Վիտգենշտեյնի՝ այն ամենը, ինչ տեղի է ունենում աշխարհում, սահմանվում է փաստերի համակցությամբ (Витгенштейн, 1958):

Վերն ասվածից հետևում է, որ իրադարձություններն ու փաստերը պետք է տարբերակել, քանի որ առաջինները գոյություն ունեն իրական կյանքում, իսկ երկրորդներն արտացոլված են մարդու աշխարհընկալման կաղապարի մեջ: Սա թույլ է տալիս փաստը, որպես տրամաբանական կարգ, հակադրել հիմնարար գոյաբանական կարգ հանդիսացող իրադարձությանը (Арутюнова, 1980: 355, Davidson, 1970: 232): Այս պնդմանը համակարծիք է նաև Կ. Պերլերգլը, որը նույնպես դիտարկելով փաստը, որպես լեզվում նյութական մարմնավորում ստացող տրամաբանական վերացարկում, նշում է. «Փաստերը, նախևառաջ, սահմանվում են իմաստային առումով. դրանք ավելի շատ «մտավոր», քան «իրական» տարրեր են պարունակում» (Переверзев, 1998: 51):

Իրադարձության գոյաբանական կառուցվածքն ուսումնասիրելիս հարկ է նաև քննարկել վերջինիս համահարաբերակցությունը գործընթացների ու գործողությունների հետ:

Հատկանշական է, որ գրեթե բոլոր ուսումնասիրություններում իրադարձության անքակտելի մաս է փոփոխության գաղափարը, որը սահմանվում է որպես «առարկայի, երևույթի մի վիճակից մյուսին անցման գործընթաց, առարկայի, երևույթի նոր հատկանիշների, բնույթների, գործառույթների, որակների ձեռքբերում ներքին պատճառների և շրջակա միջավայրի այլ առարկաների, երևույթների ներգործության արդյունքում» (Кондаков, 1975: 191): Իրենց բնույթից կախված՝ տարբերակվում են որակական, դիրքային և գոյացական փոփոխություններ, այսինքն փոփոխություններ, որոնք առնչվում են առարկայի ի հայտ գալուն կամ գոյության դադարեցմանը (Quinton, 1979: 207):

Փոփոխությունը համարելով իրադարձության հիմնական բնորոշում՝ Թ. վան Դեյքը դա մեկնաբանում է որպես որոշակի ժամանակահատվածում իրավիճակների տարբերություն: Նման վիճակները կոչվում են իրադարձության սկզբնական և վերջնական փուլեր (van Dijk, 1980): Պ. Մենցելը նշում է, որ իրադարձությունը տեղի է ունենում որոշակի ժամանակահատվածում, և նրա բնութագրիչն է համարվում փոփոխությունն իրական աշխարհում (Menzel, 1975: 55): Նույն կերպ է բացահայտում իրադարձության էությունը նաև Ս. Դիկը. տարբերակելով իրադարձությունն իրավիճակից՝ նա առաջինը բնորոշում է որպես հարաշարժ իրողություն, որն ինչ-որ ձևով ենթադրում է փոփոխություն՝ անցում մի իրավիճակից մյուսին (Dik, 1978: 32): Իրադարձություններն այս տեսանկյունից են դիտարկվում նաև հոգեբանության մեջ և սահմանվում որպես անհատի կյանքի տարբեր բնագավառներում տեղի ունեցող փոփոխություններ (Карпинский, 2002: 87):

Փորձելով սահմանազատել «իրադարձություն» և «գործընթաց» հասկացությունները և ընդունելով, որ վերջինս հեշտ չէ բնորոշել՝ Թ. վան Դեյքը ցույց է տալիս դրանց տարբերությունը հետևյալ կերպ. raining-ը գործընթացի տիպիկ օրինակ է, այն տեղի է ունենում որոշակի ժամանակահատվածում, ընդ որում, ուշադրության կիզակետում առավելապես փոփոխության բնույթն է, այլ ոչ թե սկզբնական և վերջնական իրավիճակների միջև եղած տարբերությունը: Սակայն, երբ ամրագրվում են սկզբնական և վերջնական իրավիճակները, նաև փոփոխության բնույթը, օրինակ՝ «it started raining» կամ «it stopped raining», որտեղ raining-ը ցույց է տալիս փոփոխության բնույթը, իսկ started vs stopped-ը համապատասխանորեն՝ սկզբնական

և վերջնական իրավիճակները որոշակի ժամանակահատվածում, արդեն պետք է խոսել ոչ թե գործընթացի, այլ իրադարձության մասին: Այսպիսով՝ որպես հիմք ընդունելով «գործընթաց» հասկացությունը, Թ. վան Դեյքը իրադարձությունը բնորոշում է իբրև դիսկրետ գործընթաց (վերջինիս մի մասը), որում տարբերակվում են սկզբնական և վերջնական իրավիճակները և գրանցվում է նրանց միջև եղած փոփոխության բնույթը (van Dijk, 1980):

Քննարկելով գործողություն կատարողի և գործողությունն իր վրա կրողի առկայության փաստը որպես տարբերակիչ հատկանիշ՝ Պ. Մենցելը գրում է, որ գործընթացը տևական երևույթ է, իսկ նրա բնութագրիչը գործողությունն իր վրա կրողն է: Մինչդեռ գործողությունը կատարվում է միտումնավոր՝ գործողություն կատարողի կողմից և նրա բնութագրիչն էլ համարվում է գործողություն կատարողը (Menzel, 1975: 55): Այս մոտեցումը առկա է նաև Թ. վան Դեյքի մոտ, որը «գործողություն» հասկացությունը սահմանում է «իրադարձության» միջոցով, նշելով, որ գործողությունն իրադարձություն է, որ իրականացվում է մարդու միջոցով (van Dijk, 1980):

Նմանապես, հիմք ընդունելով գործողություն կատարողի առկայության կամ բացակայության վարկածը, Ի. Յակուշևան առաջարկում է իրադարձությունների սահմանման երկու տարբերակ: Առաջին դեպքում իրադարձությունը տեղի է ունենում տարածության և ժամանակի մեջ և կապված է այնպիսի գործողությունների հետ, որոնց արդյունքում սուբյեկտի կամքով և նախաձեռնությամբ կատարվում է առարկայի կամ իրադրության փոփոխություն: Երկրորդ դեպքում իրադարձությունը տեղի է ունենում տարածության և ժամանակի մեջ, առանց սուբյեկտի նախաձեռնության. այսինքն՝ դա մի գործընթաց է, որի արդյունքը ելակետայինից տարբերվող իրադրությունն է կամ առարկայի վիճակը (Якушева, 1984) :

Դիտարկելով գործընթացների ու իրադարձությունների փոխհարաբերությունները՝ Տ. Բուլգինան դրանք բնորոշում է որպես ժամանակի մեջ տեղայնացված երևույթներ, որոնք ներկայացված են որպես որոշակի ժամանակահատվածում իրականում տեղի ունեցող (կամ անցյալում տեղի ունեցած), ինչպես նաև որոշակի ժամանակահատվածի վերաբերող իրադրություններ ու իրավիճակներ: Լեզվաբանն առանձնացնում է հատկապես տևողության հատկանիշը, որը թույլ է տալիս տարանջատել դինամիկ՝

հարաշարժ երևույթներն ըստ տևականների և ոչ տևականների, այսինքն՝ ըստ գործընթացների ու իրադարձությունների (Булыгина, 1982: 18–19): Այնուամենայնիվ, այս հատկանիշը նույնպես ոչ միշտ է ծառայում որպես դրանց սահմանազատման հստակ չափորոշիչ: Այսպես՝ իրադարձության լեզվաճանաչողական ուսումնասիրությունները շեշտադրում են վերջինիս շարժունակության գաղափարը՝ սահմանելով այն որպես կառուցքայնացված գիտելիքների միավոր աշխարհապատկերի դինամիկ հատվածի վերաբերյալ (Резникова, 2006: 3):

Առավել մանրամասնորեն անդրադառնալով գործընթաց–գործողություն հակադրությանը՝ ռուս լեզվաբան Օ. Սելիվյորստովան առաջարկում է սահմանազատել տվյալ հասկացությունները՝ ելնելով միայն գործողություն կատարողի առկայության կամ բացակայության փաստից: Գործողություններն իրականացնում են գործողություն կատարողները, իսկ գործընթացներն անազգակ են: Այս դեպքում տևողության հատկանիշի տարբերությունները հաշվի չեն առնվում, այսինքն՝ և՛ գործողությունները, և՛ գործընթացները կարող են լինել թե՛ երկարատև, թե՛ կարճատև (Селиверстова, 1982: 116):

Փորձելով տարանջատել «գործողություն» և «իրադարձություն» հասկացությունները՝ Ն. Սամոյլենկոն նշում է, որ իմաստային մակարդակում իրադարձությունը միապատկան է, ընդգրկուն, սահմանային, ունի արդյունք և մեկ ուղղություն, մինչդեռ գործընթացները կրկնվող են, աստիճանական, հարաշարժ, տևական և ունեն բազմաթիվ ուղղություններ (Самойленко, 1991: 9):

Այսպիսով՝ կարելի է եզրակացնել, որ փոփոխության գոյաբանական հատկանիշը կապված է ոչ միայն իրադարձությունների, այլև գործընթացների և գործողությունների հետ, քանի որ վերջիններս ևս առաջացնում են առարկայի կամ իրադրության՝ ելակետայինից տարբերվող դրություն:

Ամփոփելով «գործողություն», «գործընթաց» և «իրադարձություն» հասկացությունների փոխհարաբերակցության քննարկումը՝ հարկ է նշել, որ գիտնականները հիմնականում անդրադառնում են իրադարձությունների, գործողությունների և գործընթացների օբյեկտիվ նմանությանը, քան հստակ տարբերակիչ հատկանիշներին: Ուստի նպատակահարմար է ընդունելի համարել այն իրողությունը,

որ «իրադարձություն» հասկացության գոյաբանական սահմանումը անհնար է տալ առանց վերոնշյալ տարրերի, քանի որ վերջիններս կարող են կազմել իրադարձության գոյաբանական բովանդակությունը: Կարելի է ասել, որ «գործողություն» և «գործընթաց» տարրերը պայմանավորում են փոփոխության հատկանիշի ակտիվացումը, որի առկայությունն ինքնին պարտադիր է իրադարձության համար:

Իրադարձությանը նվիրված աշխատություններում փորձ է կատարվում սահմանազատելու նաև «իրադրություն» և «իրադարձություն» հասկացությունները: Այսպես, Թ. վան Դեյքի ճանաչողական կադապարների տեսության համաձայն, իրադրությունն «աշխարհի մի հատված է» (some fragment of the world)՝ կազմված գործողություններից և իրադարձություններից (van Dijk, 1987): Օրինակ՝ ծննդյան օրվան նվիրված երեկոյթն իրադրություն է, որի խորապատկերում տեղի են ունենում տարբեր գործողություններ և իրադարձություններ. նվերների հանձնում, զրույց հյուրերի հետ և այլն: Իրադարձությունը տարբերվում է իրադրությունից ժամանակային սահմանափակմամբ: Երբ խոսում ենք իրադրության մասին, կարծես մշտապես գտնվում ենք դրա «ներքո», ներկա պահին: Իրադարձության դեպքում կարևորն այն է, որ դա սկսվում և ավարտվում է որոշակի ժամանակահատվածում և ավարտից հետո հնարավոր է վերլուծել այն «դրսից/կողքից» (van Дейк, 1989):

«Իրադրություն» եզրը սեռանիշ է իրադարձության նկատմամբ և թույլ է տալիս ներգրավել երևույթների ավելի լայն շրջանակ (Николаева, 1980, Арутюнова, 1988, Булыгина, Шмелев, 1997): Այս տեսանկյունն առկա է նաև հոգեբանությանը նվիրված աշխատություններում, որտեղ իրադրությունը սահմանվում է որպես իրադարձությունների համակարգ, մի ամբողջություն, որի տարրերի միջև գոյություն ունի որոշակի կապ (Ломов, 1984, Филиппов, Ковалев, 1986): Կ. Պերևերզևը գրում է, որ «իրադրություն» եզրը ներառում է մի քանի մասնավոր կարգեր («հնարավոր աշխարհ», «իրադրություն» (նեղ իմաստով՝ որպես հնարավոր աշխարհի մի մաս), «իրադարձություն», «փաստ»), որոնք ստեղծվել են իրական և մարդու մտավոր աշխարհի հատման կետում (Переверзев, 1998: 51): Միաժամանակ, իրադրության մեջ առկա տարբեր դրդապատճառներ, պայմաններ, պարագաներ, որոնք պատկանում են արտաքին աշխարհին և գործում են մարդուց անկախ, որոշարկում են վերջինիս

գործողությունները և դրանց տարածաժամանակային սահմանները (Филиппов, Ковалев, 1986: 14):

«Իրադրություն» հասկացությունն ավելի ընդգրկուն է, քան «իրադարձությունը»: Տնտեսական իրադրությունը, օրինակ, ներառում է մի շարք այնպիսի գործոններ, ինչպիսիք են մարդիկ, երկիրը, նույնիսկ երկրները, դրանց հետ կապված սոցիալ-տնտեսական վիճակները, ապրանքները, ներմուծումները, արտահանումները և այլն: Այս մեկ իրադրությունը կարող է պարփակել վերոնշյալ գործոններին առնչվող տարբեր իրադարձություններ և ավելին: Այս առումով, ավելի բնութագրական է «մենաշնորհ» (մոնոպոլիա) հասկացությունը, որը դիտարկվում է որպես մի *իրադրություն* շուկայում, որտեղ որոշակի գործառնությամբ զբաղվելու համար (օրինակ՝ որոշակի ապրանքի միակ մատակարարող կամ արտադրող լինելը) բացառիկ իրավունք է տրված եզակի ֆիզիկական անձին կամ կազմակերպությանը: Մենաշնորհը չի կարող դիտարկվել որպես իրադարձություն, քանի որ դա հանգամանքների հանրագումար է, ավելի շուտ՝ տվյալ իրավիճակին նախորդող իրադարձության կամ իրադարձությունների արդյունք: Այս պարագայում, մենաշնորհային իրավիճակը կարող է բազմաթիվ նոր իրադարձությունների հիմք և պատճառ դառնալ, այսինքն՝ խթանել փոփոխության առաջացումը, սակայն այս միջավայրը չի կարող համարվել իրադարձություն. այն մշտական և հաստատուն միջավայր է, գործերի դրություն, այսինքն՝ իրադրություն: Նույնը կարելի է ասել նաև լճացման (stagnation) իրադրության վերաբերյալ, որը ոչ թե կատարվող կամ կատարված իրադարձություն է, այլ մի իրավիճակ, դրություն, որին բնորոշ են տնտեսության բազմաթիվ բացասական հատկանիշներ:

Պետք է ընդունել, որ իրադարձությունների, գործընթացների և գործողությունների տարանջատման չափորոշիչները չեն տալիս իրադարձության այնպիսի բնորոշում, որը հնարավորություն կընձեռեր բացահայտելու դրա կառուցվածքը, ինչպես նաև սահմանազատելու դա գործողություններից ու գործընթացներից: Սահմանազատման հնարավոր միջոց, թերևս, կարող է լինել ծավալի չափանիշը: Իրադարձության շրջանակները, մեր կարծիքով, ավելի լայն են, քանի որ ընդգրկում են գործընթացին ու գործողությանը բնորոշ բոլոր հատկանիշները՝ գործողություն կատարող, գործողությունն իր վրա կրող, տեղի ունեցող փոփոխություն, ժամանա-

կատարածական տեղորոշման տարրեր: Իրադարձությունը պարզ փոփոխություն չէ, ինչը հատուկ է գործընթացին կամ գործողությանը, այլ հանրության կողմից դիտարկվող՝ որպես կարևոր, անսովոր, որոշակի ժամանակահատվածի համար սահմանված նորմերի խախտում հանդիսացող երևույթ: Այս առումով, տեղին է նշել որոշ գիտնականների կարծիքներ և դիտողություններ, որոնք հաստատում են իրադարձության նկատմամբ այսպիսի մոտեցման օրինաչափությունը:

Այսպես, օրինակ, Ռ. Մարտինը կարծում է, որ իրադարձությունը ենթադրում է դրանում ներգրավված առարկաների հատկությունների նշանակալից կամ անսովոր փոփոխություններ (Martin, 1969: 71): «Իրադարձությունը, սովորաբար, այն է, ինչը մեզ զարմացնում է» (Quinton, 1979: 207):

Իրադարձությունների և դրանց անվանումների նկատմամբ նույնպիսի մոտեցում ցուցաբերում է Տ. Բուլիգինան՝ նշելով, որ հաճախականության ու հանկարծակիության տարրերը լիովին համատեղելի են իրադարձության իմաստի հետ (Булыгина, 1982: 18–19):

Հետաքրքրական են նաև Ի. Կիմի դատողությունները. պարզ օրինակով նա ցույց է տալիս «իրադարձություն» հասկացության «եսակենտրոնությունը՝ էզոցենտրիզմը»: «Հրդեհը խորդանոցում՝ իրականում փոփոխություն է, սակայն հազիվ թե իրադարձություն է ինձ համար, եթե ես գտնվում եմ այդտեղից 50 մղոն դեպի արևելք: Սակայն եթե ես մոտ եմ այդ խորդանոցին, այն ինձ համար արդեն իսկական իրադարձություն է», – գրում է նա (Kim, 1973: 231):

Իրադարձության գոյաբանության նկատմամբ առավել ցայտուն է Ֆ. Դրեցկեի մոտեցումը: Նա ուղղակիորեն նշում է. «Իրադարձություն անվանում են այն, ինչը տեղի է ունենում ու ինչը աչքի է զարնում և ինչ-որ պատճառով ուշադրության արժանանում: Մենք հակված ենք կռիվը կամ թագադրությունը իրադարձություն համարել, սակայն ոչ ձեռքի շարժումը, որ մեկնվել է՝ աղ վերցնելու» (Dretske, 1967: 481–482):

Իրադարձության նշանակալիության փաստը կարևորվում է նաև հոգեբանության ոլորտի ուսումնասիրություններում՝ ձևակերպվելով որպես ճակատագրականության չափանիշ (судьбоносность), այսինքն՝ իրադարձության «ունակություն»՝ ազդելու անհատի կյանքի ուղու վրա: Տարբերակվում են ներքին և արտաքին իրադարձություններ: Արտաքինները, «մուտք գործելով» անհատի

ներաշխարհ, վերածվում են ներքինների՝ տվյալտանք, անհանգստություն, որոնք էլ դրդում են նրան որոշակի շրջադարձային գործողություններ կատարել՝ այդպիսով փոխակերպվելով արտաքինների. «Մարդկանց կյանքի ընթացքում գոյություն ունեն «անձնական իրադարձություններ», բեկումնային պահեր, երբ այս կամ այն որոշումից է կախված անհատի հետագա ուղին» (Рубинштейн, 1989: 248):

Գիտնականների տարբեր մոտեցումներն իրադարձությունների, գործընթացների, գործողությունների և փաստերի սահմանազատման հարցում թույլ են տալիս որոշարկել իրադարձության կառուցվածքի առավել էական տարրերը, որոնք են գործողություն կատարողը, փոփոխությունը, այսինքն՝ արդյունքը, տեղը, ինչպես նաև ժամանակը: Հարկ է նշել, որ վերոնշյալ բոլոր տարրերը պարտադիր են իրադարձությունն ընկալելու համար:

Ժամանակակից ուսումնասիրություններում գիտնականներն առանձնացնում են իրադարձության մի քանի տեսակներ.

1. Իրադարձությունն ինքնին կամ նշյալ իրադարձությունը (референтное событие), որի նմանակն է տվյալ նշյալը: Նշյալ իրադարձությունը համարվում է իրադարձություն–գաղափարների (события–идеи) նախատիպը:
2. Իրադարձություն–գաղափարներ, որոնց մասին խոսում են իբրև իրականում կատարվող կամ հորինված, որոնք, գոյություն ունենալով ժամանակի և տարածության մեջ, հատվում են, ամբողջովին կամ մասամբ համընկնում են, հակասում են, ինչպես օրինակ՝ պատերազմի, արհավիրքների պատճառների տարբերակներ մշակելիս:
3. Տեքստային իրադարձություններ, որոնք կարող են հանդես գալ կազմակերպված իրադարձությունների հարթ ընթացքի տեսքով կամ, հակառակը, լինել հակասական տարրերով լի՝ հարկադրելով ընտրել նշյալ իրադարձությունների և իրադարձություն–գաղափարների այս կամ այն վարկածային մեկնաբանություններ):

Այսպիսով՝ Վ. Դեմյանկովը խոսում է իրադարձության անհամասեռության մասին՝ պնդելով, որ դրա բաղադրիչներն են նշյալ իրադարձությունը, իրադարձություն–գաղափարը և տեքստային իրադարձությունը. ընդ որում, նշյալ իրադարձությունը գոյություն ունի իրական ժամանակում և տարածության մեջ, իրադարձություն–

գաղափարները մոդելավորում են վիրտուալ աշխարհը և առաջարկում դա՛ որպես իրական, իսկ տեքստային իրադարձությունը լրագրողի մատուցած պատկերն է, որի դեպքում օբյեկտիվ տվյալները հայտնվում են սուբյեկտիվի հետ մեկտեղ: (Демьянков, 2004):

Վերը նշված իրադարձություններից յուրաքանչյուրն ունի տարբերակիչ բնորոշումներ: Նշյալ իրադարձության հիմնական հատկանիշներն են.

- Դինամիկ/հարաշարժ բնույթ. իրադարձությունը մշտական շարժման մեջ է՝ կախված շրջակա աշխարհի փոփոխական լինելու փաստից:
- Իրադարձության հիմքում են գործողությունները, դրանց փոփոխությունները, գործընթացները և այլն: Այնուամենայնիվ, իրադարձությունը, որպես սոցիալական գործողություն, չունի տևական բնույթ, այլ բնորոշվում է ավարտունությամբ (Арутюнова, 1998): Լինելով որևէ գործողության, գործընթացի արդյունք՝ նշյալ իրադարձությունը վերաբերում է անցյալին, որի պատճառով էլ հիմնականում թվագրվում է:

Ինչ վերաբերում է տարածություն չափորոշչին, ապա հարկ է նշել, որ ամեն մի իրադարձություն, այդ թվում նաև՝ պատկերացրածը, տեղի է ունենում ինչ-որ տեղ: Դ.Դևիդսոնի բնորոշմամբ՝ նույնիսկ մտքում կատարվող իրադարձությունը տեղի է ունենում որոշակի ժամանակ և որոշակի վայրում (remembered, solved, decided), որտեղ գտնվում է գործողություն կատարող անձը (Davidson, 1970: 229):

- Վերահսկողության ամբողջական կամ մասնակի բացակայություն. գործողություն կատարողի առկայության դեպքում, որի կամքով իրադարձությունը վերահսկվում է, կարելի է խոսել մասնակի վերահսկողության մասին, մինչդեռ վերջինիս բացակայության դեպքում իրադարձությունն անվերահսկելի է: Որոշ դեպքերում մարդը կարող է լինել իրադարձության պատճառ՝ այդուհանդերձ չապահովելով դրա նկատմամբ ամբողջական վերահսկողություն:
- Ամբողջականություն/ավարտունություն. ի տարբերություն գործընթացների, որոնք զարգացում են ապրում, իրադարձություններն ավարտուն են:

- Սցենար. Վերջինիս առկայությունն իրադարձությունների բնորոշ գիծ է համարվում, քանի որ դրանք ընթանում են որոշակի հանգամանքների ներքո՝ ըստ որոշակի սցենարի:
- Արդյունք. յուրաքանչյուր իրադարձություն ունի վերջնական արդյունք:
- Հավաստիության աստիճան. այս հատկանիշը կախված է տեղեկատվության աղբյուրի վստահելիության աստիճանից: Գոյություն ունի վստահելիության բարձր աստիճան (եթե մարդն անձամբ իրադարձության ականատեսն է), միջին աստիճան (եթե մարդն անձամբ իրադարձության ականատեսը չէ, բայց իրազեկվել է իր համար վստահելի աղբյուրից) և ցածր աստիճան (եթե մարդն անձամբ իրադարձության ականատեսը չէ, բայց իրազեկվել է իր համար ոչ այնքան վստահելի աղբյուրից):
- Տարածաժամանակային տեղորոշում, որի դեպքում հնարավոր է իրադարձության սահմանների (սկիզբ, վերջ) կամ առանձին փուլերի ցուցանշում:
- Պատճառականություն/ինքնաբերականություն. իրադարձությունը կարող է ունենալ արտահայտված կամ չարտահայտված պատճառ: Ավելին, իրադարձությունը կարող է ունենալ մի քանի պատճառ, որոնցից յուրաքանչյուրն անհրաժեշտ պայման է դրա իրականացման համար (Демьянков, 2004):

Կարևորագույն տարբերությունն իրադարձություն–գաղափարի, տեքստային իրադարձության և նշյալ իրադարձության միջև այն է, որ վերջինս, ի տարբերություն նախորդների, օբյեկտիվ իրականության մեջ ունի իր նշյալը:

Այսպիսով՝ ամփոփելով նշենք, որ իրադարձությունը բարդ կառուցվածքային համալիր է, որի գոյության նախապայման են գործընթացները կամ գործողությունները:

Վերջիններս իրադարձության հիմքում առկա փոփոխության տարրերն են, որոնք իրականացվում են գործողություն կատարողի կողմից: Փոփոխության հատկանիշը շատ կարևոր է այն առումով, որ յուրաքանչյուր իրադարձության ավարտ ենթադրում է անցում նոր վիճակի, որը որակապես միանգամայն տարբերվում է ելակետայինից: Տարածաժամանակային տեղորոշումը ևս պարտադիր տարր է իրադարձության

կայացման գործընթացում: Բացի դրանից, իրադարձության համար շեշտադրվում է նշանակալիության տարրը, քանի որ յուրաքանչյուր եղելություն, որպես կանոն, իր հետևանքն ու ազդեցությունն ունի անհատի, հանրության աշխարհընկալման կադապարի վրա, և այս առումով էլ մարդու կողմից տարբեր ընկալումների արդյունքում վերածվում է փաստի:

Աշխատանքի այս մասում, որոշարկելով իրադարձության գոյաբանական կարգավիճակը, հաջորդիվ փորձելու ենք սահմանել և բնորոշել տնտեսական իրադարձությունը՝ որպես աշխարհի տնտեսական պատկերի մի տարր:

1.3. Տնտեսական իրադարձությունը՝ որպես աշխարհի տնտեսական պատկերի միավոր

Հայտնի է, որ աշխարհի կադապարի կամ աշխարհի պատկերի հասկացությունը հիմնված է մարդու կողմից աշխարհի մասին պատկերացումների ուսումնասիրության վրա: Այսինքն՝ դա մարդու գործունեության արդյունք է և առաջանում է աշխարհի հետ վերջինիս փոխազդեցության գործընթացում (Маслова, 2008: 69, 71): Եթե աշխարհը մարդու և միջավայրի փոխազդեցությունն է, ապա աշխարհի պատկերը՝ «մարդու և միջավայրի մասին տեղեկույթի մշակման արդյունք» (Цивьян, 1990: 5):

Քանի որ աշխարհի պատկերի առաջացումը սերտորեն կապված է լեզվի հետ, այն հաճախ անվանում են լեզվական պատկեր: Այնուամենայնիվ, աշխարհի պատկերն «ավելի բարդ երևույթ է, քան աշխարհի լեզվական պատկերը, որն աշխարհի պատկերի մի մասն է՝ կապված լեզվի հետ և արտահայտված լեզվական միջոցներով (Кубрякова, 1988: 142):

Աշխարհի պատկերն օժտված է ազգամշակութային նշույթավորմամբ, քանի որ ամեն մի քաղաքակրթությանը, հասարակական համակարգին բնորոշ է դրա առանձնահատուկ ընկալումը (Гуревич, 1972: 17):

Աշխարհի պատկերի գոյացման վրա ազդում են մի շարք գործոններ՝ լեզու, մտածողություն, ավանդույթներ, դաստիարակություն, կրթություն, սոցիալական այլ դրսևորումներ: Մարդը կյանքի ընթացքում շարունակաբար փոխում է իր պատկերացումներն աշխարհի մասին, այսինքն՝ վերջինիս պատկերը փոփոխական

բնույթ է կրում: Իրոք, իրադարձությունների ընկալման գործընթացում գործի է դրվում մարդու աշխարհաճանաչման բարդ համակարգը, թե ինչպես է նա «տեսնում» այս կամ այն երևույթը, ինչ դիրքորոշում է ձեռք բերում դրա նկատմամբ: «Այս տարբերակման էությունն այն է, որ անհատի տեսակետը կարծես թե տեղաշարժային անցում է կատարում, և նա կարող է ընկալել միևնույն երևույթը տարբեր դիտակետերից՝ ըստ տարբեր դիրքորոշումների» (Ерзинкян, 2013: 183): Հետևաբար՝ որոշ իրադարձությունների նկատմամբ մարդիկ կարող են ցուցաբերել անտարբեր վերաբերմունք, քանի որ դրանք որևէ ազդեցություն չեն կարող ունենալ իրենց կենսակերպի, կյանքի այլ բնագավառների վրա, մինչդեռ այլ դեպքերում իրադարձություններն ուղղակի հետք են թողնում հասարակության կամ առանձին անհատների կյանքում, և հետևաբար՝ վերջիններս, ըստ աշխարհի մասին իրենց պատկերացումների, յուրովի են ընկալում, կարևորում կամ արժևորում դրանք:

Տնտեսական աշխարհի իրադարձությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանց վերջնարդյունքը հիմնականում հանգեցնում է կա՛մ տնտեսական անկման, կա՛մ վերելքի: Հիմնվելով այս փաստի վրա՝ սույն աշխատության մեջ փորձել ենք ձևակերպել տնտեսական իրադարձության մեր սահմանումը: Այսպես՝ *տնտեսական իրադարձություն* կարող է համարվել այն ամենը, ինչ կատարվում է համաաշխարհային, ինչպես նաև առանձին վերցրած երկրների տնտեսություններում և ներառում է տնտեսական անկում և վերելք առաջացնող իրավիճակներ, օրինակ՝ նոր ապրանքների թողարկում, ընկերությունների համագործակցության սկիզբ, միաձուլում, կլանում, փլուզում, արժեթղթերի արժեքի կտրուկ աճ կամ անկում և նմանատիպ այլ իրողություններ, որոնք հասարակությունն արժևորում է որպես տնտեսական աշխարհի էական, կարևոր փոփոխություններ:

Իրազեկվելով տնտեսական աշխարհի իրադարձություններին՝ անհատն անմիջականորեն փորձում է կերտել համապատասխան երևույթների մտավոր կաղապարները, ներգրավվում է դրանք վերլուծելու գործընթացի մեջ, այսինքն որոշում է դրանց հնարավոր հեռանկարները, հետևանքներն ու վերջնական նպատակները, արդյունքում՝ կառուցում կամ համալրում է աշխարհի տնտեսական իր պատկերը [14]:

Աշխարհի տնտեսական պատկերը մարդու կենսագործունեության զանազան ոլորտների միասնացման հիմքն է և ներառում է տնտեսական գիտելիքների ողջ

կանոնակարգված համակարգը՝ ձևավորված ինչպես հասարակության, այնպես էլ անհատի գիտակցության մեջ (Попова, 2002: 69–77): Այն բնութագրվում է ինտեգրվածությամբ, ինչը բնորոշվում է որպես բոլոր տեսակի գիտելիքների միասնության հնարավորություն և այդ հնարավորության իրագործում երեք մակարդակում՝ անհատական, հասարակական և գիտական, որոնց ներքո, նախևառաջ, պետք է հասկանալ տարբեր տեսակի բարդ տեղեկատվության՝ լեզվամիավորներով ներկայացումը որոշակի հաղորդակցական համատեքստում: Միասնացնելով լեզվական և արտալեզվական, եզրութաբանական և ոչ եզրութաբանական, նեղ մասնագիտական և ընդհանուր գիտական տեղեկատվությունը՝ աշխարհի տնտեսական պատկերը դառնում է ինտեգրված (Нечаева, 2015: 22):

Այսպիսով՝ աշխարհի տնտեսական պատկերը, որպես իրական աշխարհի ամբողջական կերպարի մի մաս, լեզվի միջոցով արտացոլում է տնտեսական իրականության հատվածները՝ փոխակերպելով և համալրելով արդեն իսկ յուրացված տնտեսական գիտելիքներն ու դրանց հաղորդելով նոր իմաստներ և մեկնաբանումներ:

Ամփոփենք. ուսումնասիրության այս փուլում փորձեցինք պարզել «իրադարձություն» հասկացության գոյաբանական կարգավիճակը՝ այն տարրերը, որոնք անհրաժեշտ են իրադարձության առկայության համար: Այսպես՝ իրադարձությունն առաջին հերթին ենթադրում է փոփոխություն՝ մի վիճակից անցում մյուսին, որը սկզբունքորեն տարբերվում է նախնականից: Պարտադիր այլ տարրեր են գործողություն կատարողը, վայրը, ժամանակը, ինչպես նաև նշանակալիությունը, որով, ընդհանուր առմամբ, իրադարձությունն արժևորվում է անհատի, հասարակության կողմից՝ համաձայն նրանց աշխարհընկալման կադապարի: Այս փուլին հաջորդում է անհատի գիտակցության մեջ իրադարձության՝ փաստի փոխակերպման գործընթացը:

Տնտեսական իրադարձությունն արտացոլում է համաշխարհային, ինչպես նաև առանձին վերցրած երկրների տնտեսությունների վերելք և անկում առաջացնող իրավիճակները, որոնք հանրությունն արժևորում է իբրև տնտեսական աշխարհի էական, կարևոր փոփոխություններ և կառուցում կամ համալրում է աշխարհի տնտեսական իր պատկերը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Գիտելիքն այն է, ինչ մնացել է մարդու գիտակցության մեջ՝ իբրև հիշողության մաս. տեղեկություններ՝ միավորված որոշակի կարգավորված համակարգում (Кубрякова et al., 1996: 28): Ընդհանուր առմամբ, տարբերակում են գիտելիքի երկու տեսակ՝ դեկլարատիվ և ընթացակարգային (процедуральный): Դեկլարատիվ գիտելիքը «ինչ իմանալն է», որն արտացոլվում է նկարագրության, պնդումների ամբողջության ձևով (գիտելիք որոշակի առարկաների, իրականության երևույթների մասին): Ընթացակարգային գիտելիքն «ինչպես իմանալն է». դրանք ընդհանուր հրահանգներ են որոշակի հանգամանքներում գործելու նպատակով (Баранов, 2003: 14):
2. Սույն աշխատանքում գիտակցությունն ընկալվում է որպես բարձրակարգ կազմակերպված մատերիայի՝ ուղեղի յուրօրինակ առանձնահատկություն: Գիտակցությունը մարդու՝ որպես բանական էակի բնորոշ հատկանիշն է, ով ունակ է ոչ միայն զգալ և պատճառաբանել, այլև արտահայտել մտքեր: Դա ունակություն է վերապրելու, գիտակցելու և շրջակա իրականությունն ընկալելու, ներքին կամ արտաքին աշխարհի որոշակի առարկաների վրա ուշադրությունը սևեռելու հնարավորություն է՝ վերահսկելու տեղեկատվությունը և մշակելու այն մտածողական ու խոսքային գործունեության ընթացքում, և, ի վերջո, ինչ-որ բան իմանալու կարողությունն է (Кубрякова et al., 1996: 175):
3. «Տեղեկատվություն» եզրույթը վերաբերում է այն բոլոր տվյալներին, որոնք մարդուն հասնում են արտաքին աշխարհից, ինչպես նաև նրանց, որ արդեն մշակվել են անհատի կենտրոնական նյարդային համակարգի միջոցով, յուրացվել, վերամեկնաբանվել և մտավոր պատկերների տեսքով ներկայացվել նրա գլխում: Հաղորդակցման տեսության շրջանակներում տեղեկատվությունն ընկալվում է որպես անորոշության վերացման (снятие неопределенности) գործընթաց: Դիսկուրսի և տեքստի ընկալման կաղապարներ կառուցելիս շրջանառվում են տեղեկատվության այնպիսի տեսակներ, ինչպիսիք են ճանաչողականը (գիտելիքներ, դիրքորոշումներ, կարծիքներ), համատեքստայինը (խոսքային ակտեր, իրադրություն, հաղորդակցում) և

հասցեատիրոջը ենթադրաբար ծանոթ և անծանոթ տեղեկատվությունը (Кубрякова et al., 1996: 35–37):

4. Անդրադառնալով «կաղապար» գիտական եզրույթի ծագմանը՝ Ա. Լոսևը նշում է, որ այն կիրառվել է դեռևս 19-րդ դարի մաթեմատիկոսներ Ե. Բելտրամի և Ֆ. Կլայնի աշխատություններում, այնուհետև՝ փիլիսոփաներ Գ. Ֆրեգեի և Բ. Ռասելի մաթեմատիկական տրամաբանությանը նվիրված հետազոտություններում: 1944 թ. այս եզրույթը շրջանառել է լեզվաբան Զ. Հերիսը, ով դրա միջոցով փորձել է բացատրել է. Սեպիրի մեթոդաբանությունը: Նրա բնորոշմամբ մաթեմատիկայում կիրառվող «կաղապար» եզրույթը հետագայում լիովին նոր նշանակություն ձեռք բերեց հատկապես լեզվաբանության մեջ (Лосев, 2004: 140): «Կաղապարը» որպես մաթեմատիկական և երկրաչափական հասկացություն, ավելի ստույգ է, քան հումանիտար գիտություններում, որտեղ դա, ըստ էության, իրականության որոշակի հատվածի մասին պատկերացման վերացական կառույց է:
5. Մտապատկերումն (*mental representation*) ընկալվում է որպես աշխարհի պատկերման գործընթաց մարդու գլխում, ինչպես նաև ներկայանում է որպես իրական կամ երևակայական աշխարհի ինչ-որ մի երևույթի պատկերման միավոր մտածողական գործընթացներում (Кубрякова et al., 1996: 157):
6. Քանի որ հայերեն լեզվաբանական գիտակարգերում դեռևս առկա են որոշ գիտաբառերի թարգմանությունների հետ կապված անճշտություններ և անհամապատասխանություններ, ընթերցումը դյուրին դարձնելու համար աշխատության մեջ որոշ դեպքերում նպատակահարմար ենք գտել թարգմանությունների հետ մեկտեղ նշել նաև սույն գիտաբառերի, եզրույթների, արտահայտությունների համարժեքներն այնպես, ինչպես վերջիններս տրված են սկզբնաղբյուր աշխատանքներում:
7. Հասկացութաւորումը (*концептуализация*) աշխատության մեջ սահմանվում է որպես մարդու ճանաչողական գործունեության կարևորագույն գործընթացներից մեկը, որը ենթադրում է մարդու կողմից տեղեկատվության իմաստավորում, մարդու ուղեղում հասկացույթների, հասկացութային

կառույցների և, ընդհանուր առմամբ, հասկացութային համակարգի ձևավորում (Кубрякова et al., 1996: 93):

8. Կարգայնացումը (категоризация) ճանաչողական գործընթաց է, որը դասակարգում է միավորներն ավելի խոշոր կարգերի մեջ՝ ըստ դրանց որոշ հատկությունների նմանության կամ նույնականության սկզբունքի (Кубрякова et al., 1996: 91):
9. Ճանաչողական հոգեբանության մեջ հիշողությունը սահմանվում է որպես մի գործընթաց, որը կոչված է պահպանելու, վերականգնելու և օգտագործելու ազդակների, պատկերների, իրադարձությունների, գաղափարների և հմտությունների վերաբերյալ այն տեղեկատվությունը, որն այլևս հասանելի չէ (Goldstein, 2011: 116):
10. Մտածողությունը սահմանվում է որպես անհատի ճանաչողական գործունեություն, արտաքին աշխարհի ոչ պատահական հարաբերությունների մոդելավորում, որին բնորոշ է իրականության ընդհանրացված և միջնորդավորված արտացոլումը: Դա խնդրի և նրա լուծման միջոցների պայմանների և պահանջների վերլուծությունը, համադրումն ու ընդհանրացումն է: Այս շարունակական գործընթացում առաջանում են դիսկրետ մտավոր գործողություններ, որոնցով, սակայն, մտածողությունը չի սահմանափակվում (Головин, 1998):
11. Ուշադրությունն անհատի՝ որոշակի ազդակների վրա կենտրոնանալու ունակությունն է: Այս գաղափարը հաճախ զուգորդվում է ընտրողական ուշադրության հետ, երբ տեղի է ունենում մտասևեռում մեկ ազդակի կամ հաղորդագրության վրա: Որոշ հետազոտությունների համաձայն՝ ընտրողական ուշադրության պարագայում կատարվում է զրման գործառույթ, որն ազդում է ստացվող տեղեկատվության վրա. այսինքն՝ անտեսվում է դրա մի մասը և պահպանվում մնացյալը՝ հետագա մշակման նպատակով: Որոշ հետազոտություններ թույլ են տալիս եզրակացնել, որ անհատն ինքնաբերաբար իրականացնում է տեղեկույթի ավտոմատացված մշակում՝ առանց դա գիտակցելու, շնորհիվ իր ճանաչողական ռեսուրսների: Տեսողական հիշողության դեպքում ընտրողական ուշադրությունը կարող է լինել բացահայտ

(երբ դիտորդի ուշադրության տեղաշարժն ակներև է նրա աչքերի շարժումից) և քողարկված (երբ ուշադրությունը շեղվում է այլ առարկայի վրա՝ առանց աչքերը շարժելու կամ, պատկերավոր կերպով ասած, աչքի պոչով նկատելով): Առկա է նաև բաշխված ուշադրության գաղափարը, որը կարող է լինել և՛ բացահայտ, և՛ քողարկված, և՛ համակցված: Այս դեպքում անհատն ունակ է ուշադրությունը սևեռելու մի քանի երևույթների վրա միաժամանակ (Goldstein, 2011: 82-92):

12. Աշխատանքում «նշյալ» (деготат) ասելով հասկանում ենք իրականության բազում առարկաներ (հատկանիշներ, հարաբերություններ), որոնք կարող են անվանվել տվյալ լեզվամիավորով: Հետևաբար՝ նշյալ իրադարձություն ասելով նկատի ունենք որոշակի լեզվամիավորով անվանվող իրադարձություն:
13. Հարկ է նշել, որ տնտեսական իրադարձության մոդելավորման գաղափարն առկա է նաև տնտեսագիտության ոլորտին առնչվող մի շարք գիտակարգերում, որտեղ ուսումնասիրվում են տնտեսական համակարգի մոդելավորման մեխանիզմը, որը միասնացնում է մուտքային (անկախ) և ելքային (կախյալ) փոփոխականները և տնտեսական ռազմավարությունը՝ տնտեսական համակարգի կառավարումն արդյունավետ դարձնելու նպատակով (Сметков, 2008: 16):
14. Դ. Դևիդսոնը որպես իրադարձություն-տերմինի օրինակ է համարում նաև *Sally's third birthday party, the eruption of Vesuvius in 1906 A.D.* դեպքերը (Davidson, 1969: 216):
15. Տնտեսագիտության մեջ գոյություն ունի «աշխարհի հասարակական-տնտեսական պատկեր» հասկացությունը, ըստ որի՝ մարդիկ բարիքներ սպառողներ և բաշխողներ են, իսկ աշխարհը՝ բարիքների՝ առարկաների և երևույթների հավաքածու: Աշխարհի հասարակական-տնտեսական պատկերի առանցքում օգտակարության գործակիցն է՝ բարիքն օգտագործելու բավարարվածությունը, ըստ որի՝ սպառողը կերպում է յուրափոխ սանդղակ և արժևորում փարբեր բարիքների օգտաշահությունը (Ефремов, 2011):

ԳԼՈՒԽ II

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴԻՍԿՈՒՐՍԸ՝ ՈՐՊԵՍ ՍԱՀՄԱՆԱԿԱՐԳԱՅԻՆ ԴԻՍԿՈՒՐՍԻ ՏԵՍԱԿ

2.1. Դիսկուրսի և տեքստի սահմանման չափանիշները

Հայտնի է, որ հաղորդակցումը տեղեկատվության փոխանցման գործընթաց է, որն իր առաջացման, էության և զարգացման գործոնների տեսանկյունից համարվում է հասարակական երևույթ [1]:

Գոյություն ունեն տեղեկատվության տարբեր տեսակներ, ինչպես նաև վերջինիս փոխանցման բազմաթիվ միջոցներ: Դրանցից ամենատարածվածը տեղեկատվության փոխանցման խոսքային ձևն է, որն արտահայտվում է տարբեր խոսքային միավորներում, այդ թվում՝ տեքստերում և դիսկուրսում, որոնց սահմանազատման խնդիրը լեզվաբանների շրջանում բուռն քննարկումների առիթ է դարձել:

Լեզվաբանական մի շարք գիտակարգերում արդեն մի քանի տասնամյակ է, ինչ «տեքստ»-ին զուգահեռ օգտագործվում է «դիսկուրս» եզրույթը, քննարկվում են «տեքստ» և «դիսկուրս» հասկացությունները, բայց և այնպես մինչ օրս չկան դրանց՝ բոլորի կողմից ընդունված սահմանումները: Դիտարկենք տվյալ քննարկումներին նվիրված հետազոտությունների առավել տարածված տեսանկյունները, որոնք կարևոր են սույն ուսումնասիրության համար:

Մի շարք լեզվաբաններ տեքստը համարում են ընդհանուր իմաստային բովանդակություն և միևնույն հաղորդակցական ուղղվածության նախադասությունների հաջորդականություն. «Տեքստը տարբեր տիպի բառաքերականական և տրամաբանական կապերով կապակցված բազմաթիվ նախադասությունների շարք է, որոնք ունակ են փոխանցելու որոշակի ձևով կազմակերպված և նպատակաուղղված տեղեկատվություն: Տեքստը բարդ ամբողջություն է, որ գործում է որպես կառուցվածքային-իմաստային միասնություն» (Тульчинский, 1985):

Ունենալով իմաստային ամբողջականություն և նպատակաուղղվածություն՝

տեքստը կառավարում է մասերի բաշխման, արտահայտչամիջոցների կիրառման և տեղեկատվության հետագա ծավալման ընտրության գործընթացը: Այսպես՝ Մ.Բախտինը, սահմանելով տեքստը որպես ասույթ, կարևորում է երկու գործոն՝ նպատակը (интенция) և դրա իրականացումը: Յուրաքանչյուր տեքստում առկա է լեզվական համակարգ, միաժամանակ, յուրաքանչյուր տեքստ (կամ ասույթ) յուրօրինակ է և անկրկնելի, ինչն էլ դրա գոյության իմաստն է ու նպատակը (Бахтин, 1976: 122):

Տեքստի սահմանման հարցում համանման մոտեցում է ցուցաբերել Ի.Գալպերինը, ով դիտարկում է դա որպես խոսքաստեղծման գործընթացի գրավոր արդյունք, որին բնորոշ են ավարտունության և նպատակաուղղվածության (установка) հատկանիշներ (Гальперин, 1981: 35) [2]:

Վերն ասվածից կարող ենք եզրակացնել, որ տեքստաստեղծման հիմնական կարգերն են տեքստի իմաստային կապակցվածությունը (թեմայի միասնականությունը) և հասցեականությունը:

Տեքստի սահմանման վերլուծությանը զուգընթաց, հարկ է քննարկել ևս մեկ խնդիր՝ կապված դրա ծավալի և տեքստը բնորոշող եզրույթների հետ: Այս առումով, գոյություն ունի տեսակետ, համաձայն որի՝ տեքստի սահմանման համար էական չէ այնտեղ տեղ գտած միավորների քանակը: Այսպես՝ Ն. Պետրովան նշում է, որ տեքստը, որպես յուրաքանչյուր ծավալի ասույթ, անպայմանորեն օժտված է իմաստային ավարտունության և հաղորդակցման նշանակալիության հատկանիշներով: Ուսումնասիրելով «Ելք չկա», «Ելք», «Զգուշացի՛ր» («Выхода нет», «Выход», «Осторожно») և նմանատիպ այլ արտահայտություններ՝ լեզվաբանը հանգում է այն եզրակացության, որ այսօրինակ հաղորդագրությունները, թեև կազմված են մեկ բառից, պարունակում են տվյալ իրադրության վերաբերյալ մեզ անհրաժեշտ ամբողջական տեղեկատվություն (Петрова, 2003: 123):

Գ. Գասպարյանը, սակայն, նշում է, որ սա բնավ էլ չի նշանակում, թե ցանկացած ասույթ, այդ թվում բառը և նույնիսկ ասացվածքը կարող են տեքստ համարվել, քանի որ վերջիններս տեքստային հատկանիշներ են ձեռք բերում ավելի լայն համատեքստում: Վերլուծելով տեքստի բնույթը՝ լեզվաբանն ընդգծում է, որ տեքստի ստատիկությունը և անկախությունը հարաբերական են և գոյություն ունեն

այնքան ժամանակ, քանի դեռ տեքստը «հանգիստ» վիճակից անցում չի կատարել իրականության մեջ հարաշարժ գործունեության՝ դառնալով հեղինակի և հասցեատիրոջ միջև հաղորդակցման միջոց: Հենց այդ պահին է տեքստը ձեռք բերում դիսկուրսի ամենակարևոր հատկանիշները՝ հարաշարժությունը և շարժականությունը, որոնք զետեղում է հեղինակը, սակայն, որոնք իրագործվում են արտատեքստային տարածության մեջ՝ շնորհիվ ընթերցողի: «Ելք չկա» ասույթի շրջանակներում ստեղծված իրավիճակը փաստացիորեն հենց այն տեղեկատվական դաշտն է, որի շնորհիվ կատարվում է տվյալ ասույթում ամրագրված ճշգրիտ կողի վերծանումը: Այս նկատառումներից ելնելով՝ Գ. Գասպարյանն առաջարկում է նմանատիպ ասույթներն ավելի շուտ դիսկուրս կոչել, քանի որ վերջիններս, բացառությամբ ավարտունության կարգի, չունեն տեքստին բնորոշ այլ հատկանիշներ (Гаспарян Г., 2008: 79-88):

Տեքստի և դիսկուրսի փոխհարաբերակցության մասին համանման մոտեցում գտնում ենք նաև Ա. Պոպովի ուսումնասիրության մեջ, ով նշում է. «Գրավոր տեքստը ժամանակին դիսկուրս է եղել. երբ տեքստը հայտնվում է մարդու ձեռքում, և գործի է դրվում վերջինիս գիտակցությունը, այն վերածվում է դիսկուրսի: ... Տեքստը հաղորդակցման միջոց է և միավոր: Դիսկուրսը ձև է, որի միջոցով ընթանում է այդ հաղորդակցումը: Տեքստը մտածելու տեղիք է տալիս, իսկ դիսկուրսը արտակա արտահայտված մտածողությունն է» (Попов, 2001: 41-44):

Այսպիսով՝ տեքստի բնորոշ հատկանիշներին նվիրված ուսումնասիրություններից համոզվում ենք, որ յուրաքանչյուր տեքստ չի կարող գոյություն ունենալ մեկուսացած պայմաններում, քանի որ այն իր ստեղծման և ծավալման գործընթացներում առաջացող մի շարք փոխհարաբերությունների և կապերի միասնություն է. այսինքն՝ տեքստն իր էությամբ հակված է ունենալու խոսության չափանիշներ: Այս առումով, տեղին է նշել այն դիտարկումը, որ թեև դիսկուրսը և տեքստը համարվում են միմյանց բացառող հասկացություններ, նրանք «գենետիկորեն» փոխկապված են: Այլ կերպ ասած, գոյություն չունի տեքստ առանց դիսկուրս գործունեության. յուրաքանչյուր տեքստին նախորդում է դիսկուրսը (Кубрякова, 2004: 525):

Դիսկուրսը դիտարկվում է որպես լեզվի կիրառման՝ որոշակի ժամանակային սահմանափակումներով գործընթաց (խոսքային գործունեություն), որը պայմանավորված է մարդկանց հասարակական գործունեության տեսակներով և

հետապնդում է որոշակի նպատակներ: «Դիսկուրս» հասկացությունը չի ենթադրում ո՛չ խոսքային գործունեության տեսակի (բանավոր կամ գրավոր), ո՛չ այդ գործունեության մասնակիցների (մենախոսություն, երկխոսություն, բազմախոսություն) սահմանափակում, սակայն առկա է տեքստի (ինչպես նշված գործընթացի ցանկացած արդյունք) և դիսկուրսի հակադրություն: Վերջինս դիտարկվում է որպես առցանց (on-line) գործունեություն, այսինքն՝ դիսկուրսի իրականացում՝ պլանավորում և իրագործում (Кубрякова, Цурикова, 2008: 185–186):

Դիսկուրսն իրադարձային հայեցակերպ ունի և դիտարկվում է իբրև «նպատակաուղղված հասարակական գործունեություն, որպես մի տարր, որ մասնակցում է մարդկանց փոխազդեցությանը և նրանց գիտակցության մեխանիզմների ձևավորմանը», դիսկուրսը «խոսք է՝ ընկղմված կյանքի մեջ» (Арутюнова, 1990: 136–137):

Դիսկուրսի իրադարձային հայեցակերպը ենթադրում է, որ դրա հիմնական տարրերն են շարադրվող իրադարձությունները, դրանց մասնակիցները և համատեքստը: Այսպես՝ Վ. Դեմյանկովը դիսկուրսը սահմանում է որպես տեքստի կամայական հատված, որը կազմված է մեկից ավելի նախադասություններից կամ նախադասության անկախ մասից: Ընդ որում, նրա կարծիքով՝ դիսկուրսը «ստեղծում է ընդհանուր համատեքստ, որը նկարագրում է գործող անձանց, օբյեկտները, հանգամանքները, ժամանակը, գործողությունները և այլն՝ ձևավորվելով ոչ այնքան նախադասությունների հաջորդականությամբ, որքան դիսկուրս ստեղծողի և այն մեկնաբանողի համար ընդհանուր աշխարհով, որը «կառուցվում է» դիսկուրսի ծավալման ընթացքում»: Հետևաբար՝ դիսկուրսի բաղադրիչներն են.

- ա) իրադարձություններն ուղեկցող հանգամանքները,
- բ) իրադարձությունները պարզաբանող միջավայրը,
- գ) իրադարձության մասնակիցների արժևորումը,
- դ) տեղեկույթը, որը դիսկուրսը հարաբերակցում է իրադարձությունների հետ (Демьянков, 1982: 7):

Դիսկուրսի գրեթե բոլոր սահմանումներում շեշտադրվում է հաղորդակցական իրադրության առկայությունը: Այսպես՝ դա դիտարկվում է որպես «տեքստ գումարած իրադրություն», մինչդեռ տեքստը որոշարկվում է որպես «դիսկուրս հանած

իրադրություն» (Widdowson, 1973): Թ. վան Դեյքը տեքստը մեկնաբանում է որպես վերացական, ձևական կառույց, իսկ դիսկուրսը՝ վերջինիս իրականացման տարբեր տեսակներ՝ դիտարկված մտավոր գործընթացների և զանազան արտալեզվական գործոնների տեսանկյունից: Տեսաբանի հայեցակետը կարևոր է այն պատճառով, որ նա տալիս է դիսկուրսի՝ որպես հաղորդակցական իրադարձության բազմապլան և բազմակողմանի սահմանումը. «Լեզվական ձևի, իմաստի և գործողության բարդ միասնություն» (ван Дейк, 1989: 121): Էական է, որ դիսկուրսն ընկալվում է որպես իրադարձություն, որի մեկնաբանությունը դուրս է գալիս բուն արտահայտության կամ դրա շղթայի (տեքստի) բառացի ըմբռնման շրջանակներից: Լինելով նախադասությունների կապակցված հաջորդականություն՝ դիսկուրսը, սակայն, այստեղ սահմանվում է ոչ միայն որպես առանձին նախադասություն, այլև իմաստային յուրօրինակ ամբողջություն, որն առաջին հերթին արտահայտում է իմաստային և տեղեկատվական կապակցվածություն, որի ընկալման համար անհրաժեշտ են հաղորդակցական իրադրության վերաբերյալ տեղեկույթի այլ տեսակներ:

Հաղորդակցական իրադրությունը նույնպես համարելով դիսկուրսի անքակտելի մաս՝ Ա. Սիմոնյանը դա բնութագրում է որպես իրական հաղորդակցական իրադրությունում տարբեր բնորոշումներով տեքստ, որը մի կողմից ուղղված է դեպի հաղորդակիցների մտածողական (ճանաչողական, գոյաբանական) գործընթացները, մյուս կողմից՝ դեպի գործաբանական իրադրությունը, ինչը նպաստում է տեքստի համապատասխան մեկնությանը: Իմաստային և ճանաչողական հայեցակարգերը փոխկապված են և չափազանց կարևոր միևնույն հաղորդակցական նպատակ ունեցող հաղորդակիցների համար: Ուսումնասիրելով խոսքի, դիսկուրսի և տեքստի հարաբերակցությունը՝ լեզվաբանը հանգում է այն մտքին, որ դիսկուրսն ընդհանրական հասկացություն է, որը ներառում է թե՛ տեքստը, թե՛ խոսքը (Симонян, 2011: 16,19): Ընդհանուր առմամբ, «խոսք» և «տեքստ» գիտաբառերը համարվում են տեսակային իրենց միավորող սեռային գիտաբառի՝ դիսկուրսի նկատմամբ (Богданов, 1993: 5): Տեքստը փոխակերպվում է դիսկուրսի այն դեպքում, երբ բառաքերականական կարգերը քննվում են արտալեզվական համատեքստի համադրմամբ:

Իր հերթին, արտալեզվական համատեքստը ենթադրում է աշխարհի, իրադրության մասին որոշակի հասարակական, մշակութային և տարաբնույթ

գիտելիքների առկայություն: Հետևաբար՝ դիսկուրսի կարևորագույն տարրերից է ինչպես արդեն առկա, այնպես էլ դրա ընկալման ընթացքում կուտակվող գիտելիքը: Շ. Պարոնյանի բնորոշմամբ՝ դիսկուրսն «ուժ է, որով կարելի է կառավարել մարդկանց գիտելիքը՝ նրանց իրազեկ դարձնելով այս կամ այն խնդրին» ... «Նրանում արտացոլվում են ճանաչողության, այսինքն՝ գիտակցվածության բարձրագույն աստիճանին հասած մտածողական գործընթացները, և իմացողություն է ստեղծվում» (Պարոնյան, 2010: 105, 281):

«Տեքստ» և «դիսկուրս» հասկացությունների սահմանազատումը ճանաչողական լեզվաբանության տեսանկյունից համապատասխանում է ճանաչողական գործունեության և դրա արդյունքի հակադրությանը. դիսկուրսը ճանաչողական գործընթաց է՝ կապված իրականում խոսք կազմելու, խոսընթացի հետ, իսկ տեքստը՝ խոսքային գործունեության գործընթացի վերջնական արդյունքը, որը վերածվում է որոշակի ավարտուն (և ամրագրված) ձևի (Кубрякова, Александрова, 1997): Այստեղ միանգամայն տեղին է այն դիտարկումը, որ տեքստը դիսկուրսի՝ կայացած խոսքային գործունեության «տեղեկատվական հետքն է» (Сысов, 2007: 40):

Մեզ համար միանգամայն ընդունելի է այն ձևակերպումը, ըստ որի՝ դիսկուրսը «նույնպես տեքստ է, կազմված լեզվական հաղորդակցական միավորներից՝ նախադասություններից և ավելի խոշոր միավորներից, որոնք ներքին իմաստային շարունակական կապի մեջ են, ինչն էլ թույլ է տալիս այն դիտարկել որպես ամբողջություն: Դիսկուրսներ կարելի է համարել, օրինակ, պատմվածքի, հոդվածի, ելույթի, բանաստեղծության տեքստերը» (Борботько, 1981: 8):

Եվ այսպես՝ տեքստն ընկալվում է որպես մարդկային ավարտուն գործունեության անփոփոխ, իրականում գոյություն ունեցող արդյունք՝ խոսքի արդյունք: Դիսկուրսը խոսք կազմելու, տեղեկատվության ընկալման և մեկնաբանման գործընթաց է, խոսքային փոխազդեցության միջոց: Նման ձևակերպումը թույլ է տալիս տեղեկատվության փոխանակման գործընթացի վերլուծությունը չսահմանափակել միայն բանավոր երկխոսական հաղորդակցմամբ, այլ ուսումնասիրել գրավոր հաղորդակցումը՝ տարանջատելով դիսկուրսի երկու հիմնական տեսակները (modes)՝ բանավոր (talk) և գրավոր (text) (van Dijk, 1997: 3): Անմիջական, բանավոր հաղորդակցման դեպքում մասնակիցները մշտապես պահպանում են

հաղորդակցական իրադրության անհրաժեշտ չափանիշները և ակտիվորեն արձագանքում դրանում կատարվող փոփոխություններին՝ տվյալների նպատակաուղղված փոխանակման մեջ իրենց խոսքային և ոչ խոսքային ներդրումը համապատասխանեցնելով հաղորդակցական ներդաշնակության պահպանմանը:

Վերոնշյալ ըմբռնումների վերլուծությունը թույլ է տալիս մեզ սույն աշխատության նպատակների համար ելակետային համարել Յու. Ստեպանովի առաջարկած մոտեցումը, ըստ որի՝ դիսկուրսը յուրօրինակ աշխարհ է, որն ունի իր սեփական կանոնները: Այս դիտարկումը հետագայում կօգնի բացահայտելու մեր ուսումնասիրության առարկայի՝ տնտեսական մեդիադիսկուրսի առանձնահատկություններն ու բնորոշ կանոնները՝ ելնելով դիսկուրսների հատման արդյունքում առաջացած «հնարավոր աշխարհի» հայեցակարգից. «Դիսկուրսը «լեզու է լեզվի մեջ»՝ ներկայացված հատուկ իրադրությամբ: Դիսկուրս հիմնականում գոյություն ունի այն տեքստերում, որոնցում առկա են ինքնատիպ քերականություն, ինքնատիպ բառապաշար, բառագործածության ու շարահյուսության ինքնատիպ կանոններ, ինքնատիպ իմաստներ, ի վերջո՝ առանձնահատուկ աշխարհ: Դա «հնարավոր» (այլընտրանքային) աշխարհ է: Յուրաքանչյուր դիսկուրս «հնարավոր աշխարհներից» մեկն է» (Степанов, 1995: 44):

2.2. Տնտեսական դիսկուրսը՝ որպես սահմանակարգային դիսկուրսի առանձին տեսակ

Մարդկանց գործունեությունը հասարակական բազմազան ոլորտներում ենթադրում է հաղորդակցման տարբեր նպատակներ, որոնց իրականացման համար կիրառվում են դիսկուրսի զանազան տեսակներ: Հետևաբար՝ դիսկուրսների տարբերակման համար հիմնական չափանիշ է համարվում հասարակական ոլորտի հետ հարաբերակցումը: «Դիսկուրսի տեսակները հանդես են գալիս որպես խոսքային վարքագծի հաղորդակցական-գործաբանական նմուշներ, որոնք ընթանում են որոշակի հասարակական ոլորտում, այսինքն՝ ներկայացնում են հաղորդակցման սեփական ոլորտները» (Сухих, Зеленская, 1998: 8-11):

Հասարակական համակարգն իր հերթին համապատասխան կապերի և նորմերի կազմակերպված ամբողջություն է, որը միավորում է հասարակության հիմնական պահանջմունքները բավարարող նշանակալի հասարակական արժեքներն ու ընթացակարգերը (Фролов, 1994): Այն իրականացնում է հետևյալ հիմնական գործառույթները.

- 1) հնարավորություն է ընձեռում տվյալ հաստատության անդամներին բավարարելու իրենց պահանջմունքներն ու հետաքրքրությունները,
- 2) վերահսկում է հասարակական հարաբերությունների ոլորտի գործունեությունը,
- 3) ապահովում է հասարակական կյանքի կայունությունը,
- 4) ապահովում է անհատների նպատակների, գործողությունների և հետաքրքրությունների միասնացումը,
- 5) իրականացնում է հասարակական վերահսկում [3]:

Հասարակագետները զարգացած հասարակություններում տարբերակում են նմանատիպ համակարգերի հինգ տեսակ՝ ընտանեկան, քաղաքական, տնտեսական, կրթական և կրոնական:

Տնտեսական ինստիտուտները սահմանվում են որպես հանրության կողմից ընդունված կոլեկտիվ տնտեսական գործունեության գործառույթային-կազմակերպչական ձևեր, որոնց միջոցով իրագործվում են տնտեսության համակարգված գործառույթները (Зотов, Пресняков, Розенталь, 1999: 10): Մեծ թվով տնտեսագետներ այս ինստիտուտների շարքն են դասում նաև այն ընկերությունները, որոնք իրականացնում են արտադրական գործառույթներ, տնային տնտեսությունները, կազմակերպությունները, ֆինանսային-արդյունաբերական խմբերը, բանկերը, բորսաները, արհմիությունները, խորհրդարանը և այլն: Նշված հաստատություններից յուրաքանչյուրը հետապնդում է ուրույն նպատակներ, որոնց իրականացման համար էլ կիրառվում է տնտեսական դիսկուրսը՝ որպես սահմանակարգային դիսկուրսի առանձին տեսակ:

Այսպիսով՝ սահմանակարգայինը դիսկուրսի տեսակ է, որն իրականանում է հանրային հաստատություններում, որտեղ հաղորդակցումը համարվում է այս գործունեության բաղադրիչ մաս: Տնտեսական դիսկուրսը կիրառվում է տնտեսական գործունեությամբ զբաղվող յուրաքանչյուր կազմակերպությունում:

Տնտեսական դիսկուրսը համապարփակ կերպով սահմանելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել դիսկուրսի ոլորտին վերաբերող մի շարք առանձնահատկություններ: Այսպես՝ հանրալեզվաբանության տեսանկյունից առանձնացվում են դիսկուրսի երկու հիմնական տեսակներ՝ անձնական (անձնակենտրոն) և սահմանակարգային: Առաջին դեպքում խոսողը հանդես է գալիս որպես անհատ՝ իր ներաշխարհի ողջ հարստությամբ, երկրորդ դեպքում՝ որպես հասարակական որևէ ինստիտուտի ներկայացուցիչ: Սահմանակարգային դիսկուրսը հաղորդակցություն է՝ դերակարգավիճակային հարաբերությունների շրջանակում: Ընդունելով, որ հետևյալ ցանկը կարելի է փոփոխել կամ ընդլայնել՝ Վ. Կարասիկը տարբերակում է սահմանակարգային դիսկուրսի հետևյալ տեսակները՝ քաղաքական, դիվանագիտական, վարչական, իրավաբանական, գինվորական, մանկավարժական, կրոնական, միստիկ, բժշկական, գործարար, գովազդային, մարզական, գիտական, բեմական և զանգվածային-լրատվական [4]: Սահմանակարգային դիսկուրսն առանձնանում է երկու հիմնական հատկանիշներով՝ հաղորդակցական նպատակներ և մասնակիցներ: Քաղաքական դիսկուրսի նպատակն իշխանության նվաճումն ու պահպանումն է, մանկավարժականինը՝ հասարակության նոր անդամի հանրայնացումը, բժշկականինը՝ հիվանդին որակյալ բուժօգնություն ցուցաբերելը և այլն: Սահմանակարգային դիսկուրսի հիմնական մասնակիցները հասարակական հասարակությունների ներկայացուցիչներն են (գործակալները) և այն մարդիկ, որոնք դիմում են նրանց (հաճախորդներ). օրինակ՝ ուսուցիչ և աշակերտ, բժիշկ և հիվանդ (Карасик, 2000):

Այսպիսով՝ սահմանակարգային դիսկուրսի վերլուծության և հաղորդակցման տեսակի որոշման դեպքում հաշվի են առնվում հետևյալ բնութագրող չափորոշիչները՝ մասնակիցների դերակարգավիճակային բնութագրեր, գործողության պայմաններ, ժամանակ և տեղ, հաղորդակցման թեմա, նպատակներ և այլն:

Դրա բնորոշ գիծ է համարվում առանձնակի ենթալեզվի առկայությունը (Степанов, 1995: 44, Шейгал, 2000: 15, Симонян, 2011: 37), որն, ըստ էության, ծառայում է որոշակի մասնագիտական ոլորտում հաղորդակցական նպատակների իրականացման համար:

Ա. Սիմոնյանն առաջարկում է սահմանակարգային դիսկուրսի իր բանաձևը.

«դիսկուրս = ենթալեզու + տեքստ + համատեքստ»: Տվյալ մոտեցումը ենթադրում է, որ սահմանակարգային դիսկուրսը ներառում է ինչպես լեզվական համակարգ, որը նախատեսված է հաղորդակցման որոշակի հատվածին ծառայելու համար, այնպես էլ խոսքային գործունեություն, որտեղ առկա են լեզվական և արտալեզվական գործոններ և տեքստ (Симонаян, 2011: 36-37):

Տնտեսական դիսկուրսի ուսումնասիրությանն են նվիրված լեզվաբանական մի շարք հետազոտություններ, որտեղ այն հաճախ դիտարկվում է այլ դիսկուրսների համատեքստում: Այսպես՝ լեզվաբաններ Ե. Շեյգալը (2000) և Ա. Չուդինովը (2006) դա քաղաքական դիսկուրսի անքակտելի բաղադրիչ են համարում:

Տնտեսական դիսկուրսը բնութագրվում է որպես խոսքային այն բոլոր ակտերի ամբողջություն, որը կիրառվում է տնտեսական իրողություններ նկարագրելիս կամ բնութագրելիս: Դա տնտեսական գործունեություն արտացոլող տեքստի կամ տեքստերի բանավոր և գրավոր հատված է (Махницкая, 2002: 159): Տ. Եվտուշինան և Ն. Կովալսկայան, ուսումնասիրելով տնտեսական դիսկուրսի շարահյուսական առանձնահատկությունները, առաջարկում են գրեթե նույն սահմանումը՝ ընդգծելով, որ սույն տեքստերը կարող են ստեղծվել մասնագետների, ոչ մասնագետների և լրագրողների կողմից (Евтушина, Ковальская, 2014: 44): Ա. Կլանշչակովան, հետազոտելով տնտեսական դիսկուրսի հաղորդակցական նպատակները («ապրանք-փող-ապրանք» համակարգում հարաբերությունների բարեկարգում), ինչպես նաև դրա մասնակիցներ բնույթը (ֆիզիկական և իրավաբանական անձինք, որոնք ապրանքաշրջանառության գործողությունների մասնակից են կամ կարող են մասնակից դառնալ), կարծում է, որ այս տեսակի դիսկուրսի բաղադրիչներն են փաստարկվածությունն ու արժևորումը: Այս տարրերը բնորոշվում են արտալեզվական առանձնահատկություններով՝ տնտեսական գործունեության ընտրությամբ ու դրա արժևորմամբ (Кланцакова, 2002, 2003):

Դիսկուրսի առանձին տեսակներին նվիրված աշխատություններում հանդիպում ենք նաև տնտեսական դիսկուրսի ավելի նեղ, ճյուղավորված տարբերակման: Այսպես՝ Ե. Ստեպանովան դա ներկայացնում է որպես ֆինանսավարկային, հարկային, առևտրային, ձեռնարկատիրական հարաբերությունների ոլորտում հաղորդակցման մասնակիցների փոխազդեցություն (Степанова, 2006: 436): Տնտեսական դիսկուրսի

շրջանակում ձևավորվում են համապատասխան ենթատեսակներ՝ ֆինանսական (ֆինանսներ և վարկ), հաշվապահական (հաշվապահական հաշվառում և աուդիտ), հարկային (հարկային գործ և ապահովագրություն) ու գործարար (գործարարություն և առևտուր) (Шереметьева, 2009): Ա. Կլանշչակովան տնտեսական դիսկուրսի թեմաների շարքն է դասում ապրանքների և ծառայությունների որակի, արտադրության արդյունավետության, դրամային հոսքերի կարգավորման, կապիտալի շրջանառության հարցերը (Кланцакова, 2003):

Որոշ գիտնականներ «*տնտեսական դիսկուրս*» հասկացությունն օգտագործում են «*գործարար դիսկուրսին*» (*բիզնես դիսկուրս*) զուգահեռ (Վ. Կարասիկ, Տ. Աստաֆուրովա, Ե. Պետուշինսկայա և այլք): Սակայն, հարկ է նշել, որ առկա են մի շարք աշխատություններ, որոնցում գործարար դիսկուրսը դիտարկվում է որպես առանձին՝ իր առանձնահատկություններով և չափանիշներով բնորոշվող երևույթ (Ширяева 2008, Назарова, 2008, Данюшина 2011): Այսպես՝ Տ. Շիրյաևան, ուսումնասիրելով սահմանակարգային գործարար դիսկուրսը, բնորոշում է այն իբրև անհատների միջև իրականացվող նպատակաուղղված դերակարգավիճակային խոսքային գործունեություն, որոնք ներգրավված են գործարար-կազմակերպչական հարաբերությունների մեջ, ինչպես նաև կազմակերպությունների և առանձին անհատների հաղորդակցման մեջ՝ հիմնված գործարար հաղորդակցության նորմերի և կանոնների վրա: Հեղինակն առանձնացնում է գործարար դիսկուրսի հետևյալ համակարգաստեղծ չափանիշները՝

- հաղորդակցման նպատակ. փոխշահավետ մասնագիտական գործունեություն, համագործակցության պայմանների հաստատում, երկու կամ ավելի շահագրգիռ կողմերի միջև փոխհամաձայնության ձեռքբերում կամ միասնական դիրքորոշում որևէ հարցի վերաբերյալ,
- մասնակիցներ. բոլոր օղակների կառավարիչներ, որոնք վերահսկում են արտադրությունը, առևտուրը, ծառայությունների մատուցումը, գործարարներ, որոնք զբաղվում են բիզնեսի տարբեր տեսակներով, ձեռնարկատերեր, որոնք ունեն սեփական ձեռնարկություններ, գիտության գործիչներ, որոնք իրականացնում են հետազոտական գործունեություն, մասնագետների պատրաստում, խորհրդատվական և փորձագիտական ծառայություններ

մատուցողներ, տարատեսակ հաճախորդներ, մարդիկ, որոնք հետաքրքրվում են գործարարությամբ,

- սոցիալական քրոնոտոպ (ժամանակատարածական առանձնահատկությունները). ժամանակակից գործարար համայնքի մասնագիտական գործունեություն,
- արժեքներ. ստացվող շահույթ, արդյունավետ կառավարում, գործընկերային հարաբերությունների հաստատում, մրցակցային միջավայրի մշտադիտարկում, կադրերի ընտրություն ու ուսուցում և այլն,
- գործարար դիսկուրսի ռազմավարություն. բանակցություններ, շնորհանդեսներ, հողվածներ հատուկ ՋԼՄ-ներում, զրույցներ, հարցազրույցներ, սեմինարներ և այլն,
- աշխարհի ընդհանուր պատկեր. անձնական գիտելիքների, պատկերացումների, գաղափարների համակարգ, որը ներառում է ժամանակակից գործարար համայնքի բոլոր մասնակիցներին բնորոշ աշխարհընկալումը,
- տեքստի բնութագրեր. տեղեկատվություն, հասցեականություն, երկխոսություն, կառուցվածքայնություն, հասարակական կարգավիճակի ցուցանիշներ, սահմանակարգային սահմանափակումներ: Կառուցվածքային դիսկուրսի սուբյեկտները, ըստ հետազոտողի, ներգրավում են մասնագիտական գործունեության կարծրատիպային իրավիճակներին վերաբերող համակցված գիտելիքներ, սահմանակարգային գործարար դիսկուրսի ֆրեյմային համակարգ, որտեղ ներկայացված են այնպիսի ֆրեյմներ, ինչպիսիք են տնտեսագիտությունը, ֆինանսները, ձեռնարկատիրությունը, մարքեթինգը: Այս համակարգն ապահովում է ճանաչողական ֆոն, որը միասնական է նույն հասարակությանը պատկանող հասցեատիրոջ և հասցեագրողի համար (Ширяева, 2008):

Այսպիսով՝ Ս. Շիրյանան, ներմուծելով «սահմանակարգային գործարար դիսկուրս» եզրույթը, ըստ էության, ներառում է դրա մեջ նաև տնտեսական դիսկուրսը, քանի որ մասնակիցների շարքն է դասում նաև գիտության գործիչներին, որոնք իրականացնում են հետազոտական գործունեություն: Ըստ հեղինակի՝ գործարար դիսկուրսի ռազմավարությունը ենթադրում է հողվածների առկայություն հատուկ ՋԼՄ-ներում և

հարցազրույցներ, որոնք ակնհայտորեն պատկանում են մեդիադիսկուրսի ոլորտին: Մեր կարծիքով, խոսքն այստեղ նշված դիսկուրսների հատման մասին է, որոնք առանձին դեպքերում կարող են համատեղվել հաղորդակցական տարբեր նպատակներ իրականացնելու համար:

Համանման կերպով են հատվում գիտական և տնտեսական դիսկուրսները՝ արտացոլելով տնտեսագիտությանը վերաբերող դրույթներն ու իրույթները: Այսպես՝ Տ. Դրոզդովան, ուսումնասիրելով գիտական տեքստի ընկալման խնդիրները տնտեսագիտական տեքստերի փաստական նյութի հիման վրա, մասնավորապես հետազոտում է դրանցում առկա բառապաշարի էությունն ու առանձնահատկությունները: Ըստ լեզվաբանի՝ տնտեսական բովանդակությամբ գիտական տեքստի ներուժն ապահովում են համընդհանուր գիտական (theory, method, analysis), միջնյուղային (equation, behaviour, ownership) և մասնավոր ոլորտներին (employment, microeconomics, sale) առնչվող եզրութաբանական միավորները, որոնք ներկայացնում են տարբեր մակարդակի գիտական հասկացություններ: Միաժամանակ, տնտեսագիտական երևույթների արտացոլման համար ներմուծվում են նաև մաթեմատիկական (equation, curve), իրավագիտական (property, ownership), հոգեբանության (behaviour), սոցիոլոգիայի (population, public) և մի շարք այլ գիտությունների մեծաթիվ եզրույթներ: Գիտական տեքստերի դասակարգման գործում, համապատասխան եզրույթների հետ մեկտեղ, ոչ պակաս կարևոր դեր է կատարում ոչ եզրութաբանական բառապաշարը: Այս բառամիավորները նույնպես օգնում են գիտական տեքստի ուրվագծմանը, դրանում մակրո- և միկրոմակարդակներում կառուցվածքային և իմաստային հարաբերությունների ձևավորմանը, հորիզոնական և ուղղահայաց «սկանավորմանը» (տվյալների հաջորդաբար ընթերցմանը): Ոչ եզրութաբանական բառապաշարը, եզրութաբանականի հետ մեկտեղ, մասնակցում է նաև գիտական գիտելիքների փոխանցմանը՝ նկարագրելով համապատասխան հայեցակարգերի/հասկացությունների որոշակի չափանիշներ, ինչպես նաև դրանց առնչվող գործընթացներ և իրավիճակներ: Այս դեպքում նման բառապաշարը «եզրութաբանվում է»՝ առնչվելով որևէ որոշակի գիտական բնագավառի (target market, top manager, total output, gross domestic product) (Дроздова, 2009) [5]:

Վերն ասվածից կարող ենք եզրակացնել, որ տնտեսական դիսկուրսը կարող է հասվել, համադրվել դիսկուրսների այնպիսի տեսակների հետ, ինչպիսիք են գործարարը, ԶԼՄ-ներինը, գիտականը, մանկավարժականը, իրավաբանականը և այլն: Այն կանխորոշված է անհատների տարբեր ոլորտներում իրականացվող գործունեությամբ (մասնագետներ և ոչ մասնագետներ, ունկնդիրներ, հեռուստադիտողներ, ընթերցողներ, հաճախորդներ, գիտնականներ, դասախոսներ, ուսանողներ և այլն), նրանց հաղորդակցական նպատակներով, թեմատիկայով և այլն:

Այսպիսով՝ տնտեսական դիսկուրսը տնտեսության ոլորտում հաղորդակցվելու միջոց է և ունի որոշակի առանձնահատկություններ՝ պայմանավորված հաղորդակցման մասնակիցների կազմով, նրանց տեսակետներով, դիրքորոշումներով ու աշխարհընկալմամբ: *Տնտեսական դիսկուրս ասելով՝ հասկանում ենք տնտեսության և տնտեսագիտության ոլորտին առնչվող բանավոր կամ գրավոր խոսք, տնտեսական աշխարհում տեղի ունեցող հաղորդակցում, որն արտացոլում է տնտեսական աշխարհի իրողությունները:*

Խոսելով դիսկուրսի մասին, թերևս, անհրաժեշտություն է առաջանում քննարկելու նաև գործառական ոճերի հետ վերջինիս հարաբերակցության հարցը, որը մինչ օրս չի ստացել միանշանակ ու սպառիչ պատասխան: Ինչպես հայտնի է, գործառական ոճերը լեզվի ենթահամակարգեր են, որոնցից յուրաքանչյուրն ունի բառապաշարային, դարձվածաբանական, քերականական որոշակի առանձնահատկություններ: Դրանց առաջացումը և գոյությունը պայմանավորված են գործունեության տարբեր ոլորտներում մարդկանց հաղորդակցման պայմանների առանձնահատկություններով (Арнольд, 1973: 54): Լեզվաբանների մի խումբ, այս հասկացության համար կիրառելով «ռեգիստր» եզրութաբանական միավորը, նշում է, որ լեզվի ռեգիստրները պայմանավորված են հասարակական գործընթացներով, քանի որ խոսողը զանազան իրադրային համատեքստերում կիրառում է տարբեր լեզվական միջոցներ՝ կախված հաղորդակցական նպատակներից (Halliday, 1989, Swales, 1990): Դ. Կրիսթը «ռեգիստր» եզրույթը սահմանում է որպես որոշակի հասարակական իրադրություններում կիրառվող լեզվի առանձին տարբերակ, օրինակ՝ գիտական, կրոնական և այլն (Crystal, 1991: 295): Ռեգիստրը նաև բնութագրվում է որպես հաղորդակցական իրադրություն, որը կանոնավոր կերպով կրկնվում է

հասարակության մեջ (Ferguson 1994: 20-21):

Ընդհանուր առմամբ, գործառական ոճերի սահմանազատումն իրականացվում է՝ ելնելով լեզվի գործառույթներից, որոնցից հիմնական են տեղեկատվական գործառույթ իրականացնող իմացականը (интеллективный) և գեղարվեստականը, որը կատարում է փոխներգործական գործառույթ: Իմացական հաղորդակցումն իրական առարկաների ու փոխհարաբերությունների մասին տեղեկատվության հաղորդումն է, որն այս կամ այն պատճառով որոշակի նշանակություն ունի ոչ միայն տվյալ հաղորդակցական իրադրության, այլև, ընդհանուր առմամբ, հասարակության համար: Այլ կերպ ասած, որոշակի տեղեկություն պարունակող բանավոր կամ գրավոր խոսքը իրական փաստերի և իրադարձությունների մասին հաղորդում է, գիտության այս կամ այն բնագավառին վերաբերող գիտելիք, որն անհատը կարող է օգտագործել հետագա գործունեության ընթացքում: Գեղարվեստական գրականությունը, սակայն, չի կարող հարաբերակցվել իրականության հետ: Դրա նպատակը ոչ թե ընթերցողին փաստերին իրազեկելն է, այլ նրան առանձնահատուկ ստեղծագործական փոխներգործության մեջ ներգրավելը (Гаспарян С., 2013: 11, 14):

Մի շարք լեզվաբաններ որոշակիորեն սահմանազատում են «գործառական ոճ» և «դիսկուրս» հասկացությունները: Մ. Կոժինան, օրինակ, խոսում է դիսկուրսի և գործառական ոճերի սկզբունքորեն տարաբնույթ և տարակարգ լինելու մասին, նշելով, որ այս երկու գիտաբառերը սկիզբ են առնում տարբեր կարգերից՝ դիսկուրսը հասարակական երևույթ է, իսկ գործառական ոճը՝ հասարակական գիտակցության ձև: Լեզվաբանը, չժխտելով դիսկուրսի և գործառական ոճագիտության տեսական-մեթոդաբանական կապը, միաժամանակ պնդում է, որ դրանց փոխհարաբերակցության հարցը դեռևս երկար ժամանակ քննարկումների տեղիք է տալու (Кожина, 2008: 189):

Շարունակելով զարգացնել վերոնշյալ դրույթը՝ Վ. Չեռնյավսկայան գրում է, որ դիսկուրսի կարգը մասնագետին առաջարկում է հաղորդակցման ոլորտների և դրանց հետ կապված խոսքային համակարգերի բաժանման առանձնահատուկ սկզբունք: Նա դիսկուրսի սահմանման չափանիշ է համարում տեքստերի իմաստային-բովանդակային ընդհանրությունը և ոչ թե գործառական ոճերի շրջանակներում գործող հասարակական գիտակցության ձևերը: Այս դեպքում ունենում ենք անթիվ

քանակությամբ դիսկուրսներ: Ի տարբերություն դիսկուրսի, գործառական ոճերը հաղորդակցման ոլորտը բաժանում են ավելի մեծ հատվածների և հարաբերակցվում են իմացության և գործունեության հիմնարար գոյաբանական ձևերի հետ: Այս առումով, գործառական ոճերը չեն կարող մեծաթիվ լինել (Чернявская, 2011: 92-94):

Տեսական գրականության մեջ գոյություն ունի նաև տեսակետ առ այն, որ դիսկուրսը հարաբերակցվում է ոճի հետ, ինչպես մասն ամբողջի: Այսպես՝ քաղաքական դիսկուրսը կիրառվում է պաշտոնական-գործարար, մանկավարժականը՝ գիտական-ուսումնական ոճի շրջանակներում (Щукина, 2011): Այսինքն, ըստ հեղինակի, դիսկուրսն ավելի նեղ հասկացություն է, քան ոճը: Ուսումնասիրելով գիտական առցանց դիսկուրսը, Ն. Մորգունն առաձնացնում է դրա ոճային և ժանրային լեզվական կարգերը: Նա նշում է, որ դիսկուրսները ոճերի տեսակներ են, և դրանց միջև առկա են սեռատեսականիշային հարաբերություններ, սակայն, միաժամանակ, ոճը դիսկուրսի լեզվական հատկանիշն է (Моргун, 2002), այսինքն՝ դրա սահմանման տարրերից մեկը: Նույն կարծիքին է նաև Ն. Կլուշինան, ով ասում է, որ ոճը դիսկուրսի բաղադրիչն է (Клушина, 2011: 33):

Լեզվաբանների շրջանում սուր բանավեճերի տեղիք են տալիս ոչ միայն գործառական ոճերի/ռեգիստրների և դիսկուրսի փոխհարաբերակցության, այլ նաև ժանրերի առանձնահատկությունների որոշարկման և դրանց սահմանազատման հարցերը:

Այսպես՝ որոշ գիտնականներ ընդգծում են ժանրի և ռեգիստրի միջև գոյություն ունեցող սեռատեսականիշային հարաբերությունները: Գ. Կրեսսը, օրինակ, պատմվածքի, դիսկուրսի, բարբառի հետ մեկտեղ, ժանրը համարում է ռեգիստրի մի տեսակ (Kress, 1993: 35): Մինչդեռ Կ. Միլերը կարծում է, որ ժանրը, լինելով դիսկուրսի պայմանական կարգ, տիպայնացված հռետորական գործողություն է, որն իր նշանակությունը ստանում է ըստ իրադրության և այդ իրադրությունների առաջացման հասարակական ենթատեքստի: Այս իրադրությունների կրկնությունն էլ ամրագրում է վերջիններիս տիպայնացված լինելու հատկանիշը: Ուստի ժանրը պետք է սահմանվի ոչ թե ըստ դիսկուրսի բովանդակության կամ ձևի, այլ ըստ կիրառման նպատակների, որոնց դա ծառայում է (Miller, 1984, Biber, 1988: 170):

Գոյություն ունեն ժանրերի տարբեր դասակարգումներ և, համապատասխանաբար՝ սկզբունքներ, որոնցով առաջնորդվում են լեզվաբանները դրանք տարբերակելիս: Այսպես՝ Վ. Օրլիկովսկին և Ջ. Յեթսը, կարծելով, որ ժանրերը կարող են մասամբ համընկնել կամ իրենց համակարգում ներառել այլ ժանրեր, շեշտադրում են որոշների կիրառման ցածր աստիճանը՝ այդպիսով տարբերակելով դրանց «պասիվ» («dormant genres») և «մերժված» («rejected genres») տեսակները (Orlikowsky, Yates, 1997):

Ժանրերը դասակարգելով ըստ նախատիպային տեսության սկզբունքների՝ Գ. Ստինը առանձնացնում է յոթ պայմանական հատկանիշներ՝ տիրույթ (արվեստ, գիտություն, կրոն, կառավարություն և այլն), միջոց (գրավոր, բանավոր, էլեկտրոնային), բովանդակություն (թեմաներ), ձև (տեքստային նմուշներ), գործառույթ (տեղեկատվական, ներգործող և այլն), տեսակ (փաստարկում, նկարագրություն և այլն) և լեզու (լեզվական առանձնահատկություններ): Այսպիսով՝ ժանրը հիմնական կարգ է և ներառում է ենթաժանրեր՝ հասկացութային ստորադասներ (Steen, 1999: 112):

Որոշ գիտնականներ ընդգծում են ժանրի փոփոխական բնույթը, նշելով, որ, ժամանակի, տեղի, իրադրության հետ մեկտեղ, դրա ընկալումը և ներգործությունը, բնորոշ հատկանիշներն ու սահմանակարգային ազդեցությունը փոփոխության են ենթարկվում: Յուրաքանչյուր տեքստ, որ ստեղծվել է որոշակի ժանրային շրջանակներում, նոր ձև է հաղորդում վերջինիս մեկնաբանմանը, տեքստի տարբեր ընթերցումներ հասարակական ընկալման նոր սկզբունքներ են առաջադրում (Bazerman, 1988) [6]:

Վերն ասվածից կարող ենք եզրակացնել, որ լեզվի ոճերի/ռեգիստրների և դիսկուրսի փոխհարաբերակցության, ինչպես նաև ժանրերի սահմանազատման խնդիրները դեռևս որոշարկված չեն, և ակնհայտ է, որ քննարկումները դրանց շուրջ շարունակական բնույթ են կրելու:

Լեզվաբանների մեկ այլ խումբ էլ պնդում է, որ դիսկուրսի տեսության ի հայտ գալու հետ մեկտեղ, գիտնականները սկսեցին ուսումնասիրել տեքստերը՝ ղեկավարվելով հաղորդակիցների առանձնահատկություններով և, ընդհանուր առմամբ, հաղորդակցական կաղապարի կառուցման նպատակներով: Այս պարագայում միայն ոճագիտական մոտեցումը չէր կարող բավարարել վերոնշյալ

պահանջները, քանի որ դրա ուսումնասիրության շրջանակներում չեն վերլուծվում հասցեագրողի նպատակները, հասցեատիրոջ ակնկալիքները, հաղորդակցական իրադրությունը և այլ տարրեր, որոնք կարևոր են լեզվի ուսումնասիրության հաղորդակցական մոտեցման դեպքում: «Ամեն դեպքում, դիսկուրսը համարժեք չէ ոճին: Ուստի ներկայում ոճագիտական մոտեցումը և ոճագիտությունը որպես գիտակարգ հիմնարար չեն համարվում տվյալ ուսումնասիրության համար» (Степанов, 1995: 40): Ըստ դիսկուրսի տեսաբան Վ. Կարասիկի՝ «գործառական ոճ» գիտաբառը պակաս հաջողվածներից է լեզվաբանության մեջ, եթե խոսքը դիսկուրսի մասին է (Карасик, 2006):

Ընդունելով, որ ավանդական գործառական ոճագիտությունը կայացած և դասական գիտակարգ է, որը կարիք չունի ո՛չ վերափոխման, ո՛չ էլ արդիականացման (Клушина, 2011), մեզ համար ակնհայտ է դառնում այն փաստը, որ լեզվաբանության մեջ «դիսկուրս» հասկացության ներմուծման հետ մեկտեղ, անհրաժեշտություն է առաջացել վերաիմաստավորելու հին, ավանդական դրույթները և անցում կատարելու նոր հարթության՝ մշակելով արտալեզվական և ճանաչողական մի խումբ գործոններ հաշվի առնող արդի մոտեցումներ, տեսակետներ և, առհասարակ, նոր գիտաբառեր, որոնք առավել համապարփակ և արդյունավետ են դարձնում լեզվի ուսումնասիրության գործընթացը: «*Լեզվի ոճ*»-ին փոխարինելու եկավ «*դիսկուրսի տիպ/տեսակ*» (տնտեսական, ՋԼՄ-ների, քաղաքական, կրոնական, մանկավարժական և այլ դիսկուրսներ) գիտաբառը, *ժանր* եզրույթի համար էլ, մեր կարծիքով, առավել հաջողված է Վ. Կարասիկի առաջարկած *դիսկուրսի ձևաչափ* (формат дискурса) գիտաբառը, որը խոսքային ժանրերի հիման վրա որոշարկված դիսկուրսի տարատեսակ է: Այս առումով, կարող ենք ասել, որ տնտեսական դիսկուրսը, հատվելով դիսկուրսների այլ տիպերի հետ, կարող է հանդես գալ լրագրային հոդվածների, հարցազրույցների, ռեպորտաժների, տնտեսական նորությունների, դասախոսությունների, քննարկումների, գիտաժողովների, զրույցների և այլ ձևաչափերով:

2.3. Մեդիադիսկուրսի առանձնահատկությունները

Զանգվածային լրատվության արդի միջոցները մարդու կեցության անքակտելի մասն են կազմում, քանի որ իրականացնում են շրջակա աշխարհում տեղի ունեցող իրադարձություններին իրազեկելու կարևորագույն գործառույթը: Լրատվական այնպիսի միջոցներ, ինչպիսիք են թերթերը, ամսագրերը, հեռուստատեսությունը և համացանցը, ժամանակակից մարդու հասարակական կեցության անբաժանելի բաղադրիչներն են, իրադարձությունների, փաստերի, շրջակա աշխարհի երևույթների հետ հաղորդակցվելու հիմնական միջոցը: ԶԼՄ-ների շնորհիվ է հասարակության յուրաքանչյուր ներկայացուցիչ ընկղմվում իրադարձությունների հորձանուտը, վերապրում դրանք ընկալման տարբեր մակարդակներում:

ԶԼՄ-ներով նոր իրականության ստեղծումը հիմնվում է մի քանի գործոնների վրա. լրատվամիջոցները գիտակցաբար ընտրություն են կատարում՝ լուսաբանելով հիմնականում քաղաքական և տնտեսական բնույթի իրադարձություններ կամ ներկայացնում են իրականությունը՝ հագեցած ոչ թե սպասված, այլ անսովոր և արտակարգ իրադարձություններով, որոնք տեղի են ունենում՝ հակասելով կյանքի բնականոն ընթացքին:

Որպես հաղորդակցման հատուկ տեսակի՝ զանգվածային լրատվական դիսկուրսին բնորոշ են հետևյալ հատկանիշները.

- տեղեկությունների հաղորդում տեխնիկական սարքավորումների միջոցով,
- հասցեագրողը և հասցեատերը հիմնականում միշտ կոլեկտիվ են,
- հասցեագրողի և հասցեատիրոջ միջև միշտ գոյություն ունի տարածություն, իսկ երբեմն էլ՝ նաև ժամանակային անջրպետ, ինչը նկատելիորեն դժվարացնում է հակադարձ կապը (Зильберт, 1986):

ԶԼՄ-ների դիսկուրսը ներկայանում է երկու տեսակով՝ լրագրային-հրապարակախոսական և վիրտուալ, որոնց տարբերությունը տեղեկատվության հաղորդման և արտացոլման ձևերի ու միջոցների մեջ է: Եթե լրագրային-հրապարակախոսական դիսկուրսում տեքստի նյութական կրիչներն են թղթե պարբերականները, ապա վիրտուալ դիսկուրսին բնորոշ են տեղեկույթի տեսողականացման զանազան տարբերակներ (ռադիո, հեռուստատեսություն,

պաստառային գովազդ): Զանգվածային հաղորդակցության առանձնահատուկ բնագավառ են համաշխարհային ցանցում տեքստերի հրապարակումը, ինչն այժմ շատ արդիական է՝ համացանցային տեխնոլոգիաների զարգացման արդյունքում տեղեկատվության արագ հասանելիության շնորհիվ:

Այս առումով, տեսական և գործնական տարբեր բնագավառներում գիտական մի շարք հետազոտություններ են իրականացվում՝ նվիրված զանգվածային տեղեկատվության միջոցների էությանը, կառուցվածքին և զարգացման ներուժին: Լեզվաբանության մեջ այդպիսի հետազոտությունները կապված են նախևառաջ զանգվածային լրատվական տեքստերի ողջ բազմազանության ուսումնասիրության նկատմամբ խոսության մոտեցման հետ:

Մ. Ժելտուխինան ԶԼՄ-ների դիսկուրսը սահմանում է որպես կապակցված, խոսքային կամ ոչ խոսքային, բանավոր կամ գրավոր տեքստ՝ գործառույթային, հասարակական-մշակութային, հոգեբանական և այլ գործոնների ամբողջությամբ, զանգվածային հաղորդակցման միջոցներով արտահայտված, իրադարձային առումով վերցված մի ներգործություն, որը մասնակցում է հասարակական-մշակութային փոխազդեցությանը և արտացոլում հաղորդակիցների գիտակցության մեխանիզմը (Желтухина, 2003: 132):

ԶԼՄ-ների դիսկուրսի առաջնային գործառույթն է տեղեկատվության մատուցումը՝ շրջակա իրականության իրադարձությունների արտացոլումը, որն իր հերթին, ինչպես նշվել է առաջին գլխում, սերտորեն կապված է մարդու կողմից աշխարհի պատկերի կերտման գործընթացի հետ: Տեղեկատվական այս դարաշրջանում աշխարհի պատկերի ձևավորման գործընթացը գրեթե ամբողջապես պայմանավորված է զանգվածային լրատվության միջոցներով, իսկ տեղեկատվական պատկերի հայեցակարգը սերտորեն կապված է լեզվական պատկերի հետ, որն ընկալվում է որպես մարդու կենսագործունեության և շրջակա իրականության մեկնաբանության մասին պատկերացումների լեզվական ձև: Աշխարհի պատկերի լեզվական արտահայտման ոլորտը շատ ընդգրկուն է. լեզվում առկա են մեծաքանակ տեղեկություններ այս կամ այն ժողովրդի ազգամշակութային արժեհամակարգի, աշխարհի վերաբերյալ նրա պատկերացումների, նրա կողմից աշխարհը տեսնելու և «կարդալու» առանձնահատկությունների մասին: Տեղեկությունը, որը հաղորդվում է

ՁԼՄ-ների դիսկուրսում, մտավոր հաղորդակցման կարևոր միջոց է՝ իրագործվող հիմնականում լեզվի օգնությամբ, որը դրա առկայացման հիմնական գործիքն է: ՁԼՄ-ների լեզուն՝ վառ և հարաշարժ, հնարավորություն է ընձեռում իրականացնելու համապատասխան դիսկուրսի հիմնական, այն է՝ տեղեկատվական, հետաքրքրաշարժ, կրթական, գովազդային և գաղափարախոսական գործառույթները (Добросклонская 2005: 21, 184):

Զանգվածային լրատվության միջոցների լեզվի բնորոշ գծերից են խոսքային հաղորդակցման ոլորտների և հասարակական առանձին խմբերի խոսքային նորմերի բազմազանությունը, խոսքային սահմանների ընդլայնումը, խոսքի նորաձևությանը հետևելը, «ամերիկանացումը» (Володина, 2008: 22):

Ինչպես վերը նշել ենք, մեր ուսումնասիրության նպատակը տնտեսական իրադարձության մեկնաբանման և ընկալման գործընթացների հետազոտությունն է «լրագրային հոդված» ձևաչափի շրջանակներում:

Լրագրության մեջ տարբերակում են զանգվածային լրատվության տեքստերի չորս տեսակ [7].

- նորություններ. իրենց մակրո- և միկրոկառուցվածքի հաստատունության, կրկնողականության բարձր աստիճանի և բազմակի վերարտադրության շնորհիվ համարվում են ՁԼՄ-ների հիմնական տեքստեր,
- տեղեկատվական-վերլուծական բնույթի. նորությունների տեքստերի ընդլայնված տարբերակներն են՝ մեկնաբանական և վերլուծական մասերի պարտադիր առկայությամբ,
- feature (հոդված, ակնարկ, աղմկահարույց նյութ). հետաքրքրաշարժ բնույթի տեքստեր, որոնք կարող են կապված չլինել վերջին իրադարձությունների հետ, այլ առնչվել որոշակի մարդկանց, վայրերի, երևույթների և իրադարձությունների: Ի տարբերություն նորությունների, feature տեքստերը շեշտադրում են մարդկանց հետաքրքրող թեմաները, որտեղ հեղինակի անհատական պատկերացումն ու կարծիքն այս կամ այն խնդրի շուրջ գերակայում է,
- գովազդային (Добросклонская, 2005: 44, 57):

Նորությունների տեքստերի շնորհիվ իրագործվում է ինչպես զանգվածային լրատվության միջոցների հիմնական գործառույթներից մեկը՝ տեղեկատվականը, այնպես էլ լեզվի՝ հաղորդման գործառույթը: Իմաստային մակարդակում նորությունների տեքստերը բնութագրվում են կայուն մակրո- և միկրո կառուցվածքով, ինչը բնականորեն արտացոլում է տեղեկատվական հոսքի թեմատիկ ձևավորումը: Այլ կերպ ասած՝ նորությունների տեքստերը կառուցվածքայնացվում են այն թեմաների կայուն բազմության հիման վրա, որոնք լուսաբանում են ԶԼՄ-ները՝ լինելով զանգվածային լրատվության ճանաչողական հիմքը: Թեմատիկ կայուն բաղադրիչների շարքն են դասվում, օրինակ, քաղաքականությունը, տնտեսությունը, գործարարությունը, կրթությունը, սպորտը, մշակույթը: Թեմատիկ խոշոր կառուցահատվածները բաժանվում են ավելի մանրերի. այսպես՝ «տնտեսություն» թեմատիկ կառուցահատվածը կարող է ներկայացվել ավելի մանր թեմատիկ միավորներով՝ տնտեսության վիճակ, ընկերությունների գործունեություն, նոր ծառայությունների մատուցում, միջազգային շուկայի ազդեցությունն այս ոլորտների վրա և այլն:

Լեզվական մակարդակում նորությունների տեքստերը բնութագրվում են լեզվաոճական կայուն հատկանիշներով. թեմատիկորեն կապված մեծ թվով բառակապակցությունների և կաղապարների առկայություն, տեքստաստեղծման տարրերի կիրարկում՝ արտահայտություն–հանգույցներ, տեղեկությունների աղբյուրների հղումներ, մեջբերումներ:

Նորությունների տեքստերը ազգամշակութային գաղափարախոսական համատեքստի կարևորագույն մասն են՝ որպես այս կամ այն խոսող կոլեկտիվի մշակութային–խոսքային գործունեության արդյունք: Գաղափարախոսական նշութավորումը կարող է արտահայտվել ինչպես արտակա արժևորման և մեկնաբանությունների միջոցով, այնպես էլ ներակայորեն՝ փաստերի ընտրության և իրադարձության՝ որպես նորության արժևորման մակարդակում:

Նորությունների տեքստերի նշանակությունը զանգվածային լրահոսում մեծանում է վերջիններիս բարձր կրկնողականության և վերարտադրողականության շնորհիվ: Զանգվածային հաղորդակցության գործընթացի հատուկ կազմակերպումը հնարավորություն է տալիս (դրա մասնակիցներն են տեղեկատվական

գործակալությունները, հասարակական հաստատությունները և առանձին ՋԼՄ-ներ) միևնույն իրադարձության մասին տեղեկույթը միաժամանակ տարածելու բազմաթիվ ուղիներով և բազմազան տարբերակներով: Այսպիսով՝ հիմնական հաղորդումը կամ «նորությունը», որը գոյություն ունի անփոփոխակի տեսքով, նորությունների որոշակի տեքստերում իրագործվում է տարբերակների լայն տարրապատկերով: Մի կողմից կրկնողականության հատկանիշը նպաստում է զանգվածային լրատվության իրականության մեջ նորությունների տեքստերի տեսակարար կշռի ավելացմանը՝ ստեղծելով տեղեկատվության կառուցիկ և կարգավորված լրահոս, մյուս կողմից՝ նպաստում է զանգվածային լսարանի վրա տեղեկատվական ազդեցության ուժգնացմանը:

Տեղեկատվական-վերլուծական տեքստերը նորությունների տեքստերի կարծես թե ընդլայնված տարբերակներն են՝ վերջիններից տարբերվելով ոչ միայն տեղեկատվական, այլև մեկնաբանող, վերլուծական մասի առկայությամբ: Ընդ որում, վճռորոշ նշանակություն ունեն վերլուծական բաղադրիչը, մեկնաբանությունը, կարծիքը և արժևորումը, որոնք թույլ են տալիս տեղեկատվական-վերլուծական տեքստերը սահմանազատել նորությունների տեքստերից և դիտարկել դրանք որպես ՋԼՄ-ների տեքստերի առանձին տեսակ:

Տեղեկության և մեկնաբանության, տեղեկության և կարծիքի, տեղեկության և արժևորման հետևողական սահմանազատումը «որակյալ լրագրության» բնորոշ հատկանիշներից մեկն է, որը միտում ունի իրադարձությունները լուսաբանել պատշաճ օբյեկտիվությամբ և անկողմնակալությամբ:


Սույն աշխատության մեջ դիտարկվում են նորությունների և տեղեկատվական-վերլուծական տեքստերի այն տեսակները, որոնք ինքնատիպ առանձնահատկություններ ունեն, թեմատիկորեն միավորված են տնտեսությանը և ձևավորում են յուրօրինակ դիսկուրսի ձևաչափ՝ նկարագրելով տնտեսական իրադարձությունը ՋԼՄ-ների դիտանկյունից:

2.4. Տնտեսական դիսկուրսի և մեդիադիսկուրսի հատումը՝ որպես հնարավոր այլընտրանքային աշխարհ

Մեր ուսումնասիրության առարկան տնտեսական իրադարձությունն է՝ տնտեսական դիսկուրսում լուսաբանվող մի միավոր, որը ներկայացվում է ՋԼՄ-ներում, մասնավորապես՝ մամուլում: Այստեղ հարկ է նշել, որ Յու. Ստեպանովի առաջարկած՝ դիսկուրսի՝ որպես հնարավոր այլընտրանքային աշխարհի մեկնաբանությունը հիմնարար գիտական հիմք է ծառայում սույն ատենախոսության համար, քանի որ տվյալ դեպքում ուսումնասիրվում է տնտեսական դիսկուրսի դրսևորումը ՋԼՄ-ներում՝ իբրև մի խոսության համաձուլվածք, որն ունի սեփական կանոններ, խնդիրներ և նպատակներ (Степанов, 1995: 44): Լեզվաբանի՝ «դիսկուրսը «լեզու է լեզվի մեջ» սահմանումն ավելի քան բացահայտում է վերը նշված դիսկուրսների միասնության գաղափարը, որտեղ համատեղվում են տնտեսական թեմատիկայով ՋԼՄ-ների և գիտական դիսկուրսներին բնորոշ հատկանիշները: Այսպես՝ Ս. Գուբիկը ընդգծում է տնտեսական մեդիադիսկուրսի հիբրիդային (խառնածին) բնույթը, որի էությունը զանգվածային-տեղեկատվական և գիտական դիսկուրսների հատումն է: Այս դիսկուրսի առանձնահատկությունը պայմանավորված է դրա նպատակների, այն է՝ տեղեկացում և ազդեցություն, երկակիությամբ: Դրա համապատասխան ռազմավարությունները հիմնականում բնորոշվում են մի կողմից տնտեսական դիսկուրսի առանձնահատկություններով, իսկ մյուս կողմից՝ հիմնված են ՋԼՄ-ների դիսկուրսի ձևավորման սկզբունքների վրա: Տնտեսական մեդիատեքստերում էական տեղ են զբաղեցնում մեկնաբանությունները՝ այս տեքստերին տալով վերլուծական բնույթ և դրանք ավելի մոտեցնելով գիտական տեքստերին (Губик, 2006):

Այսպիսով՝ տնտեսական մեդիադիսկուրսը խոսության յուրօրինակ համաձուլվածք է, հնարավոր այլընտրանքային աշխարհ, որն ունի բնորոշ գծեր և առանձնահատկություններ, որոնք էլ մեր հետազոտության առարկան են: Այս այլընտրանքային աշխարհը կարելի է պատկերել հետևյալ գծապատկերով՝

Գծապատկեր 1.



Սույն աշխատության մեջ, մասնավորապես, ուսումնասիրվում է տնտեսական մեդիահոդվածների խոսուբային ձևաչափը, որի թեմատիկան, ինչպես ցույց է տալիս փաստական նյութի վերլուծությունը, ներառում է տարատեսակ տնտեսական հիմնախնդիրներ (համաշխարհային տնտեսության զարգացման ժամանակակից միտումներ, գլոբալացման կարևորագույն ուղղություններ, համաշխարհայնացման պայմաններում երկրների հասարակական, տնտեսական և քաղաքական զարգացում, միջազգային տնտեսական հարաբերությունների համակարգում տարբեր երկրների մասնակցություն, արտադրողական ուժերի և տնտեսական հարաբերությունների արդի կառուցվածք ու զարգացման օրինաչափություններ և այլն): Այս խոսուբային ձևաչափում ներկայացված են տնտեսական տարբեր համակարգերի և շուկայական տնտեսության մի շարք կաղապարների առանձնահատկություններ, վերլուծվում են համաշխարհայնացման երևույթը տնտեսության մեջ և դրա ազդեցությունն ազգային-պետական տնտեսական համակարգերի գործունեության վրա, դիտարկվում են հասարակական, բնապահպանական, ժողովրդագրական, պարենամթերային, անդրազգային ընկերությունների, միջազգային և տարածաշրջանային տնտեսական կազմակերպությունների գործունեությանը, արտաքին առևտրին, կապիտալի համաշխարհային շուկային, տնտեսական համագործակցության զարգացման հեռանկարներին, առանձին երկրների տնտեսական զարգացման հիմնական ուղղություններին, տնտեսական բարեփոխումների արդյունքներին, ֆինանսական ոլորտին առնչվող հիմնախնդիրներ և այլն:

Այս ընդհանուր կարգերի շարքում առանձնացնում են տնտեսագիտական առավել որոշակի հասկացություններ, որոնք ներկայացվում են համապատասխան

լեզվարտահայտչական միջոցներով: Այսպես՝ միջազգային տնտեսական հարաբերությունների կարգախմբում առանձնանում են հանրատնտեսագիտական՝ արտաքին առևտուր, աշխատուժի արտագաղթ, կապիտալի շարժ, արտարժույթային հարաբերություններ, գիտատեխնիկական արտադրական համագործակցություն հասկացությունները: Ընկերությունների աճի ու զարգացման ոլորտը ներառում է ընկերությունների միաձուլման և ընդլայնման, արտադրության անդրազգայնացման, մրցակցային պայքարի վերաբերյալ և այլ հասկացություններ: Համաշխարհային ֆինանսական հիմնախնդիրների կարգախմբում հանդիպում են հանրատնտեսագիտական այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են արժեզրկումը, ներդրումները, համաշխարհային տնտեսական ճգնաժամը և այլն [8]:

Տնտեսական մեդիադիսկուրսի գործառույթներն են.

Տեղեկատվական, երբ դիսկուրսը վավերագրական–փաստագրական բնույթ ունի և ենթադրում է տեղեկության ճշգրտություն, դրա ընկալման կոորդինատների միասնական համակարգի ստեղծում, լրագրողի՝ վերլուծելու և ընդհանրացնելու կարողություն, փաստերի ու իրադարձությունների լուսաբանման օբյեկտիվություն և առավելագույնս հակիրճ խոսք (Кожина, 2008): Տնտեսական մեդիադիսկուրսի հոդվածներում, համապատասխան դիսկուրսի միջոցով, ընթերցողներին տեղեկացնում են տնտեսական աշխարհի իրադարձությունների, առանձին երկրներում տնտեսության վիճակի, բորսաներում ֆինանսական գործարքների, արտարժույթի փոխարժեքի փոփոխության, այս կամ այն ավանդի հուսալիության և այլնի մասին: Այսպես՝ հետևյալ օրինակում տեղեկություն է հաղորդվում ԱՄՆ-ի խոշոր ընկերությունների արժեթղթերի արժեքի անկման վերաբերյալ: Ներկայացված են ճշգրիտ տվյալներ և իրադարձության պատճառները.

Major U.S. stock indexes spent most of the day with gains but abruptly fell late in the session, bringing the S&P 500's loss in the past week to 2.2 percent, in large part because of fears that a fractured EU could critically damage an already feeble global economy. (www.reuters.com, June 15, 2016)

Հետաքրքրաշարժ, երբ տնտեսական մեդիադիսկուրսում հրապարակվում են հետաքրքիր փաստեր, արտասովոր տվյալներ՝ կիրառելով լեզվական յուրօրինակ

հնարներ՝ բառերի անսովոր համադրություն, բառախաղի տարրեր, հանրահայտ ասացվածքներ և այլն [9]:

Օրինակ՝ հետևյալ նախադասության մեջ արևի էներգիա արտադրող մի ընկերություն համեմատվում է աշխարհահռչակ «Apple» ընկերության հետ.

It is a company that promises to revolutionise the way solar power is used and to become the **Apple** of green energy. (www.ft.com, January 28, 2015)

Լեզվամիավորների և շարահյուսական կառույցների կրկնությունը միևնույն նախադասության մեջ կարող է խոսքն ավելի ազդեցիկ դարձնել, ինչպես հետևյալ հոդվածային վերնագրերում.

Water, Water Everywhere (www.economist.com, May 9, 2015)

A **penny** here, a **penny** there (www.economist.com, May 9, 2015)

Ասացվածքների կիրառումը ևս մի միջոց է հոդվածի ընթերցումը հետաքրքրաշարժ դարձնելու համար.

Knowledge is power (www.economist.com, May 9, 2015)

Կրթական, երբ տնտեսական մեդիադիսկուրսին բնորոշ է տնտեսագիտական գիտելիքների զանգվածայնացումը, գիտաբառերի բացատրությունը, տնտեսական որոշակի իրադարձությունների մեկնաբանումը և այլն: Այսպես՝ հետևյալ օրինակում նշվում է «դեֆլյացիա» եզրույթը և տրվում վերջինիս բացատրությունը, այն է՝ գնանկում.

Fear of **deflation**, or **falling prices**, is scaring central banks in the eurozone and Japan. (www.bbc.com, January 29, 2016)

Կամ խոսվում է Եվրոպական միության կազմից Մեծ Բրիտանիայի դուրս գալու՝ աղմկահարույց իրադարձության մասին, որի առիթով նույնիսկ ստեղծվել է «Brexit» լեզվամիավորը: Հոդվածում տրվում է վերջինիս բացատրությունը. What does Brexit mean?

It is a word that has become used as a shorthand way of saying the UK leaving the EU – merging the words **Britain** and **exit** to get Brexit, in a same way as a Greek exit from the EU was dubbed Grexit in the past. (www.bbc.com, June 22, 2016)

Ավելին, լրագրողները հրապարակում են որևէ տնտեսական իրադարձության սահմանմանը, պատճառներին, հետևանքներին վերաբերող հոդվածներ: Օրինակ՝

What Caused the Financial Crisis? (www.wsj.com, January, 27, 2011) հողվածում քննարկվում են 2007 թ. ֆինանսական ճգնաժամի պատճառները, փորձ է արվում վեր հանելու բանկային համակարգի սխալները, տվյալ տնտեսական իրադարձության հետևանքները, մշակելու վարկածներ և այլն:

Գովազդային, երբ տնտեսական մեդիադիսկուրսն առավելապես պարունակում է քողարկված հանձնարարականներ՝ օգտվել որոշակի ծառայություններից, ուշադրություն դարձնել տվյալ ընկերություններին, տնտեսական գործընթացներին և այլն: Ընդ որում, հեղինակը փորձում է «սադրել» ընթերցողին և ուղղորդել իրեն ցանկալի հունով՝ որոշակի տեղաշարժ կատարելով հասցեատիրոջ արժեհամակարգում (Леонтьев, 1974: 36–37):

Օրինակ՝ www.theguardian.com կայքում տեղ գտած հետևյալ հողվածը նվիրված է Samsung ընկերության արտադրած հեռախոսի վերջին մոդելին՝ «Samsung Galaxy S7 Edge»-ին: Հողվածի գովազդող բնույթը նշմարվում է արդեն իսկ վերնագրում, որտեղ գրված է, որ սույն մոդելը հաղթանակ է մատնանշում.

Samsung Galaxy S7 Edge review: this is the smartphone to beat

Այնուհետև, մի շարք գրավիչ խոսքերից (*fantastic, more comfortable, easier to hold, a well-crafted piece* և այլն) հետո, հողվածի հեղինակը նշված հեռախոսը համեմատում է «Apple» ընկերության արտադրած վերջին մոդելի հետ՝ շեշտելով վերջինիս բացասական կողմերը: Այսպիսով՝ լրագրողը փորձում է փոխել ընթերցողի կարծիքը և խթանել «Samsung» հեռախոսների վաճառքը.

In the hand it feels *fantastic*, much more *comfortable* and *easier to hold*. On the table it looks like a *well-crafted piece of technology* should. The curved edges and minimal bezel of the 5.5in phone make the S7 Edge *one of the physically smallest phablets to date*. It is *narrower* than many smartphones with much smaller screens and is *shorter* too. It makes it *really easy to use*, particularly next to Apple’s iPhone 6S Plus, which feels massive and unwieldy in comparison. (www.theguardian.com, March 11, 2016)

Գաղափարախոսական, երբ տնտեսական մեդիադիսկուրսով զանգվածային լսարանին են ներկայացվում տնտեսական և քաղաքական իրադարձություններն ու երևույթները՝ որոշակի գաղափարախոսական, արժեհամակարգային տեսանկյունից, որն արտահայտվում է մի շարք փաստերի ընտրությամբ, արժևորող բառապաշարի

կիրառմամբ, որոշ երևույթների, փաստարկումների համադրմամբ և այլն: Օրինակ՝ հետևյալ հոդվածում խոսքը «Alibaba» առցանց կայքում կեղծված ապրանքների վաճառքի մասին է: Հոդվածի վերնագիրը մեկնարկում է «Alibaba» ընկերության հիմնադիր Ջեք Մայի այն խոսքով, թե կեղծված ապրանքները ավելի որակյալ են.

Counterfeits offer better quality, says Alibaba's Jack Ma

Ներածական մասում նորից նշվում է չինական արտադրության կեղծված ապրանքների ավելի լավ որակի մասին, ինչպես նաև գրվում է, որ այլ վաճառողներ մեղադրում են «Alibaba» ընկերությանը կեղծված ապրանքների վաճառք թույլ տալու համար.

Many Chinese-made counterfeit products are now of "better quality" than the genuine article, the founder of ecommerce giant Alibaba has said.

Alibaba has been accused by other retailers of tolerating the sale of counterfeits.

Սակայն, Ջեք Ման, նշելով, որ ընկերությունը ինչ-որ քայլեր կձեռնարկի այս խնդիրը լուծելու համար, միաժամանակ արդարանում է՝ այսօրվա կեղծ ապրանքներն ավելի որակյալ են, ավելի մատչելի, քան իրական ապրանքանիշները, արտադրվում են նմանատիպ գործարաններում, օգտագործում են միևնույն հումքը, բայց ոչ համապատասխան ապրանքանիշների անունները.

But Mr Ma said the company would "do anything" to tackle the fakes.

"The problem is that the fake products today, they make better quality, better prices than the real names," he said on Tuesday.

"The exact factories, the exact same materials, but they do not use their names."

Այնուամենայնիվ, հիմնադիրը խոստանում է լուծել այս խնդիրը և որոշակիորեն սահմանափակել է թանկ ապրանքների վաճառքը՝ պահանջելով վաճառողներից ապրանքների իսկության ապացույցներ ներկայացնել.

But he said Alibaba was "more and more confident than ever that we can solve the problem."

Taobao, Alibaba's popular online shopping platform, tightened controls earlier last month on its sale of luxury goods, requiring sellers to show proof of authenticity. (www.bbc.com, June 15, 2016)

Այսպիսով՝ նշված հոդվածով «Alibaba» ընկերության հիմնադիրը փորձում է

ուղղակիորեն ազդել մարդկանց գիտակցության վրա, փոխել նրանց վերաբերմունքը կեղծված ապրանքների որակի նկատմամբ:

Հարկ է նշել, որ տնտեսական մեդիադիսկուրսի տեղեկատվական, հետաքրքրաշարժ, կրթական, գովազդային, գաղափարախոսական գործառույթները փոխկապված են: Դրա առանձին միավորներ կարող են կատարել ինչպես մեկ որոշակի գործառույթ, այնպես էլ՝ զուգակցել մի քանիսը: Մեր կողմից ուսումնասիրված տեքստերի վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանց հատուկ են նշված բոլոր գործառույթները, ընդ որում, կա՛մ դրանք ներդաշնակորեն համադրվում են, կա՛մ որոշակի տեքստերում այս կամ այն գործառույթը գերակշռում է:

Ըստ վերոնշյալ ակնարկի՝ կարելի է ենթադրել, որ աշխատության մեջ վերլուծվող՝ տնտեսական մեդիադիսկուրսը միջանկյալ երևույթ է, հնարավոր այլընտրանքային աշխարհ, որտեղ համադրվում են դիսկուրսի այլ տեսակների մի շարք գծեր և, միաժամանակ, դա հանդես է գալիս որպես սեփական հատկանիշներ ունեցող, հատուկ բնույթի դիսկուրս:

Տնտեսական մեդիադիսկուրսում առկա է նաև գիտելիքի մատուցման գործընթացը՝ ըստ տնտեսական որոշակի իրողությունների, երևույթների, դրանց հատկանիշների, որակի վերաբերյալ համապատասխան տեղեկատվության: Այն առանձնանում է թեմատիկ բնույթով, ինչը կարող է մասնագիտական որոշակի ուղղվածության դիսկուրսի տպավորություն ստեղծել, սակայն մասնագիտական թեմատիկան ներկայացված է այնպես, որ հետաքրքրություն առաջացնի ոչ մասնագետների, յուրաքանչյուր լսարանի շրջանակում: Տնտեսական մեդիադիսկուրսի գործառույթների ամբողջության արդյունքում ստեղծվում է տնտեսական ընդհանրացված թեմատիկայով տեքստ, բայց յուրաքանչյուր դեպքում՝ որոշակի ենթաթեմայով՝ հատուկ ձևավորած լսարանի ուշադրությունը հասարակական կյանքի տնտեսական ոլորտի արդի հրատապ գործընթացների վրա սևեռելու նպատակով, քանի որ դրանք չափազանց կարևոր են և վերաբերում են յուրաքանչյուր ընթերցողի, ստեղծված են տվյալ լրատվամիջոցի ընթերցողի համար՝ հասկանալի և հետաքրքիր լինելու սկզբունքով:

Տնտեսական մեդիադիսկուրսի «լրագրային հոդված» ձևաչափի նպատակը հասարակության տնտեսական կյանքի իրադարձությունների լուսաբանումն է,

տնտեսության վիճակի մասին տեղեկատվության ստացումը կամ հաղորդումը, տարբեր փոփոխությունների նկատմամբ որոշակի վերաբերմունքի ձևավորումը և համապատասխան գործողությունների դրդումը, տնտեսության զարգացման ուղղությունների ուսումնասիրությունը և այլն:

Այսպիսով՝ խոսելով տնտեսական իրադարձության մասին ՁԼՄ-ների համատեքստում, մենք դիտարկում ենք իրադարձությունը ոչ թե միայն գոյաբանական տեսանկյունից, այլև բոլոր այն գործոնների, որոնց նպատակը ընթերցողին տնտեսական իրադարձության վերաբերյալ որոշակի տեղեկատվություն հասցնելն է:

2.5.1. Տնտեսական մեդիադիսկուրսի առկայացումը «լրագրային հոդված» ձևաչափում

Հայտնի է, որ լրագրային հոդվածները պատրաստվում են որոշակի ձևաչափով: Այսպես՝ մամուլում նորությունների տեքստերի մեծ մասը գրվում են լրագրությանը հայտնի՝ «շրջված բուրգ» (*the inverted pyramid*) սկզբունքով, ինչը ենթադրում է ամենաարժեքավոր և կարևոր տեղեկությունների հաղորդում տեքստի սկզբում, ընդ որում, տեղեկատվական հիմնական մասը խտացնելով առաջին արտահայտության մեջ, որն ամփոփ ձևով ներկայացնում է հաղորդագրության գերակա բաղադրիչները: Տեքստի ծավալմանը զուգընթաց տեղեկատվական հագեցվածությունը հետզհետե նվազում է:

Լրագրողների մեծամասնությունը հակված է կիրառելու «շրջված բուրգի» սկզբունքը, քանի որ նորությունների հաղորդման նմանատիպ կառուցվածքը հարմար է ինչպես ընթերցողների, այնպես էլ խմբագրի համար: Ընթերցողը տեքստի առաջին իսկ պարբերությունից հասկանում է՝ արդյո՞ք տվյալ տեղեկույթը հետաքրքրում է իրեն, թե՞ ոչ: Խմբագիրն էլ, առանց բովանդակությանը լուրջ վնաս հասցնելու, կարող է կրճատել նյութը՝ էջատման պահանջներին համապատասխան (Ytreberg, 2001, Yaros, 2006):

Համացանցում արձարծվող նորությունների տեքստերը բնորոշվում են տպագիր ՁԼՄ-ների տեքստերի ձևաչափային հատկանիշներով՝ տեղեկության համառոտ և

ընդգրկուն ներկայացում, դրա հստակ տեղաբաշխում՝ ըստ բովանդակային անվանակարգերի և թեմատիկ խմբերի, աչքի զարնող, ուշագրավ խորագրեր:

Տնտեսական իրադարձություն լուսաբանող լրագրային տեքստն ունի հստակ կառուցվածք՝ վերնագիր, ներածական մաս, հիմնական մաս և եզրակացություն: Յուրաքանչյուր մասին հատուկ են որոշակի գործառույթներ, նպատակներ և ուղղվածություն՝ տեքստային հաղորդագրության ձևով փոխանցելու տեղեկույթի բովանդակությունը և դրանով իսկ ենթադրելով տնտեսական որոշակի իրադարձության հաջորդիվ լուսաբանումը՝ արթնացնելով ընթերցողի հետզհետե աճող հետաքրքրությունը: Նշված բաղադրիչների հաջորդականությունը կարող է փոխվել՝ պայմանավորված հոդվածի և լրագրողական շահերի առանձնահատկություններով (van Dijk, 1991: 114):

Լրատվական տեքստի վերնագիրը տեղեկույթի թեմատիկ հակիրճ շարադրանքն է՝ արտահայտված հոդվածի անվանմամբ, որն ընթերցողին ծանոթացնում է հիմնական հաղորդագրության բովանդակությանը՝ հետաքրքրություն առաջացնելով իմաստի ընկալման, տեղեկությունների մանրամասն ուսումնասիրության նկատմամբ (Максютова, 1982): Վերնագրի ձևով նախօրոք ծրագրավորված, ֆոնային հակիրճ տեղեկություն ստեղծելիս՝ հեղինակը հիմնականում որպես թիրախ է ընտրում ընթերցողի հուզական աշխարհը և նրա մտածողությունը, ուղղորդում նրան դեպի այդ տեղեկության ընկալումը՝ ըմբռնելու այն իմաստը, որն ինքը նախատեսել է հաղորդագրությունը պլանավորելիս և իմաստային մանրամասներ կառուցելիս, այսկերպ ստիպելով իր կողմն անցնել և հետևել իր՝ հեղինակի աշխարհայացքին: Ինչպես նշում է Ե. Երզնկյանը. «Ժամանակակից լեզվաբանության մարդակենտրոն մոտեցումը, որը ենթադրում է լեզվի և մարդու (մտածողության) միջև գոյություն ունեցող անքակտելի կապ, խոսքաստեղծման և աշխարհընկալման գործընթացում դրանց փոխներգործություն և փոխազդեցություն, կարևոր դեր է հատկացնում խոսողին, ում շնորհիվ լեզուն վերածվում է ոչ միայն և ոչ այդքան հաղորդակցման միջոցի, այլ հասցեատիրոջ վրա ներգործելու գործիքի» (Ерзинкян, 2013: 39–40): Այս պարագայում խոսողը/լրագրողը կիրառում է մանիպուլյացիայի հմուտ գործիքակազմ՝ հասնելու իրեն ցանկալի արդյունքի [10]:

Ներածական մասը, որպես լրագրային տեքստի կառուցվածքային բաղադրիչ,

տեղեկույթի ելակետն է, որը հիմք է ստեղծում դրա հետագա տրամաբանական կապակցվածության համար: Լինելով տնտեսական տեղեկույթի առաջին մասնաբաժինը, որի իմաստային ընդլայնումը կատարվելու է հիմնական մասում՝ ներածական մասը ուսումնասիրության ենթակա տեղեկույթի հետագա տրամաբանական համալիր համադրման և շարադրանքի հիմքն է: Այն կարող է կա՛մ արթնացնել ընթերցողի հետաքրքրությունն ավելի խորությամբ ուսումնասիրելու հաղորդագրությունը՝ որոշակի մանրամասներ բացահայտելու համար, կա՛մ մարել այն (Москальская, 1981):

Հիմնական մասը լրագրային տեքստի որոշարկող, բացահայտ տարրն է՝ ուղղված սեղմ տեղեկույթի ընկալմանը, որը ներկայացվել է վերնագրում և հետզհետե «բացվել» հաղորդագրության ներածական մասում: Լրագրային տեքստի հիմնական մասի նպատակն ընթերցողին հաղորդագրության մեջ ամփոփված տեղեկությունները հասցնելն է՝ բացահայտելով այն իմաստը, որ հեղինակը նախատեսել է կազմելիս, ինչպես նաև ընթերցողին համոզելը, որ հեղինակի դատողությունները որոշակի իրադարձության մասին ճշգրիտ են՝ անընդհատ փաստարկելով իրադարձության զարգացման գործընթացը: Այս ամենը, ըստ Թ. վան Դեյքի, իրագործվում է հատկորոշման, շրջասության, օրինակի, հակադրության և այլ գործառույթների օգնությամբ: Ընդ որում, նորությունների հրապարակումներում ամենից հաճախ կիրարկվում է հատկորոշման գործառույթը. առավել ընդհանրացված տեղեկույթ պարունակող նախադասություններին հետևում են մանրամասն տվյալներ հաղորդող նախադասությունները (van Dijk, 1991):

Լրագրային տեքստի եզրափակիչ մասը կատարում է ամփոփիչ գործառույթ՝ ի մի բերելով ողջ հաղորդագրության արդյունքները՝ դրանով իսկ տրամաբանական ավարտի հասցնելով այն: Բացի այդ, տնտեսական մեդիադիսկուրսում տեքստի եզրափակիչ մասը հաճախ կարող է կանխատեսել այն, ինչը կատարվելու է ապագայում՝ ելնելով ստեղծված հանգամանքներից: Այստեղ հեղինակը կարող է առաջարկել նոր տեղեկություններ՝ իրավիճակը ողջ ծավալով բացահայտելու համար, առաջադրել նոր հիմնախնդիր, որը տրամաբանորեն բխում է վերլուծված հաղորդագրությունից և լուծում պահանջում: Արդյունքում ընթերցողը սկսում է մտորել՝ փորձելով գտնել դրա լուծման ձևերը:

Կառուցվածքային այս կաղապարն իրագործվում է լրագրային բոլոր տեսքերում: Վերլուծենք տնտեսական իրադարձություն լուսաբանող մի տեսքով կառուցվածք, որը տեղադրվել է www.theguardian.com կայքում: Սույն իրադարձության վերնագիրն արդեն իսկ ամփոփ կերպով ընթերցողին է փոխանցում դրա հիմնական բովանդակությունը՝ ներառելով թե՛ եղելության պատճառը և թե՛ հետևանքը: Լրագրողն այսկերպ տրամադրում է ողջ տեղեկույթը («Virgin America» ավիաուղիների բաժնետոմսերի արժեքը բարձրացել է այն բանից հետո, երբ ընկերությունը սկսել է փնտրել գնորդներ)՝ ընթերցողի հայեցողությանը թողնելով հողվածի հետագա ընթերցումը: Այսպես՝

Virgin America shares soar on reports that airline is seeking buyers

վերնագրով հողվածի ներածական մասում տեղեկույթը մի փոքր ընդլայնվում է՝ հաղորդելով տարածաժամանակային մանրամասներ (on Wall Street on Wednesday), ինչպես նաև տվյալներ ընկերության հիմնադրի մասին (the airline founded by British entrepreneur Sir Richard Branson): Նյութն ավելի պատկերավոր դարձնելու նպատակով գրեթե բոլոր դեպքերում ներածական մասից հետո ներկայացվում է լուսանկար՝ կապված առկա տվյալների հետ (այս դեպքում դա Virgin America ավիաուղիներին պատկանող ինքնաթիռի լուսանկարն է):



Virgin America shares soared on Wall Street on Wednesday following reports that the airline founded by British entrepreneur Sir Richard Branson is considering selling itself to a third party.

Հողվածի հիմնական մասի առաջին պարբերությունում ընթերցողին հաղորդվում են մանրամասներ ընկերության գործունեության վերաբերյալ՝ կրկնելով տեղեկույթը բաժնետոմսերի արժեքի աճի մասին, ինչպես նաև տրամադրելով ֆինանսական որոշ տվյալներ (shares were up \$4.10 to \$34.78 at 11.15am, valuing the company at \$1.5bn (£1.05bn)):

Shares in Virgin America, which was launched by Branson in 2007 and now flies to 21 destinations within the US and Mexico, rose as much as 13% following a Bloomberg report that the company is reaching out to potential buyers. The shares were up \$4.10 to \$34.78 at 11.15am, valuing the company at \$1.5bn (£1.05bn).

Այնուհետև, անդրադառնալով ընկերության խոսնակի հայտարարությանն առ այն, որ իրենց ռազմավարություններից է չմեկնաբանել որևէ տեղեկույթ՝ կապված ավիատղիների միաձուլումների կամ ձեռքբերումների հետ, հաջորդում են տվյալներ կազմակերպության հիմնադրման պատմությունից, բնութագրվում է ապրանքանիշը, լուսաբանվում են 2014 թ. հաջողությունները.

A Virgin America spokeswoman said: “As a public company, we have a policy of not commenting on any market or media speculation concerning mergers or acquisitions involving Virgin America.”

News of the potential sale comes just a year and a half after the company, which according to Bloomberg is 30.85% owned by Branson’s VX Holdings, floated on the Nasdaq in New York. At the time of the initial public offering (IPO) in November 2014, Virgin America was valued at just over \$1bn.

The budget airline has attempted to differentiate itself from established competitors in the US by giving itself a cheeky and playful image with purple mood lighting and planes named Virgin & Tonic and Jefferson Airplane.

Virgin America made a pre-tax profit of \$61m on sales of \$1.4bn in 2014, according to its annual statement released last month. At the time, Dan Cush, the airline’s president and chief executive, said: “2014 was a remarkable year for Virgin America on every front.

We achieved record profitability and significantly strengthened our balance sheet by going public in the second largest airline IPO in history.

Հողվածի եզրափակիչ մասում ներկայացվում է ավիատղիների նախագահի գովեստի խոսքն ընկերության՝ բոլոր առումներով հաջողակ գործունեության մասին, այդպիսով ակնարկելով, այն վերելքի մասին, որի շնորհիվ հնարավոր է նոր ներդրողներ ներգրավել:

“Both our existing and new investors have shown confidence in our low-cost, high-amenity business model – and we’ve continued to sweep the major travel awards for both operational excellence and our innovative service.” (www.theguardian.com, March 23, 2016)

2.5. 2. Տնտեսական մեղիադիսկուրսի մեկնաբանության մեթոդաբանություն

Ճանաչողական լեզվաբանությունը դիսկուրսի ուսումնասիրության գործում առանձնացնում է գիտելիքի պահպանման, վերհանման և փոխանցման խնդիրներ, որոնք կապված են տեքստաստեղծման և ընկալման հետ: Ժամանակակից տեսությունների համաձայն՝ ընկալումն ավելին է, քան սոսկ մեզ հասու՝ տարբեր տեսակի տեղեկատվության հավաքագրումը: Իրականում դա ստեղծագործական բարդ և բազմաշերտ գործընթաց է, որն ունի նպատակային բնույթ, այսինքն՝ ուղղված է մի շարք խնդիրների լուծմանը: Ընկալումը ներառում է երևույթների և գործընթացների լայն շրջանակ, ներառյալ՝ մարդու հետ կատարվածի պարզ գիտակցումը, ինչպես նաև սենսորային և զգայական փորձի ընդհանրացումը շրջակա աշխարհի արտացոլմամբ (Кыбрякова et al., 1996): Ընկալման ուսումնասիրության ընթացքում հաշվի են առնվում այնպիսի գործոններ, ինչպիսիք են ընկալման մտադրությունը, անհատի դրդապատճառները, ընկալման համատեքստը և այլն:

Խոսքի ընկալումը, ինչպես և ընկալման ամեն մի ձև, սկզբունքորեն ենթարկվում է այս բոլոր ընդհանուր օրինաչափություններին (Леонтьев, 2005, Залевская, 2000): Տվյալ տեսությունը ենթադրում է, որ խոսքի ընկալման հիմքում այն գործընթացներն են, «որոնք առնվազն մասամբ դեր ունեն խոսքաստեղծման գործում» (Леонтьев, 2005: 70): Այլ կերպ ասած, ունկնդիրը հենց սկզբից սկսում է ենթադրություններ անել եկող

ազդանշանի վերաբերյալ: Հիմնվելով այս ենթադրության վրա՝ նա ստեղծում է ներքին ազդանշան, որը համեմատելի է եկողի հետ: Առաջին փորձը կարող է և սխալ լինել. այս դեպքում ուղղում է կատարվում, որն օգտագործվում է հետագա ենթադրությունների մշակման համար: Այս գործընթացը տևում է այնքան ժամանակ, մինչև ունկնդիրը կատարում է ընտրություն, որն առավել համապատասխան է տվյալ իրադրությանը (Kintsch, 1988: 164–165):

Հաջորդ փուլում իրականացվում է ստացված տեղեկատվության մշակում, մեկնաբանում և ընկալում: Որոշ լեզվաբաններ սահմանազատում են *մեկնաբանում* և *ընկալում* գիտաբառերը, նշելով, որ ընկալումը սոսկ կանոններ է ապահովում մեկնաբանման համար (Щирова, Тураева, 2005: 75): Թերևս, մեկնաբանման և ընկալման այսպիսի մոտեցման դեպքում խոսքը վերաբերում է վերջիններիս հարաբերակցության՝ որպես գործընթացի և նրա արդյունքի (Нисанов, 1989):

Մեկնաբանումը բաղկացած է երեք փուլից: Առաջինն ընկալման գործընթացն է, որի միջոցով տեղի է ունենում ունկնդրվող կամ ընթերցվող տեղեկատվության ապակողավորում: Երկրորդ փուլում կատարվում է շարահյուսական վերլուծություն, որի ժամանակ տեղեկատվության բառերը փոխակերպվում են բառիմաստների հետ համատեղելի մտավոր ներկայացման: Երրորդ փուլում ընդունողն արդեն կիրառում է նախադասության իմաստի մտավոր ներկայացումը: Այս երեք փուլերը կարող են կա՛մ միմյանց հաջորդել, կա՛մ իրար վրա շերտադրվել (Андерсон, 2002) [11]:

Մեկնաբանումը, որպես նպատակային ճանաչողական գործունեություն, մեկնաբանողի աշխարհում ներդաշնակություն է ապահովում (Демьянков, 1997): Այս ընթացքում ասույթը, որը դարձել է մեկնաբանման առարկա, ենթարկվում է խոսքային վերակառուցման, այլ կերպ ասած, լսողը փորձում է վերականգնել խոսքաստեղծման գործընթացը, որի ժամանակ օգտագործվում են տարբեր աղբյուրներից արտամղվող տվյալներ: Ժամանակակից հոգեբանության դրույթների համաձայն՝ մարդու կողմից արտաքին աշխարհից տեղեկատվության ստացումը երկար ճանապարհ է անցնում, որը, զգայական օրգանների ակտիվ գործունեության հետ մեկտեղ, ներգրավում է նրա ակտիվ գործունեությունը, նախորդ փորձը, նաև լեզվի կիրառումը՝ այդպիսով պահպանելով սերունդների փորձը և թույլ տալով դուրս գալ անմիջական տեղեկատվության սահմաններից (Володина, 2008): Այսպես՝ ընթերցված տեքստի

տեղեկատվությունը չի կարող մեկնաբանվել սոսկ լեզվի մասին գիտելիքի օգնությամբ: Այլ կերպ ասած, ընկալումը ներքին բարդ տարածության մեջ կողմնորոշվելու կարողություն է (Выготский, 1996: 169): Անհրաժեշտ է նաև ունենալ գիտելիք ասույթների և հասարակական համատեքստի վերաբերյալ, ծրագրավորել ու վերահսկել դիսկուրսը, կարողանալ վեր հանել հիշողության առկա տեղեկույթը և այլն:

Ընկալումը բարդ մտավոր գործընթաց է, որը դիտարկվում է որպես գիտակցության մեջ ստեղծվող իրադրության կառուցվածքի հաջորդական փոփոխություն և իրադրային մտածական կենտրոնի՝ մի տարրից դեպի մյուսը տեղափոխման գործընթաց (Брудный, 1975): Այս ամենի արդյունքում առաջանում են ընկալման գործընթացի տարբեր դրսևորումներ՝ տեքստի իմաստի փոխակերպում մեկ այլ ամրագրված ձևի (շրջասածություն, այլ բառերով՝ տեքստի վերարտադրում, տեքստի թարգմանություն, իմաստային խտացում, որի արդյունքներից են սեղմագրերը, ռեֆերատները, բանալի բառերի հավաքածուն, մի խոսքով՝ այն ամենը, ինչը կարող է արտահայտված լինել այլ կերպ (Леонтьев, 2005: 141–142):

Մեկնաբանման հարցում, ինչպես արդեն նշել ենք, անշուշտ մեծ դեր ունեն մեկնաբանողի գիտակցության անհատական առանձնահատկությունները, նաև այն, թե ինչպես է նա ուսումնասիրում տեքստը, ինչ է ցանկանում տեսնել. «Տեքստի ընկալման գործընթացը բազմահայեցակարգային է, նրա հետևում գտնվող աշխարհն ընթերցողը կարող է իմաստավորել տարբեր կերպ, կախված այն բանից, թե ինչ է ցանկանում տեսնել, նպատակային ինչ դիրքից է ուսումնասիրությունը կատարում» (Бахтин, 1979): Դա, իհարկե, չի նշանակում, որ ինչ-որ մի մեկնաբանում «ճիշտ» է կամ համապատասխանում է իրականությանը. «Տարբեր կերպ մեկնաբանելով տեքստը՝ մենք չենք կառուցում տարբեր աշխարհներ: Մենք տարբեր կերպ կառուցում ենք միևնույն աշխարհը: Այդ աշխարհը մենք կարող ենք տեսնել տարբեր դիտանկյուններից, հստակության տարբեր աստիճաններով, կարող ենք տեսնել դրա մի հատվածը՝ ամբողջի փոխարեն» (Леонтьев, 2005: 144) [12]:

Որոշ տեսաբաններ ենթադրում են, որ մարդու ուղեղի կառուցվածքի անհատական առանձնահատկություններով են պայմանավորված նրա մտավոր կառույցների տարբերությունները (Caws, 1974): Այնուամենայնիվ, ունենալով ընդհանուր գիտելիքային կառույցներ, որոնք առաջացել են հասարակական և

անհատական հաղորդակցման ու փորձի արդյունքում, մարդիկ կարողանում են միմյանց հասկանալ:

Ընկալման գործընթացը կարող է իրականանալ նաև ուղեղում՝ անհրաժեշտ տեղեկատվության ակտիվացման շնորհիվ, երբ ընտրողաբար արթնանում են տեղեկատվության այն «փաթեթները», որոնք համապատասխանում են տվյալ իրադարձությանը, մինչդեռ մնացյալը գտնվում են ոչ ակտիվ վիճակում (Just, Carpenter, 1992): Նմանապես, Վ. Քինչը խոսում է մարդու ուղեղում գիտելիքների ցանցի առկայության մասին (knowledge net), ինչն անհրաժեշտության դեպքում ակտիվանում է (Kintsch, 1988): Ընդ որում, հիշողության մեջ առկա տեղեկույթի հասանելիության արագությունն ու հավանականությունը պայմանավորված են հիշողության ակտիվության աստիճանով, որն, իր հերթին, որոշարկվում է՝ ըստ զուգորդվող հասկացույթների ակտիվացման մակարդակի (Anderson, 2015 : 135):

Նորությունների դիսկուրսի ընկալման գործընթացն ուսումնասիրելիս՝ Թ. վան Դեյքը կարևոր եզրակացության է հանգում զանգվածային լրատվամիջոցների բոլոր տեքստերի վերաբերյալ. «ՁԼՄ-ների տեքստերի կառուցվածքը կարող է պատշաճ ձևով ընկալվել միայն մեկ դեպքում. եթե մենք դա վերլուծում ենք որպես լրագրողների՝ տեքստերի և դրանց բովանդակության ստեղծման, ճանաչողական և հասարակական գործունեության, ինչպես նաև ընթերցողների և հեռուստադիտողների՝ տեքստերի մեկնաբանության արդյունք՝ ըստ զանգվածային լրատվության միջոցների հետ հաղորդակցման փորձի» (van Дейк, 1989: 123): Այլ կերպ ասած, տնտեսական մեդիադիսկուրսի ուսումնասիրությունը ենթադրում է դիսկուրս վերլուծության կիրառում, քանի որ դա հնարավորություն է ընձեռում ուշադրությունը կենտրոնացնելու ոչ միայն տեքստի լեզվական հատկանիշների, այլև, ինչը հատկապես կարևոր է, արտալեզվական մի շարք գործոնների վրա, որոնք նպաստում են դրա ձևավորմանն ու իրագործմանը:

Թ. վան Դեյքն առաջարկում է դիսկուրսի վերլուծությունը սկսել տեքստի կառուցվածքի ուսումնասիրությամբ, որը, ինչպես նշվել է վերը, աստիճանակարգային կառույց է: Նորությունների բովանդակությունը բացահայտվում է տեքստին զուգահեռ. նախևառաջ հաղորդվում է ամենակարևոր տեղեկությունը, այնուհետև՝ լրացուցիչ տվյալներ:

ԶԼՄ-ների տեքստի կառուցվածքի բացահայտումից և աստիճանակարգման սկզբունքով բոլոր բաղադրիչների վերլուծությունից հետո Թ. վան Դեյքը ձեռնամուխ է լինում դրա իմաստային կառուցվածքի ուսումնասիրությանը, որի տարրերը տեսաբանն անվանում է ԶԼՄ-ների տեքստի միկրոկառուցվածքներ: Այդ մակարդակում վերլուծվում են բառերի և նախադասությունների նշանակությունները, փոխադարձ կապերը նախադասությունների միջև, ինչպես նաև իմաստների ոճական և հոետորական կազմությունը: Տեքստի իմաստային կառուցվածքի ուսումնասիրության կարևոր կիզակետերից մեկը դրա տեղային փոխկապակցվածությունն է, որի հիմնական պայմաններից է այն, որ պնդումները հղում ունենան դրանց վերաբերող փաստերին (օրինակ՝ ժամանակի, պատճառների, հանգամանքների համաձայնությամբ):

Հայտնի է, որ դիսկուրսում մշտապես մշակվում են տեղեկություններ, որոնք ստացվում են հենց դիսկուրսից, ճանաչողական ներքին պաշարներից և հաղորդակցումից: Ինչպես նշում է Բ. Գորոդեցկին, «ընտրության չափանիշները՝ թե ինչ պետք է արտացոլվի կամ չարտացոլվի տեքստում, կախված են խոսակցի նպատակներից» (Городецкий, 1989: 18): Դիսկուրսի տեսության հետազոտություններում պայմանականության որոշակի աստիճանով տարբերություն է դրվում մի կողմից արտակա, մյուս կողմից՝ ներակա տեղեկությունների միջև, որոնք բխում են դիսկուրսի հենց նույն արտահայտությունից (Гальперин, 1981): Վերջիններս, ըստ Թ. վան Դեյքի, ապահովում են տեքստի առկա հասկացույթների և պնդումների միջև «բացակայող կապերը» («missing links»): Տեքստն իմաստային սառցալեռ է, որի միայն գագաթն է երևում, այսինքն՝ այստեղ արտահայտված չէ ամբողջական տեղեկույթը. մնացածը, ենթադրվում է, արդեն հայտնի է ընթերցողին, հաշվի առնելով նրա՝ աշխարհի մասին ունեցած հիմնական պատկերացումները: Այսպիսով՝ «չասվածի» կամ ենթադրյալի վերլուծությունը երբեմն ավելի կարևոր է, քան այն, թե իրականում ինչ է արտահայտված տեքստում: Աշխարհի մասին գիտելիքից այս կախվածությունը կարող է սուբյեկտիվ և գաղափարախոսական կապ առաջացնել. հետևաբար՝ ինչը տեսանելի է (coherent) լրագրողին, կարող է պարզ չլինել բոլոր ընթերցողների համար (van Dijk, 1991: 112, 114): Տեքստերի ընկալման նպատակով պետք է ներթափանցել մտածական հատուկ աշխարհ, որի համար ընթերցողը կա՛մ պիտի իր հիշողությունից

կորզի որևէ բան այդ աշխարհի առանձնահատկությունների մասին, կա՛մ մասամբ կառուցի դա՛ իրեն հասնող խոսքնթացին զուգահեռ [13]:

Այս առումով, Թ. վան Դեյքն առաջարկում է վերլուծել ԶԼՄ-ների տեղեկույթի ճանաչողական, հասարակական, քաղաքական և մշակութային համատեքստը: Ճանաչողական մոտեցումը հիմնվում է այն փաստի վրա, որ տեքստերն իմաստ չունեն, բայց դա ձևավորվում է լեզվակիրների գիտակցության մեջ: Այլ կերպ ասած, մեզ հարկավոր է «մասնատել» (spell out) նորությունների ստեղծման ընթացքում լրագրողների՝ տեքստի ստեղծման և ընթերցողների՝ տեքստի ընկալման և մտապահման ճանաչողական պատկերացումներն ու ռազմավարությունները: Այս գործընթացում առկա է երկու գործոն՝ տեքստի բովանդակությունը՝ որպես ներկայացում և հենց իրենք՝ լեզվակիրներն ու լրագրողները, որոնք տեքստում ներկայացված՝ տեքստային իրադարձության մասին յուրօրինակ, անհատական պատկերացում ունեն [14]:

Մարդու հիշողության մեջ առկա այդ գիտելիք-պատկերացումը Թ. վան Դեյքն անվանում է իրադրային կադապար: Իմաստավորելով տեքստում տեղ գտած իրադարձությունը՝ մենք կառուցում ենք վերջինիս մտավոր կադապարը, որի միջոցով արտահայտվում է ոչ միայն տվյալ տեքստի տեղեկությունը, այլև այդ իրադարձության մասին շատ այլ տեղեկություններ: Հատկանշական է, որ վերջիններս արտակա կերպով տրված չեն տեքստում, որովհետև ենթադրվում է՝ ընթերցողներն իրազեկ են դրան, կամ էլ լրագրողը դրանք կարևոր չի համարել լուսաբանման համար: Այդ տեղեկությունների մի մասն առաջանում է, այսպես կոչված, մշակութային սցենարներից, պայմանական գիտելիքներից, հասարակական կյանքի քաջածանոթ դրվագներից:

Բացի այդ, մարդիկ հաղորդակցական համատեքստին առնչվող՝ մտավոր յուրահատուկ կադապար ունեն (համատեքստային կադապար), որը ներառում է տեղեկություններ դիսկուրսի նպատակների, դրա հաղորդակցական ակտերի և լսարանի առանձնահատկությունների մասին: Հիշողության մեջ տվյալ կադապարները ոչ միայն իրադարձության և դրա մասնակիցների, այլև նրանց կարծիքների ու համոզմունքների մասին են գիտելիքներ պարունակում: Նորությունների տեքստերը կարող են որոշակի «տրամադրվածություն» (biased) ունենալ, որը, սովորաբար,

ենթադրում է լրագրողի՝ իրադարձության նկատմամբ ունեցած որոշակի գաղափարախոսական դիրքորոշում: Թ. վան Դեյքը համոզված է, որ ընթերցողների մտավոր կադապարների (իրադարձությունների և իրադրությունների վերաբերյալ սուբյեկտիվ մեկնաբանություններ, իրադարձությունների կառուցում ու դրանց մասին հասարակական պատկերացումների փոփոխություններ) ձևավորման վրա ազդում են ոչ միայն առհասարակ այն թեմաները, որոնք արժարժվում են ՁԼՄ-ներում, այլև լրագրողների ձևակերպումները (van Dijk, 1991: 117–119):

Այսպիսով՝ ելնելով տնտեսական մեդիադիսկուրսի «լրագրային հոդված» խոսության ձևաչափի մշակման առանձնահատկություններից, սույն աշխատության մեջ որպես մեթոդաբանական հիմք ենք ընդունել դիսկուրսի վերլուծության տեսությունը: Ըստ այդմ՝ տեքստի ճիշտ վերծանման և վերլուծության համար մեծ դեր են կատարում ոչ միայն լեզվական, այլև արտալեզվական գործոնները՝ լրագրողի և ընթերցողի դիրքորոշումները, տեսակետները, նրանց նպատակներն ու իրազեկման մակարդակը: Հարկ է նաև նշել, որ միայն մեթոդաբանական տարբեր մոտեցումների առավելությունների համատեղումն է հնարավորություն ընձեռում բազմակողմանիորեն պատկերացում կազմելու տնտեսական մեդիադիսկուրսում «լրագրային հոդված» խոսության ձևաչափի ընկալման գործընթացի առանձնահատկությունների մասին:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հաղորդակցման համակարգը պայմանականորեն բաժանվում է երկու խմբի: Առաջին խմբում ընդգրկված են լրատվության միջոցները, որոնք նպատակաուղղված են տեղեկատվություն հաղորդելու հասարակության անդամներին: Սրանում ներառված են նաև հետադարձ կապի ապահովման համար նախատեսված համակարգերը, որոնք միտված են հասարակության անդամներից տեղեկություններ հավաքագրելու գործին (օրինակ՝ հարցումներ, ընտրություններ, ծափահարություններ և այլն):

Հաղորդակցման համակարգի երկրորդ խումբը՝ միջանձնային հաղորդակցումը, թույլ է տալիս անհատներին կատարել տեղեկատվության գաղտնի, մասնավոր (հասարակության այլ անդամներին բացառող) փոխանակում (օրինակ՝ հաղորդակցում հեռախոսով, նամակներով, զրույց, քննություն և այլն):

Իր հերթին, հաղորդակցման կադապարի հասցեատերը լինում է ինչպես անհատական, այնպես էլ կոլեկտիվ: Վերջինս անհատների մի խումբ է, որին հասցեագրված է հաղորդագրությունը, սակայն հասցեագրողի և հասցեատերերից որևէ մեկի միջև անմիջական միջանձնային կապի հաստատումը կա՛մ չափազանց խրթին է, կա՛մ էլ անհնար (օրինակ՝ ունկնդիրների կամ ՋԼՄ-ների լսարան և այլն) (Каменская, 1990: 14 –15):

2. Քանի որ ուսումնասիրությունում հաջորդիվ վերլուծելու ենք տեքստի առցանց տարբերակները, հարկ ենք համարում խոսել նաև էլեկտրոնային լրագրերի դիսկուրսի կապակցվածության կարգի հիմնական միջոցներից մեկի՝ տեքստային հղումների մասին: Վերջիններս կատարելով համապատասխան գործառույթ՝ ապահովում են կապ հիմնական տեքստի և դրա մեկնաբանության, հիմնական տեքստի և դրա հնարավոր շարունակության, նմանատիպ բովանդակություն, տարբեր ժանրերի պատկանող, միմյանց համապատասխանող կամ հակասող տեքստերի միջև: Տեքստի իմաստային շարունակականությունն ապահովվում է հանգուցային տեքստերի թեմայի միասնականության շնորհիվ: Այնուամենայնիվ, որքան շարժող հղումներից է օգտվում ընթերցողը, այնքան նվազում է սկզբնական և

վերջին հանգուցային տեքստերի կապակցվածության գործակիցը (Флджян, 2008: 130, 132):

3. Հասարակական հաստատության գործունեությունը սահմանվում է.

- ա. համապատասխան վարքագիծ ապահովող որոշակի հասարակական նորմերի ամբողջությամբ,
- բ. հասարակության հասարակաքաղաքական արժեհամակարգի և գաղափարախոսական համակարգերի միասնացմամբ, ինչն իր հերթին թույլ է տալիս ամրապնդել գործունեության իրավական հիմքերը,
- գ. ֆինանսական միջոցների և պայմանների առկայությամբ, որն ապահովում է նորմատիվ առաջարկների և հասարակական վերահսկման իրականացումը (Фролов, 1994):

4. Իր հերթին, Մ. Օլեշկովը ուսումնասիրում է դիդակտիկ դիսկուրսը և դիտարկում է այն որպես սահմանակարգային՝ առանձնացնելով դրա համակարգաստեղծ առանձնահատկությունները. ըստ կարգավիճակի՝ որակավորված մասնակիցներ, ժամանակատարածական առանձնահատկություններ, պայմանականորեն առաջադրված նպատակ, ավանդականորեն ամրագրված արժեքներ, հատուկ սահմանված ռազմավարություն, ժանրերի սահմանափակ տեսականի: Հետազոտողը նշում է, որ դիդակտիկ դիսկուրսի համատեքստում նշված հատկանիշներն ստանում են առանձնահատուկ գծեր: Այսպես՝ տեղեկույթ մատուցողը, ուսուցիչը խոսքի նախաձեռնողն է, նա օժտված է խոսք ստեղծելու ունակությամբ՝ ծրագրված ազդեցություն գործելով հասցեատիրոջ վրա: Հասցեատերը գործում է լսարանում՝ որպես տեղեկատվություն ստացող: Դիդակտիկ դիսկուրսի հիմնական նպատակը հասարակության նոր անդամի հանրայնացումն է: Այստեղ հաղորդակցման էական առանձնահատկությունը դերային վարքագծի հարաբերական միասնականությունն է, պայմանավորված դիդակտիկ իրավիճակների ընդհանուր մտավոր սխեմաների առկայությամբ, որոնք գոյություն ունեն հաղորդակցման մասնակիցների հիշողության մեջ:

Դիդակտիկ հաղորդակցման կաղապարի մշակման հիմքը, Մ. Օլեշկովի կարծիքով, գերիշխող չորս հաղորդակցական ռազմավարություններն են՝ տեղեկատվական-

փաստարկման, մանիպուլյատիվ-համախմբման, արտահայտչական-ապելյատիվ և վերստուգիչ-արժևորման:

Տեղեկատվական-փաստարկման ռազմավարության նպատակը փաստերի և իրադարձությունների վերաբերյալ տեղեկացումն է. այն իրականացվում է հաղորդակցական երեք տեսակի ռազմավարությամբ՝ տեղեկատվության փոխանցում, աշխարհապատկերի համալրում, փոխըմբռնման վերահսկում: Մանիպուլյատիվ-համախմբման ռազմավարության նպատակը հասցեատիրոջ գիտակցության և վարքի մեջ փոփոխությունների առաջացումն է: Արտահայտչական-ապելյատիվ ռազմավարության շրջանակներում խոստովն արտահայտում է իր զգացմունքները, նախապատվությունները՝ դասի ընթացքում համապատասխան մթնոլորտի ստեղծման, սովորողների գործունեության կանոնակարգման առումներով: Վերստուգիչ-արժևորման ռազմավարությունն ապահովում է ուսանողների գիտելիքների, դիդակտիկ փոխգործակցության գործընթացում տեղի ունեցող իրադարձությունների ու առաջացող իրավիճակների արժևորումը (Олежков, 2007):

5. Ոչ եզրութաբանական միավորներն օգտագործվում են տեքստի հեղինակի կողմից և՛ տեղեկատվության կառուցվածքի գծանշման (*first, for example, in this chapter*), և՛ համատեքստային կապերի ստեղծման, և՛ գծապատկերային ու այլ պատկերավոր օրինակների ու բացատրությունների ներգրավման (*see Fig. 1, ...given in the exhibit 2*), և՛ սեփական կարծիքը փաստարկելու, և՛ արդյունավետ (*low, high*) ու, ինչն առավել հեղաբրքիր է, արժևորումներ (*fair, dramatic*) տալու և այլ նպատակներով: Ոչ եզրութաբանական բառապաշարն օգնում է նաև կապակցել գիտականն առօրեական գիտելիքների և պատկերացումների հետ, գիտական հասկացությունները մեկնաբանելով նաև փոխաբերությունների միջոցով՝ ապահովելով համարժեք պատկերացում այդ հասկացությունների (*textile war, runaway inflation, baby-boom generation*) բովանդակության վերաբերյալ:

Որպես փնտրեսագիտական տեքստի առավել բարդ անվանողական միավորներ՝ Տ. Դրոզդովան դիտարկում է սահմանումները՝ դասակարգելով դրանք ըստ 3 խմբի: Առաջին տեսակին վերաբերում են այն սահմանումները, որոնք համարժեք են որևէ առանձին բանի կամ անվանախմբի հատկանիշին (*Goods - movable property, merchandise*): Այսպիսի սահմանումը սուկ ցուցանշում է հասկացությունը,

զուգահեռելով այն գուցե թե ավելի ծանոթ հասկացության/առարկայի հետ, կամ էլ բացահայտում է դրա էությունը՝ ըստ համանման գործընթացի կամ իրավիճակի: Երկրորդ տեսակի սահմանումները առանձին նախադասության տեսքով են ներկայանում: Դրանք, սովորաբար, ամրագրում են տնտեսական առանձին հասկացությունների միջև առկա հարաբերությունները կամ բնութագրում են դրանք որոշակի գործընթացների, պայմանների և այլ համատեքստում: Սահմանման երրորդ տեսակը ներկայացվում է որպես նախադասությունների շարք, երբեմն մի ամբողջ պարբերություն: Այն փոխանցում է բավականաչափ ամբողջական, մեկտեղված տեղեկություններ տվյալ հասկացության մասին և վեր է հանում է աշխարհի տնտեսական պատկերի ինչ-որ հատված՝ զուգորդելով դա առօրյա նկարագրական օրինակներով (Дроздова, 2009):

6. Որոշ լեզվաբաններ, սահմանազատելով ժանրային տարբերակները, շեշտադրում են դրանում առկա մշակութային տարրը: Այսպես՝ տարբեր ժանրեր ներկայացնում են հասարակական-մշակութային չափանիշներով սահմանափակված հաղորդակցական նպատակներ (Eggins, Martin, 1997: 243): Իր հերթին, Ա. Տերտիչնին խոսում է հրապարակախոսական ժանրերի 34 տեսակի (վերլուծական պատասխան, վերլուծական թղթակցություն, վերլուծական հարցազրույց, վերլուծական հարցում, զրույց, մեկնաբանություն, հարցաթերթ, հոդված և այլն) մասին (Тертычныи, 2000):

Վ. Ուչոնովան և Մ. Բրանդեսն առանձնացնում են երեք կանոնակարգված ժանրային խմբեր՝ տեղեկատվական, վերլուծական և գեղարվեստական-հրապարակախոսական, որոնք բնորոշվում են հետևյալ ժանրերով՝ լրագրային փոքրիկ հոդված, հաշվետվություն, ռեպորտաժ և այլն: Ժանրային առանձին միջտեսակային խումբ են հայտարարությունների, գովազդների, խմբագրությանն ուղղված նամակների տեսակները (Ученова, 1971, Брандес, 1999):

7. ՋԼՄ-ների տեքստերի տիպաբանական նկարագրության համար նշանակալի են հետևյալ չափանիշները. ստեղծման ձևը (հեղինակային-կորպորատիվ, բանավոր-գրավոր), վերարտադրության ձևը (բանավոր-գրավոր), տարածման ուղիները (զանգվածային տեղեկատվության որոշակի միջոց՝ մամուլ, ռադիո, հեռուստատեսություն, համացանց), տեքստի գործառական-ժանրային տեսակը (նորություններ, մենկարանություններ, գովազդներ), թեմատիկ գերակայությունը

(քաղաքականություն, տնտեսություն, կրթություն, մշակույթ, սպորտ և այլն) (Добросклонская, 2005):

8. Ինչպես նշում է Ս. Գուբիկը, տնտեսական մեդիադիսկուրսի թեմատիկ ցանկը տնտեսական հարաբերությունների՝ հնարավորինս ամրագրված, սահմանափակ ոլորտ է, իսկ որոշ թեմաների գերակայությամբ հիմնականում բացահայտվում են տվյալ հասարակական հաստատության գործունեության առավել էական ուղղությունները: Վիճակագրական վերլուծությունից պարզվում է, որ տնտեսական մեդիադիսկուրսում գերակշռում այն թեմաները, որոնք կապված են հետևյալ բնագավառների հետ. արդյունաբերության որոշ ճյուղեր և գործարարություն (16.4%), խոշոր ընկերություններ և դրանց ղեկավարներ (12.1%), ֆինանսական շուկաներ և ինստիտուտներ (10.3%), ներդրումներ (10.3%), բանկեր և ֆոնդային բորսաներ (10.3%), նորարարություններ, այդ թվում՝ նոր ապրանքների և տեխնոլոգիաների, նոր ընկերությունների առաջացում և գործարարության ոլորտներ (8.5%), համաշխարհային, ճյուղային, ինչպես նաև տարբեր երկրների շուկաներ (6.4%), տնտեսական իրավունք, մասնավորապես՝ տնտեսական գործունեությունը կարգավորող օրենքներ և ակտեր (5%), տնտեսական հանցագործություններ, դատավարություններ և դրանց շուրջ առաջացող աղմկոտ պատմություններ (5%), ապահովագրություն, համապատասխան ընկերությունների գործունեություն (4,6%), բաժնետոմսեր, ապրանքների գներ, արժույթային փոխարժեքներ, տոկոսադրույքներ (4.6%), զբաղվածության խնդիրներ, այդ թվում՝ կրթություն, կենսաթոշակներ, անձնակազմի կառավարում, արհմիություններ (3,9%), համաշխարհային, ինչպես նաև տարբեր երկրների տնտեսական հիմնախնդիրներ (3,6%), ընկերությունների միաձուլումներ և կլանումներ, համատեղ ձեռնարկատիրություն (3.6%), տնտեսական քաղաքականություն, մասնավորապես՝ սեփականաշնորհում և այլն (2.8%), գործարարության ոլորտում հայտնի անհատներ (2.5%) (Губук, 2006):

9. Կ. Տոմաշևսկայան, ուսումնասիրելով տնտեսական մեդիադիսկուրսը ռուսերենի փաստական նյութի հիման վրա, նշում է, որ այս տեսակի դիսկուրսում մեծ տարածում է գտել խաղային (թղթախաղ, շախմատ և այլն) բառապաշարը. այսպես՝ շուկայական կարգավորման կաղապարներն արտացոլվել են իրական գործնական թղթախաղում: Նույնկերպ լայնորեն օգտագործվում է քրեական բառապաշարը, ինչը վկայում է

տնտեսության և քաղաքականության՝ հանցավոր աշխարհի հետ սերտաճման մասին: Տնտեսական դիսկուրսում մասնագետները երբեմն օգտագործում են նաև ժողովրդախոսակցական, բարբառային խոսքի տարրեր՝ այդպես փորձելով առավել կենդանի երանգներ հաղորդել ասելիքին, մատուցվող նյութին (Томашевская, 2000):

10. Մանիպուլյացիայի հնարը բավական տարածված երևույթ է, որին կարելի է ականատես լինել մարդու կենսագործունեության հասարակայնորեն կարևոր բոլոր ոլորտներում: Որպես մանիպուլյացիայի հիմնական բնութագրեր առանձնացվում են՝ օբյեկտի կողմից իր նկատմամբ մանիպուլյացիայի ազդեցությունը չգիտակցելը, ազդեցությունը ոչ միայն գիտակցականի (բանականության), այլև անգիտակցականի (բնազդների, հույզերի) վրա, որը կամայական հսկողության չի ենթարկվում, մանիպուլյացիայի օբյեկտի՝ շրջակա աշխարհի առարկաների և երևույթների նկատմամբ վերաբերմունքի կառավարումն աճաբարին անհրաժեշտ ընթացքով, վերջինիս կողմից սեփական շահադիպական նպատակներին հասնելը մանիպուլյացիայի օբյեկտի հաշվին, շրջակա իրականության փաստերի դիտավորյալ աղճատումը, պատրանքների, առասպելների ստեղծումը և այլն (Попова, 2002):

11. Ի դեպ, տեղեկատվության ապակողավորումից հետո մարդիկ, սովորաբար, մասնակիորեն հիշում են դրա բովանդակությունը, բայց ոչ բառերի որոշակի, ըստ հերթականության շարադրանքը: Ընդ որում, տեսողական տեղեկույթի ստացման դեպքում մեր հիշողությունը շատ ավելի լավ է գործում, քան խոսքայինի ժամանակ (Anderson, 2015: 99)

12. Տեքստի ընկալման գործընթացում մեծ դեր ունի ընթերցանության տեմպը: Սովորաբար, կարծում են, որ տեքստի ընկալումն ավելի հաջող է ընթանում դանդաղ ընթերցման դեպքում, սակայն արագ ընթերցանության ժամանակ ընկալումն ավելի շուտ է արձագանքում (Быкомский, 1996:169):

13. Ներակա տեղեկություն ստանալու համար օգտագործվում են եզրահանգման մեխանիզմներ: Դա համատեքստային տեղեկություն է և, միաժամանակ, բխում է տեքստից: Ինֆերենցիայի գործողությունը, ինչպես նշում է Ե. Կուբրյակովան, առավել ցայտուն է բնորոշում լեզվական տեղեկույթի մշակման այն գործընթացը, որն անվանում են դիսկուրսի ընկալում: Դիսկուրսը հասկանալու ժամանակ մարդը գործի է

դնում իր գիտելիքների կառույցները, որոնք թույլ են տալիս մեկնաբանել լեզվական միավորներում «փաթեթավորված» գիտելիքը: Ինֆերենցիոնալ տեղեկությունը ստացվում է տարբեր կերպ: Այսպես՝ տեղեկության նմանատիպ օրինակ կարելի է համարել եզրահանգման գիտելիքը՝ հիմնված եզրակացության կառուցվածքի վրա, որն օգտագործվում է ողջ նախադասությունը վերականգնելու նպատակով: Այլ եզրահանգումների համար կարող են որպես հիմք ծառայել համատեքստի տարբեր դիտանկյունները, հանրամշակութային բնույթի գիտելիքները, որոնք արտացոլում են նման իրադրություններում գործունեության փորձը, լեզվական փոխազդեցության նորմերն ու սկզբունքները (Кыбрякова et al., 1996: 21):

14. Ընդհանուր առմամբ, տեքստային իրադարձությանը բնորոշ են հետևյալ հատկանիշները.

Տեքստային իրադարձությունները կարող են լինել ստատիկ և հարաշարժ:

Տեքստային իրադարձությունները կարող են լինել վերահսկելի և անվերահսկելի: Օրինակ բերելով հետևյալ նախադասությունները՝ «Դադարեցվեցին Իրանի և Իրաքի միջև պատերազմական գործողությունները: Իրանը ու Իրաքը դադարեցրին պատերազմական գործողությունները: Իրանը դադարեցրեց պատերազմական գործողությունները Իրաքի դեմ: Իրաքը դադարեցրեց պատերազմական գործողությունները Իրանի դեմ», Վ. Դեմյանկովը նշում է, որ դրանք ցուցանշում են միևնույն նշյալ իրադարձությունը, միայն տարբեր տեսանկյուններից՝ կախված այն բանից, թե տվյալ փուլում իրադարձության որ մասնակիցն է գնահատվում որպես ավելի կարևոր:

Իրադարձության մասնակիցների դերային գործառույթները, որոնք ներառում են վերջիններիս իրազեկության, ցանկության, նախընտրելիության աստիճանը նշանակալի են տեքստային իրադարձության մատուցման ժամանակ:

Ամբողջական կամ փուլային դիտարկում՝ որպես տեքստաստեղծման կարևոր ռազմավարություն: Հաղորդագրության ամփոփ սկիզբը տեղեկատվական բնույթ ունի և հաճախ հանդես է գալիս տեքստի վերնագրի տեսքով: Մինչդեռ առանց ամփոփ նախադասության փուլային նկարագրությունը տեքստի ինչ-որ մասում բնորոշ է գեղարվեստական գրականությանը:

Իրադարձությանը ականատես լինել՝ ի տարբերություն դրա մասին տեղեկանալուն:
Այս դեպքում իրադարձության հաղորդման ժամանակ օգտագործվում են
լեզվամիավորներ, որոնք կարող են ազդել հաղորդագրության բովանդակության
վստահելիության աստիճանի վրա (օրինակ՝ իբրև թե, ասում է, նշում է):
Տեքստային իրադարձություններում առարկաները սուբյեկտիվ բնույթ ունեն:
Իրադարձության և նրա մասնակիցների տարածաժամանակային տեղորոշում
(Демьянков, 2004: 78–80):

ԳԼՈՒԽ III

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅԱՆ ՄՏԱՊԱՏԿԵՐՈՒՄԸ

3.1. Ֆրեյմը՝ որպես մտավոր տեղեկույթի կառույց

Ճանաչողական լեզվաբանության զարգացումը, ինչպես նաև լեզվական գործընթացների ճանաչողական մոտեցումը նոր կարգավիճակ շնորհեցին լեզվին՝ իբրև մարդու գիտակցության ճանաչողական կառույցների մասին տեղեկույթի աղբյուր: Լեզվի գոյությունն արդեն իսկ վկայում է մեր գիտակցության մեջ տեղ գտած աշխարհի վերաբերյալ զանազան գիտելիքային կառույցների առկայության մասին, որոնց հիմքում են մտավոր տեղեկույթի միավորները: Մտավոր տեղեկույթի անվանման համար կիրառվում են զանազան գիտաբառեր՝ կապված այս երևույթի բարդ և բազմաշերտ լինելու փաստի հետ: Այն մտածողական անտեսանելի կարգ է, ինչն էլ հանգեցնում է սահմանումների և մեկնաբանությունների բազմազանությանը: Այս առումով, տարբերակում են հասկացույթներ, պատկերացումներ, սխեմաներ, գեշտալտներ, ներըմբռնումներ (инсайты), ֆրեյմներ, սցենարներ և այլն: Մտավոր տեղեկույթի տեսակները տարբերակելու հնարավորությունը պայմանավորված է նրանցում տեղ գտած գիտելիքի տեսակները սահմանազատելու հնարավորությամբ: Ներկայացնենք վերոնշյալ հասկացություններին վերաբերող համառոտ ակնարկ:

Առաջին հերթին, հասկացույթը դիտարկվում է գիտելիքի և հիշողության եզրույթների շրջանակներում և բնորոշվում որպես «հիշողության, մտավոր բառապաշարի, հասկացութային համակարգի և աշխարհի ողջ պատկերի օպերատիվ միավոր, իմացության քվանտ» (Кубрякова et al., 1997: 90–92): Վ. Կարասիկը տվյալ եզրույթը սահմանում է որպես մտավոր «գոյացություն», մարդու հիշողության մեջ պահպանվող փորձի կարևոր, գիտակցվող, տիպայնացված հատված (Карасик, 2013): Հասկացույթը «մտավոր դիսկրետ գոյացություն է, որը մարդու մտածողական ծածկագրի հիմնական միավորն է՝ հարաբերականորեն կարգավորված ներքին կառուցվածքով: Այն ճանաչողական գործունեության արդյունք է, որը համալիր, հանրագիտարանային

տեղեկոյթ է կրում արտացոլվող առարկայի կամ երևոյթի մասին (Попова, Стернин, 2010: 34):

Մի շարք լեզվաբաններ հասկացոյթի անքակտելի տարր են համարում մշակութային նշութավորումը՝ հասկացոյթը մեկնաբանելով որպես խոսքով արտահայտված մշակութային իմաստ, որն արտացոլում է աշխարհի մասին մարդու մշակութային-ազգային պատկերացումը և, միաժամանակ, պայմանավորում այն մշակոյթի աշխարհընկալումը, որում վերջինս ապրում է և ներկայացնում: Հասկացոյթը մարդու գիտակցոյթյան մեջ մշակոյթի խտացումն է, այն ինչի տեսքով մշակոյթը մուտք է գործում անհատի մտավոր աշխարհ: Մյուս կողմից, հասկացոյթի միջոցով է հասարակ անհատը, ոչ թե մշակութային արժեքների ստեղծողը մուտք գործում մշակոյթ և որոշ դեպքերում ազդեցոյթուն թողնում դրա վրա (Красных, 2003: 272, Степанов, 2004, Воркачев, 2005: 76, Маслова, 2008: 4–5):

Իր հերթին, պատկերացումը առարկայի կամ երևոյթի հուզական-իրազնական ընդհանրացված պատկերն է: Այս բառոյթների շատ սահմանումներ ամբողջությամբ կազմված են առարկայի հուզական-իրազնական հատկանիշներից (օրինակ՝ դողմարմնի հաճախակի ջղաձիգ ցնցումներ, թխկի-սաղարթավոր ծառ՝ կտրտված լայն տերևներով):

Մտավոր տեղեկոյթի անվանման համար կիրառվում է նաև «սխեմա» գիտաբառը, որը սահմանվում է որպես հասկացոյթ՝ ներկայացված ինչ-որ ընդհանրացված ուրվագծային նկարագրմամբ (*ծառ* ընդհանրապես (բուն, կատար), *մարդ* (գլուխ, ոտքեր, մարմին): Հասկացոյթի այնպիսի տեսակը, ինչպիսին սխեման է, կարելի է նկարել (Попова, Стернин, 2010: 34):

Գեշտալտը մտածողական համալիր կառույց է, ամբողջական կերպար, որը ներառում է հուզական և ռացիոնալ տարրեր, պատկերվող երևոյթի կամ առարկայի հարաշարժ և անփոփոխ կողմեր: Գեշտալտների նշանակոյթունները, սովորաբար, կապվում են հուզականորեն ընկալվող երևոյթների հետ, որոնք գիտակցոյթյան մեջ համալիր պատկերի են վերածվում: Բնորոշ գեշտալտներ են՝ հերթ, տանջանք, սեր: Ջ. Լակոֆֆն առաջինն էր, որ «գեշտալտ» գիտաբառը կիրառեց լեզվաբանոյթյան շրջանակներում՝ մեկնաբանելով, որ «...մտքերը, ընկալումները, հոյզերը, ճանաչողական գործընթացները կազմակերպվում են միևնույն կառույցների օգնությամբ, որոնք

անվանվում են գեշտալտներ» (Лакотф, 1981: 359): Գիտնականի կարծիքով գեշտալտը համապատասխանում է ըմբռնմանը, որն առաջանում է «ինսայթի»՝ հանկարծակի փայլատակման ձևով, երբ վերակառուցվում է անգիտակցաբար, հակիրճ ձևով ընթացող իրադրությունը:

Ըստ էության, կարելի է եզրակացնել, որ որքան էլ տարբերվեն մտավոր տեղեկույթի կառույցների անվանումները և սահմանումները, դրանք, ընդհանուր առմամբ, արտացոլում են գաղափար այն մասին, որ մտավոր տեղեկույթի կառույցները մտածողության կամ հիշողության դիսկրետ, ծավալուն միավորներ են, որոնցում ամփոփված է ցանկացած ոլորտի գիտելիք:

Ճանաչողական լեզվաբանության տեսության մեջ առավել լայն տարածում է գտել «ֆրեյմ» գիտաբառը՝ որպես մտավոր տեղեկույթի յուրօրինակ կառույց:

Ֆրեյմների տեսության հեղինակ Մ. Մինսկիի կարծիքով ֆրեյմը «կարծրատիպային իրադրություն ներկայացնելու համար տվյալների կառույց է» (a data-structure for representing a stereotyped situation) (Minsky, 1974) [1]: Ըստ տեսաբանի՝ մարդը փորձելով ճանաչել նոր կամ նորովի դիտարկել արդեն հայտնի իրադրությունը, իր հիշողությունից ֆրեյմ է ընտրում, որպեսզի դա առանձին բաղադրիչների փոփոխությամբ հարմարեցնի երևույթների կամ գործընթացների ավելի լայն դասի ընկալմանը: Ըստ էության, Մ.Մինսկին, ելնելով իրադրության լայն մեկնաբանությունից, իր տեսության մեջ դիտարկում է ֆրեյմի երկու տեսակ: Մի կողմից նա իրադրությունների շարքն է դասում առանձին առարկաները, պատկերները (այս դեպքում խոսքը ստատիկ՝ ակնառու պատկերի ֆրեյմների մասին է. օրինակ՝ խորանարդի պատկերը), մյուս կողմից՝ գործողությունները, հասկացությունները, իրադարձությունները (այս դեպքում խոսքը հարաշարժ ֆրեյմների կամ ֆրեյմ-սցենարների մասին է, որոնք անհրաժեշտ են աշխարհի մասին գիտելիք կառուցելու համար): Ֆրեյմ-սցենարն ինչ-որ գործողության, հասկացության, իրադարձության և այլնի համար տիպային կառույց է, որը ներառում է այդ գործողության, հասկացության, իրադարձության հատկանշական տարրերը (Минский, 1979: 47) [2]:

Այսպիսով՝ ֆրեյմը գիտելիքի այնպիսի խտացում է, որն ապահովում է ծանոթ, արդեն հայտնի իրադրությունների համապատասխան ճանաչողական մշակումը և կառուցվածքայնացումը: Այդ մասին են վկայում նաև ֆրեյմի վերաբերյալ հետևյալ

սահմանումները: Ֆրեյմը «որևէ երևույթի մասին գիտակցության մեջ ձևավորված ընդհանրացված պատկերացում է» (Никитин, 2004: 62), «ճանաչողական կաղապարի տեսակ, որ ներկայացնում է գիտելիքներ և կարծիքներ՝ կապված որոշակի, հաճախ կրկնվող իրադրությունների հետ» (Ungerer, Schmid, 1996: 53), «գիտելիքի դեկլարատիվ ներկայացման կառույց է» (Баранов, 2003: 17), «մարդկային փորձի որոշակի հատվածի մասին հիշողության մեջ պահպանվող և անհրաժեշտության դեպքում այնտեղից դուրս բերվող տեղեկույթի մաս է» (Бабушкин, 1996: 25), «բոլոր բաղադրիչների՝ ամբողջությամբ ընկալվող բազմաբաղադրիչ հասկացույթ է, առարկայի կամ երևույթի մասին ստանդարտ գիտելիքների հանրագումար» (Попова, Стернин, 2010: 119):

Ճանաչված հասարակագետ Է. Գոֆմանը ֆրեյմը մեկնաբանում է որպես մի կառույց, որի շնորհիվ մենք հասկանում ենք սեփական փորձը: Ֆրեյմները համապատասխանում են այն իրադրություններին, որոնցում առկա սկզբունքներն արտացոլում են հասարակական իրադարձությունները և դրանցում կարգավորում մարդու մասնակցությունը: Ընդհանուր առմամբ, ֆրեյմ–սցենարի և ֆրեյմի տարբերությունը առաջինի հարաշարժ և երկրորդի անփոփոխ (ստատիկ) բնույթն է, ընդ որում, ֆրեյմները գոյություն ունեն ֆրեյմ–սցենարների հիմքում (Goffman, 1974):

Թ. վան Դեյքը ֆրեյմի մեկնաբանության հարցում հակվում է Մ. Մինսկիի տեսակետին՝ նշելով, որ գիտելիքը կազմակերպված է հասկացության համակարգերից, որոնք կարելի է նկարագրել ֆրեյմների եզրույթներով: Տեսաբանը կարծում է, որ ֆրեյմները կտրված են համատեքստից. դրանք հասարակական հիշողության տարրեր են, որոնք պարունակում են հիմնական, ընդհանրական տեղեկույթ, որը զուգորդվում է այս կամ այն հասկացույթի հետ (van Дейк, 1989: 16):

Ե. Բեյլասկայան ֆրեյմների առանձնահատկություններից է համարում դրանց փոխադարձ կապը և փոխներթափանցումը, սերտ փոխներգործությունը, ֆրեյմի յուրաքանչյուր հատվածի վրա մարդու ուշադրության կենտրոնացման հնարավորությունը, իրադրության «իդեալական» պատկերի վերստեղծումը, որը հաշվարկի յուրահատուկ սկիզբ է այն «իրական» իրադրությունների մեկնաբանության համար, որոնց հետ մարդն առնչվում է կյանքում: Համեմատելով ամբողջական իրադրության ֆրեյմը և միկրոֆրեյմը՝ գիտնականը ընդգծում է դրանց ստատիկ

բնույթը: Այսպես՝ բառիմաստի ֆրեյմում գազաթնային հատկանիշներն ամրագրված են, այսինքն՝ իրական իրադրության մեկնաբանության դեպքում խոսողի կողմից բառի ընտրությունը պայմանավորված է միայն նրանով, թե որքանով են դրա գազաթնային հատկանիշները համապատասխանում իրադրության ընկալմանը [3]: Ամբողջական իրադրության «հարաշարժ» ֆրեյմի դեպքում մեկնաբանողը կարող է ազատորեն «տեղաշարժվել» դրա շրջանակներում՝ շեշտադրելով իր համար կարևոր հայեցակետերը (Беляевская, 1994: 105) [4]:

Օ. Իրիսխանովան, բնութագրելով ֆրեյմային կաղապարի հասկացությունը որպես որոշակի բառով կամ բառախմբով նշանակվող իրականության հատվածի հատկանիշների ելակետային կառույց, նշում է, որ այն ակտիվանում է խոսքում [5]: Կառուցվածքային այնպիսի տարրերին զուգահեռ, ինչպիսիք են մասնակիցները, նրանց հատկանիշները, հարաբերությունները, գործողությունները, տարածաժամանակային տեղորոշումը, գործածվում է «կիզակենտրոն» (ֆոկուս) հասկացությունը: Ֆրեյմային կիզակենտրոնն ըստ լեզվաբանի՝ «լեզվամիավորի ֆրեյմային կաղապարի առավել կարևոր տարրերի առաջնությունն է՝ պայմանավորված իրականության ներկայացվող հատվածի գոյաբանությամբ և տեքստում տվյալ միավորի իմաստային ընդլայնման առանձնահատկություններով»: Իմաստային կիզակենտրոնը լեզվական տվյալ միավորով իրականության որոշակի հատվածի արտացոլման ձևն է: Գործաբանական կիզակենտրոնն արտահայտում է խոսողի կամ ունկնդրողի ուշադրության համատեքստային ուղղվածությունը դեպի իրադարձության որոշակի բնութագրեր (Ирисханова, 1997: 8–9) [6]:

Ամփոփենք. ֆրեյմի կարգը վերաբերում է գիտելիքի ոլորտին, այն գիտելիքի կառույց է: Դրա հիմնական հատկություններից մեկը գիտելիքի կազմավորման կարգային բնույթն է, այսինքն՝ հասկացության, երկույթի, առարկայի՝ որևէ դասի պատկանելու և այդ դասի այլ ներկայացուցիչների հետ հարաբերությունների ամրագրման գործընթացը [7]:

Ֆրեյմի հիմնական հատկությունն է իրադրության մասին կարծրատիպային, թեմատիկորեն միասնական գիտելիքի կառուցվածքայնացումը: Եթե ֆրեյմն արտացոլում է գիտելիքներ, որոնց տիրապետում են տվյալ հասարակության

անդամներից շատերը, ապա այն պետք է ներառի պայմանական կայուն հատկանիշներ, որոնք կնպաստեն այդ նույն հասարակության յուրաքանչյուր անդամի կողմից ֆրեյմի հեշտ և արագ կերպով ճանաչմանը:

Ֆրեյմն աստիճանակարգային, փոխներգործող տարրերից բաղկացած կառույց է, որոնք ապահովում են նրա ամբողջականությունը: Վերին մակարդակների տարրերը, որպես կանոն, արտացոլում են կայուն, իսկ ստորին մակարդակներինը ավելի ճկուն հատկանիշներ: Ֆրեյմը ճկուն հատկանիշներով է համալրվում ինչ-որ իրադրության հարմարվելու գործընթացում [8]:

3.2. Ֆրեյմ-սցենարը՝ որպես տնտեսական իրադարձության ճանաչողական կառուցվածքայնացման միջոց

Ինչպես վերը նշեցինք, ճանաչողական լեզվաբանության դրույթներից մեկն այն է, որ շրջակա աշխարհի բոլոր երևույթները, որպես մտավոր կադապարներ, իրենց արտացոլումն են գտնում անհատների գիտակցության մեջ, ապա վերածվում ճանաչողական կառույցների՝ գիտելիքի միավորների: Գիտելիքի միավորների ուսումնասիրության նպատակով ժամանակակից լեզվաբանական գիտակարգերի մեթոդաբանությունն առաջարկում է բազմաթիվ մոտեցումներ՝ ընդգրկելով թե՛ ավանդական, թե՛ նորագույն համարվող ճանաչողական վերլուծությունները: Ճանաչողական մոդելավորման մեթոդները հնարավորություն են ընձեռել գիտնականներին բնութագրելու լեզվամիավորների իմաստները՝ որպես աշխարհի մասին գիտելիքի արդյունքներ, հետազոտելու գիտելիքային կառույցների ձևավորման սկզբունքներն ու միջոցները, վեր հանելու լեզվական և ճանաչողական կառույցների փոխներգործության մեխանիզմը, որի միջոցով իրագործվում է երևույթների մտապատկերման գործառույթը:

Նույն համատեքստում տնտեսական իրադարձության որպես՝ ճանաչողական կառույցի, վերլուծության համար աշխատության այս փուլում փորձել ենք կատարել վերջինիս մոդելավորումը՝ կառուցվածքայնացնելով այն ճանաչողական կադապարը, որն իբրև մտավոր պատկեր արտացոլված է մեր գիտակցության մեջ և արդեն իսկ

վերածվել է կայուն գիտելիքի միավորի: Այսպիսով՝ մոդելավորումը ենթադրում է կաղապարի ստեղծում, որը, որպես իրականության հետազոտման կառույց, երևույթի համակարգային և գործառույթային կապերն ուսումնասիրելու և այլ ընդհանրացված ու նույն կարգին պատկանող երևույթների հատկանիշներից դրանք սահմանազատելու գործիք է (Karacik, 2013: 6):

Ճանաչողական մոդելավորման արդյունավետ մոտեցումներից մեկն էլ ֆրեյմային վերլուծությունն է, որի հիմքում են լեզվական երևույթների ճանաչողական լինելու փաստը և արտալեզվական գիտելիքների կիրառումը՝ դրանք իմաստավորելու նպատակով: Անդրադառնանք տնտեսական իրադարձության ֆրեյմային մոդելավորմանը:

Ինչպես հայտնի է, ամեն մի իրադարձության կառուցվածքային նկարագրություն կատարվում է՝ հիմնվելով որոշակի տեղեկույթի վրա, որը ներկայացնում է տվյալ իրադրության բաղադրիչները: Այդ տեղեկույթն ունի սցենարի ձև, որը ներառում է տեղեկություններ մարդկանց և նրանց գործունեության նպատակի մասին: Վերջինս իրադարձությունը ֆրեյմի տեսքով ներկայացնելու կամ տվյալ տեղեկությունը կառուցվածքայնացնելու միջոց է, որն անհրաժեշտ է, օրինակ, հասկանալու համար, թե ինչու է ուտել ցանկություն ունեցող կինը գնում հեռախոսագիրքը վերցնելու (why a hungry woman would go to get a telephone book) (Duchan, 1991: 44):

Սցենարը սահմանվում է որպես կանխորոշված, կարծրատիպային գործողությունների հաջորդականություն, որոնք նկարագրում են քաջածանոթ իրադրություն (a predetermined, stereotyped sequence of actions that define a well-known situation) (Schank, Abelson, 1977: 151): Մարդիկ կիրառում են սցենարները նախատիպային իրադարձություններն ընկալելիս (Anderson, 2015: 118):

Ռ. Շենկը և Ռ. Աբելսոնը սահմանել են իրադրության ֆրեյմ-սցենարի առավել բնորոշ հարցերի տերմինալները: Ֆրեյմ-սցենարն այս դեպքում որևէ ենթադրական իրադրությանն առնչվող հարցերի և պատասխանների հավաքակազմ է: Այսպես՝ «Երեխայի ծննդյան տարեդարձ» ֆրեյմ-սցենարի համար այդպիսի հարցեր կարող են լինել. «Ի՞նչ են հագնելու հյուրերը: Երեխայի համար նվեր ընտրվա՞ծ է: Նրան արդյո՞ք դուր կգա նվերը: Որտեղի՞ց նվեր գնել: Որտեղի՞ց գումար հայթայթել» և այլն: Նմանապես, հեռախոսագիրքը վերցնող կնոջ նպատակը հասկանալու համար, մենք

պետք է իմանանք, որ դրանում կան ռեստորանների հեռախոսահամարներ, և այդ կինը, հավանաբար, ցանկանում է հեռախոսով սնունդ պատվիրել (phone books list numbers of take-out restaurants, and that the woman must be looking up such a number in order to achieve her goal of getting food) (Duchan, 1991: 44):

Որևէ գործողության իմաստը հասկանալու համար մարդը հաճախ ստիպված է լինում այսպիսի հարցեր տալ. «Ո՞վ է կատարում գործողությունը (կատարող): Ո՞րն է գործողության նպատակը (մտադրություն): Ինչպիսի՞ն են հետևանքները (ազդեցություն): Ո՞ւմ վրա կազդի այդ գործողությունը (հասցեատեր): Ինչպե՞ս է այն կատարվել (գործիք)»: Սրանց բոլորի պատասխանները կարելի է գտնել համապատասխան իրադրությունների համար նախատեսված սցենարներում: Այդ պատճառով էլ հեղինակները սցենարները բնութագրում են որպես համառոտ, տաղտկալի պատմություններ (A script is, in effect, a very boring little story) (Schank, Abelson, 1977: 152) [9]:

Ըստ Մ. Մինսկիի տեսության՝ յուրաքանչյուր իրադրության ամբողջական ներկայացումը կատարվում է ոչ թե մեկ, այլ մի շարք ֆրեյմ-սցենարների համակարգի օգնությամբ: Ամեն մի ֆրեյմ-սցենար համապատասխանում է իրադրության հնարավոր դիտանկյուններից մեկին, որն արտացոլվում է ֆրեյմ-սցենարների համակարգով: Համակարգի տարբեր ֆրեյմ-սցենարներ ցույց են տալիս ընդհանուր տերմինալներում գտնվող միևնույն տեղեկույթի օգտագործման տարբեր ուղիները: Ինչպես և տեսողական իրադրության դեպքում, մարդը, հասկանալով կամ հաղորդելով միտքը, ընտրում է ֆրեյմ-սցենարներից որևէ մեկը: Այդ ընտրությունն ըստ էության վերաբերում է այն հարցերին, որոնք պետք է առաջադրել դիտարկվող իրադրության վերաբերյալ (Минский, 1979: 47):

Ինչպես ֆրեյմը, այնպես էլ ֆրեյմ-սցենարն անհրաժեշտ է մեկնաբանել հիշողության եզրույթներով (Schank, 1982: 173): Իրավացիորեն է նշում Շ. Պարոնյանը, որ հիշողությունը լեզվական և գիտակցական կառույցները կապող կամուրջ է, որն անհրաժեշտ է մեզ հաղորդակցական կաղապարի լեզվագործաբանական-ճանաչողական պատկերն առավել ամբողջական դարձնելու համար (Պարոնյան, 2010: 32): Ֆրեյմը և ֆրեյմ-սցենարը տեղեկությային կառույցներ են, որոնք ներկայացնում են նաև վերջնարդյունքը և մտապահվում են անհատների կողմից [10]:

Ճանաչողական հոգեբանության մեջ հիշողությունը սահմանվում է որպես մի գործընթաց, որը կոչված է պահպանելու, վերականգնելու և օգտագործելու ազդակների, պատկերների, իրադարձությունների, գաղափարների և հմտությունների վերաբերյալ այն տեղեկատվությունը, որն այլևս հասանելի չէ: Այս փաստը վկայում է այն մասին, որ հիշողությունը կարող ենք կիրառել որպես «ժամանակի մեքենա»՝ ժամանակի մեջ մտավոր ճանապարհորդություն կատարելու նպատակով (Goldstein, 2011: 116) [11]:

Է. Թուվինգը առաջարկում է հիշողության դասակարգում, որը ներառում է հինգ համակարգ՝ ընթացակարգային, զգայական, կարճատև, իմաստային և դրվագային (էպիզոդիկ) (procedural, perceptual representation, short-term, semantic, episodic): Թեև հիշողության յուրաքանչյուր համակարգ ունի իր ուրույն գործառույթը, որը մյուսները չեն կարող իրականացնել (այսպես կոչված, գործառույթային անհամատեղելիության չափանիշ (the criterion of functional incompatibility)), որոշ համակարգեր, սովորաբար փոխազդում են առօրյա կյանքի առաջադրանքներ իրականացնելիս, ինչպես նաև հիշողության լաբորատորիայում:

Իմաստային հիշողությունն ամրագրում և պահպանում է աշխարհի մասին գիտելիքը, որը հասանելի է մտաբերման համար: Այն թույլ է տալիս մարդկանց ներկայացնել և մշակել իրադարձությունները, առարկաները և հարաբերություններն աշխարհում, մտածել այն երևույթների մասին, որոնք այս պահին այստեղ առկա չեն: Ի տարբերություն սրան, դրվագային հիշողությունը թույլ է տալիս անհատներին մտապահել, այսպես կոչված, անհատական փորձը, նաև ճանապարհորդել ժամանակի մեջ և մտաբերել որոշակի ժամանակահատվածում կատարված իրադարձությունների վերաբերյալ նախկին փորձը: Իմաստային և դրվագային հիշողությունների միջև հարաբերություններն աստիճանակարգային բնույթ ունեն: Դրվագային հիշողությունը սկիզբ է առել իմաստայինից և որոշ գործառույթների իրականացման իմաստով կախում ունի վերջինից, մինչդեռ իմաստայինը կարող է գործել (պահպանել և վերականգնել տեղեկույթը)՝ անկախ դրվագայինից, բայց ոչ հակառակը: Դրվագային հիշողությունն անհրաժեշտ չէ իմաստային հիշողության մեջ տեղեկույթի կոդավորման և պահպանման գործընթացում: Ի վերջո, իմաստային հիշողությունը զարգանում է մանկության ավելի վաղ տարիների ընթացքում, քան դրվագայինը (Tulving, 1993: 67–68):

Դրվագային հիշողության առանձնահատկությունների վրա է Թ. վան Դեյքը զարգացրել նախորդ գլխում նշված՝ իրադրային կաղապարների տեսությունն առ այն, որ մարդիկ իրադարձությունների համապարփակ ընկալման համար կիրառում են իրադրային կաղապարներում կուտակած գիտելիքը և փորձը (van Dijk, 1987):

Այսպիսով՝ յուրաքանչյուր իրադարձության սցենար ստեղծվում է որևէ իրական իրադարձությունից և կրում է այն տեղեկույթը, թե ինչպիսին է աշխարհը: Առավել ծավալուն իրադարձությունները կարող են ներկայանալ մակրոֆրեյմ–սցենարների կամ մակրոսցենարների տեսքով, որոնք, իրենց հերթին, պարունակում են մեկից ավելի միկրոսցենարներ: Տնտեսական իրադարձության ֆրեյմ–սցենարը դիտարկվում է որպես որոշակի տարրերի հավաքածու, ըստ որի ընկալվող իրադարձությունը պետք է տեղի ունենա: Սցենարը, համապատասխանորեն նկարագրելով որոշակի իրավիճակ, թույլ է տալիս կանխատեսել պարտադիր տարրեր և առաջացնում է սպասումներ ոչ պարտադիր տարրերի վերաբերյալ, անգամ եթե դրանք բացահայտ տրված չեն:

Գոյություն ունեն հիմնական բնութագրեր, որոնք մի կողմից սցենարը մոտեցնում են այլ ճանաչողական կառույցներին, մյուս կողմից՝ տարբերակում են դրանք: Սցենարը, ինչպես գիտակցության մյուս կառույցները, գիտելիքների կազմակերպված կառույց է, որի մի հատվածը ենթադրում է ամբողջություն, որը շատ ավելին է, քան նրա բոլոր մասերի հանրագումարը: Ճանաչողական կաղապարների մեկ այլ ընդհանուր բնորոշում է այն, որ սցենարն ընդհանրացված ու ամփոփ ձևով արտացոլում է իրադարձության կառուցվածքը:

Սցենարը գիտելիքի ընդարձակ շտեմարան է՝ հիմնված մշակութային ու հանրային պատկերացումների և արժեքների վրա: Իրադարձության սցենարի կառուցվածքը, որպես կանոն, ներառում է մի քանի սլոթներ՝ բաղադրիչներ: Այդպիսիք են սուբյեկտը (գործողություն կատարողը), փոփոխությունը, օբյեկտը (գործողությունն իր վրա կրողը), ժամանակը, վայրը, հանգամանքները (պայմանները, պատճառը, արդյունքը, նպատակը և այլն): Նշված տարրերը կարող են ներկայացվել ինչպես բացահայտ, այնպես էլ ներակա կերպով, կախված զանազան գործոններից (ինքնին իրադարձությունից, լրագրողի մտադրությունից և այլն): Ընդ որում, երբեմն, բավականաչափ տեղեկույթի բացակայության դեպքում, սլոթները կարող են համալրվել պայմանական, տիպային լրացումներով: Փաստական նյութի


վերլուծությունը թույլ է տալիս սահմանել տնտեսական իրադարձության էությունը բացահայտելու համար պարտադիր միջուկային սլոթները՝ սուբյեկտը, փոփոխությունը, ժամանակը և տարածական տեղորոշումը: Պայմանական են օբյեկտի, պատճառի, հետևանքի, գործիքի, արժևորման, կանխատեսման և այլ սլոթներ:

Դրա հետ մեկտեղ, հարկ է նշել, որ վերլուծության ընթացքում պարզ է դառնում մի օրինաչափ հանգամանք առ այն, որ յուրաքանչյուր տնտեսական իրադարձության ամբողջական ընկալման համար անհրաժեշտ է վերլուծել ֆրեյմ–սցենարի ոչ միայն միջուկային սլոթները, այլև որոշակի այլընտրանքային տեղեկույթ, որը պարփակված է պայմանական սլոթներում: Վերջիններս, այս կամ այն դեպքում առաջ են մղվում, ակտիվանում են տնտեսական իրադարձության ընկալումը լիարժեք դարձնելու նպատակով:

Ապացուցելու համար տվյալ վարկածը՝ փորձենք վերլուծել հետևյալ իրադարձության ֆրեյմ–սցենարը.

In an attempt to revive a sluggish economy the Brazilian government set out incentives for private-sector bidders to invest 198 billion reais (\$64 billion) in infrastructure over the next few years. (www.economist.com, June 13, 2015)

Գծապատկեր 2.



Ինչպես երևում է, այս տնտեսական իրադարձության մեջ գործողություն կատարողը Բրազիլիայի կառավարությունն է, որն առաջարկում է (այստեղ առաջ է գալիս փոփոխության սլոթը) խթաններ (գործիքի ենթասլոթ) մասնավոր հատվածի գնորդներին, որոնք տվյալ պարագայում գործողությունը կրողն են՝ օբյեկտի սլոթի բովանդակությունը:

Տվյալ տնտեսական իրադարձության ամբողջական ընկալման համար մեզ անհրաժեշտ է իրազեկ լինել, թե որտեղ և երբ է կատարվում գործողությունը: Թեև տվյալ իրադարձության տարածական տեղորոշման սլոթն ակնհայտորեն նշված չէ նախադասության մեջ, ընթերցողը կռահում է տվյալ վայրի մասին «the Brazilian government» արտահայտությունից: Ժամանակային սլոթը նույնպես ներակայորեն է արտահայտված. տվյալ իրադարձության մասին մենք տեղեկանում ենք The Economist շաբաթաթերթից, և, համապատասխանաբար, այդ տեղեկույթը համահարաբերակցում ենք այն իրական ֆիզիկական ժամանակի հետ, որում մենք գտնվում ենք:


«In an attempt to revive a sluggish economy» արտահայտությունը լրացնում է նպատակի սլոթը, որի բացակայության դեպքում ընթերցողը չէր կարողանա համապարփակ ձևով ընկալել տվյալ ֆինանսական ներդրման իմաստը: «To invest 198 billion reais (\$64 billion) in infrastructure over the next few years» արտահայտությունը տվյալ դեպքում ներկայացնում է փոփոխության սլոթի ենթասլոթները: Այսպես՝ «ներդնել 64 միլիարդ դոլար ենթակառուցյուններում»՝ նպատակի և «հաջորդ մի քանի տարիների ընթացքում»՝ ժամանակի ենթասլոթ:

Հետևաբար՝ տվյալ տնտեսական իրադարձության համար միջուկային են համարվում սուբյեկտի, փոփոխության, օբյեկտի, նպատակի, ժամանակի և վայրի սլոթները:

Վերլուծենք ևս մեկ տնտեսական իրադարձության ֆրեյմ–սցենար.

Arch Coal Inc, the second–largest coal miner in the United States, delayed a \$90 million interest payment that was due Tuesday, pushing back a widely expected bankruptcy filing. (www.reuters.com, December 15, 2015)

Գծապատկեր 3.




Վերոնշյալ տնտեսական իրադարձության ֆրեյմ–սցենարը պարունակում է 5 սլոթ՝ սուբյեկտի, տարածության, փոփոխության, օբյեկտի, արդյունքի սլոթները և 2 ենթասլոթ՝ սուբյեկտի արժևորման և օբյեկտի ժամանակային: Եվս մեկը՝ իրադարձության ժամանակային սլոթը նշվում է հոդվածի առցանց կայքում «17.12.2015»: Տվյալ իրողության համար միջուկային են համարվում սուբյեկտի, փոփոխության, օբյեկտի, տարածության և ժամանակի, ինչպես նաև արդյունքի սլոթները: Վերջինս ցուցանշում է, որ սնանկության եզրին կանգնած «Arch Coal Inc» ընկերությունն ինչ–որ կերպ կարողացել է խուսափել իրեն սնանկ հայտարարելու տհաճ, բայց և այնպես սպասված փաստից: Տվյալ արդյունքը չհայտարարելու դեպքում իրադարձության լիակատար ընկալումը, մեր կարծիքով, կխափանվեր:

Այսպիսով՝ կարելի է եզրակացնել, որ իրադարձության ամբողջականության ապահովման համար հաճախ անհրաժեշտ են ոչ միայն միջուկային, այլև որոշ այլընտանցային սլոթներ, որոնք այս կամ այն դեպքում առանձնանում, ակտիվանում, առաջին պլան են մղվում տվյալ իրադարձության ընկալումը համապարփակ դարձնելու նպատակով: Դիցուք՝ վերոնշյալ տնտեսական իրադարձության ամբողջական ընկալման համար, բացի միջուկայիններից, կարևորվում է նաև արդյունքի սլոթը:

Վերլուծենք հաջորդ իրադարձության ֆրեյմ–սցենարը.

President Vladimir Putin signed a decree imposing a raft of punitive economic sanctions against Turkey on Saturday underlining the depth of the Kremlin's anger toward Ankara four days after Turkey shot down a Russian warplane. (www.reuters.com, November 28, 2015)

Գծապատկեր 4.




Այս իրադարձության մեջ սուբյեկտի սլոթը համալրում է նախագահ Վ. Պուտինը, որը կատարել է փոփոխություն, ստորագրել հրամանագիր, ըստ որի՝ Թուրքիայի համար (օբյեկտի սլոթ) կիրառվելու են մի շարք տնտեսական պատժամիջոցներ: Դա հանդես է գալիս որպես փոփոխության սլոթի գործիքի ենթասլոթ, քանզի մանրամասնում է հրամանագրի բովանդակությունը: Իրադարձության հաղորդումն ամփոփվում է ժամանակի և պատճառի սլոթներով, որոնց բացակայության դեպքում ընթերցողը չէր կարողանա լիարժեքորեն ընկալել սույն իրադարձության իմաստը:

Փաստական նյութի վերլուծությունը ցույց է տալիս, որ տնտեսական իրադարձությունների իրականացման համար օբյեկտի սլոթի առկայությունը պարտադիր պայման չէ այն դեպքերում, երբ սուբյեկտի սլոթի դերում հանդես են գալիս տարբեր տնտեսական իրույթներ, օրինակ՝ ինչ-որ ապրանքների գներ, բաժնետոմսեր, շահույթներ, բարեփոխումներ, գնաճ, հենց տնտեսությունը և այլն: Մի շարք դեպքերում սուբյեկտի, փոփոխության, ժամանակի և տարածության սլոթների ցուցանշումը լիովին հնարավոր է դարձնում իրողության ընկալումը:

Այսպես՝ հետևյալ իրադարձության ֆրեյմ-սցենարը չի պարունակում օբյեկտի սլոթ.

Japan's economy grew in the first quarter at a much faster rate than had been thought. (www.economist.com, June 13, 2015)

Գծապատկեր 5.




Ինչպես երևում է, այս սցենարը պարունակում է 4 հիմնական սլոթներ. Ճապոնիայի տնտեսությունը ֆրեյմ-սցենարի սուբյեկտն է, միաժամանակ իրականացնելով նաև տարածական տեղորոշման գործառույթ, այսինքն՝ մատնանշելով իրողության վայրը: Քանի որ յուրաքանչյուր իրադարձություն ենթադրում է իրադրության փոփոխություն, հետևաբար՝ «grew» լեզվամիավորը լրացնում է համապատասխան սլոթը, մինչդեռ ժամանակի սլոթը ներկայանում է «in the first quarter» արտահայտությամբ: Այս չորս սլոթները տվյալ իրադարձության ընկալման հիմնական տարրերն են: Տնտեսության աճը տեղի է ունեցել ավելի արագ տեմպով (այստեղ ներկայանում է փոփոխության սլոթի ենթասլոթը), քան կարծում էին: Վերջինս լրացնում է փոփոխության սլոթի համեմատության ենթասլոթը: Համապատասխանաբար՝ համեմատության ենթասլոթը տարափոփոխ է և չի խոչընդոտում տվյալ իրողության ընկալումը:

Նույն դիտարկումն առկա է նաև ստորև բերվող օրինակներում, որոնք զուրկ են օբյեկտի սլոթից, իսկ որպես սուբյեկտի սլոթ հանդես են գալիս տարբեր տնտեսական երևույթներ, ինչպիսիք են նավթը, գները, բաժնետոմսերը՝ համապատասխանաբար.


West Texas Intermediate oil slipped as much as 2.3 percent. (www.bloomberg.com, January 12, 2016)

Գծապատկեր 6.




Oil prices have fallen more than 70% since mid-2014, hit by the slowing global economy, the strong US dollar and oversupply. (www.bbc.com, February 3, 2016)

Գծապատկեր 7.



Royal Dutch Shell shares rose after it confirmed it would cut 10,000 jobs and a sharp fall in annual profits. (www.bbc.com, February 4, 2016)

Գծապատկեր 8.



Այսպիսով՝ կարելի է եզրակացնել, որ որոշակի իրադարձությունների իրագործման համար, որտեղ սուբյեկտի դերը կատարում են այնպիսի տնտեսական իրույթներ, ինչպիսիք են գները, բաժնետոմսերը, շահույթները, բարեփոխումները, գնաճը, տնտեսությունը և այլն, օբյեկտի սլոթի առկայությունը պարտադիր պայման չէ: Միաժամանակ, հարկ է հաշվի առնել այն փաստը, որ եթե իրադարձության օբյեկտը, այսինքն՝ իրադարձության հետևանքներն իր վրա կրողը, բացահայտ արտահայտված չէ, ապա այն գոյություն ունի ներակայորեն՝ մարդու, հասարակության, երկրների, համաշխարհային տնտեսության և այլնի տեսքով, քանի որ չկա որևէ տնտեսական իրադարձություն, որն իր հետքը ինչ-որ կերպ չթողնի վերը թվարկածների վրա:

Ընդլայնենք ուսումնասիրության շրջանակը և վերլուծենք մի գործարքի մակրոսցենար, որը կնքել է ճանաչված բասկետբոլիստ Ստիվն Քըրրը «Brita» ապրանքանիշի ֆիլտրած ջուրը գովազդելու նպատակով: Հայտնի է, որ ամեն մի տնտեսական իրադարձության մակրոսցենար կարող է ներգրավել ևս մի քանի միկրոսցենար: Դիցուք՝ սույն հոդվածը մեկնարկում է մի նախադասությամբ, որը լրացվում է սուբյեկտի (Stephen Curry), փոփոխության (has), օբյեկտի (a new beverage endorsement deal) (թերևս, ոչ հստակ անվանումներով, բայց, միաժամանակ, բացառվում է, որ խոսքը Կոկա-Կոլա, Պեպսի կամ էլ մեկ ուրիշ գազավորված ըմպելիքի մասին է) (and it's not with Coke, Pepsi or another soda).

National Basketball Association superstar Stephen Curry has a new beverage endorsement deal – and it's not with Coke, Pepsi or another soda.

Երկրորդ նախադասությունում կրկին լրացվում են սուբյեկտի (the Golden State Warrior), փոփոխության (is backing) և արդեն ցուցանշվող օբյեկտի (water filtration brand Brita) սլոթները.

Instead, the Golden State Warrior is backing water filtration brand Brita.

Սույն երկու նախադասությունները ներկայացնում են տվյալ իրադարձության համար առանցքային առաջին միկրոսցենարը:

Հարկ է նշել, որ տվյալ տնտեսական իրադարձության ժամանակի սլոթը բացահայտորեն չի ներկայացված հոդվածում, և ընթերցողն իրազեկվում է գործարար նորության ժամանակային թվագրման մասին՝ շնորհիվ առցանց կայքի, որտեղ առկա են իրական ֆիզիկական ժամանակում տեղի ունեցող և հենց այդ օրը լուսաբանվող իրողությունները: Տարածական տեղորոշման սլոթը նույնպես բացահայտված չէ հոդվածի սկզբում, և միայն այն դեպքում, եթե ընթերցողը տեղյակ է Ստիվն Քըրրի ով լինելու մասին, կարող է գլխի ընկնել, որ իրադարձությունը կատարվում է ԱՄՆ-ում: Հակառակ դեպքում, հոդվածի վերջում տրվող տեղեկույթում նշվում է գործարքի նպատակի սլոթը՝ ԱՄՆ-ում բարձրացնել մաքուր ջրի օգտակարության վերաբերյալ իրազեկության մակարդակը:

Հաջորդիվ ներկայացվում է երկրորդ միկրոսցենարը միևնույն սուբյեկտի (Mr. Curry), փոփոխության (signed) սլոթներով, ինչպես նաև օբյեկտի՝ գործարքի ժամանակային՝ «a three-year deal» և նպատակի սլոթներով՝ «to endorse the brand's

water filtration products and the benefits of water in general»: Այստեղ արտացոլվում են Քըրրիի հետագա գործողությունները.

Mr. Curry signed a three-year deal to "endorse the brand's water filtration products and the benefits of water in general," according to a statement. He will be featured in TV ads, PR and social media campaigns.

Երրորդ միկրոսցենարում լուսաբանվում է Քըրրիի կարծիքը «Brita» ապրանքանիշի ջրի մասին.

"Drinking water is essential to a healthy lifestyle," Mr. Curry said in the statement. "Water is my drink. I like that Brita makes tap water taste good, so you don't need to spend money or waste plastic with bottled water."

Չորրորդ միկրոսցենարում լրացվում են գործարքի իրականացման ժամանակային և գովազդային գործակալության սլոթները.

The campaign will begin in January, with the TV ads expected to debut in March, according to Brita. The agency is DDB, San Francisco.

Հինգերորդ միկրոսցենարը ներառում է «Brita» ապրանքանիշի գլխավոր տնօրենի՝ տվյալ գործարքի հետ կապված դիրքորոշման մանրամասները, այսպիսով՝ լրացնելով նպատակի սլոթը.

"By deciding to work with Brita – and make no mistake, Stephen Curry could endorse any beverage he wants – he's sending a powerful message that clean, clear water is the right choice for everyone in America," Ed Huber, general manager of the Brita brand, said in the statement.

Վեցերորդ միկրոսցենարում հղում է կատարվում «Brita» և «Drink up» ընկերությունների համագործակցությանը.

In its announcement, Brita linked the deal to the Drink Up organization, which it described as "an effort from the Partnership for a Healthier America and its honorary chairwoman First Lady Michelle Obama to encourage people to drink more water more often."

Հաջորդիվ «Brita»-ն լուսաբանում է «Մանկաբուժություն» ամսագրի տվյալները մարզիկների վնասակար սննդակարգի վերաբերյալ.

Brita also quoted a 2013 study in the journal Pediatrics that it said "showed nearly 80% of the food endorsed by top athletes was 'energy dense and nutrient poor,' while 93% of beverages endorsed got 100% of their calories from added sugar."

Եվ վերջին միկրոսցենարում գործարքի բուն նպատակն է՝ բարձրացնել բնակչության՝ մաքուր ջրի օգտակարության մասին իրազեկության մակարդակը՝

"It's hard to overestimate the importance of deals like this," Drew Nannis, chief marketing officer at the Partnership for a Healthier America, said in a statement. "When we launched Drink Up, this was the vision. We hoped to help encourage trend-setting celebrities, consumer brands and others to work together to encourage people to pick water more often. Stephen Curry teaming up with Brita is absolutely going to make a difference in our efforts." (www.adage.com, December 17, 2015)

Այսպիսով՝ տվյալ տնտեսական իրադարձության մակրոսցենարը կազմված է 8 միկրոսցենարից, որոնցից առանցքային կարելի է համարել միայն առաջինը, քանի որ դա պարունակում է հիմնական տեղեկությո՞ւն միջուկային սլոթներով՝ սուբյեկտի, փոփոխության, ինչպես նաև ներակա արտահայտված ժամանակի և տարածության տարրերը: Մնացյալ միկրոսցենարները նկարագրում են գործարքի հետաքրքիր, թերևս, իրադարձության ընկալման համար ոչ այդքան կարևոր մանրամասներ, նպատակը, նախապատմությունը և այլն: Այստեղից կարելի է եզրակացնել, որ թեև տնտեսական իրադարձությունը կարող է ներկայացվել մի շարք միկրոսցենարներով, կարևոր է համարվում հիմնականում առաջինը, որտեղ նշված են տվյալ իրադարձության սցենարի միջուկային սլոթները: Համոզվելու համար վերլուծենք ևս մեկ տնտեսական իրադարձության մակրոսցենար, ըստ որի՝ շվեդական էլեկտրական մեքենաների «Nevs» ընկերությունը գործարք է կնքել չինական «Panda New Energy» կապալառու գործակալության հետ՝ 150000 էլեկտրական մեքենա տրամադրելու վերաբերյալ.

National Electric Vehicle Sweden (Nevs), which bought the assets of bankrupt Saab Automobile, announced a 78-billion-yuan (\$12 billion) deal on Thursday to supply 150,000 electric cars to Chinese leasing firm Panda New Energy.

Հոդվածը մեկնարկում է մի միկրոսցենարով, որտեղ տնտեսական իրադարձության սուբյեկտի սլոթը լրացնում է «Nevs» ընկերությունը, «which bought the

assets of bankrupt Saab Automobile» արտահայտությունը սուբյեկտի պարագայական ենթասյրթն է, «announced» բայը ներկայանում է որպես փոփոխության, «a 78-billion-yuan (\$12 billion) deal»-ը՝ օբյեկտի, «on Thursday»-ը ժամանակի սյրթ, «to supply 150,000 electric cars to Chinese leasing firm Panda New Energy»-ն՝ նպատակի սյրթ: Տարածական տեղայնացման սյրթի վերաբերյալ ընթերցողը տեղեկանում է «National Electric Vehicle Sweden» արտահայտությունից՝ կռահելով, որ իրադարձությունը տեղի է ունեցել Շվեդիայում: Այսպիսով՝ նշված միկրոսցենարը պարունակում է 6 սյրթ և մեկ ենթասյրթ:

Հաջորդ 2 միկրոսցենարները կարելի է համարել տվյալ իրադարձության սուբյեկտի ենթասյրթների հանրագումար. այստեղ նշվում է, թե ինչ մեծ նվաճում է տվյալ պայմանագիրը «Nevs» ընկերության համար, որը 2012 թ. գնել է «Saab»-ի արժեթղթերը և դուրս եկել վերակազմավորման գործընթացից: Ըստ «Nevs» ընկերության փոխնախագահի՝ այս գործարքը ռազմավարական համագործակցություն է ոչ միայն մեքենաների քանակի ավելացման առումով, այլև որպես երազանքի և բիզնես պլանի իրականացում:

The agreement marks a big breakthrough for Nevs, which bought Saab's assets in 2012 and exited corporate reorganization procedures in April.

"This is a strategic collaboration for Nevs not only in terms of the numbers of vehicles, but it is also an important step to implement our vision and new business plan," Nevs Vice Chairman Stefan Tilk said in a statement.

Մյուս միկրոսցենարը լրացնում է ներկայիս տնտեսական իրադարձության նպատակի սյրթի ենթասյրթները. «Nevs» ընկերությունը (սուբյեկտ) կտրամադրի (փոփոխություն) «Panda» գործակալությանը (օբյեկտ) 150000 հատ «9-3 Սեդան» մակնիշի էլեկտրական մեքենաներ (գործիք) 2020 թ. վերջին (ժամանակ), ինչպես նաև 100000 հատ այլ էլեկտրական մեքենաշինական ապրանքներ և ծառայություններ (գործիք)՝ իր և իր սեփականատերերի հետ համագործակցող ընկերություններից (օբյեկտ): «Nevs»-ը նախատեսում է վարձել հարյուրավոր աշխատողներ այս նպատակով:

Nevs said it will provide Panda with 150,000 9–3 sedan electric vehicles by the end of 2020 and 100,000 other electric vehicle products and services from companies associated with Nevs and its owners.

Mikael Ostlund, a spokesman for Nevs, said the company planned to hire "hundreds of staff".

Հոդվածն ամփոփվում է «Nevs» ընկերության, այսինքն՝ սուբյեկտի՝ սեփականատերերի մասին տեղեկությամբ.

Nevs is co-owned by National Modern Energy Holdings, Tianjin Binhai Hi-tech industrial Development Area and the Beijing State Research Information Technology Co., Ltd. (www.reuters.com, January 7, 2016)

Դիցուք՝ սույն իրադարձության մակրոսցենարը շարադրվում է 4 միկրոսցենարների միջոցով, որոնցում անփոփոխ է մնում սուբյեկտի սլոքը, և մանրամասն ներկայացվում են նպատակի սլոքի ենթասլոքները: Այստեղ նույնպես առանցքային է համարվում առաջին միկրոսցենարը, քանի որ դա պարունակում է տվյալ իրադարձության ընկալման համար անհրաժեշտ ողջ ամփոփ տեղեկությամբ:

Այսպիսով՝ տնտեսական իրադարձությունը հարաշարժ իրողություն է, որն ընթանում է որոշակի հանգամանքներում, ըստ որոշակի սցենարի, և հետևաբար՝ ընկալվում է ֆրեյմ–սցենարի միջոցով: Վերջինս պարունակում է սլոքներ, որոնք, համաձայն իրենց բովանդակության, լինում են երկու տեսակի՝ միջուկային և պայմանական/այլընտրանքային: Միջուկային մասի շնորհիվ հնարավոր է սցենարի ճանաչում իրադրության մեկնաբանության գործընթացում, իսկ պայմանական մասն այլընտրանքային տեղեկությի կրողն է: Շրջակա աշխարհի հետ մարդու փոխազդեցության ժամանակ կատարվում է ֆրեյմ–սցենարի հարմարակցում՝ ըստ որոշակի իրադրության, կախված անհատի՝ օբյեկտիվ իրականության մասին գիտելիքից: Իրադարձությունը, տվյալ դեպքում, անհատն ընկալում է ընդհանրացված կերպով՝ որպես գործողություն, տեսողական պատկեր, դատողություն, պատում և այլն: Այսինքն՝ դա որևէ որոշակի իրադարձություն չէ, այլ միևնույն դասին պատկանող, բովանդակային առումով միմյանց մոտ իրադարձությունների հատկանիշների հավաքածու: Միջուկային՝ իրադարձության կատարման անհրաժեշտ սլոքներն են սուբյեկտը (գործողություն կատարողը), փոփոխությունը, վայրը, ժամանակը: Որպես

պայմանական սլոթներ (այսինքն՝ տեղեկույթ, որի բացակայությունը չի խափանում տվյալ իրադարձության հիմնական ընկալումը)՝ կարող են լինել տնտեսական իրադարձության օբյեկտը, պատճառը, հետևանքը, արժևորումը, կանխատեսումը և այլն: Այդուհանդերձ, իրադարձության ամբողջականության ապահովման համար հաճախ անհրաժեշտ են ոչ միայն միջուկային, այլև որոշ պայմանական սլոթներ, որոնք այս կամ այն դեպքում ակտիվանում և առաջին պլան են մղվում՝ համապարփակ դարձնելով տվյալ իրադարձության ընկալումը, որին հաջորդում է անհատի կողմից իրողության վերածումը փաստի:

Առավել ծավալուն տնտեսական իրադարձությունների հոդվածային տարբերակները ներկայացվում են մակրոսցենարներով, որոնք կարող են պարունակել մեկից ավելի միկրոսցենարներ: Դրանցից առաջինն առանցքային է տվյալ իրադարձության ընկալման համար, մինչդեռ մնացյալը լրացնում են իրադարձությունը՝ դրան առնչվող տարբեր տեսակի տեղեկատվությամբ:

Միաժամանակ, նշենք, որ տնտեսական իրադարձության լիարժեք ընկալման գործընթացները, բացի ֆրեյմ-սցենարի պարտադիր և այլընտրանքային սլոթների ներգրավվածությունից, պահանջում են անհատի դրվագային հիշողության մեջ պարփակված անհատական գիտելիքի և փորձի հիման վրա գործող իրադրային կաղապարների կիրառում, որոնց ուսումնասիրությունը ներկայացնում ենք հաջորդիվ:

3.3. Տնտեսական իրադարձության հասկացության դաշտի ձևավորման գործընթացն իրադրային կաղապարների կիրառմամբ

Ինչպես նշեցինք նախորդ գլխում, դիսկուրսի համապարփակ ընկալումը ենթադրում է գիտելիքի այնպիսի կառույցների կիրառում, ինչպիսիք են իրադրային կամ դրվագային կաղապարները: Իրադրային կաղապարների հիմքում լեզվակիրների անհատական գիտելիքներն են, նրանց կուտակած նախորդ փորձը, դիրքորոշումները, նպատակները, զգացմունքներն ու հույզերը:

«Կաղապար» հասկացությունն արտացոլում է դիսկուրսի ձևավորման և ընկալման գործընթացում մարդկանց գիտելիքն իրական կամ երևակայելի

իրադրությունների մասին: Կադապարները կոչվում են իրադրային կամ դրվագային, քանի որ դրանք գտնվում են դրվագային հիշողության մեջ: Այսպիսով՝ իրադրային կադապարը ներառում է գիտելիք որոշակի իրադրության մասին, ինչպես նաև այն գիտելիքը, որ կուտակել է անհատը տվյալ իրադրության մասին իր նախորդ փորձից: Այս իրադրությանը վերաբերող յուրաքանչյուր նոր տեղեկատվություն, որ մենք ունենք դրվագային հիշողության մեջ, կարող է օգտագործվել կադապարն ընդլայնելու և համալրելու (update) համար: Անհատին առնչվող գործողությունների և իրադարձությունների կադապարները կարող են փոխվել կամ վերափոխվել, միաժամանակ, կարող են լինել կադապարներ առանձնակի իրադարձությունների մասին (տե՛ս van Dijk, 1987: 162 ‘The car accident I had last year in France’): Ավելին, դրանք կարող են ներառել իրադրությունների մասին չափազանց անհատական գիտելիքներ, իսկ տեղեկույթի մի մասը կարող է նաև վերաբերել հասարակության որոշակի խմբին, նույնիսկ դրա բոլոր անդամներին:

Նախորդիվ նշվել է, որ դիսկուրսի ապակոդավորումն ընթանում է մի շարք ռազմավարական հնարների շնորհիվ (van Dijk, 1987): Առաջին հերթին, դա լեզվակրի կողմից, ըստ տեքստային բազայի (textbase), դիսկուրսի իմաստային կառուցումն է, որը բաղկացած է տեղային և համընդհանրական մակարդակում կապակցված նախադասությունների շարքից: Այս գործընթացը տեղի է ունենում կարճատև հիշողության մեջ, սակայն վերջինիս սահմանափակ կարողությունների հետևանքով կրում է շրջափոխային բնույթ. այսինքն՝ տեղեկույթը, որը մշակվում է կարճատև հիշողության մեջ, շարունակաբար անցում է կատարում դեպի դրվագային հիշողության շրջափուլ: Տեղային և համընդհանրական մեկնաբանման գործընթացների իրականացման համար անհրաժեշտ է ֆրեյմներով և սցենարներով կանխատեսադրված (presupposed) գիտելիք: Այս բոլոր գործընթացները կառավարում է վերահսկման համակարգը (control system), որտեղ մեկնաբանման ենթակա յուրաքանչյուր հատվածի համար ներկայացված են թեմաներ (մակրոպրոպոզիցիաներ), ընթերցողի նպատակները և սցենարներից արտամղվող (operating) գիտելիք: Ընկալման գործընթացներն ավելի շուտ ռազմավարական, քան կառուցվածքային բնույթ ունեն, որոշակի կանոնների ենթարկվող: Այսինքն՝ ընկալման գործընթացն աստիճանական է ու շարունակական (on-line): Հաճախ կիրառվում է ոչ

լիարժեք (incomplete) տեղեկույթ, պահանջվում են տվյալներ դիսկուրսի տարբեր մակարդակներից և հաղորդակցման ենթատեքստից: Ի վերջո, ընկալման գործընթացը վերահսկվում է՝ անհատից անհատ տարբերվող նպատակներով և համոզմունքներով:

Ընդամին, ըստ Թ. վան Դեյքի, դիսկուրսի լիարժեք ընկալման համար, այս ամենի հետ մեկտեղ, անհրաժեշտ է նաև իրադրային կաղապարի առկայություն (van Dijk, 1987: 164–165): Հատկանշական է նրա առաջարկած՝ իրական իրադրությունների և դրանց ճանաչողական ներկայացումների միջև տարբերությունը.

1. Քանի որ մենք չենք կարող և կարիք չունենք իմանալու աշխարհի մասին բոլոր փաստերը, ուստի ճանաչողական կաղապարները կցկտուր են (fragmentary) և ոչ լիարժեք (incomplete):
2. Կաղապարները կարող են անորոշ ձևով ներկայացնել իրական իրադրությունները: Այսպես՝ մենք կարող ենք «John made a trip to Portugal» բարդ գործողությունը ներկայացնել մեկ պարզ կաղապարով, մինչդեռ իրականում դա բաղկացած է իրադարձությունների, գործողությունների, առարկաների և մարդկանց բավական բարդ և շարունակական շղթայից, որից միայն մի փոքր հատվածն է արտահայտվում այս կաղապարում:
3. Կաղապարներն արտացոլում են հասարակությանը համապատասխան իրադրությունների մեկնաբանումներ: Օրինակ՝ մեկ մարդու կողմից առարկայի փոխանցումը մյուսին, որոշակի հասարակական իրադրություններում, կարող է դիտվել որպես «նվերների հանձնում»:

Իրադրությունների մեկնաբանման հասարակական սահմանփակումներով հանդերձ, ճանաչողական կաղապարները անհատական և սուբյեկտիվ բնույթ ունեն: Միևնույն իրադրությունը տարբեր մարդիկ կարող են մեկնաբանել տարբեր կերպ՝ ըստ իրենց տեսակետների, նպատակների (van Dijk, 1987: 171–172):

Պետք է նշել նաև, որ կաղապարները սոսկ մեկուսացած գիտելիքային կառույցներ չեն, որ առկա են մարդկանց դրվագային հիշողության մեջ, այլ համակարգված, փոխկապված կարգեր, որոնք թույլ են տալիս համատեղել և կապակցել, ինչպես նաև վերհիշել այլ կաղապարներ: Այսպես՝ ծննդյան օրվա երեկույթի ընդհանուր իրադրությունում, հնարավոր է, պատահի վիճաբանություն, որը

որպես առանձնակի «իրադրություն», կունենա իր կատարման ժամանակը, հանգամանքները, մասնակիցները և իրադարձությունները (van Dijk, 1987: 176):

Տարբերակվում են անհատական (particular) և ընդհանուր (general) կաղապարներ: Անհատական կաղապարը որոշակի իրադրության (որում մենք ներգրավված ենք կամ որի մասին կարդում կամ լսում ենք) ներկայացումն է: Այն կառուցվում է ըստ հետևյալ տիպի տեղեկատվության.

1. մեր ունեցած ընդհանուր կաղապարների հատվածներ,
2. առկա դիսկուրսից քաղված տեղեկություն,
3. ընդհանուր իմաստային գիտելիքից դուրս բերված (instantiated) հատվածներ:

Այլ կերպ ասած, յուրաքանչյուր անհատական կաղապար ինքնաբերական (ad hoc) կառույց է, գիտելիքի այլ ձևերի միասնություն: Դիսկուրսի մեկնաբանումից հետո այս անհատական կաղապարը հազվադեպ է կիրառելի լինում: Այնուամենայնիվ, վերջինիս նոր տարրերն օգտագործվում են մեր ընդհանուր կաղապարները լրացնելու նպատակով:

Կաղապարների կիրառումը ենթադրում է մի շարք ռազմավարություններ՝ հաղորդակցման ենթատեքստ, նպատակներ և հետաքրքրություններ, վերնագիր, առաջին նախադասություններ (որոնք կիրառվում են ոչ միայն տեքստի մակրոկառուցվածքն ապահովելու, այլև ներգրավված իրադարձությունների վերաբերյալ համապատասխան գիտելիքն ակտիվացնելու համար), նախադասությունների կապակցվածություն, մշտադիտարկում (monitoring)՝ որպես տեղային և համընդհանրական ընկալման գործընթացներ, կաղապարների, սցենարների և այլ գիտելիքների ակտիվացում և վերհանում, ինչպես նաև տեքստի և համատեքստի միջև կապի շարունակաբար հսկում վերահսկման կաղապարի կողմից, տեղեկացում (ընկալման կաղապարը ենթադրում է ճանաչողական կաղապարի աստիճանական կառուցում թե՛ նոր, թե՛ հին տեղեկույթի ներգրավմամբ), արժևորում (ցանկության դեպքում կարող ենք արժևորել թե՛ ստացվող տեղեկույթը, թե՛ կաղապարի հնարավոր վերափոխումները, որ կարող է ներառել տվյալ տեղեկույթը. Օրինակ՝ արդյո՞ք տեղեկությունը ստույգ է, թե՞ ոչ) (van Dijk, 1987: 177–179) [12]:

Այսպիսով՝ հիմնվելով Թ. վան Դեյքի մշակած՝ դիսկուրսի մեկնաբանման ռազմավարության վրա, փորձենք վերլուծել 2015 թ. նոյեմբերի 28–ին www.reuters.com

կայքում տեղ գտած մի տնտեսական իրադարձություն: Վերլուծության արդյունքների առավել հավաստիություն ապահովելու համար սույն իրադարձության կաղապարների մշակումը զուգակցել ենք 50 հոգու շրջանում կատարված հարցմամբ՝ վերստուգելով, մշակելով, հավաքագրելով և արձանագրելով առավել հաճախ տրվող պատասխանները: Նշենք նաև, որ տվյալ դիսկուրսի հատվածի ընկալման հարցում ընթերցողների ցուցաբերած տարբեր մոտեցումները բնականոն են՝ պայմանավորված նրանց նպատակներով, մտադրություններով, մտահորիզոնով, աշխարհընկալմամբ, իրազեկության մակարդակով, հասարակական-մշակութային որոշակի առանձնահատկություններով և այլն: Վերլուծության գործընթացը դյուրին դարձնելու նպատակով այն տեղեկույթը, որը ստացվում է ընդհանուր գիտելիքներից, ներկայացվում է շեղատառերով, մինչդեռ անհատական գիտելիքներից արտամղվող տեղեկատվությունը՝ ընդգծված ձևով:

Համատեքստ	Կաղապարի տեղեկույթ
1. www.reuters.com կայք 2. Գործարար նորություններ	1. Համացանցային կայք 2. Գործարար նորություններ
Տեքստային բազայի հատվածներ	
Վերնագիր Putin, citing national security, signs Turkey sanctions decree	Կաղապար 1. Մասնակիցներ 1.1. Պուտին 1.2. Ռուսաստանի նախագահ 1.3. Իշխանություն Կաղապար 2. Ազգային անվտանգություն 2.1. Ռուսաստանը՝ Հայաստանի դաշնակից 2.2. <u>ներգրավվածության զգացում</u> Կաղապար 3. Թուրքիա Կաղապար 4. Պատժամիջոցներ 4.1. Ինչպիսի՞ Կաղապար 5. Պատճառ

	<p>5.1. Հնարավոր է՝ օրեր առաջ Թուրքիայի օդային տարածքում ռուսական ինքնաթիռի խոցում</p>
<p>Նախադասություն 1</p> <p>President Vladimir Putin signed a decree imposing a raft of punitive economic sanctions against Turkey on Saturday, underlining the depth of the Kremlin's anger toward Ankara four days after Turkey shot down a Russian warplane.</p>	<p>Կադապար 1. Պատժամիջոցները տնտեսական են</p> <p>1.1. Punitive ածականը հաստատում է պատճառի վարկածը</p> <p>Կադապար 2. Կրեմլ</p> <p>2.1. <i>Ռուսաստանի նախագահի նստավայր</i></p> <p>2.2. <u>Անցյալ տարի այցելել են</u></p> <p>2.3. Կրեմլը խիստ զայրացած է</p> <p>Կադապար 3. Անկարա</p> <p>3.1. <i>Թուրքիայի մայրաքաղաք</i></p> <p>Կադապար 4. Ժամանակ</p> <p>4.1. <i>Ինքնաթիռի խոցումից 4 օր հետո</i></p> <p>Կադապար 5. <i>Թուրքիան խոցել է ռուսական ինքնաթիռը (տեղեկույթ, որ հայտնի է նախորդ նորություններից և արդեն ամբարվել է մեր ընդհանուր գիտելիքների շտեմարանում)</i></p>
<p>Նախադասություն 2</p> <p>The decree, which entered into force immediately, said charter flights from Russia to Turkey would be banned, that tour firms would be told not to sell any holidays there, and that unspecified Turkish imports would be outlawed, and</p>	<p>Կադապար 1. Ժամանակ</p> <p>1.1. Հրամանն անմիջապես ուժի մեջ է մտել</p> <p>Կադապար 2. Հետևանքներ</p> <p>2.1. <i>Ռուսաստան – Թուրքիա թռիչքների արգելք</i></p> <p>2.2. <i>Տուրիստական գործակալությունների՝ դեպի Թուրքիա փաթեթների</i></p>

<p>Turkish firms and nationals have their economic activities halted or curbed.</p>	<p>վաճառքի արգելք 2.2.1. <u>ունենմ ոռւս ընկերներ, որոնք հանգստացել են Թուրքիայում</u> 2.3. <i>Թուրքական ապրանքների ներկրման արգելք</i> 2.4. <i>Թուրքական ընկերությունների գործունեության դադարեցում</i> Կադապար 3. Հնարավոր հետևանքներ 3.1. <i>Թուրքիայի տնտեսական վիճակի վարթարացում, կապված այն հանգամանքի հետ, որ տեղի զբոսաշրջային արդյունաբերությունը մեծապես հենվում է ՌԴ քաղաքացիների վրա</i> 3.2. <i>Կտուժեն Թուրքիայի ոչ միայն տուրիստական, այլև մյուս ոլորտները</i> 3.3. <i>Թուրքիայի վարկանիշի անկում</i></p>
<p>Նախադասություն 3 "The circumstances are unprecedented. The gauntlet thrown down to Russia is unprecedented. So naturally the reaction is in line with this threat," Dmitry Peskov, Putin's spokesman, said hours before the decree was published.</p>	<p>Կադապար 1. Հանգամանքներ 1.1. Աննախադեպ լարված իրավիճակ 1.2. Սպասողական վիճակ 1.3. <i>Սպառնալիք</i> Կադապար 2. Մասնակիցներ 2.1. <i>Դմիտրի Պեսկով</i> 2.2. <i>Պուտինի խոսնակ</i> Կադապար 3. Ժամանակ 3.1. <i>Հրամանը ստորագրելուց ժամեր առաջ</i></p>
<p>Նախադասություն 4 But aides to Putin say he is incandescent</p>	<p>Կադապար 1. Մասնակիցներ 1.1. <i>Պուտինի օգնականներ</i></p>

<p>that Turkish President Tayyip Erdogan has yet to apologize for the Nov. 24 incident near the Syrian-Turkish border in which one Russian pilot was killed along with a Russian marine who tried to rescue the crew of the downed SU-24 jet.</p>	<p>Կաղապար 2. Պուտինի դիրքորոշումը 2.1. Խիստ զայրացած 2.3. Ակնկալում է Էրդողանի զղջումը <i>նոյեմբերի 24-ի պատահարի վերաբերյալ</i> 2.4. Էրդողանը՝ Թուրքիայի նախագահ</p>
<p>Նախադասություն 5 Senior Russian officials have called the episode, one of the most serious publicly acknowledged clashes between a NATO member country and Russia for half a century, a pre-planned provocation.</p>	<p>Կաղապար 1. Մասնակիցներ 1.1. Ռուսաստանի պաշտոնյաներ Կաղապար 2. Միջադեպի գնահատական 2.1. Լրջագույն բախում (the most serious clash) 2.2. Նախօրոք պլանավորված սադրանք Կաղապար 3. NATO 3.1. <i>Միջազգային կառույց</i> Կաղապար 4. Ժամանակ 4.1. Կես դար</p>
<p>Նախադասություն 6 Erdogan has been equally robust. He has said Turkey will not apologize for downing the jet, saying Ankara was fully within its rights to defend its air space. On Saturday, he appeared to soften his rhetoric a little, saying the episode had saddened him.</p>	<p>Կաղապար 1. Մասնակիցներ 1.1. Էրդողանն անդրդվելի է 1.2. Ներողություն չի խնդրի ուսական հինքնաթիռի խոցման համար 1.3 Արդարանում է, որ Թուրքիան լիիրավ է պաշտպանել իր օդային տարածքը Կաղապար 2. Ժամանակ/ Այս նորության թողարկման օրը Կաղապար 3. Մասնակիցներ 3.1. Էրդողանը նշել է, որ այս միջադեպը տխրեցրել է իրեն</p>

Այսպիսով՝ ընթերցողը հաղորդակցման համատեքստից՝ վերը նշված կայքից, իրազեկվելով տվյալ իրադարձության մասին, վերհանում է նմանատիպ համատեքստերի՝ իր անհատական կամ ընդհանուր կաղապարները, որոնց միջոցով էլ ակտիվացնում է քաղաքական և տնտեսական իրադարձությունների հետ կապված իր գիտելիքները: Այս դեպքում ակտիվանում են Ռուսաստանին և Թուրքիային առնչվող քաղաքական, ինչպես նաև տնտեսական հարաբերությունների կաղապարները: Բավական իմաստալից «Putin, citing national security, signs Turkey sanctions decree» վերնագիրն ընթերցողի համար ծառայում է որպես հարթակ՝ ճկուն անցում կատարելու այս երկու պետությունների միջև պատահած՝ ինքնաթիռի խոցման տիպի միջադեպ: Այստեղ «խաղի» մեջ են ներգրավվում մի շարք ընդհանուր կաղապարներ. Ռուսաստանի նախագահ, իշխանություն, Ռուսաստանը՝ Հայաստանի դաշնակից: Հարցվողների մեծամասնության շրջանում առաջանում է անհատական մոտեցում ներգրավվածության առումով: Միաժամանակ, ընթերցողը փնտրում է համապատասխան կաղապար՝ կապված պատժամիջոցների պատճառի հետ, համադրելով դա օրեր առաջ Թուրքիայի օդային տարածքում ռուսական ինքնաթիռի խոցման փաստի հետ: Առաջին նախադասության ընթերցումից հետո պատժամիջոցների պատճառի ենթադրությունը հաստատվում է, և ընթերցողը, համադրելով իր ունեցած ընդհանուր կաղապարները նոր տեղեկատվության հետ, մշակում է նորերը և ենթադրություններ անում հնարավոր հետագա իրադարձությունների վերաբերյալ. Թուրքիայի տնտեսական վիճակի վատթարացում, որը կանդրադառնա ոչ միայն զբոսաշրջության, այլև մյուս ոլորտների վրա, այդ երկրի վարկանիշի անկում և այլն: Ակտիվանում են նաև մի շարք անհատական գիտելիքներ (անցյալ տարի այցելել եմ Մոսկվա՝ Կրեմլ, ունեմ ռուս ընկերներ, որ հանգստացել են Թուրքիայում):

Այսպիսով՝ ընթերցվող նորության ընկալման շարունակական գործընթացը ենթադրում է կաղապարների աստիճանական կառուցում թե՛ ըստ արդեն ունեցած կաղապարների տվյալների, թե՛ ըստ նոր տեղեկությունների: Սա թույլ է տալիս ընթերցողին հարմարեցնել նոր տեղեկատվությունը համապատասխան կաղապարներին՝ այսկերպ վերափոխելով և, ի վերջո, կուտակելով դրանք սեփական կաղապարների «պահեստում»՝ հետագա կիրառման նպատակով:

Վերլուծենք ևս մեկ հոդված, որտեղ լուսաբանվում են Թուրքիայի տնտեսական խնդիրները՝ կապված Ռուսաստանի կողմից կիրառված պատժամիջոցների և դրան հաջորդած Ստամբուլում կատարված ահաբեկչական գործողությունների հետ: Փորձենք պարզել, թե ինչպես են ընթերցողի ենթադրություններից վերափոխված և ամբարված կադապարներն օգնում մեզ հասկանալու տվյալ նորությունն անմիջապես դրա վերնագրից (այս լուրը տեղադրվել էր www.voanews.com կայքում 2016թ. հունվարի 15-ին):

Terrorism and Russian sanctions have left Turkey’s already struggling economy bracing for the worst

Այսպիսով՝ ընթերցողի ենթադրությունները՝ կապված Թուրքիայի տնտեսության վիճակի վատթարացման հետ, կատարված նախորդ նորության համատեքստում, հաստատվում են: Եթե անգամ ընթերցողն իրազեկված չէ ահաբեկչական գործողության մասին, որը տեղի է ունեցել Թուրքիայում, առաջին իսկ նախադասությունից մանրամասն տեղեկատվություն է ստանում այդ մասին, մասնավորապես՝ իրադարձության ժամանակի, գործող անձանց, զոհերի քանակի.

Tourism seems sure to take hit, analysts say, after a suicide bomber aligned with Islamic State (IS) blew himself up in a crowd of German tourists this week, killing 10.

Այնուհետև քննարկվում են Գերմանիայից ժամանող զբոսաշրջիկների դերը թուրքական տուրիստական արդյունաբերության շահավետության գործում և սպասվող անդառնալի ծանր հետևանքները.

German tourists make up roughly 15 percent of Turkey’s tourism industry, which earns the country \$34 billion annually.

“Who will want to come to Turkey now?” asked Refet Kayakiran, a Turkish tourism expert. “After the bombing, Turkey tourism is finished,” he added, noting the rash of German tourism cancellations.

Արդյունքում ընթերցողն իրազեկվում է ահաբեկչության հետևանքներին՝ կառուցելով նոր իրադրային կադապարներ: Այս գործընթացը զուգակցվում է Ռուսաստանի կիրառված պատժամիջոցների մասին՝ արդեն իսկ առկա ընդհանուր գիտելիքների ակտիվացմանը՝

The bombing came as the Turkish economy starts to see the effects of Russian sanctions, which Moscow imposed following a diplomatic row with Ankara over Turkey's downing of a Russian fighter jet in along the Turkish-Syrian border last November.

Turkey said the jet, operating in support of government forces against rebels in Syria's civil war, entered its air space – a charge Russia denied.

Հետևյալ նախադասությունների շնորհիվ ընթերցողի ունեցած ընդհանուր կաղապարները համալրվում են ֆինանսական բնույթի տեղեկատվությամբ՝ կապված Ռուսաստանի կողմից Թուրքիայի նկատմամբ կիրառված պատժամիջոցների հետ: Այս ընթացքում, անշուշտ, տեղի են ունենում իրադրային կաղապարների վերափոխումներ.

Russia's sanctions are largely aimed at Turkey's tourist, agricultural and banking sectors.

"Turkey will lose \$3.1 billion worth of trade in 2016 due to Russian economic sanctions," Turkish Deputy Prime Minister Mehmet Simsek said last week at a meeting in Washington...

"Making up for these losses may take many years," he said. "How can you calculate that in numbers?"

Այնուհետև ավելի մանրամասն անդրադարձ է կատարվում թուրքական ներկրումներին դեպի Ռուսաստան և զբոսաշրջությանը, այն ֆինանսական կորուստներին, որ կունենա Թուրքիան.

Russia has banned the import of Turkish fruits and vegetables, poultry and even salt.

"Russia has 60 percent of our fruit and vegetable exports," said Burhan Er, the president of the Turkish Fruit and Vegetable Sellers Association. "We lost all of that. Russia is a big market for us."

Moscow also banned the sale of charter vacations to Turkey for Russian citizens...Losing Russian tourists could cost Turkey more than \$3 billion a year, according to industry experts. In 2014 alone, 4.5 million Russian tourists visited Turkey.

Այսպիսով՝ ընթերցողը, նախորդ նորություններից իրազեկված լինելով Թուրքիայի դեմ կիրառված պատժամիջոցների մասին և զուգակցելով այդ տեղեկատվությունը հետագա իրադարձությունների վերաբերյալ իր ենթադրությունների հետ, տվյալ

նորություններին ծանոթանալու ընթացքում հաստատում է իր իսկ արած եզրահանգումները, սրանով իսկ համալրում և վերափոխում իրադրային կադապարները, ինչու ոչ, նաև ստեղծում նորերը, որոնք, ի վերջո, հանգրվանում են նրա գիտելիքների շտեմարանում:

Ամփոփելով նշենք, որ այս ենթագլխում վերլուծելով ընթերցողի կիրառած ուսումնականությունները տեքստն ընկալելու նպատակով, պարզաբանեցինք այն էական իրադրային կադապարները, որոնք կարևոր և անհրաժեշտ դեր ունեն դիսկուրսի, մասնավորապես՝ տնտեսական իրադարձության ընկալման գործընթացում:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Մ. Մինսկին ստեղծել է ֆրեյմների տեսությունը՝ նպատակ ունենալով լուծելու արհեստական բանականության տեսության մեջ գիտելիքների ներկայացման խնդիրը, սակայն նա չի սահմանազատում արհեստական բանականության և մարդկային մտածողության տեսությունները՝ դրանով իսկ ընդգծելով ֆրեյմի կարգի կիրառելիության հնարավորությունը ոչ միայն արհեստական համակարգերի տիրույթում: Նա կարծում է, որ մարդկային մտածողության գործընթացները նույնպես հիմնվում են նրա հիշողության մեջ պահվող տվյալների նյութականացված, բազմաթիվ լեցուն կառույցների՝ ֆրեյմների վրա, որոնց օգնությամբ մարդը ճանաչում է աշխարհը:
2. Մ. Մինսկին ֆրեյմը սխեմատիկորեն պատկերել է ցանցի տեսքով, որը կազմված է հանգույցներից և դրանց միջև եղած կապերից: Յուրաքանչյուր հանգույց ունի իր «առաջադրանքը», այսինքն՝ համապատասխան այս կամ այն իրադրության՝ հատկանշական գծեր: Ֆրեյմում արտահայտվում են մի քանի մակարդակներ, որոնք ստորակարգորեն կապված են միմյանց հետ: Վերին մակարդակների հանգույցներն առավել ընդհանուր հատկանիշներն են, որոնք մշտապես ճիշտ են ենթադրյալ իրադրության վերաբերյալ: Ստորին մակարդակների հանգույցները մեծ մասամբ չունեն որոշարկված հատկանիշներ: Այդպիսի դատարկ հանգույցները Մ. Մինսկին անվանում է տերմինալ. ֆրեյմի՝ որոշակի իրադրությանը հարմարեցման գործընթացում, դրանք համալրվում են տվյալներով իրադրության այն դասից, որը ներկայացնում է տվյալ ֆրեյմը: Ֆրեյմները փոխկապված են. բովանդակային առումով իրար մոտ գտնվող խմբերը միավորվում են՝ կազմելով աստիճանակարգային կանոնավոր համակարգ, որից ձևավորվում են ենթաֆրեյմները, ֆրեյմները և գերֆրեյմները: Ֆրեյմների համակարգերն իրենց հերթին կապված են տեղեկույթի որոնման ցանցով, ինչը հնարավորություն է ընձեռում ընտրելու իրադրությանը համահունչ ֆրեյմ: Դա հասանելի է այն բանի շնորհիվ, որ միևնույն տերմինալները կարող են ընդգրկված լինել համակարգի մի քանի ֆրեյմների կազմում:

3. 2. Ֆիլմորը լեզվաբաններից առաջինն էր, որ «ֆրեյմ» եզրույթը կիրառեց լեզվաբանության մեջ՝ բառի նկատմամբ: Ըստ նրա՝ ֆրեյմը բառային, քերականական և տեքստի իմաստաբանության օգտակար գործիք է (Филтмор, 1988: 53): Նա մշակեց ֆրեյմի վերաբերյալ իր տեսությունը, որտեղ վերջինս դիտարկվում է որպես գիտելիքի կազմակերպված կառույց, որը բառերն իմաստավորելու մեր ունակության անհրաժեշտ նախապայմանն է: Հեղինակի ընկալմամբ, իմաստային դաշտի տեսության մեջ ֆրեյմի համակերպը «դաշտ» հասկացությունն է՝ մի կառույց, որտեղ բառն ապրում ու գործում է, փոխգործակցում այդ նույն դաշտի այլ բառերի հետ: Միաժամանակ, այդ հասկացությունների միջև էական տարբերություն կա. ֆրեյմների տեսությունը ենթադրում է, որ դրանցից յուրաքանչյուրը բառային ոլորտում կարող է միակ ներկայացուցիչն ունենալ, ինչը սկզբունքորեն ժխտում է բառային դաշտի տեսությունը: Գիտնականին հետաքրքրում են ոչ թե առանձին ֆրեյմները, այլ դրանց շարքերը, որոնք պատկանում են միևնույն դաշտին, քանի որ իբրև տվյալ տեսության խնդիր նա համարում է ոչ միայն բառի հիմքում առկա մտածական նկարագրությունը, այլև այդ մտավոր ներկայացման մեջ այն առավել կարևոր հայեցակետերի առանձնացումը, որոնք որոշարկում են բառերի իմաստային յուրահատկությունները՝ տարբերելով դրանք տվյալ ոլորտի մյուս լեզվամիավորներից: Այսպիսով՝ 2. Ֆիլմորը ֆրեյմի դաշտային կաղապար է կառուցում: Ֆրեյմների շարքերի ուսումնասիրությունը համապատասխանում է հեղինակի ֆրեյմային իմաստաբանության տեսության հիմնական խնդրին՝ «հասկանալ լեզվական համագործակցության արդյունքում տվյալ բառով արտահայտվող կարգերի ստեղծման պատճառները» (Филтмор, 1988: 62–68):

4. Ե. Բեյլանսկայան ֆրեյմ հասկացությունն օգտագործում է նաև բառի նկատմամբ: Նա կիրառում է «միկրոֆրեյմ» հասկացությունը, որը համապատասխանում է բառի նշանակությանը և դիտարկվում որպես «գիտելիքի որոշակի կառուցահատված (блок)»: Լեզվաբանը սահմանազատում է ֆրեյմի երկու ըմբռնում՝ որպես լեզու-երևույթում գիտելիքի ներկայացման կառույց (ամբողջական իրադրությունների ֆրեյմ) և որպես լեզու-համակարգում

գիտելիքի ներկայացման կառույց (միկրոֆրեյմ): Նրա կարծիքով միկրոֆրեյմը «բազմաշերտ, աստիճանակարգային կառույց է», որում առանձնանում է երկու մակարդակ՝ արտաքին (ռեֆերենցիալ) և ճանաչողական (խորքային): Վերջինս բազմիմաստ բառի ճանաչողական կաղապարի մակարդակ է, որը հայեցակարգային վերացական սխեմա է: Հենց ճանաչողական կաղապարն է առաջադրում օբյեկտը տեսնելու կարծրատիպը՝ առաջին պլան մղելով և հիմնական դարձնելով այլ բառերի ֆրեյմներում երկրորդական դեր կատարող հատկանիշները, այդպիսով՝ բառիմաստին յուրահատկություն հաղորդելով (Беляевская, 1994: 105):

5. Համաձայն ճանաչողական լեզվաբանության՝ բառը (ինչպես և լեզվական ամեն մի նշան) ակտիվացնում է հասկացությունների հանրագումարը, որոնցից ամեն մեկն իր տիրույթն ունի: Տիրույթները բնութագրող հատկանիշների հավաքակազմը հասկացության մատրիցն է: Այդ հավաքակազմը ձևավորում է հասկացության բազա կամ «ֆոն», որի վրա առանձնանում է ֆիգուրը՝ հիմքի այն մասը, որն անմիջականորեն կապված է տվյալ լեզվամիավորի հետ: Հիմքում հատկորոշվում են մեկ կամ ավելի տիրույթներ, որոնք էլ ձևավորում են մատրիցը: Օրինակ՝ բաժակ բառի հասկացության հիմքը դրա հետ զուգորդվող ողջ տեղեկույթն է. 1. տարածություն (space)՝ հիմնական տիրույթ, 2. ձև (shape)՝ գլանաձև, 3. ողողություն՝ տարածության մեջ ուղղաձիգ, մի կողմը փակ գլան, 4. գործառույթ 1՝ հեղուկի համար նախատեսված անոթ, 5. գործառույթ 2՝ խմելու ընթացքում վերջինիս դերը, 6. հումքանյութ՝ ինչից է պատրաստված, 7. չափ՝ հեշտ է բռնել ձեռքով, 8. այլ տիրույթներ, որոնք վերաբերում են բաժակի գնին, լվանալուն, պահպանելուն, արտադրման միջոցներին և այլն: Այս տիրույթները փոխազդելով՝ ստեղծում են հասկացության մատրից: Միաժամանակ, բաժակ բառի հետ անմիջականորեն կապված է հասկացության հիմքի միայն մի մասը (մի կողմը փակ, ըմպելու համար նախատեսված գլանաձև անոթ), որը և ֆիգուր է դառնում: Դրանով իսկ հասկացության մատրիցում առավել նկատելի (salient) են դառնում անոթ, չափ, ձև, հեղուկ տիրույթները (Langacker, 1987: 149, 486–490):

6. Իրականության հարվածների ներկայացման համար Ս. Ժաբոտինսկայան առաջարկում է միջֆրեյմային հասկացությանը ցանցի կադապարը: Ցանցեր կառուցելիս հասկացության մակարդակներից յուրաքանչյուրի համար կիրառվում է համագործածական գործիքաչար՝ նախադասությունների սահմանափակ հավաքակազմ, որը վերաբերում է հիմնական (բազիսային) հինգ ֆրեյմի: Ս. Ժաբոտինսկայայի ուսումնասիրության հիմքում այն ըմբռնումն է, որ այդ նախադասությունները կոչվում են հիմնական, որովհետև ցույց են տալիս խոսքի վերածված տեղեկույթի կարգայնացման և կազմակերպման առավել ընդհանուր սկզբունքները: «Ֆրեյմ» անունը դրանք ստացել են այն պատճառով, որ ֆրեյմային ցանցում հարաբերակցվում են հանգույցների (որպես առարկայական ֆրեյմներ) և հարաբերությունների հետ (որպես ստացական, գործունեական (акциональные), համեմատական, կարգաբաշխային (таксономические) ֆրեյմներ):

Առարկայական ֆրեյմում միևնույն իրողությունը (ԻՆԶ-ՈՐ ԲԱՆ կամ ԻՆԶ-ՈՐ ՄԵԿԸ) բնութագրվում է քանակական, որակական, կացութաձևային, տեղային և ժամանակային իր չափանիշներով: Դա ներկայացվում է այն նախադասությունների հավաքակազմում, որտեղ առարկայի և նրա հարկանիշների միջև հաստատվում է կա/գոյություն ունի ներտարածական կապը. ԻՆԶ-ՈՐ ԲԱՆ կա ԻՆԶՔԱՆ (քանակ), ԻՆԶ-ՈՐ ԲԱՆ ԱՅՍՊԻՍԻՆ է (որակ), ԻՆԶ-ՈՐ ԲԱՆ գոյություն ունի ԱՅՍՊԵՍ (կացութաձև), ԻՆԶ-ՈՐ ԲԱՆ կա/գոյություն ունի ԱՅՆՏԵՂ (գոյության տեղ), ԻՆԶ-ՈՐ ԲԱՆ կա/գոյություն ունի ԱՅՆ ԺԱՄԱՆԱԿ (գոյության ժամանակ):

Գործունեական ֆրեյմում մի քանի առարկաներ, որոնք իրադարձության մասնակիցներ են, փաստարկային դեր են ստանձնում, միավորվելով միջտարածական կապերով, որոնք կանխորոշված են սուբյեկտի գործողությամբ և ներկայացված գործում է կամ անում է բայերով՝ կապերի ուղեկցությամբ. գործում է օգնությամբ (գործիքի կամ օգնականի), գործում է վրա (օբյեկտի/կրող առարկայի), գործում է ուղղությամբ (ընդունողի), գործում է համար/պատճառով (նպատակի կամ պատճառի):

Ստացական ֆրեյմը ցույց է տալիս սեփականատեր՝ ԻՆՉ-ՈՐ ԲԱՆ միջտարածական կապը. (possessor) ունի ԻՆՉ-ՈՐ ԲԱՆ-ունեցած (possessed):

Կարգաբաշխային ֆրեյմը ներկայացնում է կարգայնացման հարաբերությունները, որոնք դրսևորվում են երկու տարբերակով՝ 1. ԻՆՉ-ՈՐ ԲԱՆ-տեսակ, 2. ԻՆՉ-ՈՐ ԲԱՆ-դասի է պատկանում. շունը կենդանի է:

Համեմատական ֆրեյմը, որն առաջանում է կարգաբաշխայինի հիման վրա, ձևավորվում է նույնականության, նմանության և համաբանության միջտարածական կապերով. 1. նույնականություն – ԻՆՉ-ՈՐ ԲԱՆ – նշյալ կա /ինչպես/ ԻՆՉ-ՈՐ ԲԱՆ-համահարաբերակից. այս կենդանին կա (ինչպես) շուն [սա շուն է], 2. նմանություն. ԻՆՉ-ՈՐ ԲԱՆ – նշյալ կա ինչպես ԻՆՉ-ՈՐ ԲԱՆ-համահարաբերակից. այս կենդանին շան նման է [սա գայլ է], 3. համաբանություն. ԻՆՉ-ՈՐ ԲԱՆ – նշյալ կա ասես թե ԻՆՉ-ՈՐ ԲԱՆ – համահարաբերակից. այս կենդանին/շունը ասես մարդ լինի: Համաբանության ենթաֆրեյմը հասկացության փոխաբերության հիմքում է (Жаботинская, 2004: 83–88):

Ընդհանուր առմամբ, հարկ է նշել, որ Ս. Ժաբոտինսկայայի առաջարկած միջֆրեյմային հասկացության ցանցի կաղապարն առավել հարմար է հենց միջֆրեյմային կապերի էությունն ու բնույթը վերլուծելու համար, մինչդեռ մեր նպատակը տնտեսական իրադարձություններում տեղ գտած ֆրեյմների և դրանց սլոթների բովանդակային առանձնահատկությունների բացահայտումն է:

7. Հետաքրքրական է նաև «ֆրեյմ» հասկացության կիրարկման բնույթը կիրառական լեզվաբանության ճյուղերից մեկում՝ նեյրո-լեզվաբանական ծրագրավորման գիտակարգում, որն ուսումնասիրում է լեզվի ազդեցության բնույթը հոգեկան գործընթացների ծրագրավորման և նյարդային համակարգի այլ գործառույթներում, թե ինչպես են վերջիններս ձևավորում լեզուն և լեզվական կաղապարները (шаблоны): Այս ոլորտում ֆրեյմը դիտարկվում է որպես հոգեբանական «շրջանակ», այս կամ այն իրադարձությունների կամ ապրումների համատեքստ, որ ձևավորում է կաղապարներ և սահմանափակումներ է դնում մարդու՝ արտաքին աշխարհի հետ

փոխազդեցության ժամանակ: «Ֆրեյմները մեծ ազդեցություն ունեն մեր կողմից որոշակի ապրումների և իրադարձությունների մեկնաբանման հարցում, թե ինչպես ենք մենք արձագանքում դրանց, քանի որ ֆրեյմները այդ ապրումներում կարևորում են նշանակալի երևույթները (расстановка акцентов)' վերահսկելով մեր ուշադրությունը» (Дулмс, 2000: 38): Ներդրվելով քանակական ծրագրավորման հեղուկացումը ֆրեյմները համարում են կարևոր գործիք անհատների տեսակետների, դիրքորոշումների և նրանց կողմից իրադարձության ընկալման չափանիշների փոփոխության խնդիրների լուծման գործում: Այս համատեքստում ֆրեյմը «վերաֆրեյմինգի» (reframing) կարևոր միավոր է, որը ենթադրում է որոշակի պատկերի կամ ապրումների տեղաշարժ դեպի մեկ այլ ֆրեյմ: Այսպիսով՝ այս գիտակարգում շեշտադրվում է երկու հայեցակարգ՝ հոգեբանական և լեզվական, որի արդյունքում կարևորվում է այն մեթոդների և հնարների մշակումը, որոնք թույլ կտան լուծել մարդկանց հոգեբանական խնդիրները:

8. Սա չի նշանակում, որ հաստատվում հատկանիշներն ամբողջությամբ մերժվում են, քանի որ այդ դեպքում ֆրեյմների ճանաչումը կդժվարանար: Խոսքը կառույցի ներսում շարժման հնարավորության մասին է, որի դեպքում ֆրեյմի վերին մակարդակների կայուն հատկանիշները կարող են իջնել ստորին մակարդակներ, մինչդեռ ստորին մակարդակների հատկանիշները՝ տեղաշարժվել դեպի վերին մակարդակներ:
9. Սցենարները ոչ միշտ են պայմանավորված անմիջական նպատակահարմարությամբ: Հաճախ դրանք նկարագրում են այն տեսարանների, իրադարձությունների կամ գործողությունների հաջորդականությունը, որոնք լիովին կամ մասնակի ծիսակարգային բնույթ ունեն. օրինակ՝ բարձրաստիճան, կրոնական և գինվորական արարողությունները (Schank, Abelson, 1977: 63):
10. Տեսական գրականության մեջ առանձնացվում է իրադարձությունները հիշողության մեջ մտապահելու չորս մակարդակ. առաջինում պահպանվում են բավական որոշակի իրադարձությունների պատկերներ (Event Memory) (օրինակ՝ այցելություն արամնաբույժին), երկրորդում՝ ընդհանրացված պատկերներ (Generalized Event Memory), որոնք ներառում են որոշակի միատեսակ

իրադարձություններ (օրինակ՝ բոլոր այցելություններն արամնաբույժին), երրորդում՝ իրադրության մասին ամբողջական տեղեկություն (Situational Memory) (օրինակ՝ արամնաբույժի կաբինետում կա հատուկ բազկաթոռ կամ բժիշկը սպիտակ խալաթ է հագնում), իսկ չորրորդը կանխամտածված հիշողության մակարդակն է (Intentional Memory), որն ավելի վերացական տեղեկություններ է պարունակում այն մասին, թե ինչպես պետք է լուծել խնդիրները (օրինակ՝ սոցիալական օգնություն տրամադրող հաստատության միջոցով) (Schank, 1982: 175–176): Ուշագրավ է այն փաստը, որ հիշողության մեջ սցենարներն ընդհանուր առմամբ «պատրաստի տեսքով» չեն պահպանվում: Մենք, խոսքի ընկալման գործընթացում, անհրաժեշտության դեպքում ինքներս ենք կառուցում սցենարներ, որպեսզի դիսկուրսի մեկնաբանություն կատարենք՝ օգտագործելով նախկինում կուտակած փորձը և տեղեկությունները, որոնք գտնվում են հիշողության փարբեր մակարդակներում: Հիշողության առաջին մակարդակում պահպանվում են իրադարձությունների բարդ դրվագները: Սցենարների վերականգնման համար ավելի կարևոր, հանրագիտարանային տեղեկույթը գտնվում է երկրորդ մակարդակում՝ նորմերի, կանոնների և ֆրեյմների ձևով: Հասարակական-մշակութային տեղեկույթը, որը ձեռք ենք բերում հասարակության մեջ բավական երկար ժամանակ ապրելով, մակրոսցենարի ձևով պահպանվում է հիշողության երրորդ մակարդակում և օգնում է պատասխանելու այն հարցին, թե ինչպես ենք անում այն, ինչ մեզ պետք է: Էլ ավելի վերացական տեղեկություններն այն մասին, թե ինչու ենք դա անում ընդհանրապես, պատկանում են չորրորդ մակարդակին (intentions, thematic sequences, grand designs): Միայն առաջին մակարդակի մասին կարելի է խոսել՝ հիշել բառը գործածելով «իր իսկ» իմաստով, մնացած մակարդակները ներառում են նախորդ փորձի վրա հիմնված և ընդհանրացված կանխազգացումներն ու սպասումները (Schank 1982: 179, 184–187):

11. Հիշողությունը լինում է կարճաժամկետ և երկարաժամկետ: Կարճաժամկետ հիշողությունը տեղեկույթի փոքր հատվածների՝ կարճ ժամանակահատվածով պահպանման համակարգ է: Դրա ամենաարդյունավետ տեսությունը 15-20 վայրկյան է:

Երկարաժամկետ հիշողության համակարգը պատասխանատու է տեղեկավորությունը երկար ժամանակով պահպանելու համար: Այն անցյալի իրադարձությունների և մեր յուրացված գիտելիքների տեղեկույթի «պահոց» է:

Հոգեբանության մեջ տարբերակում են նաև հիշողության այլ տեսակներ: Օրինակ՝ պատկերավոր հիշողությունը զգայական տեղեկության պահպանումն է, հիշողություն՝ պատկերացումների, կյանքի և բնության պատկերների, ինչպես նաև ձայների, հոտերի և համերի մասին: Այն լինում է տեսողական, լսողական, շոշափելիքի, համային, հոտառության: Տեսողական և լսողական հիշողությունները, սովորաբար, լավ զարգացած են և առաջնային դեր ունեն բոլոր մարդկանց կյանքում (Goldstein, 2011: 116-149):

12. Քաղաքական դիսկուրսի փաստական նյութի հիման վրա իրադրային կաղապարների միջոցով դիսկուրսի արժևորման ռազմավարության հետազոտություն է կատարել Ա. Սիմոնյանը (Տե՛ս А.А. Симо́нян, 2011):

ԳԼՈՒԽ IV

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅԱՆ ՖՐԵՅՄ–ՍՑԵՆԱՐԻ ՍԼՈԹՆԵՐԻ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

4.1. Գործողություն կատարողը՝ որպես տնտեսական իրադարձության ֆրեյմ-սցենարի միջուկային սլոթ

Տնտեսական իրադարձության ֆրեյմ-սցենարի անքակտելի մասն է գործողություն կատարողը՝ սուբյեկտը: Սա նշանակում է, որ տնտեսական փոփոխությունները, առաջին հերթին, ենթադրում են անհատի կամ անհատների մասնակցություն: Դրա հետ մեկտեղ, անհատը միշտ չէ, որ կարող է վերահսկել իրադարձության զարգացումը և փոխել այն՝ հասնելով իր համար ցանկալի արդյունքի: Դա է նշում Վ.Դեմյանկովը, ով ուսումնասիրելով իրադարձությանը բնորոշ հատկանիշները, առանձնացնում է վերահսկողության չափանիշը՝ նշելով, որ իրադարձությանը հատուկ է վերահսկողության ամբողջական կամ մասնակի բացակայություն. գործողություն կատարողի առկայության դեպքում, որի կամքով իրադարձությունը վերահսկվում է, կարելի է խոսել վերահսկողության մասնակի լինելու, մինչդեռ վերջինիս բացակայության դեպքում՝ անվերահսկելի լինելու մասին: Որոշ դեպքերում անձը կարող է լինել իրադարձության պատճառ՝ այդուհանդերձ չունենալով դրա վրա ամբողջական վերահսկողություն (Демьянков, 2004):

Այսպիսով՝ տնտեսական իրադարձությունները շատ անգամ ինքնաբերական են և դրանց իրականացումն ու արդյունքները պայմանավորված չեն անհատների ամբողջական վերահսկմամբ: Նույնիսկ այն դեպքում, երբ որևէ իրադարձություն մտադրված և ծրագրավորված բնույթ է կրում, անձն ի զորու չէ ամբողջապես վերահսկելու այն:

Դրա հետ մեկտեղ, սուբյեկտը, որպես տնտեսական իրադարձության սցենարի հիմնական տարր, սերտորեն փոխկապված է մեկ այլ միջուկային բաղադրիչի՝ փոփոխության հետ, քանզի յուրաքանչյուր իրադարձություն ինքնին ենթադրում է փոփոխություն, որն էլ իրականացվում է գործողություն կատարողի կողմից:

Վերլուծենք տնտեսական իրադարձության սուբյեկտի արտացոլումը լեզվում:

Նախևառաջ տնտեսական իրադարձության սուբյեկտ է անհատը, որի անվան հետ մեկտեղ, հոդվածի մեկնարկային մասում նշվում է նրա ինքնությունը, մասնավորապես՝ պաշտոնը: Օրինակ՝

Russian President Vladimir Putin signed a decree completing an array of sanctions against Turkey in response to the downing of a Russian bomber on the Syrian border, as Turkish leaders sought to calm tensions with gestures of goodwill. (www.wsj.com, November 29, 2015)

International Monetary Fund chief Christine Lagarde called on Monday for tax reforms to be included in a global climate deal to raise incentives for consumers to reduce their energy consumption and to boost demand for cleaner fuels. (www.reuters.com, December 7, 2015)

The executive chairman, founder and main shareholder of interdealer broker GFI Group has made a last-ditch effort to muster support for a takeover by CME Group by disclosing that he and his ex-wife will take a reduced price for their shares. (www.ft.com, January 28, 2015)

Sara Murray, 46, developed Buddi, initially a tracking device to locate lost children, but now used by local councils and UK police forces. **The entrepreneur** came up with the idea when her four-year-old daughter temporarily disappeared at a supermarket; her company employs 50 staff and is poised to launch in the US. (www.ft.com, January 31, 2015)

Նույն համաբանությամբ, որպես տնտեսական իրադարձության սուբյեկտ կարող է հանդես գալ տարբեր պաշտոններ զբաղեցնող մարդկանց խումբը: Այս դեպքում չեն նշվում որոշակի անուններ, որի հետևանքով սուբյեկտը կրում է ընդհանրական բնույթ.

Early in the coalition government, **ministers** committed themselves to retaining the £4.6bn science budget in cash terms, resulting in a real-terms cut of more than 8 per cent. (www.ft.com, January 7, 2015)

Discretionary fund managers are failing to disclose details of their fees and holdings which ought to be crucial to financial advisers' decision-making, according to a new report. (www.ft.com, January 31, 2015)

Շատ անգամ սուբյեկտի սլոթը լրացվում է ընկերության կամ ընկերությունների, պետական կազմակերպությունների անվանումներով, ինչպես հետևյալ օրինակներում.

Deutsche Bank has launched a computerized investment advisory service, seeking to keep up with other asset managers who have started introducing "robo advisers" to help certain clients create portfolios inexpensively. (www.reuters.com, December 7, 2015)

The Bank of England paid nearly £3m of taxpayers' money for a report on whether any of its staff knew about or were involved in alleged manipulation of one of the world's biggest financial markets. (www.ft.com, January 31, 2015)

Qatar Airways has bought a 9.99 per cent stake in British Airways' owner International Airlines Group, in a move that underlines the state-controlled Gulf carrier's determination to be a leading force in global aviation. (www.ft.com, January 31, 2015)

Hitachi, a Japanese conglomerate, will pay €773m for Finmeccanica's 40% stake in Ansaldo STS, a railway-signalling company listed on Milan's stock exchange, and €36m for Ansaldo-Breda, a trainmaker (and lossmaker) fully owned by Finmeccanica. (www.economist.com, February 28, 2015)

Chinese e-commerce giant Alibaba just logged \$14.3 billion of merchandise sold via its platforms in 24 hours, breaking its own record for the world's biggest one-day sale online. (www.adage.com, November 11, 2015)

American International Group (AIG) is selling a stake in PICC Property and Casualty Co Ltd worth up to \$1 billion to institutional investors through a block deal, cutting its shareholding in the Chinese state-owned insurer for the second time this year. (www.reuters.com)

Leading universities have warned Labour of the financial risks in cutting tuition fees by a third to £6,000 a year, as the party deliberates whether to go ahead with a costly pre-election pledge intended to woo the middle class. (www.ft.com, January 7, 2015)

The British Army will revive one of the most controversial special forces units of the second world war, the Chindits, as a new generation of “Facebook warriors” who will wage complex and covert information and subversion campaigns. (www.ft.com, January 31, 2015)

Գործողություն կատարողի ինքնությունը երբեմն քողարկվում է որոշակի երկրի անվան ներքո, որն էլ լրագրողական ռազմավարական հնար է՝ թաքցնելու, չմատնանշելու կամ ընդհանրացնելու տվյալ տնտեսական, քաղաքական և այլ գործունեության համար պատասխանատու անձի/անձանց ինքնությունը: Օրինակ.

Russia has already banned some Turkish food imports, including selected fruit and vegetables, as part of a wider retaliatory sanctions package. (www.reuters.com, December 3, 2015)

Greece will no longer co-operate with the “troika” of international lenders that has overseen its four-year bailout programme, the country’s finance minister said, as the new Greek government adopted a defiant posture toward its creditors. (www.ft.com, January 31, 2015)

Որոշակի քաղաքներ նույնպես կարող են հանդես գալ որպես տնտեսական իրադարձության սուբյեկտներ, ինչպես հետևյալ օրինակում.

The **City of London** would cease to be a leading global financial centre and growth would no longer be an economic target under Green party plans for the economy. (www.ft.com, January 7, 2015)

Տնտեսական իրադարձության սուբյեկտ կարող են լինել նաև այն իրողությունները, որոնք արտացոլվել են տնտեսությունում և կապված են մասնավորապես՝ տնտեսական աճի, անկման, տնտեսության զարգացման դանդաղեցման կամ խթանման, շահույթների, գործարքների և այլ համանման երևույթների հետ: Օրինակ.

Profits at Santander rose almost 70 per cent in the first full quarter under Ana Botín as the Spanish bank benefited from increased revenues and reduced provisions for bad loans. (www.ft.com, February 4, 2015)

A slowdown in the services sector pushed sterling to a 17-month low yesterday, and provided a further sign that the economic recovery could be flagging. (www.ft.com, January 7, 2015)

The deal will make Hitachi the fourth biggest company in the rail-equipment business worldwide, behind Bombardier of Canada, Siemens of Germany and Alstom of France. (www.economist.com, February 28, 2015)

Shares in its \$18bn Hong Kong listed subsidiary, Hanergy Thin Film Power Group, have risen more than 300 per cent since the start of 2014. (www.ft.com, January 28, 2015)

The collapse in oil prices has helped push the eurozone deeper into deflation, strengthening the case for the European Central Bank's landmark decision to begin buying government bonds later this year to stave off a serious bout of falling prices in the region. (www.ft.com, January 31, 2015)

Gross domestic product rose an annualized 2.6 per cent in the fourth quarter, a marked slowdown from the 5 per cent pace set in the third quarter. (www.ft.com, January 31, 2015)

Switzerland's franc fell again yesterday as speculation lingered that the country's central bank could intervene to weaken the currency. (www.ft.com, January 31, 2015)

Leading shares are heading higher after comments from the US Federal Reserve suggested there may well be no rate rise this month, as well as continuing strength in the oil price. (www.theguardian.com, April 7, 2016)

European equities rose in early trading on Friday as firmer prices of metals and crude oil boosted resource-related stocks, although a pan-European index was on track for its fourth straight week of losses. (www.reuters.com, April 8, 2016)

Այսպիսով՝ որպես տնտեսական իրադարձության սուբյեկտ ամենից հաճախ հանդես են գալիս անհատը/անհատները, մասնավոր ընկերությունները և պետական կազմակերպությունները, տնտեսական աշխարհին վերաբերող իրողությունները, ինչպես նաև երկրներն ու քաղաքները:

4.2. Փոփոխությունը՝ որպես տնտեսական իրադարձության ֆրեյմ-սցենարի միջուկային սլոթ

Իրադարձության գոյաբանական կառուցվածքն ուսումնասիրելիս պարզ դարձավ, որ ամեն մի իրադարձություն ենթադրում է փոփոխություն՝ մի վիճակից անցում մեկ այլ վիճակի, որը սկբունքորեն տարբերվում է ելակետայինից: Նույն դրույթը կիրառելի է նաև յուրաքանչյուր տնտեսական իրադարձության համար, որտեղ փոփոխության սլոթը համարվում է միջուկային պարտադիր տարր դրա առաջացման համար:

Ինչպես նշել ենք մեր ուսումնասիրության առաջին գլխում, փոփոխությունը դիտարկվում է որպես առարկայի, երևույթի մի վիճակից մյուսին անցման գործընթաց, ինչպես նաև դրանց՝ նոր հատկանիշների, բնույթների, գործառույթների, որակների ձեռքբերում ներքին պատճառների և շրջակա միջավայրի այլ առարկաների, երևույթների ներգործության արդյունքում (Кондаков, 1975:191):

Ս. Դիկը մեկնաբանում է փոփոխությունը որպես մի իրադրությունից անցում մյուսին, այսինքն՝ գործերի վիճակի տարբերություն (Dik, 1978: 32): Նմանատիպ դիտարկում գտնում ենք նաև Ա. Քվինթոնի մոտ, ով նշում է, որ փոփոխությունը մի վիճակի փոխարինումն է մյուսով: Փոփոխության բնույթից կախված՝ տեսաբանն առաջարկում է տարբերակել որակական, դիրքային և գոյացական փոփոխությունները, այսինքն՝ նրանք, որ կապված են առարկայի ի հայտ գալու կամ գոյության դադարեցման հետ (Quinton, 1979: 207):

Այսպիսով՝ տնտեսական իրադարձության կայացման համար անհրաժեշտ է այնպիսի փոփոխություն, որն ուղղակիորեն արտացոլում է դրա իմաստային բովանդակությունը: Այսպես՝ տնտեսական իրադարձություն և հետևաբար՝ փոփոխություն կարող են լինել ընկերությունների կողմից նոր ապրանքների թողարկումը, արդիական ծառայությունների մատուցումը, ինչպես նաև գործարքների ու կլանման պայմանագրերի կնքումը:

Apple **has revealed a new, smaller iPhone SE**, as the company takes a step back from the larger ‘phablet’ handset sizes of recent years. (www.telegraph.co.uk, March 23, 2016)

Starbucks **is now selling alcohol** in Japan (www.independent.com, April 1, 2016)

Facebook Just **Launched AI-Powered Technology** That Reads Photos to the Blind. (www.fortune.com, April 5, 2016)

Your iPhone can now be your bank branch as a result of a **new digital banking service** that **launched** on Tuesday. Based in Durham, Atom Bank has become the first of a number of aspiring digital-only banks to start offering products. It has no branches or vast call centres. All contact is via an app, through which customers are able to talk to a 30-strong service team. (www.theguardian.com, April 8, 2016)

CityFibre, which builds and owns high-speed internet networks in urban areas, **has struck a £4.9m deal** for two companies to use its infrastructure in the North of England. (www.telegraph.co.uk, April 5, 2016)

Foxconn and Sharp Corp on Saturday formally **signed a long-awaited deal** that would see the Taiwan firm take control of the Japanese display maker, as executives sought to dispel lingering doubts over whether Sharp can turn around its ebbing fortunes. (www.reuters.com, April 2, 2016)

Argos owner Home Retail **agrees to Sainsbury's £1.4bn takeover offer** (www.independent.co.uk, April 1, 2016)

Տնտեսական իրադարձության մեկնարկը կարող է լինել հիփոթետիկ, այսինքն՝ վարկաձային, դեռ չիրագործված, այդուհանդերձ, ծրագրավորված իրույթ: Լեզվական մակարդակում դա արտահայտվում է ընկերության հայտարարությամբ (said, announced, declared, informed, reported և նմանատիպ այլ լեզվամիավորների օգնությամբ), որին հաջորդում է իմաստային բայն ապառնի ժամանակաձևով: Օրինակ.

Ford Motor Co **said** on Thursday it **will conduct** three separate safety recalls including one of sport-utility vehicles with a defective engine heater that led to two fires in Canada, in which no one was injured. (www.reuters.com, March 31, 2016)

Iceland **said** it **would gradually remove** the capital controls it had imposed, a sign that the economy has moved beyond its turbulent past. (www.economist.com, June 13, 2015)

Որոշ դեպքերում տնտեսական իրադարձության կայացման գործընթացը դեռևս քննարկման փուլում է, և կազմակերպությունները, ընկերությունները ծրագրավորում ու նախատեսում են ինչ-ինչ գործողություններ և քայլեր: Այսպես՝

Time Inc **is considering** partnering with a private equity firm on a bid for Yahoo Inc's core Internet assets, according to people familiar with the matter, as the U.S. publishing company seeks to boost its digital presence. (www.reuters.com, April 1, 2016)

The billionaire Barclay twins **are considering** selling a stake in their retail business Shop Direct. (www.theguardian.com, March 23, 2016)

India's Tata Steel and Germany's Thyssenkrupp **have been talking** about combining their European steel operations, a person aware of the talks said on Friday. (www.reuters.com, April 1, 2016)

Apex Technology Co Ltd, a Chinese company that manufactures ink cartridge chips, **is in negotiations** to acquire U.S. printer and imaging systems provider Lexmark International Inc, according to people familiar with the matter. (www.reuters.com, April 7, 2016)

The world's largest plane manufacturer Boeing **plans** to cut more than 4,500 jobs by the middle of the year to reduce costs. (www.bbc.com, March 30, 2016)

Verizon Communications Inc **plans** to make a first-round bid for Yahoo Inc's web business next week, Bloomberg reported, citing people familiar with the matter. (www.reuters.com, April 7, 2016)

Տնտեսական իրադարձության փոփոխությունը կարող է ունենալ արժևորման դրական (բարենպաստ փոփոխություններ տնտեսության մեջ, ինչպես նաև հանրության, անհատների կյանքում) կամ բացասական (տնտեսության, հանրության, ընկերությունների հետ կապված անբարենպաստ պայմաններ) տարրեր: Օրինակ՝ հետևյալ նախադասության մեջ «Alibaba» ընկերությունը հրաժարվում է դեղագործական ոլորտում ներդրումներ կատարելուց՝ կապված ինչպես գործարքում, այնպես էլ Չինաստանի առողջապահության ոլորտում տեղ գտած որոշ անճշտությունների հետ.

Chinese e-commerce giant Alibaba Group Holding Ltd **has scrapped** plans to inject its pharmacy business into a Hong Kong-listed affiliate, citing regulatory uncertainties over

the deal as well as over China's broader healthcare industry. (www.reuters.com, March 31, 2016)

Talks between Orange and Bouygues on a deal to create a dominant French telecoms operator **collapsed** on Friday, **ending an attempt to ease a price war that has ravaged operators' margins.** (www.reuters.com, April 4, 2016)

Նշված օրինակում «Orange» և «Bouygues» ընկերությունների միջև ֆրանսիական հեռահաղորդակցության ծառայություններ մատուցող ընկերություն ստեղծելու վերաբերյալ քննարկումները տապալվել են գնային անհամաձայնությունների պատճառով:

Հաջորդ նախադասությունում խոսքը Ճապոնական արժեթղթերի՝ 3 տոկոսով անկման մասին է, որն իր հերթին բացասական ազդեցություն է ունեցել արտադրողների շրջանում վստահության գործոնի վրա.

Japanese stocks tumbled more than 3pc as a key survey showed confidence among major manufacturers dropped to its lowest level since 2013. (www.telegraph.co.uk, April 1, 2016)

Հաջորդ օրինակում մեկնաբանվում են վերոնշյալ բանկի կորուստները, որոնք ինքնին բացասական փոփոխություններ են ենթադրում.

Co-op Bank **losses** more than double in a year to £610 million. (www.independent.co.uk, April 1, 2016)

Այդուհանդերձ, տնտեսական իրադարձությունը կարող է բնորոշվել նաև դրական փոփոխություններով: Այսպես՝ գործազրկության նպաստ ստացող ամերիկացիների թիվը զգալիորեն նվազել է՝ ցուցանշելով աշխատուժի շուկայի դիրքերի ամրապնդումը՝ չնայած տնտեսական աճի ցածր մակարդակին.

The number of Americans filing for unemployment benefits fell more than expected last week, touching its lowest level in nearly five months, suggesting strong job gains that should continue to underpin economic growth. (www.reuters.com, April 7, 2016)

U.S. energy firm Kosmos Energy **has acquired** majority rights to one of the oil blocks in Sao Tome and Principe's exclusive economic zone, the company and the African island nation said on Saturday. (www.reuters.com, April 2, 2016)

Վերոնշյալ իրադարձությունը նվիրված է «Kosmos Energy» ամերիկյան ընկերության ձեռքբերումներին, իսկ հաջորդը՝ «Blue Origin» ընկերության հաջողություններին.

Jeff Bezos' space transportation company Blue Origin **successfully launched and landed** for the third time a suborbital rocket capable of carrying six passengers, taking another step on its path in developing reusable boosters, the company said on Saturday. (www.reuters.com, April 3, 2016)

Այսպիսով՝ տնտեսական իրադարձության փոփոխության սլոթի ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ վերջինս օրինաչափորեն կապված է այն առարկաների և երևույթների հետ, որոնք ներգրավված են գործընթացում: Տնտեսական իրադարձության փոփոխությունը կարող է հանդես գալ որպես չիրականացված, բայց ծրագրավորված իրույթ, կարող է գտնվել քննարկման փուլում, ինչպես նաև կրել դրական կամ բացասական բնույթ:

4.3. Ժամանակը՝ որպես տնտեսական իրադարձության ֆրեյմ-սցենարի միջուկային սլոթ

Only time (whatever that may be) will tell.

Stephen Hawking, A Brief History of Time

Իրադարձությունները գոյություն ունեն տարածության և ժամանակի զուգահեռներում. դա է փաստում նաև արդի գիտությունը՝ նշելով, որ օբյեկտիվ աշխարհում գոյություն ունեցող ամեն ինչ ունի տարածաժամանակային բնույթ:

Վերլուծելով իրադարձության տարածաժամանակային առանձնահատկությունները՝ պետք է ասել, որ դրան վերաբերող ժամանակի և տարածության ցուցիչները միշտ չէ որ ունեն հավասարազոր նշանակություն: Այսպես՝ Ջ. Վենդլերի բնորոշմամբ, իրադարձություններն ամենից առաջ ժամանակային էություններ են (Vendler, 1967: 144): Դրանց կառուցվածքային տարրերի դասակարգման մեջ ժամանակային ցուցիչն առաջնայիններից մեկն է [1]: Այսպես է կարծում նաև Ն. Արուսյունովան, ասելով, որ մի շարք իրադարձություններ որոշակի իմաստով ընդհանրապես տարածական

տեղորոշում չունեն և կարող են նկարագրվել միայն «ժամանակի առանցքի վրա դրանց փոխդասավորության (կոնֆիգուրացիա) եզրույթներով» (Арутюнова, 1998: 508):

Իրադարձությունների ժամանակային շրջանակները տարբեր են, և ժամանակի մեջ, սովորաբար, տեղայնացված են ընկալվում այն իրադարձությունները, որոնք որոշակի ժամանակահատվածում իրականում կատարվող կամ կատարված իրադարձություններ են (Булыгина, Шмелев 1997: 47):

Խոսելով իրադարձության ժամանակային ցուցչի մասին, պետք է տարբերակել իրադարձության և ընդհանրապես ժամանակի հասկացությունները: Ժամանակն ընդհանրապես շրջապատող աշխարհի, տիեզերքի և հենց իր մասին մարդու գիտական և կենցաղային բոլոր պատկերացումների հիմքերից մեկն է: Մարդու պատկերացումները և ըմբռնումները դրա մասին միաժամանակ և՛ բացարձակ են, և՛ հարաբերական: Բացարձակությունը կապված է ժամանակի՝ որպես շարժվող մատերիայի գոյության հիմնական ձևերից մեկի օբյեկտիվ իրականություն լինելն ընդունելու հետ, իսկ հարաբերականությունն արտահայտվում է այն հանգամանքով, որ մարդու պատկերացումները ժամանակի մասին ամբողջական չեն, այլ փոփոխական՝ կախված դրա հատկանիշների մասին բնագիտական տվյալներից:

Ժամանակն այնպիսի կարգ է, որը կարող է փոխել իր իմաստային լիցքը՝ նայած թե առարկաների ինչ տեսակի համար է կիրառվում. այսինքն՝ գոյություն ունի ֆիզիկական գործընթացների (իրական, ֆիզիկական) և մարդկային (պատմական, հասարակական, հոգեբանական) ժամանակ, եթե հարցը վերաբերում է հանրության զարգացման պատմությանը, անհատի հոգևոր կյանքին:

Փիլիսոփայության տեսանկյունից, ժամանակը, որպես օբյեկտիվորեն գոյություն ունեցող իրականություն, իր տարածականության մեջ անդառնալի է:

Ժամանակի մասին բնագիտական պատկերացումների զարգացման գործում կարևոր դեր է կատարել Ի. Նյուտոնի բացարձակ ժամանակի տեսությունը, որտեղ այն ներկայացված է հոսքի տեսքով, այսինքն՝ ընկալվում է որպես մաքուր վիճակում տևողություն, ինչը հավասարաչափ հոսում է անցյալից դեպի ապագան: Այն իրադարձությունների շտեմարան է, որ կարելի է լցնել կամ չլցնել. իրադարձությունների ընթացքը ժամանակի շարժման վրա չի ազդում: Ժամանակը,

միաժամանակ, անընդհատ է, անվերջ, համագործածական, միատարր (Ньютон, 1989):

Ըստ Պ. Ուսպենսկու՝ մենք ժամանակ ենք անվանում այն հեռավորությունը, որ բաժանում է իրադարձություններն ըստ նրանց հաջորդականության և կապում դրանք տարբեր նպատակներով (Успенский, 1992):

Ժամանակի հաջորդականության բնույթի մասին նշվում է նաև Ե. Երզնկյանի մենագրությունում, որտեղ հեղինակը բնորոշում է ժամանակը որպես մատերիայի գոյության ընդհանրական ձև, որն արտացոլվում է նրա բոլոր կառուցվածքային մակարդակներում և արտահայտում եղելության, բոլոր երևույթների, գործողությունների, աշխարհի բոլոր նյութական համակարգերի, գործընթացների գոյության տևականությունը (Ерзинкян, 2013: 273):

Որպես այդպիսին, իրադարձության ևս մեկ բաղադրիչ է հաճախականությունը՝ ժամանակի մեջ իրադարձության կրկնողականության գաղափարը: Իրողությունը կարող է իրադարձություն կոչվել, եթե այն բավական հազվադեպ է կատարվում: Համապատասխանաբար՝ որքան հաճախ է կատարվում երևույթը, այնքան փոքր է հավանականությունը, որ այն կդառնա իրադարձություն (Ирисханова, 1997: 10): Հարկ է նշել, որ իրադարձության կատարման հաճախականությունը բավական հարաբերական է և որոշվում է յուրաքանչյուր որոշակի դեպքում՝ հաշվի առնելով դրա (մեր դեպքում՝ տնտեսական) կարևորությունը:

Քննության առնելով իրադարձությունը լայն իմաստով, այսինքն՝ այն ամենը, ինչ կատարվում է և գոյություն ունի աշխարհում (ներառյալ գործընթացներն ու գործողությունները), հարկավոր է նաև ուսումնասիրել դրա բնութագրի ևս մեկ հիմնախնդիր՝ տևողության փաստը: Բազմաթիվ գիտնականներ այն կարծիքին են, որ իրադարձությունը կարող է դիտարկվել և՛ որպես իրերի դրության ակնթարթային փոփոխություն և որևէ կետ ժամանակի առանցքի վրա, ինչին, բնականաբար, հետևում է ավարտուն ամբողջությունը, և՛ որպես իրադրություն, որը բնորոշվում է ժամանակային որոշակի, երբեմն՝ բավական երկար տևողությամբ: Ամեն մի իրադարձություն, ի վերջո, կարելի է բաժանել բաղադրիչների՝ մի քանի ավելի փոքր իրադարձությունների, գործողությունների: Դա հատկապես վերաբերվում է ծավալուն,

գլոբալ իրադարձություններին, որոնք դառնում են թողարկվող նորությունների իրական նշաններ:

Կատարելով իրադարձության, նրա հատկանիշների և բաղադրիչների մասին առօրեական պատկերացումները բացահայտելուն ուղղված մի շարք հոգեվեզվաբանական փորձեր՝ Վ. Շաբեսը եզրակացնում է, որ իրադարձության կադապարը կարող է ներկայացվել եռամիության տեսքով՝ որպես միկրոիրադարձությունների իրագործման շարք. տվյալ իրադարձությանը նախորդում է որևէ այլ իրադարձություն, ինչի հետևանքով կարող է լինել մեկ այլ իրադարձություն (նախաիրադարձություն – բուն իրադարձություն – հետիրադարձություն): Ըստ էության, իրադարձությունը տվյալ դեպքում նույնպես ներկայացված է երեք բաղադրիչի միասնությամբ՝ ներուժ – իրագործում – արդյունք: Այսինքն՝ իրադարձությունը ժամանակի մեջ ընթացող, նպատակաուղղված և համակարգված գործունեություն է (Шабес, 1989: 130):

Այս առումով, փորձենք պարզաբանել, թե ինչպես է գործարար նորությունների տեքստում արտահայտվում նախաիրադարձությունը: Այսպես՝ հեղինակը հիմնականում հողվածը սկսում է նախաիրադարձության նկարագրմամբ՝ դրանով իսկ անմիջապես ընթերցողին ծանոթացնելով բուն իրադարձության նախապատմությանը: Օրինակ.

When Apple bought Beats, best known for making brightly coloured headphones, for around \$3 billion last year, many wondered what the technology giant had in mind. They now have their answer. On June 8th, at Apple’s annual gathering for software developers in San Francisco, it revealed a new music – streaming service, based on one it had acquired as part of Beats. Tim Cook, Apple’s boss, promised that, “It will change the way you experience music forever.” Others on the stage called it “revolutionary”. (www.economist.com, June 13, 2015)

Սույն իրադարձությունը մեկնարկում է այն նախաիրադարձային տեղեկույթով, որ «Apple» ընկերությունը, նախորդ տարի գնելով «Beats»-ը, շատերի հետաքրքրությունն է շարժել: Այնուհետև երկրորդ նախադասությամբ ընթերցողն իրազեկվում է ներկայիս իրադարձության մասին. «Apple»-ը հունիսի 8-ին հայտարարել է նոր երաժշտական ծառայության մատուցման մասին.

When the world's first electronic cigarette was invented in Beijing in 2003, the device was hailed as a godsend for tobacco friends. «...»Today over 95% of e-cigarettes are made in China, but until recently the Chinese themselves have shown little interest in the product. (www.economist.com, June 13, 2015)

Մեկ այլ օրինակ. նախաիրադարձությունն այն է, որ Պեկինում 2003 թ. հայտնագործել են էլեկտրոնային սիգարետներ, որոնք ծխողները համարում են Աստծո շնորհ: Արդյունքում ներկայումս 95% նույնանուն ապրանք է արտադրվում Չինաստանում, սակայն մինչև վերջերս չինացիներն առանձնապես մեծ հետաքրքրություն չեն ցուցաբերում դրա նկատմամբ: Վերլուծենք հաջորդ օրինակը.

When Marissa Mayer joined Yahoo as chief executive, employees put posters on the walls emblazoned with the word “Hope”, implicitly comparing their new leader to President Barack Obama by mimicking his campaign propaganda. Two and a half years later, Ms Mayer may have given some Yahoo staff a greater belief in the company. (www.ft.com, January, 2015)

Այստեղ նախաիրադարձությունը վերաբերում է միառժամանակ առաջ Մարիսսա Մեյերին «Yahoo» ընկերության գործադիր տնօրենի պաշտոնում նշանակման և աշխատակիցների՝ նրա անձի նկատմամբ թերահավատ մոտեցման փաստերին, իսկ ներկայիս իրադարձությունն առնչվում է նրա հաջողությանը և իր ղեկավարած ընկերության աշխատակիցներին հավատ ներշնչելուն:

Այսպիսով՝ հարկ է նշել, որ հողվածներում նախաիրադարձությունների նկարագրումը նպատակ ունի տեղեկացնելու ընթերցողին տվյալ իրադարձության նախապատմության մասին, ստեղծելու ընդհանուր պատկեր ներկայիս իրադարձության ամբողջական ընկալման համար:

Իրական ժամանակն իր դրսևորումների բազմազանությամբ արտացոլվում է լեզվում, սուբյեկտիվորեն մխրճվում մարդու գիտակցության մեջ: Ինչպես հայտնի է, մարդու վարքագծի այլ ձևերի հետ միասին, լեզուն շարունակականություն է ստեղծում, ուստի ժամանակի կարգը լեզվում կարելի է դասել այն հասկացությունների շարքը, որոնց օգնությամբ որոշվում է մարդու լեզվական և արտալեզվական գործունեությունների միջև եղած հարաբերակցությունը՝ իրական աշխարհը փոխակերպելով մտավորի: Լեզվական համակարգում ժամանակ արտահայտող

բառային միավորներն արտացոլվում են մարդու գիտակցության մեջ ժամանակային հասկացությունների ձևով՝ ձևավորելով հասկացական ժամանակ: Այսպիսով՝ ժամանակի լեզվաբանական մոտեցումը իրական ժամանակի որոշակի կադապարի արտացոլումն է լեզվում: Այստեղից բխում է, որ ժամանակի լեզվաբանական ուսումնասիրությունը տարբեր լեզվական միջոցների հետազոտություն է՝ նպատակաուղղված իրական ֆիզիկական ժամանակի էության բացահայտմանը (Ерзинкян, 2013: 275–276):

Ժամանակի կարգն արտահայտելու համար լեզվում գոյություն ունի քերականական և բառային միջոցների մի կուռ ամբողջություն: Դրանք ժամանակը ցուցանող հիմնական լեզվական միջոցներն են՝ բայական հատուկ ժամանակային ձևերը (անցյալ, ներկա և ապառնի քերականական ժամանակ) և ժամանակ ցուցանող լեզվամիավորները, որոնք շատ հաճախ աչքի են ընկնում իրենց անվանական հնարավորությունների բազմազանությամբ [2]: Այսպես՝ որոշ լեզուներում ժամանակահատված ցուցանող բառերի և արտահայտությունների (օրինակ՝ րոպե, ժամ, օր, տարի, դար, դարաշրջան և այլն) միջոցով հնարավոր է անվանել և բնութագրել նաև այն իրադարձությունները, որոնք կատարվում են տվյալ ժամանակահատվածում (պատմի՛ր կիրակիի մասին = այն մասին, թե ինչ կլինի կիրակի օրը), ինչը հետազոտողները մեկնաբանում են որպես հարակից զուգորդմամբ փոխանունություն (Падучева, 2000):

Լեզվաբանության մեջ ընդունված է ժամանակային նշանակությունների գործածության երկու տեսակ՝ ուղղակի (բացարձակ) և հարաբերական: Առաջինը միաժամանակյա, նախորդող կամ հաջորդող ժամանակն է, երկրորդը՝ հարաբերականը, իրադարձությունների միաժամանակության (տարաժամանակության) հարաբերությունների արտահայտիչը՝ խոսքի պահից անկախ: Լրագրողական տեքստը, որը ներառում է տարբեր ոճերի տեքստերի բնութագրեր, տարբերվում է նրանով, որ որպես հաշվարկի սկզբնակետ է օգտագործում իրականության ընթացիկ պահը, «պատմական այսօրը» (Матвеева, 1990: 101): Տեքստային մակարդակում դա իրագործվում է ժամանակ ցուցանող տարբեր արտահայտչամիջոցներով, որոնք Օ.Մոսկալսկայան ձևակերպում է որպես սինսեմանտիկ՝ թվական+ամիսը նշող գոյական, գոյական, որը մատնանշում է շաբաթվա օրը, ժամանակի մակբայ (Москальская, 1981: 105): Օրինակ՝ «now, this week, on Thursday, September 21, 2015»

լեզվական միջոցները ցուցադրում են ՁԼՄ-ների հրապարակումներում ժամանակային նշույթների բազմազանությունը:

Անհրաժեշտ է իրադարձության ժամանակի տեքստային նշույթների փոխակերպման վրա ազդող արտալեզվական գործոնների շարքը դասել ՁԼՄ-ներում իրադարձության ժամանակային տեղորոշման առանձնահատկությունը: Տեքստում բառային և քերականական ժամանակային նշույթների փոփոխությունները պայմանավորված են իրադարձության մասին տեքստի ստեղծման և ֆիզիկական իրականության մեջ այդ իրադարձության կատարման ժամանակային տարբերությամբ: ՁԼՄ-ների հրապարակումները հիմնականում լույսընծայման որոշակի ամսաթիվ ունեն, օրինակ՝ լրագրերը (օրաթերթ, շաբաթաթերթ), նաև էլեկտրոնային հրատարակությունները: Քանի որ բոլոր տեքստերը ստացվում են օրվա ընթացքում, հետևաբար՝ տեղադրվում են ժամանակագրական կարգով՝ ինքնաբերաբար ներառվելով կայք-պարբերականի ժամանակային համատեքստում:

Փորձենք մանրազնիմ ուսումնասիրել լեզվական այն բոլոր միջոցները, որոնք կիրառվում են տնտեսական իրադարձությունների ժամանակային կադապարն ապահովելու համար:

Նորություններում իրադարձության իրական ժամանակը ցուցանշվում է ժամանակի պարագայի միջոցով, որի ընդունված բանաձևն է Num+Ntemp կամ Ntemp+Num, որտեղ Num-ը թվականն է, իսկ Ntemp-ը՝ տարին և/կամ ամիսը: Այս բանաձևը, համակցվելով բայի համապատասխան ձևերի հետ, իրադարձության ճշգրիտ ժամանակային նշույթավորման համընդհանուր միջոց է: Օրինակ.

The surprise ousting **on June 6th** of Deutsche Bank's embattled cobosses, Anshu Jain and Jargen Fitschen caused its share price to jump by 8%. (www.economist.com, June 13, 2015)

On June 8th the government announced the lifting of the controls the country imposed in 2008 – with one big caveat. (www.economist.com, June 13, 2015)

Վերոնշյալ բանաձևի բացակայության դեպքում, տեքստը ձեռք է բերում իր ժամանակագրական բնութագիրը շնորհիվ քերականական միջոցների, այսինքն բայի ժամանակաձևերի, որոնք թույլ են տալիս տեղակայել իրադարձությունը անցյալի,

ներկայի և ապագայի կողողինատներում՝ իրական ժամանակի նկատմամբ (նորությունների տպագրվելու կամ կայքէջում տեղադրվելու ժամանակը): Օրինակ.

The government **is stepping up** efforts to persuade the country's 280m daily smokers – nearly one-third of the world's total – to give up. (www.economist.com, June 13, 2015)

Qatar Airways **has bought** a 9.99 per cent stake in British Airways' owner International Airlines Group, in a move that underlines the state – controlled Gulf carrier's determination to be a leading force in global aviation. (www.ft.com, January 30, 2015)

The British Army **will revive** one of the most controversial special forces units of the Second World War, the Chindits, as a new generation of “Facebook warriors” who will wage complex and covert information and subversion campaigns. (www.ft.com, January 31, 2015)

Կիրառման հաճախականությամբ աչքի է ընկնում նաև Adj+Ntemp բանաձևը, որտեղ Adj-ը ածական է, իսկ Ntemp-ը՝ ժամանակային որևէ հատված ցուցանշող գոյական.

Last month Toronto became the fifth city where the firm's lunch – delivery service, UberEATS, is available. (www.economist.com, June 13, 2015)

Russia's Prime Minister Dmitry Medvedev proposed **last week** that the country formulate budgets for only one year instead of the traditional three. (www.ft.com, September 8, 2015)

...the so-called Working Group, added that the Treasury's single cash account and Government Development Bank would exhaust available liquidity before the end of the year, creating a cash shortfall in **late November** or **early December**. (www.ft.com, September 9, 2015)

So the cost of commuting has outpaced inflation? Over the **past decade**, yes. (www.ft.com, January 30, 2015)

Տվյալ բանաձևում որակական ածականի առկայությունը կարող է ցուցանշող ժամանակային հատվածին հաղորդել իմաստային որոշակի երանգավորում: Օրինակ.

Seven years after the peak of the financial crisis, Iceland said that it would gradually remove the capital controls it had imposed, a sign that the economy has moved beyond its **turbulent past**. (www.economist.com, June 13, 2015)

On the other hand, there's a need, assiduously promoted by the present administration, to see Russia as a great country with a **glorious past**. (www.ft.com, February, 2015)

But BT said that the new agreement with its pension trustees would help the group as it faces a few **crucial weeks** that will dictate the next stage of the company's growth. (www.ft.com, February, 2015)

Իրադարձության ժամանակային նշութավորման համար օգտագործվող ևս մեկ բանաձև է՝ Pr+Ntemp, որտեղ Pr-ը հիմնականում հանդես է գալիս ցուցական դերանունով, իսկ Ntemp-ը՝ ժամանակային որևէ հատված ցուցանշող գոյականով (շաբաթ, ամիս, տարի): Օրինակ.

After rising by an annual average of 21% over the previous five years, visits by mainlanders are up just 6% so far **this year**. (www.economist.com, June 13, 2015)

Verizon **this week** became the latest company to launch an online video service... (www.ft.com, September 9, 2015)

Վերոնշյալ Adj+Ntemp և Pr+Ntemp բանաձևերը, ընդհանուր առմամբ, հեղինակը օգտագործում է այն դեպքում, երբ տեղեկույթը ներկայացվում է իրադարձության տեղի ունենալուց առնվազն մեկ օր հետո:

Ժամանակ ցուցանշող մակբայների կիրառումը մեկ այլ միջոց է նորությունների ժամանակային տեղակայումն ապահովելու համար.

Lately an unfamiliar emotion has washed over Cyprus: hope. (www.economist.com, June 13, 2015)

Uber **now** operates in 311 cities in 58 countries, providing more than 1m rides each day. (www.economist.com, June13, 2015)

Իրադարձության ժամանակային նշութավորման ևս մի տարբերակ է անցյալում կատարված իրադարձության նկարագրությունը և ժամանակի ցուցանշումը, որը ընթերցողի համար հաշվարկի սկզբնակետ է՝ ճշգրիտ թվագրելու ներկայիս իրադարձությունը: Օրինակ.

During the financial crisis, when the global economy faced its gravest threat since the 1930s, policymakers sprang into action. To stimulate the economy, central banks slashed interest rates and politicians spent lavishly...Unfortunately, however, that quick response nearly exhausted governments' economic arsenals. **Seven years later** they remain depleted. (www.economist.com, June 13, 2015)

Սույն օրինակում ընթերցողը, տեղեկացված լինելով 2008 թ. մեծ ֆինանսական ճգնաժամի մասին, իսկույն հաշվարկի սկզբնակետ է վերցնում դա և ծանոթանում այդ ժամանակվա դեպքերին: Գտվելով իրական ֆիզիկական ժամանակում՝ նա հաջորդող նախադասությունում առկա «seven years later» բառակապակցությունից հասկանում է, որ դեպքերը զարգանում են 2015 թ.:

Half a year on from pro–democracy protests that gripped Hong Kong for weeks, the city's economy is – depending on your perspective – beginning to suffer the fallout or sailing along as if nothing much happened. (www.economist.com, June 13, 2015)

Վերոնշյալ օրինակից պարզ է դառնում, որ ընթերցողը, գտնվելով իրական ժամանակում և համարելով դա հաշվարկի սկզբնակետ, հետադարձ հայացք է ձգում կես տարի առաջվա իրադարձություններին, ապա վերադառնում ներկա:

Իրադարձության ժամանակային նշութավորման համար օգտագործվում են նաև որոշակի օրերի անվանումներ (այսօր, վաղը, երեկ, շաբաթվա օրեր), որոնք թվագրելու համար ընթերցողի հաշվարկի սկզբնակետը իրական կյանքի այսօրն է: Օրինակ.

Oil prices rallied **yesterday**, with US crude futures jumping 8.3 percent to settle at \$48.24 a barrel and Brent crude up 7.9 percent to settle at \$52.99, its biggest one– day gain since 2009. (www.ft.com, January 30, 2015)

The public battle between Alibaba executives and a powerful Chinese regulator appeared to cool off **yesterday** as the two sides met and pledged to co– operate in fighting counterfeiting. (www.ft.com, January 30, 2015)

It's getting more expensive to buy at auction, at least at Sotheby's. The rates haven't changed, but from **tomorrow** the thresholds have: commission is now 25 per cent on the first \$200,000 instead of the \$100,000; (www.ft.com, January 30, 2015)

The first Federal Reserve monetary policy meeting of 2015 takes place **today** and tomorrow. (www.ft.com, January 28, 2015)

Այսպիսով՝ նորություններում տնտեսական իրադարձությունների ժամանակային նշութավորումը կապող օղակ է տեղեկոյթի և իրականութան միջև՝ ելնելով հողվաճագրի տեսանկյունից: Դրան աջակցող լեզվական միջոցները՝ թե՛ բայի ժամանակաձևերը, թե՛ թվականները, գոյականները, ածականները, մակբայները, վերջիններիս տարբեր համակցությունները ապահովում են տեղեկատվության ճշգրտություն, հավաստիություն, ինչպես նաև արդիականություն:

4.4. Տարածական տեղորոշումը՝ որպես տնտեսական իրադարձության ֆրեյմ-սցենարի միջուկային սլոթ

*“No boundary condition:
The idea that the universe is finite
but has no boundary (in imaginary time).”
Stephen Hawking, A Brief History of Time*

Տարածությունը սահմանվում է որպես եռաչափ անսահման տարածք, որտեղ ֆիզիկական մարմիններն ու իրադարձություններն ունեն հարաբերական դիրք և ուղղություն: Ֆիզիկական տարածությանը հաճախ վերագրվում են երեք գծային չափումներ, որոնք արդի ֆիզիկոսները, սովորաբար, ներկայացնում են ժամանակի հետ միասին՝ որպես անսահման քառաչափ տարածաժամանակ: Մարդկանց կողմից վերջինս ավելի հաճախ ընկալվում է որպես որոշակի վայր, որտեղ առկա են իրադարձություններ և գործողություններ, ֆիզիկական առարկաներ և դրանց հետ կապված երևույթներ: Տարածության մեջ կողմնորոշման ունակությունը չափազանց կարևոր են մարդու համար, քանզի, ինչպես նշում է Ե. Երզնկյանը, տեղորոշելով իրադրությունները տարածության մեջ՝ անհատի համար դյուրին է դառնում աշխարհում կողմնորոշվելը » (Ерзинкян, 2013: 184):

Փիլիսոփայության մեջ տարածությունը սահմանվում է որպես մատերիայի գոյության հիմնական ձև, որն արտացոլում է միաժամանակ գոյակցող առարկաների տեղորոշման կարգը: Տարածությունը գոյակցող առարկաների համակարգման ձև է (Советский энциклопедический словарь, 1988: 1071): Այս առարկաների գոյակցման դասավորվածությունը և տեղորոշումը ձևավորում են տարածության կառուցվածքը:

Արիստոտելի ընկալմամբ՝ տարածությունն օբյեկտիվ կարգ է, առարկաների հատկանիշ, ֆիզիկական առարկաների միջև առկա հարաբերությունների արդյունք: Ի. Նյուտոնն առաջարկում է բացարձակ տարածության գաղափարը, որն իր էությամբ, անկախ արտաքին ամեն մի ազդեցությունից մշտապես անշարժ է ու միատեսակ (Ньютон, 1989): Այս մոտեցումը քննադատել է ռեյացիոն ըմբռնման կողմնակից Գ. Լեյբնիցը, ով տարածությունն ու ժամանակը համարել է իրերի ու երևույթների որոշակի հարաբերություն, նշելով, որ դրանցից ավելի անկախ, դատարկ, մաքուր, զուտ կամ բացարձակ տարածություն չի կարող գոյություն ունենալ (Лейбниц, 1982):

Տարածության ընկալման գործընթացները, ինչպես նաև տարածական կապերի լեզվականացման միջոցները ուսումնասիրության առարկա են մի շարք լեզվաբանական միջգիտակարգերում:

«Տարածություն» հասկացությունը ամենից հաճախ վերաբերում է ոչ միայն ֆիզիկական, այլև բազմությունների կամ իրադրության տարածությանը: Այսպես՝ Օ. Սելիվյորստովան կարծում է, որ լեզվում նկարագրվող ամեն մի տարածություն կարելի է ներկայացնել որպես միաչափ, երկչափ կամ բազմաչափ կառույց: Ըստ լեզվաբանի՝ գոյություն ունի իրական և մտացածին աշխարհների տարածություն, որի սահմաններում առանձնանում են որևէ ընդհանուր հատկանիշով միավորված տարածության դասեր, կարգեր: Օրինակ՝ առանձնացվում են բնական աշխարհի տարածություններ՝ մակրոտիեզերքի, միկրոտիեզերքի, կենդանական և բուսական աշխարհներ, ֆիզիկայի, քիմիայի աշխարհներ և այլն, հասարակական աշխարհի տարածություններ՝ սոցիալիստական հասարակություն, գործարան, հաստատություն, ինչպես նաև հասարակության կամ մարդկանց գործունեության արդյունքում առաջացած տարածություններ՝ լեզու, արվեստ, գաղափարախոսություն, մշակույթ և այլն: Կարելի է տարանջատել նաև ֆիզիկական չափումներ ունեցող և չունեցող տարածություններ, օրինակ՝ զգացումների, գաղափարների, գործողությունների, իրադարձությունների և այլն: Լեզվամիավորների մեծ մասի նշյալները չեն համարվում «տարածություն» կարգի հիմնական անդամներ, սակայն օժտվում են սույն հատկանիշով որոշակի շարահյուսական կամ բառա-շարահյուսական կաղապարներում: Բացի այդ, միևնույն բառերի նշյալները, համատեքստից կախված, կարող են ներկայացնել տարածության տարատեսակներ: Այսպիսով՝ լեզվում

«տարածություն» հասկացությունը կարելի է սահմանել որպես «ինչ-որ բան, որի սահմաններում կարող է գտնվել առարկան/տարրը կամ տեղի ունենալ գործողությունը/իրադարձությունը» (Селиверстова, 2004: 564–568):

Տարածական տեղորոշումը համարվում է կատարվող իրադարձության առանցքային առանձնահատկություններից մեկը: Իրադարձությունները, որպես կանոն, տեղակայված են որոշակի ժամանակատարածական կոորդինատներում: Փաստական նյութի վերլուծությունը ցույց է տալիս, որ տարածական տեղորոշումը, ժամանակայինի հետ մեկտեղ, նշմարվում է արդեն իսկ նորությունների վերնագրում կամ էլ առաջին նախադասությունում: Նորության վերնագրի դերը չափազանց կարևոր է, քանի որ դա, որպես կանոն, վերաբերում է անմիջապես իրադարձությանը՝ մեկնաբանելով այն և կիրարկելով յուրատիպ գովազդային հնար՝ հնարավոր հասցեատիրոջ ուշադրությունը գրավելու նպատակով: Վերնագրի միջոցով իրականության ընկալումը ենթադրում է մի շարք կարծիքների, նախապատվությունների, ինչպես նաև տեսակետների ներգրավում, որոնք, իրենց հերթին, անշուշտ, որոշակի ազդեցություն են թողնում ընթերցողի հայեցակետի վրա: Որոշ գիտնականներ նշում են, որ վերնագիրը և դրա լեզվական արտահայտման կադապարն էական են տվյալ երևույթի նպատակային իրազեկման և ընկալման համար, քանի որ դրանց միջոցով իրականացվում է բավական կարևոր՝ «հասարակական իշխանության» գործառույթը (Блакар, 1987: 101): Այսպես՝

Luxembourg as a financial centre (վերնագիր) (www.economist.com, October 11, 2014)

Ireland to close ‘double Irish’ tax loophole (վերնագիր) (www.theguardian.com October 13, 2014)

Իրադարձության տարածական տեղայնացման լայնորեն օգտագործվող միջոցներից է հատուկ անունների՝ երկրների, տեղանքների և այլն, ինչպես նաև պետություններում գործող կազմակերպությունների անվանումների կիրառումը: Օրինակ.

The Adventurous, Indulgent **Caribbean**: 9 Resorts For Having It Both Ways (www.forbes.com, September 29, 2014)

Coming to America: Why the U.S. Is Still Destination No. 1 for Entrepreneurs

(www.forbes.com, October 14, 2014)

PBOC Makes Further Move to Ease Policy (www.wsj.com, October 14, 2014)

Նշված հատուկ անունները, կատարելով տարածական տեղայնացման գործառույթ, միաժամանակ հանդես են գալիս նաև որպես իրադարձության գործող սուբյեկտներ: Նմանատիպ բառային միավորների առկայությունը վկայում է լեզվական փոխանունության գործածության մասին, քանի որ ակնհայտ է՝ նշված գործողությունները կատարում են ոչ թե տվյալ երկրները, դրանց կազմակերպությունները, այլ մի խումբ մարդիկ, որոնք ներկայացնում են դրանց ենթակառուցյունները, տեսարժան վայրերը (առաջին օրինակում Կարիբյան ինը հայտնի կղզիները), կառավարության ապահոված բարենպաստ պայմանները (ԱՄՆ-ը՝ որպես գործարար աշխարհի երանելի վայր), կազմակերպությունները (PBOC – *People's Bank of China*՝ Չինաստանի ազգային բանկը) և այլն:

Հատուկ անունները կիրարկելով այսօրինակ համատեքստում՝ հոդվածագիրը խնդիր է դնում թաքցնելու իրական գործող անձին, այն սուբյեկտին, որն ընդունել է տվյալ որոշումը կամ կատարել ինչ-որ գործողություն, և այսպիսով ընդհանրական բնույթ է հաղորդվում նորությանը:

Իրադարձության տարածական տեղորոշումը գործարար նորություններում իրականացվում է հետևյալ կաղապարներով.

1. Prep. + Nloc, որտեղ prep.-ը նախդիրն է, իսկ Nloc-ը՝ վայրը, օրինակ՝

Why Content Is Struggling to Find Its Place **at Cannes** (www.adage.com, October 14, 2014)

Իրադարձության տարածական տեղայնացման նմանատիպ եղանակ լրագրողները շատ հաճախ օգտագործում են տվյալ վայրի նկատմամբ իրենց սուբյեկտիվ կարծիքը փոխանցելու և ընթերցողի գիտակցության վրա հմտորեն ազդելու նպատակով՝ ձևավորելով անհրաժեշտ դիրքորոշում: Այդ է վկայում ներքոհիշյալ հոդվածը հայտնի The Fortune թերթից, որտեղից տեղեկանում ենք ամերիկյան «AirDroids» ընկերության՝ նորարարական ինքնակառավարվող ուղղաթիռների արտադրության մեկնարկի մասին: Շնորհիվ ներկառուցված տեսախցիկի՝ վերջիններս լայնորեն կիրառվում են Սիլիկոնե Հովտում տեղակայված

տեղեկատվական տեխնոլոգիաներով զբաղվող բազմաթիվ աշխարհահռչակ ընկերությունների կողմից: Այդ վայրը, ինչպես հայտնի է, Սան Ֆրանցիսկո քաղաքի հարավարևմտյան մասում է և համարվում է գիտական բնօրրան՝ հազեցված տեխնիկական համալիրներով, հասարակական-մշակութային օբյեկտներով և SS ոլորտի կազմակերպություններով: «Սիլիկոնե Հովիտ» հատուկ անվան և, ավելին, «Ֆեյսբուք» հասարակական կայքի գլխամասի առկայությամբ հեղինակը ցանկանում է իրազեկել ընթերցողին «AirDroids» ընկերության աննախադեպ զարգացման և հետագա առաջընթացի մասին: Այստեղ, իհարկե, տարածական տեղայնացման որոշարկման հարցում ընթերցողի ընդհանուր գիտելիքային պաշարի դերը մեծապես կարևորվում է:

Millin is the 28-year-old co-founder and chief of product at DroneDeploy, and along with co-founder Nick Pilkington he's brought me to the very heart of **Silicon Valley**–**Facebook's** sprawling headquarters are visible on the far side of the cracked, chalk-white flats – to see this future in action. (www.fortune.com, October 8, 2014)

2. Nloc + N, որտեղ առաջին տարրը վայր ցուցանշող հատուկ անուն է, մինչդեռ երկրորդ տարրն իր վրա է վերցնում իրադարձության իմաստային ողջ բեռնվածությունը և կատարում է բնութագրական գործառույթ տվյալ լրահոսում:

Violent Flashes Shift Course of **Hong Kong Protests** (www.wsj.com, October 15, 2014)

China Inflation Eases as Weakness in Economy Persists (www.wsj.com, June 8, 2015)

Տվյալ վերնագրերում Hong Kong Protests և China Inflation տարածական տեղայնացման տարրերը միաժամանակ և՛ ցուցանշում են իրադարձության վայրը, և՛ բնութագրում այն՝ իրազեկելով ընթերցողին հիմնական բովանդակության մասին:

3. Nloc's + N-ը իրադարձության վայրը ցուցանշող՝ լայնորեն կիրառվող մոդելներից մեկն է, որտեղ Nloc's տարրը հանդես է գալիս որպես հատուկ անուն՝ ներկայացնելով երկրորդ տարրի պատկանելությունը (հիմնականում ազգային կամ որևէ այլ կազմակերպության): Օրինակ.

Heathrow's owner confirms sell-off of its other three airports (www.theguardian.com, October 16, 2014)

EBay's outlook signals slow holiday season (www.fortune.com, October 15, 2014)

Europe's carmakers walk tightrope between low cost and high spec (www.reuters.com, October 2, 2014)

4. Adjloc+N (+N) կաղապարում Adj-ը գոյականին նախորդող ածական է և նույնպես ցուցանշում է իրադարձության, նորության, երևույթի ազգային պատկանելությունը:

Spending at U.S. retailers declined in September, raising concerns about the strength of **American consumers** amid signs of a global slowdown (www.wsj.com, October 15, 2014)

Russian gas shutdown would not cause blackouts, says European commission. (www.theguardian.com, October 16, 2014)

Chinese Real Estate Buyers Turn to Tokyo (www.wsj.com, October 16, 2014)

Վերոնշյալ օրինակներում American, Russian և Chinese ածականները իմաստային առումով մեծ դեր են կատարում իրադարձությունների տարածական տեղայնացման մասին ընթերցողին տեղեկացնելու գործում:

Տարածական տեղորոշումը կարող է նաև որոշարկվել տարբեր երկրների, քաղաքների, տարածաշրջանների բնակիչներին ցուցանշող բառային միավորների օգնությամբ: Օրինակ.

Most Americans Don't Know It, But Their Odds of Getting Laid Off Have Never Been Lower. (www.wsj.com, October 16, 2014)

5. Մեկ այլ տարածված կաղապար է Nloc + V կառույցը, որտեղ Nloc-ը ցույց է տալիս իրադարձության վայրը, միաժամանակ հանդես գալով որպես գործող սուբյեկտ, իսկ V-ն՝ բայական արտահայտությամբ արտացոլում է բուն երևույթը:

Cold War on Business: **Beijing pulls back** the welcome mat (www.fortune.com, October 8, 2014)

Japan Is Building The Fastest Train On Earth (www.businessinsider.com, October 17, 2014)

Որոշ դեպքերում Nloc-ը կազմակերպության անվանումն է, որը (եթե այն հայտնի է) չի խոչընդոտում իրադարձության վայրի որոշարկումը: Ստորև բերվող նախադասությունում որպես սուբյեկտ է հանդես գալիս «EBay» աշխարհահռչակ ամերիկյան ընկերությունը, և հասցեատերը միանգամից կռահում է, որ դեպքերը զարգանում են ԱՄՆ-ում.

EBay Wants You To 'Shop The World' in First Global Campaign. (www.adage.com,

October 9, 2014)

Apple Releases Latest, Thinnest iPads as the Tablet Market Shrinks (www.adage.com, October 16, 2014)

Վերոնշյալ օրինակում N-ը մեզ բոլորիս քաջածանոթ «Apple» ամերիկյան կազմակերպությունն է, հետևապես՝ ընթերցողը խնդիր չունի հասկանալու, թե որտեղ են թողարկվել վերջին, ամենաբարակ այփադները:

Մեծաթիվ են այն հոդվածները, որոնց բովանդակային լրակազմում տարբեր ոլորտների հայտնի մարդկանց անուններ են, և հասցեատերը, իր հենքային գիտելիքի հաշվին, իրականացնում է տարածական տեղայնացման որոշարկում: Օրինակ՝ ներքոհիշյալ վերնագրում նշվում է «Facebook» սոցիալական ցանցի հիմնադիր Մարկ Ցուկերբերգի անունը, և ընթերցողը, լավատեղյակ լինելով տվյալ կայքի ամերիկյան ծագման մասին, միանգամից գլխի է ընկնում, որ իրադարձությունը կատարվում է ԱՄՆ-ում.

Mark Zuckerberg Gave A Great Answer To Someone On Facebook Who Asked Why He Donated \$25 Million To Fight Ebola (www.businessinsider.com, October 14, 2014)

6. Մեկ այլ կադապարի՝ V+Nloc-ի կիրարկումը թույլ է տալիս միաժամանակ բացահայտել ինչպես իրադարձության՝ գործողությունն իր վրա կրող օբյեկտին (անձ, երկիր, կազմակերպություն և այլն), այնպես էլ տարածական տեղորոշումը: Օրինակ.

How Senegal and Nigeria **are beating the U.S.** at responding to Ebola (www.fortune.com, October 15, 2014)

The Tip Of The Iceberg Of The Coming Retirement Crisis That **Will Shake America** To The Core (www.economist.com, July 5, 2013)

Շատ դեպքերում գործարար լրահոսը մեկնարկում է ստույգ երկրի կամ քաղաքի անվանմամբ՝ ընթերցողին անմիջապես իրազեկելով իրադարձության վայրի մասին: Օրինակ.

BERLIN–Echoes of the debt crisis reverberated across the eurozone Thursday amid mounting concern about the region’s stalled economic recovery and gridlock in the political system called upon to fix it. (www.wsj.com, October 16, 2014)

Այսպիսով՝ սույն ուսումնասիրությունը բացահայտեց իրադարձության տարածական տեղայնացման հիմնական կադապարներն իրենց տարատեսակներով, որոնք,

պայմանավորված հողվածագրի մտադրություններով, իրականացնում են մի շարք գործառույթներ: Դրանք հիմնականում գործածվում են ընթերցողի վրա նպատակային ազդեցություն թողնելու, նրա աշխարհընկալումը որոշ երևույթների նկատմամբ փոխելու, իրական գործող անձին՝ սուբյեկտին համընդհանուր բնույթ հաղորդելու, իրադարձության հնչեղության մասին իրազեկելու և այլ նպատակներով:

4.5. Գործողությունն իր վրա կրողը (օբյեկտը)՝ որպես տնտեսական իրադարձության ֆրեյմ-սցենարի պայմանական սլոթ

Յուրաքանչյուր տնտեսական իրադարձություն իր ուրույն հետքն է թողնում անհատի, հանրության կենսակերպի, ընկերությունների, կազմակերպությունների գործունեության վրա: Տնտեսական իրադարձության արդյունքների ուղղակի կամ անուղղակի կրողն է օբյեկտը՝ գործողությունն իր վրա կրողը, որը կարող է տնտեսական նորությունների տեքստում ներակա կամ արտակա ձևով արտացոլվել:

Հարկ ենք համարում նշել, որ սույն աշխատանքում օբյեկտի սլոթը համարում ենք պայմանական, քանի որ կարծում ենք, որ վերջինս ոչ միայն պարտադիր տարր չէ իրադարձության գոյաբանության, այլև առանցքային չէ վերջինիս իրագործման համար: Աշխարհում տնտեսական իրադարձությունների գերիշխող մասը անվերահսկելի բնույթի է և կատարվում է անկախ անհատի/անհատների կամքից՝ առանց հաշվի առնելու այն հետևանքները և ազդեցությունը, որ դրանք կարող են ունենալ հանրության վրա: Այսպիսի մոտեցում ունի նաև Վ. Դեմյանկովը, ով նշում է, որ իրադարձության բնորոշ հատկանիշներից է դրա վերահսկողության մասնակի կամ ամբողջական բացակայությունը (Демьянков, 2004): Օբյեկտի սլոթը համարելով պայմանական՝ աշխատանքում առանձնացնում ենք դրա երկու տարբերակ՝ ուղղակի, այսինքն՝ արտակա կերպով արտահայտված օբյեկտ, որն իր լեզվական արտացոլումն է գտնում տնտեսական մեդիադիսկուրսում և անուղղակի՝ ներակա կերպով արտահայտված օբյեկտ, այսինքն՝ հանրություն, որ ինչ-ինչ պատճառներով կարող է զգալ որոշակի տնտեսական իրադարձությունների հետևանքներն իր կենսակերպի, կյանքի բնականոն ընթացքի և այլնի վրա՝ ըստ այդմ էլ արժևորելով դրանք որպես կարևոր ու նշանակալի [4]:

Մեր ուսումնասիրած փաստական նյութի վերլուծությանը զուգահեռ կատարել ենք վիճակագրական հաշվարկ, որի արդյունքում ակնհայտ է դարձել, որ 5880 հողվածում լուսաբանվող տնտեսական իրադարձություններից միայն 705-ում է (12 %) օբյեկտի սլոթն արտացոլված ներակայորեն, այսինքն՝ չեն նշվում որոշակի անձինք, երևույթներ, որոնք ուղղակիորեն կրում են տվյալ տնտեսական իրադարձությունների հետևանքների ազդեցությունը: Դրանք հիմնականում այն հողվածներն են, որոնք լուսաբանում են նորություններ՝ կապված տնտեսական երևույթների տարբեր դրսևորումների հետ համաշխարհային, ինչպես նաև առանձին երկրների շուկաներում (նավթի, արժեթղթերի և տնտեսությանն առնչվող այլ իրույթների գների աճ կամ անկում): Միաժամանակ, տնտեսական իրադարձությունների հասկացութային դաշտի ձևավորման համար, ինչպես նշել ենք նախորդիվ, որոշակի պայմանական սլոթներ, այդ թվում նաև՝ օբյեկտինը, առաջ են մղվում՝ վերջիններիս ընկալումը համապարփակ դարձնելու նպատակով:

Արտակա կերպով արտացոլված օբյեկտն ի սկզբանե կարող է ներկայացվել նորությունների վերնագրում, ինչպես հետևյալ օրինակում. սպառողները, որ այս իրադարձության արդյունքի ուղղակի կրողներն են, պետք է օգտվեն նավթի ցածր գների առավելությունից.

Benefits of cheaper oil must reach **consumers**, warns Osborne (www.ft.com, January 7, 2015)

Հաջորդ օրինակում տնտեսական իրադարձության օբյեկտը ԱՄՆ-ի տնտեսական աճն է, որի վրա անբարենպաստ ազդեցություն ունի արտահանումների ցածր մակարդակը.

Weak exports hold back **US growth** (www.ft.com, January 31, 2015)

Տնտեսական իրադարձության օբյեկտ կարող են դառնալ անհատը/անհատները՝ Deutsche Bank decided to replace – eventually – **its two co-chief executives** with a single chief executive. (www.economist.com, June 13, 2015)

New **McDonald's chief** faces tough test over stalling sales (www.ft.com, January 31, 2015)

The breakneck growth of Hanergy Group, the world's largest solar company by

market value, helped to make its **founder, LiHejun**, China's fifth-richest man. (www.ft.com, January 28, 2015)

£40bn of private investment in infrastructure leaves **taxpayers** with unquantifiable risks and is the most "lender friendly" in the EU, according to the UK spending watchdog. (www.ft.com, January 28, 2015)

Այդուհանդերձ, որոշ դեպքերում, անհատի՝ որպես գործողությունն իր վրա կրողի փաստը կարող է բացահայտորեն չարձանագրվել տեքստում, թեպետ ընթերցողը, իր հենքային գիտելիքների շնորհիվ, հասկանում է, որ տվյալ իրադարձության հետևանքով տուժելու են մարդիկ, ինչպես հետևյալ օրինակում՝ կրճատվում են աշխատատեղեր, իսկ դա նշանակում է հաջորդիվ անբարենպաստ պայմանների հաստատում մի շարք մարդկանց և ընտանիքների համար.

Stuart Gulliver, the chief executive of HSBC, announced a restructuring of the bank. Almost **50,000 jobs, a fifth of the workforce**, are to go, half of them at its loss-making operations in Brazil and Turkey, which it is selling. (www.economist.com, June 13, 2015)

The Qatar-based Al Jazeera media network has announced that it **is cutting 500 jobs**. (www.bbc.com, March 27, 2016)

Որպես իրադարձության հետևանքների ուղիղ կրողներ կարող են լինել քաղաքները, պետությունները, ինչպես հետևյալ օրինակներում.

Affordable housing crisis **has engulfed all cities in southern England**, says Lloyds (www.theguardian.com, March 25, 2016)

Had his term continued for two years more, he would have been associated instead with the subprime and tourism busts that **hit Florida** so hard. (www.economist.com, June 13, 2015)

Cyber threat drives **US** to change tack on naming and shaming (www.bbc.com, January 28, 2015)

Continued membership of the European Union would leave **Britain** with huge economic turmoil, akin to those affecting Greece and Spain, the chairman of JD Wetherspoon said, as he joined 249 other business leaders in openly backing Brexit. (www.theguardian.com, March 26, 2016)

Ամենից հաճախ, տնտեսական իրադարձության հետևանքների կրող են դառնում

տնտեսական աշխարհի իրույթները՝ որևէ ապրանքի պահանջարկը, առաջարկը, համաշխարհային, ինչպես նաև առանձին երկրների շուկաները, ֆինանսական համակարգերը, արժեթղթերը, հայտերը, տոկոսադրույքները և այլն.

Bearish consumption data since the new year indicate that higher chocolate prices have hit **global demand**, leaving the cocoa market facing a challenging environment in the year ahead. (www.ft.com, January 28, 2015)

The steelmaking ingredient was the worst-performing big commodity, plummeting 50 per cent as a flood of new supply hit **the market and swamped demand**. (www.ft.com, January 7, 2015)

The collapse of Lehman Brothers, a sprawling global bank, in September 2008 almost brought down **the world's financial system**. (www.economist.com, September 7, 2013)

George Osborne, Britain's chancellor of the exchequer, said the government would start selling its majority **stake** in Royal Bank of Scotland. (www.economist.com, June 13, 2015)

MSCI, a company which compiles share indices that are tracked by leading funds, once again chose to exclude **Chinese equities** from its Benchmark emerging-markets index. (www.economist.com, June 13, 2015)

McCormick, the American food flavourings business, has said it may increase its \$700m (£494m) **bid** for the UK's Premier Foods. (www.bbc.com, March 24, 2016)

The Federal Reserve held **interest rates** steady on Wednesday and indicated that moderate U.S. economic growth and "strong job gains" would allow it to tighten policy this year, with fresh projections showing policymakers expected two quarter-point hikes by the year's end, half the number seen in December. (www.reuters.com, March 26, 2016)

Արտադրող ձեռնարկությունների դեպքում իբրև օբյեկտի սլոթ հանդես գալիս են ծառայությունները կամ ապրանքները.

Apple launched its new **music-streaming service**, which is based on the one that was offered by Beats Electronics before Apple bought the firm last year. (www.economist.com, June 13, 2015)

Իրադարձության արդյունքները կարող են ներգործել նաև հաստատությունների և ընկերությունների վրա, ինչպես հետևյալ օրինակներում.

A four-year programme to support in 2014 a backlash obliged **Oberlin College** in Ohio to withdraw sweeping guidelines urging teachers to think before setting triggering coursework. (www.economist.com, June 13, 2015)

BHS store chain faces a complex battle to restructure its retirement scheme and secure its survival. (www.theguardian.com, March 25, 2016)

Underlying U.S. inflation increased more than expected in February as rents and medical costs maintained their upward trend, which could keep **the Federal Reserve** on course to gradually raise interest rates this year. (www.reuters.com, March 16, 2016)

Japan's NTT Data is buying **Dell's technology services business** for more than \$3bn (£2.1bn) as it seeks to expand its business in North America. (www.bbc.com, March 28, 2016)

Bad infrastructure damages the competitiveness of **American firms**. (www.economist.com, June 13, 2015)

Հարկ է նշել, որ տնտեսական իրադարձության սցենարի օբյեկտի սլոթը հաճախ համընկնում է նախադասության խնդրի հետ, սակայն դա անհրաժեշտ պայման չէ օբյեկտի սլոթի իրագործման համար: Դիցուք՝ հաջորդ օրինակում և՛ նախադասության խնդիր, և՛ ֆրեյմ-սցենարի օբյեկտի սլոթի ներկայացուցիչ է Դաշնային պահուստը (Federal Reserve)։

Why do many Americans mistrust the **Federal Reserve**? (www.bbc.com, December 15, 2015)

Դրա հետ մեկտեղ, իրադարձության օբյեկտը կարող է հանդես գալ նախադասության ենթակայի դերում: Այս դեպքում օգնության են գալիս այնպիսի բայեր, որոնց իմաստային հիմքում առկա են գործողությունն իր վրա կրողի իմաստոյթներ (to suffer, to face և այլն): Օրինակ.

Escondida will **suffer** a dip in output in 2016 as BHP mines lower grade ores. (www.ft.com, January 28, 2015)

Businesses face £1,000 annual charge per non-EU skilled worker (www.bbc.com, March 24, 2016)

Այսպիսով՝ տնտեսական իրադարձության ֆրեյմ-սցենարի օբյեկտի սլոթի կարևորությունը հաստատվում է վերջինիս՝ արդեն իսկ վերնագրում նշվելու փաստով:

Տնտեսական նորությունների տեքստում օբյեկտի սլոթը կարող է հանդես գալ արտակա ձևով՝ անհատների, քաղաքների, պետությունների, հաստատությունների, ընկերությունների, տնտեսական աշխարհի իրույթների անվանումներ: Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ ինչ դերում էլ հանդես գա ֆրեյմ-սցենարի օբյեկտի սլոթը, տնտեսական իրադարձությունն ինքնին մարդակենտրոն է և ունի անմիջական ազդեցություն անհատների և հանրության կենսակերպի վրա: Ընդ որում, այս դեպքում տնտեսական իրադարձության ֆրեյմ-սցենարի օբյեկտն արտահայտվում է արդեն ներակայորեն:

4.6. Պատճառահետևանքային կապերը՝ որպես տնտեսական իրադարձության ֆրեյմ-սցենարի պայմանական սլոթ

Պատճառահետևանքային հարաբերություններն օբյեկտիվ իրականության մեջ կատարվող գործընթացների փոխկապվածության և պայմանականության, ինչպես նաև տեքստի իմաստային կառուցվածքի ապահովման առանցքային տարրերից են: Հայտնի է, որ երևույթները, իրադարձությունները, գործընթացները, որ տեղի են ունենում ինչպես բնության, այնպես էլ հասարակության մեջ պայմանավորված են այլ երևույթներով, գործընթացներով, այսինքն՝ որոշակի հանգամանքներով: Ըստ Գ.Հեգելի՝ եթե մի երևույթ որոշակի պայմաններում ձևավորում, առաջացնում է մեկ այլ երևույթ, ապա առաջինը պատճառն է, երկրորդը՝ հետևանքը (Гегель, 1975: 342): Պատճառականությունը համընդհանուր նշանակություն ունի, որովհետև չկա մի երևույթ, որ պատճառ չլինի և հետևանք չդառնա: Ինչ-որ մի ժամանակ պատճառը և հետևանքը գոյատևում են, ապա պատճառը մարում է, իսկ հետևանքը վերածվում նոր պատճառի (Սարգսյան, 2010: 381):

Վ. Դեմյանկովի կարծիքով՝ իրադարձությունը կարող է ունենալ արտահայտված կամ չարտահայտված պատճառ: Եթե նույնիսկ առաջին հայացքից թվում է, թե իրադարձությունը պատճառ չունի, դա այդպես չէ: Այն կարող է ունենալ մի քանի պատճառ, որոնցից յուրաքանչյուրն անհրաժեշտ նախապայման է դրա իրականացման համար (Демьянков, 2004):

Պատճառականությունն ընդհանուր առմամբ միավորում է նախադրյալի, հիմնավորման, հաստատման, ապացույցի, առիթի, դրդապատճառի և այլ նմանատիպ հարաբերություններ, որոնք իրադարձությունների միջև ստեղծում են այնպիսի կապեր, որոնց դեպքում իրադարձություններից մեկը բավարար հիմք է մյուսի իրագործման համար: Իր հերթին, արդյունքը կարևոր տարր է իրադարձության համար, քանի որ շատ հաճախ մարդու գիտակցության մեջ վերջինս համակցվում է հենց բուն իրադարձության հետ:

Պատճառականությունը, ըստ Յու. Ստեպանովի, բոլոր առումներով կապված է լեզվի հետ. «պատճառ» հասկացությունը գոյություն ունի միայն որոշակի լեզվի՝ դիսկուրսի շրջանակներում: Հենց այս տեսակետից էլ կարևորվում է պատճառահետևանքային հարաբերությունների և լեզվում դրանց արտահայտման միջոցների ուսումնասիրությունը (Степанов, 1995: 69):

Լեզվաբանության մեջ պատճառական կապերը սահմանվում են որպես իրերի որոշակի դրություն, իրադարձությունների, երևույթների միջև որոշակի տիպի կապեր (պատճառահետևանքային կապեր):

Պատճառը և հետևանքը ժամանակային հարաբերության մեջ են, ըստ որի՝ գործողության վերջի և հետևանքի երևան գալու սկզբի միջև գոյություն ունի որոշակի ժամանակահատված: Օրինակ՝ հետևյալ իրադարձության մեջ հստակ նշվում է պատճառն առ այն, որ «Mr Kipling», «Batchelors» և «Ambrosia» մթերային ապրանքանիշները, մերժելով ամերիկյան «McCormick» ընկերության կողմից կլանման առաջարկը, համագործակցության պայմանագիր են կնքում ճապոնական «Nissin Foods» ընկերության հետ: Այնուհետև (after) տեղի է ունենում նշված ընկերությունների արժեթղթերի գների հանկարծակի աճ.

Shares in the owner of food brands including Mr Kipling, Batchelors and Ambrosia have surged after it turned down two takeover approaches from US food group McCormick and struck a cooperation agreement with Japan's Nissin Foods. (www.theguardian.com, March 23, 2016)

Շատ հաճախ իրադարձության հետևանքն արտահայտվում է հոդվածի վերնագրում, և ընթերցողը, ունենալով պատշաճ հենքային գիտելիք, անմիջապես ընկալում է եղելությունը.

Oil ends steady after Brussels attacks (www.reuters.com, March 23, 2016)

Տվյալ օրինակում ընթերցողը տեղյակ լինելով 2016 թ. մարտի 22-ին Բրյուսելի մետրոններից մեկի կայարանում և ավելի ուշ՝ Զավենտեմ օդանավակայանում տեղի ունեցած պայթյունների և զոհերի մասին, հասկանում է, որ յուրաքանչյուր նմանատիպ սհաբեկչություն ուղղակի ազդեցությունն ունի համաշխարհային տնտեսական գործընթացների վրա և հետևաբար՝ կարող է խաթարել տնտեսության որոշ բնագավառների գործունեությունը, ինչպես նաև պատճառ դառնալ նավթի, ոսկու և այլ ապրանքների գների կտրուկ անկման: Ելնելով այս նկատառումներից՝ նա անմիջապես վերնագրից ընկալում է նավթի գների կայուն մնալու փաստը:

Որոշ դեպքերում հոդվածի վերնագիրը միաժամանակ հուշում է տնտեսական իրադարձության և՛ հետևանքը, և՛ պատճառը, ինչպես հետևյալ օրինակներում.

Shares in Mr Kipling owner surge after bids rejected (www.theguardian.com, March 23, 2016)

Virgin America shares soar on reports that **airline is seeking buyers** (www.theguardian.com, March 23, 2016)

Պատճառը և հետևանքը կարող են արտահայտվել միևնույն նախադասության մեջ՝ այդպերպ ընթերցողին տալով հնարավորություն համապարփակ կերպով ընկալելու իրադարձությունը: Օրինակ.

A disastrous 2007 harvest, caused by a combination of factors including weather and lack of investment in the seed resulting in dwindling yields, meant that growers considered abandoning the crop for good. (www.ft.com, March 19, 2015)

The last sale of 4G spectrum in 2013 resulted in a £2.4bn windfall for the UK after a fiercely competitive auction among the British mobile operators. (www.ft.com, March 17, 2015)

The surge in popularity of the Green party has led to an increased focus on their policies, particularly on a document called Policies for a Sustainable Society. (www.ft.com, January 28, 2015)

Ultra-low interest rates after the financial crisis led to insatiable demand for income from investors. (www.ft.com, January 28, 2015)

իրադարձության հետևանքը կարող է լինել և՛ իրական, այսինքն՝ իրականացած, և՛ հնարավոր, բայց դեռևս չիրագործված: Այսպես՝ ստորև բերվող իրադարձություններն արդեն իրագործվել են՝

LinkedIn and other career–networking websites are making it easier for companies to do their own recruiting: JP Morgan Chase now has almost 500 executive recruiters of its own. **As a result of this trend, Korn Ferry collected less revenue from searches last year than in 2008.** (www.economist.com, June 13, 2015)

Aviva is to increase chief executive Mark Wilson’s potential pay package to £6.7m as he prepares to lead an enlarged group **as a result of the insurer’s planned acquisition of FTSE 100 rival Friends Life.** (www.ft.com, March 19, 2015)

Changing the way services are provided has mitigated the **effect of budget cuts. Some of the boldest public–sector reformers in the land are Labour councils caught between tight spending settlements and the electoral impossibility of raising local taxes.** (www.ft.com, March 17, 2015)

Իրական արդյունքի մասին կարելի է խոսել որպես արդեն տեղի ունեցած իրադարձության, մինչդեռ հավանական էլքը հանդես է գալիս՝ կապված հետագա իրադարձության հետ: Լեզվական մակարդակում դա արտահայտվում է եղանակավորման միջոցով: Օրինակ.

John Friedman, an economist at Brown University, estimated that **as a result the drug makers would gain benefits of \$242 billion over a ten–year period** – a healthy return on the \$130m the industry spent on lobbying in the year the law passed. (www.economist.com, June 13, 2015)

“**This would be a highly undesirable outcome,**” said Tony Dolphin, chief economist at IPPR. “**Households could have more debt, relative to income, by the end of the decade than they had when the financial crisis hit.**” (www.ft.com, March 17, 2015)

EasyJet yesterday predicted **it would report lower than expected first–half losses** partly **because** falling oil prices are serving to cut the budget airline’s fuel bill. (www.ft.com, November 28, 2015)

Տնտեսական իրադարձության արդյունքը կարող է ունենալ արժևորման տարրեր՝ դրական (բարենպաստ փոփոխություններ տնտեսության մեջ, հանրության, անհատների կյանքում) կամ բացասական (տնտեսության, հանրության, ընկերությունների հետ կապված անբարենպաստ հետևանքներ): Այսպես՝ հոդվածը վերնագրելով «Post-recession Britons are healthier, better off and living greener lives» լրագրողն արդեն իսկ ընթերցողին ոգևորում է, հաղորդում դրական լիցքեր: Հաջորդիվ, լրահոսից տեղեկանում ենք բրիտանացիների ավելի առողջ, ֆինանսապես ավելի կայուն կյանքի, հանցագործությունների ցածր մակարդակի մասին. կյանքի տևողությունը երկարել է, կենսամակարդակը բարձրացել, գործազրկությունը նվազել, ի վերջո, Միացյալ Թագավորությունը կարողացել է ձերբազատվել 2007 թ. ֆինանսական ճգնաժամի հետևանքներից.

Recovery from the deepest recession in Britain’s post-war history has left Britons healthier, better off, less likely to be victims of crime and living greener lives, according to the latest official snapshot of national wellbeing.

Life expectancy and living standards rose while unemployment fell during a three-year period from 2012–14, a time when the UK finally shrugged off the after-effects of the financial crisis that began in 2007. (www.theguardian.com, March 23, 2016)

Հաջորդ օրինակում տնտեսական իրադարձությունն ունի բացասական հետևանք, քանի որ վերջին երեք տարիների ընթացքում Ճապոնիայի արտադրող ընկերությունների հանդեպ վստահությունն անկում է ապրել, և ավելին, առաջիկա եռամսյակում առկա են էլ ավելի վատթարանալու սպասումներ: Լրագրողն անկումային տրամադրություն է հաղորդում «deteriorated», «to the lowest», «to worsen», «concern» և «worries» լեզվարտահայտչական միավորներով.

Japanese manufacturers’ confidence probably deteriorated to the lowest in nearly three years and it is expected to worsen in the coming quarter due to exporters **concern** over a strong yen and **worries** over the global economy, a Reuters poll showed. (www.reuters.com, March 25, 2016)

Այսպիսով՝ հեղինակն ընթերցողի մոտ ձևավորում է իրեն ցանկալի տրամադրվածություն՝ հաստատելով տրամաբանական կապ առանձին երևույթների միջև:

Արժևորման՝ դրական կամ բացասական գաղափարը կարող է հավասարաչափ վերաբերել նաև տնտեսական իրադարձության պատճառին, ինչպես հետևյալ օրինակում.

Thanks to increased life expectancy, the region's army of pensioners will grow rapidly, especially in China, which already has 132m people over the age of 65. (www.economist.com, June 13, 2015)

Այստեղ լրագրողը պատճառի դրական լինելը փաստում է «thanks to» արտահայտությամբ. ավելին, կյանքի տևողության մակարդակի բարձրացումն ինքնին լավատեսական նորություն է:

Եվս մեկ օրինակում հողվածագիրը, ընդգծելով այն փաստը, որ Բրիտանիայում վերջին 25 տարվա ընթացքում երիտասարդների շրջանում և ընդհանուր գործազրկության մակարդակի հարաբերությունը զգալիորեն բարձր է Եվրոմիության միջին ցուցանիշից և ավելի բարձր, քան Իսպանիայում, Հոլլանդիայում ու Գերմանիայում, քննադատում է չափից ավելի հավանության արժանացած բրիտանական աշխատուժի շուկայի ճկունությունը՝ նշելով, որ վերջինս կրթական համակարգի հետ լիարժեքորեն չի համագործակցում.

The question is why in Britain the ratio between the youth unemployment rate and the unemployment rate for over 25 years is substantially higher than the EU average and much higher than in Spain, the Netherlands and Germany. The **reason** is, rather, the much applauded flexibility of the British labour market or the lack of connection between the British education system and the labour market. (www.ft.com, March 17, 2015)

Այստեղ լրագրողն իր բացասական վերաբերմունքը հաղորդում է «the much applauded flexibility» և «the lack of connection» արտահայտությունների օգնությամբ՝ ընթերցողի մոտ առաջացնելով վատատեսական վերաբերմունք:

Լեզվական մակարդակում պատճառահետևանքային կապերը հիմնականում դրսևորվում են պատճառի և հետևանքի երկրորդական նախադասություններով, որոնք կապակցվում են գլխավոր նախադասության հետ as, because, since և այլ շաղկապներով, ինչպես հետևյալ օրինակներում.

As their currencies weaken, capital in these countries confronts low yields at home – spectacularly so in the case of Japan and the eurozone – and higher US Treasury yields, along with further potential dollar strengthening. (www.ft.com, January 7, 2015)

Nokia stumbled in 2007 partly **because** it treated the newly launched iPhone merely as a phone – one that was less useful, less sophisticated and more fragile (Nokia engineers noted disdainfully that it had failed its “drop test”) than its existing best-selling models. (www.ft.com, March 17, 2015)

But Mr Kaeser said he anticipated that the oil price would recover in the medium term **because** he believes the current slump is output-driven, not structural. (www.ft.com, November 28, 2015)

Second, if as expected US shale oil producers exit the market, gas prices may increase **since** shale oil usually produces gas as a byproduct. (www.ft.com, January 7, 2015)

However, Uber has an advantage that most delivery and shipping firms lack: it does not have to bear the cost of maintaining its own fleet of vehicles, **since** its drivers supply their own. (www.economist.com, June 13, 2015)

Տնտեսական իրադարձության պատճառները և հետևանքները ներկայացվում են համապատասխան գոյականների և բայերի միջոցով.

The profit warning, reported just one month after an upbeat third-quarter trading statement, raised questions about the company’s ability to guide the market as analysts pointed to the Black Friday sales as the main **cause** of the company’s woes. (www.ft.com, March 17, 2015)

A surge in house building was a significant **reason** for the revival but official data have weakened notably over the past three months, calling into question how long the brick making recovery will last. (www.ft.com, March 17, 2015)

Another **explanation** is that low yields are telling the story of how central bank action has become a dominant force across markets. (www.ft.com, March 19, 2015)

“The impact of quantitative easing on corporate pensions and annuities has not been properly appreciated and is one of the dangerous unintended **consequences** of this policy experiment,” said Ros Altmann, an independent pensions expert and investment adviser. (www.ft.com, January 7, 2015)

But the way the company interprets its guidelines **has caused** controversy in the past. In 2013 it was criticised for allowing images and videos of people being beheaded to appear on its network, before making a U–turn within days to ban such content. (www.ft.com, March 17, 2015)

The difference in approach is no mystery. Europe, with sky–high unemployment, is worried about deflationary expectations taking root. The US, close to full employment, can look past falling prices **induced by** cheap oil. (www.ft.com, March 19, 2015)

Profit warnings last year were **triggered** by falling sales across Philips’ healthcare and lighting units, partly caused by currency turmoil in emerging markets, including the rouble. (www.ft.com, January 28, 2015)

Պատճառական կապերը կարող են ներկայացվել because of, owing to և due to նախդիրներից հետո՝

Food producers usually respond to higher prices by looking for cheaper substitutes, but this is a less viable option for mainstream chocolate producers, mainly **because of** food labeling regulations in Europe and the US, but also for fear of negative responses from consumers. (www.ft.com, November 28, 2015)

Likewise, what would happen if connected city functions–traffic lights, for example, or energy supply – suddenly become less smart **owing to** a network out age or congestion? (www.ft.com, November 28, 2015)

The true health costs **owing to** fossil fuel pollution are difficult to quantify, mainly because the adverse health impact from chemical pollutants may not appear for many years. (www.ft.com, January 7, 2015)

Foxtons’ full–year dividend per share of 9.7p was nearly a third higher than Canaccord’s forecast, **due to** the payment of a special dividend. (www.ft.com, November 28, 2015)

Հաճախ տնտեսական իրադարձության հետևանքը ներկայացված է thus, therefore, accordingly, hence, consequently մակբայներից և so շաղկապից հետո, ինչպես հետևյալ օրինակներում՝

But if, for an interest rate to be low enough, it needs to drop below zero, sorting things out may well be beyond the powers of the central bank. **Thus** interest rates can be at

the same time both extremely low and too high. (www.economist.com, June 13, 2015)

Ireland excepted, no other rich country ran a deficit of more than 16% of GDP at any point in the crisis. In our wriggle-room ranking, **therefore**, we give countries a score of 100 if they run a budget surplus of 5% or more, and 0 for deficits of 15% or greater. (www.economist.com, June 13, 2015)

The combined accounting deficits for FTSE 350 companies with final salary pension schemes ballooned from £98bn to £107bn between November and December, a survey published yesterday by pension consultants Mercer found, compared with £56bn a year ago. **Consequently**, funding levels reduced from 86 per cent to 85 percent over the same period. (www.ft.com, January 7, 2015)

Sales of jewellery and watches are down 16% this year – **hence** the forecasts of lower rents on retail properties. (www.economist.com, June 13, 2015)

That honour went to Hubo, a smaller robot developed at the Korea Advanced Institute of Science and Technology (KAIST), which **accordingly** took away the \$2m first-place prize from DARPA, the Pentagon-run technology hothouse which came up with the DRC. (www.economist.com, June 13, 2015)

The reason this law holds is related to understanding – and to the lack of it. Most people don't have the first idea of how a nuclear power station works, **so** they don't wish to expose their ignorance by discussing it. (www.ft.com, January 7, 2015)

Այսպիսով՝ տնտեսական իրադարձության պատճառահետևանքային կապերը կարևոր են իրադարձության իրագործման համար: Պատճառը և հետևանքը կարող են նշվել անմիջապես վերնագրում, կարող են լինել բացասական կամ դրական բնույթի՝ իրենց ուրույն ազդեցությունը թողնելով ինչպես անհատի, այնպես էլ հանրության կենսամակարդակի և ընկերությունների ու կազմակերպությունների գործունեության վրա: Տնտեսական իրադարձության հետևանքը կարող է լինել և՛ իրական՝ իրականացած, և՛ ենթադրյալ: Լեզվական մակարդակում պատճառահետևանքային կապերը կարող են հանդես գալ մի շարք միջոցներով, այդ թվում համապատասխան բառերի՝ գոյականների, բայերի, մակբայների, ինչպես նաև շաղկապների օգնությամբ, որոնք տվյալ պարագայում կապող օղակ են գլխավոր և երկրորդական նախադասությունների միջև:

4.7. Արժևորումը՝ որպես տնտեսական իրադարձության ֆրեյմ-սցենարի պայմանական սլոթ

Լրագրողները, ՋԼՄ-ներում լուսաբանելով այս կամ այն իրադարձությունները, արդեն իսկ որոշակի գնահատողական վերաբերմունք են ցուցաբերում դրա նկատմամբ: Ամեն մի իրադարձության մասին տեղեկություն մեկնարկում է թեմայի անվանմամբ՝ վերնագրով, որը ցուցանշում է եղելությունը, ինչպես նաև դրա արդյունքը կամ հետևանքները և կրում է որոշակի հուզարտահայտչական նրբերանգ: Այնուհետև քննարկվում են մանրամասներ, նշվում են մասնակիցները, տեղը և ժամանակը, մեկնաբանվում են պատճառները, ընդհանուր առմամբ, ապահովելով հենքային գիտելիք տվյալ իրադարձության վերաբերյալ: Այսպիսով՝ ՋԼՄ-ները ուշագրավ են դարձնում իրադարձությունը՝ ի սկզբանե ընթերցողի համար ստեղծելով որոշակի հարթակ արժևորման, ինչպես նաև վերջինիս դիրքորոշումը որոշարկելու նպատակով:

Լեզվի իմաստային կարևորագույն կարգն՝ արժևորումը, սերտորեն կապված է իրադարձության հետ:

Արժևորումն անմիջականորեն փոխկապված է նորմայի՝ բարոյական, էթիկական, գեղագիտական չափանիշների հետ: Այն համամարդկային արժեհամակարգի և օբյեկտիվ կամ երևակայական իրականության անհատական ձգտումների փոխազդեցությունն է (Арутюнова, 1988): Հաղորդագրություն ուղարկողը արժևորման օգնությամբ իր արտահայտած միտքը հարաբերակցում է ոչ միայն նորմայի, այլև, ընդհանրապես, առարկայի գոյության կամ բացակայության հետ (Владимирская, Хантакова, 1998: 63–65):

Արժևորմանը նվիրված աշխատություններում դա սահմանվում է որպես յուրատեսակ եղանակավորող շրջանակ, որի հիմքում $A \text{ r } B$ բանաձևն է, որտեղ A -ն արժևորման սուբյեկտն է (արտակա կամ ներակա ներկայացված անհատը կամ հասարակությունը, որի տեսանկյունից էլ կատարվում է արժևորումը), B -ն՝ առարկան, իրադարձությունը, իրերի դրությունը, որոնց վերաբերում է արժևորումը, r -ն՝ գնահատողական վերաբերմունքը, որը «լավ/վատ» չափանիշն ունի: Այսպիսով՝ արժևորման հիմնական տարրերն են սուբյեկտը և օբյեկտը: Բացի դրանից, արժևորման եղանակավորող շրջանակի մեջ, որպես կանոն, ներառված են

արժևորման սանդղակը և կարծրատիպերը, որոնք ուղղորդում են արժևորելու խոսողների հասարակական պատկերացումները (Вольф, 1985: 11–12):

Արժևորման կարգի ուսումնասիրության տարբեր մոտեցումներից առավել հետաքրքրական է գործաբանականը, որը կապված է խոսակցի վրա ազդեցություն թողնելու գործոնի հետ: Այս դեպքում արժևորումն արտացոլում է իրադրության գործաբանական տեսանկյունը: Արտացոլելով անհատի ճաշակն ու հետաքրքրությունները՝ արժևորումը սերտորեն զոդված է խոսքային ակտի հաղորդակցական նպատակին: Ըստ Չ. Սթիվենսոնի՝ արժևորման ազդեցությունը սահմանափակվում է հասցեատիրոջ հոգեբանական վիճակով (Стивенсон, 1985): Ռ.Հեարն արժևորումը սահմանում է որպես մի երևույթ, որը համապատասխանում է ինչ–որ չափանիշի, կանոնի, նորմի, որը կիրառելի է ոչ միայն տվյալ, այլև ուրիշ դեպքերում (Хэар, 1985): Արժևորումն ազդում է այն իմաստով, որ, ինչ–որ բան գնահատելով, խոսակիցն ուղղակիորեն կամ անուղղակիորեն որոշակի կերպով ներկայացնում է այդ առարկան, երևույթը, իրադարձությունը:

Լեզվաբաններն արժևորումն ուսումնասիրում են տարբեր մակարդակներում՝ գոյաբանական (արժևորումը որոշարկում է աշխարհում կողմնորոշումը. գոյաբանական արժևորման լեզվամիավորներն են, օրինակ՝ չափ, քանակ, հնարավորություն, հավանականություն ցուցանշող բառերը), էպիսթեմիկ (գնահատվում է դատողությունների ճշգրտության, իրականությանը համապատասխանելու չափանիշը), ներկայացնող (արժևորվում է բառիմաստների և նրանց արտահայտած նշանակությունների համապատասխանությունը), հուզական (արժևորումը դասակարգում է նշյալները՝ ելնելով այն իրողությունից, թե արդյոք դրանք առաջացնում են հաճելի կամ տհաճ զգացումներ, հույզեր և ապրումներ) (Никитин, 2000: 8–19): Յուրաքանչյուր մակարդակ բավական ինքնատիպ է, բայց բոլորի համար ընդհանուրն այն է, որ արժևորումն ամրագրված գիտելիքի և ենթադրությունների հիման վրա ստեղծված կարծիք է՝ իրերի և իրադարձությունների որակական կամ քանակական հատկանիշների մասին (Никитин, 2003: 66): Ընդ որում, արժևորման համակարգը կայուն գիտելիք չէ, իսկ դա նշանակում է՝ կարող է տարբեր անհատների մոտ տարբեր լինել:

Արժևորումը որպես նշանակության արժեքային հայեցակետ, հատուկ է լեզվական տարբեր միջոցների: Նույնիսկ արտահայտության մեջ գնահատողական բառերի բացակայության պարագայում կարելի է խոսել արժևորման առկայության մասին (Мальшова, 1989): Գիտնականների կարծիքով՝ հասցեատիրոջ համար կարևոր է ոչ թե արժևորող լեզվամիավորների նշանակության ընկալումը, այլ դրանց մեկնաբանությունը, քանի որ միաժամանակ պետք է հաշվի առնվեն «գործնական բազմաթիվ իմպլիկացիաներ», ինչ-որ լրացուցիչ տեղեկություն, որը հիմնված է անհատի կենսափորձի վրա (Папина, 2002: 267): Որոշակի համատեքստում նույնիսկ բավական չեզոք բառերը կարող են արժևորման նշույթավորում ստանալ: Որևէ հաղորդագրություն ուղարկելիս հարկավոր է հաշվի առնել նաև լսարանի առանձնահատկությունները, քանի որ տարբեր հասցեատերերի համար լեզվամիավորի արժևորման նշանակությունը կարող է զգալիորեն տարբերվել, ինչը կարող է ազդել տեքստում շարադրված տեղեկության ընկալման և կարգայնացման վրա: Բառի ընկալումը կարող է պայմանավորված լինել հասցեատիրոջ՝ հասարակական որևէ խմբին պատկանելու հանգամանքով, նրա տարիքային, գենդերային և այլ բնութագրերով:

Արժևորման նախադրական կառուցվածքում առանձնանում են չորս հիմնական բաղադրիչ՝ 1) արժևորման սուբյեկտ, 2) արժևորման օբյեկտ, 3) բնույթ, 4) հիմք (Папина, 2002: 150): Իրական աշխարհում գոյություն ունեցող առարկաները գնահատվում են սուբյեկտի կողմից: Նրանց միջև հարաբերությունների բնույթը բացահայտվում է՝ առարկաներին արժեք վերագրելով կամ համեմատությամբ: Անհատի համար գնահատման հիմք են համոզմունքները, իդեալի, տիպօրինակի չափանիշները: Արժևորելով առարկան՝ նա մի կողմից հենվում է դրա նկատմամբ իր անհատական սուբյեկտիվ վերաբերմունքի, մյուս կողմից՝ ազգային կարծրատիպային պատկերացումների և արժեհամակարգի վրա:

Այսպիսով՝ արժևորումն ուղղակիորեն կապված է կարծրատիպերի հետ, որոնք ստանդարտ պատկերացումներ են, որոշակի մշակույթ կրող հասարակությանը բնորոշ «առօրեական ճշմարտություններ» (Донец, 2001): Կարծրատիպերը ընկալման գործընթացի և անհատների գիտակցության վրա ներգործության կարևոր օղակ են [5]:

Կարծրատիպի ներգործուն գործառույթը կարևոր նշանակություն ունի ԶԼՄ-ների համար, որոնք ձգտում են ազդեցություն գործել որքան հնարավոր է շատ մարդկանց կարծիքների և դիրքորոշումների վրա:

Լեզվի հարստությունն ու բազմազանությունը թույլ են տալիս միևնույն իրադարձությունն անվանել ինչպես չեզոք բառով, այնպես էլ լեզվամիավորով, որը վառ արտահայտված բացասական կամ դրական իմաստ ունի: Այդպիսի բառերի օգնությամբ արտահայտվող իրադարձության անվանումը, հատկապես՝ այն իրադարձության, որն առաջին անգամ է հիշատակվում, իր հետքն է թողնում կատարվող դեպքերի հետագա ընկալման վրա: Դրական կամ բացասական իմաստով բառերը հասցեատիրոջ վրա ներգործելու մեծ ուժ ունեն, քանի որ ազդում են անմիջապես նրա հուզաշխարհի վրա: Այն տեղեկությունը, որն իր մեջ ունի հուզականանություն, ավելի լավ է մտապահվում և ընկալվում է, հիմնականում, անքննադատաբար: Այս հանգամանքը շատ հաճախ լրագրողները հաշվի են առնում իրադարձություններ նկարագրելիս:

Փաստական նյութի վերլուծությունը ցույց է տալիս, որ տնտեսական իրադարձության արժևորումը հիմնականում ընթանում է արժևորման որոշակի սանդղակներով, որոնցից, ըստ էության, ամենանշանակալին կարևորության չափանիշն է: Այդ գործոնը չափազանց էական է իրադարձության համար, քանի որ, ինչպես նշել ենք առաջին գլխում, այն ցուցանում է ոչ թե պարզ, այլ հանրության կողմից նշված փոփոխություն, որը դիտարկվում է որպես կարևոր, անսովոր, որոշակի ժամանակահատվածի համար սահմանված նորմերի և չափորոշիչների խախտում համարվող երևույթ [6]:

Անշուշտ, իրադարձության նշանակալիության տարրը նաև տնտեսական իրադարձության անքակտելի մասն է, քանի որ վերջինս այս կամ այնպես իր դրոշմն է թողնում հանրության, մասնավորապես՝ դիտորդ-արժևորողի վրա, որն ընկալում է երևույթը, որակավորում այն որպես տնտեսական աշխարհը փոփոխող իրադարձություն և համեմում սեփական դատողություններով (լավ, վատ, ճիշտ, սխալ և այլն):

Կարևորության արժևորումն արտահայտվում է նախևառաջ համապատասխան ածականներով: Օրինակ.

In a sign of how **important** shoring up financial backing will be, the conservative political network headed by Charles and David Koch, the billionaire industrialists, has already said it expects to spend nearly \$900m to win the White House for a Republican in 2016. (www.ft.com, January 7, 2015)

Theresa May's plan to send home international students after they graduate has been quashed by chancellor George Osborne, amid warnings the move would cause **serious** damage to British universities and business. (www.ft.com, January 7, 2015)

And while the direct impact of a Fed increase may appear small, the indirect consequences – including on the Bank of England's thinking and the stock market – could be **significant**. (www.ft.com, September 9, 2015)

Getting rid of Japan's deflationary mindset is **crucial** to creating a self-sustaining cycle of consumption and further inflation. (www.ft.com, January 7, 2015)

The smartphone has become information technology's **key** product. It generates the most profits; it attracts the most capital and the brightest brains. (www.economist.com, February 28, 2015)

There is a **major**, unresolved debt problem. (www.ft.com, January 7, 2015)

Նշանակալի և կարևոր ընկերություններին անդրադարձ կատարելիս լրագրողը շատ անգամ կիրառում է գոյականներ, որոնց օգնությամբ ընթերցողն անմիջապես պատկերացում է կազմում դրանց կարգավիճակի մասին.

Igor Sechin, the boss of Russian oil **behemoth** Rosneft and one of the most powerful men in Russia, has declared European sanctions against his giant state-controlled organisation are an illegal affront to democracy. (www.independent.com, February 12, 2015)

Այս օրինակից տեղեկանում ենք, որ «Rosneft» ընկերությունն ամենախոշորն է Ռուսաստանում: Դրա մասին, առաջին հերթին, հուշում է «behemoth» գոյականի առկայությունը, որի սահմանումն է՝ «something enormous in size or power»:

«Google Shares Black Friday Location Data for Marketers» վերնագրով հոդվածում «Google» ընկերությունը նկարագրվում է որպես բացառիկ հզորությամբ օժտված հսկա՝ «giant» բառի միջոցով, որի սահմանումն է «a person or thing of extraordinary power, significance, or importance».

Search Giant is opening up data for marketers, shoppers to see how busy stores are. (www.adage.com, November 24, 2015)

Տնտեսական իրողությունների արժևորման մեկ այլ խումբ են կազմում օգտակարության, արդյունավետության աճականները, ինչպես հետևյալ օրինակներում.

“EasyJet expects that lower fuel costs will be **beneficial** for its customers as fares adjust,” she said. (www.ft.com, January 28, 2015)

Low interest rates created an incentive for banks...The also made it **profitable** for such outfits to borrow and use the extra cash to amplify their investments. (www.economist.com, September 7, 2013)

It would be a shame to regulate away a **useful** market for smaller companies by insisting that every offering has a credit rating because retail investors cannot be trusted with investing their own money. (www.ft.com, September 9, 2015)

But if rates appear stable, investors will take the risk of borrowing in the money markets to buy longer-dated, **higher-yielding** securities. (www.economist.com, September 7, 2013)

Union officials say the changes will see Bournville jump from being one of the least competitive of Mondelez’s European chocolate facilities to one of its most **productive**. (www.ft.com, January 31, 2015)

Qinetiq claims Q-Net – a Kevlar web suspended on frames attached to vehicles – is lighter and more **effective** than conventional armour. (www.ft.com, January 28, 2015)

Բազմիցս տնտեսական աշխարհում կատարվող իրադարձությունները և իրադրությունները վերլուծվում են ապահովության, կայունության կամ անկայունության տեսանկյունից, ինչպես հետևյալ օրինակներում.

Investors sought out these securitized products because they appeared to be relatively **safe** while providing higher returns in a world of low interest rates. (www.economist.com, September 7, 2013)

It will have a **robust** system for countries to review and strengthen their emissions controls at regular intervals, starting in 2020. (www.economist.com, November 28, 2015)

If short-term interest rates are low but **unstable**, investors will hesitate before leveraging their bets. (www.economist.com, September 7, 2013)

The ruble's one-month implied volatility jumped to almost 90 at the beginning of January before paring the increase to 38 on Monday. That's still almost double the level of the next most **volatile** emerging-market currency, the Brazilian real. (www.bloomberg.com, February 15, 2015)

Consumer spending formed the backbone of the **brittle** recovery in the runup to the crisis in Ukraine and the oil price freefall in 2014. (www.bloomberg.com, February 15, 2015)

These **risky** mortgages were passed onto financial engineers at the big banks, who turned them into supposedly low-risk securities by putting large number of them together in pools. (www.economist.com, September 7, 2015)

Տնտեսությունում առկա փոփոխությունները հաճախ նկարագրվում են իրենց չափերի տեսանկյունից.

Online purchases are a **greater** percentage of retail in China than anywhere else. (www.adage.com, November 25, 2015)

“We continue to expect a **small** deficit by the end of the current parliament,” it said in an update to financial markets. (www.theguardian.com, November 27, 2015)

Abandoning these subsidies would yield **enormous** benefits, to the public exchequer allowing it to refocus expenditure on more productive programmes, to the economy in reduced energy waste, and to human health, in reducing the deaths and costs associated with fossil fuel air pollution. (www.economist, November 28, 2015)

If your childhood happened between the mid-1970s and early 80s, you will probably recall a particularly miserable symbol of that era's **reduced** budgets and **shrinking** horizons: the broken-down, litter-strewn park. (www.theguardian.com, November 26, 2015)

This **huge** cut will happen, but it is part of a bigger plan. Since 2013, with some caveats, councils have kept half of the money they get from business rates, and carried on putting the rest into a centrally administered pot. (www.theguardian.com, November 26, 2015)

The **high** cost of R&D is used to explain why drugs giants merge, and why they must charge **high** prices. (www.economist.com, November 26, 2015)

Արժևորման մեկ այլ խումբ են այն բառույթները, որոնք ցուցանում են իրադարձային փոփոխությունների կարգը որևէ շարքում, օրինակ՝ առաջին, ամենացածր, բարձր և այլն.

Leading countries in Latin America and around the world are showing how ambitious climate action is the right choice for both their citizens and their economies. (www.economist.com, November 28, 2015)

Tighter labour markets are already in evidence, with further data released yesterday showing an additional 380,000 jobs were created last month, from the same period a year earlier, pushing unemployment to its **lowest level** since 1997. The job openings-to-applicants ratio rose to 1.15 times, up from 1.03 times a year ago. (www.ft.com, February 1, 2015)

Venezuela is the world's **fifth** biggest subsidizer of fossil fuel use, at nearly \$40 billion annually, or nearly a tenth of its economic output, according to the IEA. (www.economist.com, November 28, 2015)

The dollar index, a gauge of the currency's value against a basket of rivals, was up 0.2 per cent and heading for its **highest** close in nine years. (www.ft.com, January 28, 2015)

The **maximum** tax relief will drop from 45% and 40% to just 20%, so that an investor with a £150,000 buy-to-let mortgage on a property worth £200,000 is likely to see his or her net annual profit collapse from £2,160 a year to just £960. (www.theguardian.com, November 28, 2015)

Տնտեսական իրադարձություններն արժևորման նշութավորում են ստանում նաև իրատեսական, հավանական լինելու կամ չլինելու տեսակետից, ինչպես հետևյալ օրինակներում.

If developing countries sustain their growth, and the income of the bottom 40% of their populations increases two percentage points faster every year than the overall average, the global poverty rate would fall to 2.7% by 2030. Such outsized gains for the

lower tiers of society would, as they write, be “unprecedented, and most likely **unrealistic**”. (www.economist.com, February 28, 2015)

But rival ratings agency Moody’s said the move to a slower pace of deficit reduction helped make the government’s fiscal plans “more **realistic** and **deliverable**”. (www.theguardian.com, November 27, 2015)

How this will be phased in and what any redistributive element might look like is unclear, though it’s pretty **obvious** that a system of “top ups and tariffs” will be much less redistributive than the current system. (www.ft.com, January 31, 2015)

But there are also **real** economic benefits from climate action, as many Latin American nations are already finding, demonstrating how a greener economy can work in practice both for growth and communities. (www.economist.com, November 28, 2015)

Those who oppose new taxes argue that once a new tax is in place it is almost **impossible** to get rid of it. (www.ft.com, January 31, 2015)

Արժևորման նշույթավորման մեկ այլ տեսակ է փոփոխության գնահատումն ըստ վերջինիս խելամիտ լինելու հանգամանքի.

It is **reasonable** enough that online sales should be included in the underlying measure, but without changes in how companies present the figures, internet sales growth may soon obscure what is happening across the main business. (www.ft.com, January 7, 2015)

It is commercially **rational** to roll over, all the more so given how severely any failure to co-operate is punished. (www.economist.com, May 9, 2015)

Relying on the logic of the market makes perfect sense, but the **logical** approach is to first get rid of fossil fuel subsidies. (www.ft.com, January 31, 2015)

Հարաշարժության չափանիշով տնտեսական փոփոխություններն արժևորելու համար կիրառվում են այնպիսի լեզվամիավորներ, այդ թվում՝ ածականներ և բայեր, որոնք ցուցանում են տնտեսական աճ, անկում, փոփոխության դանդաղում կամ հակառակը, ինչպես հետևյալ օրինակներում.

Given China's **rapid** embrace of e-commerce, "marketers and agencies are having to adapt at warp speed to build capabilities and potential capabilities in this area," said Greg

Paull, Hong Kong-based principal of agency-management consultancy R3 Worldwide. (www.adage.com, November 25, 2015)

Prices were pushed up by the **rising** cost of electricity and resurgence in petrol prices. (www.bbc.com, November 17, 2015)

The obvious risks would seem to be a financial meltdown in China, a collapse of the eurozone, or a severe crisis in emerging economies as the dollar **strengthens**, US interest rates **rise** and capital **flees**. (www.ft.com, January 28, 2015)

The Number **Jumped** 60% From Last Year; It's a Good Sign for Consumer Spending. (www.adage.com, November 11, 2015)

“We all need to be careful about the economic situation in Greece. Our common goal is **to enhance** growth.” (www.ft.com, January 31, 2015)

...As such, he lobbied strenuously against a rule U.S. regulators were drafting that would require banks to disclose a lot more about asset-backed securities like those that had just **torpedoed** the economy. (www.reuters.com, April 9, 2015)

The UK economy **has slowed** after poor overseas trade figures put a record **drag** on growth, leaving household spending to drive the recovery and casting further doubt on George Osborne's hopes that strong tax receipts will help him hit ambitious budget targets. (www.theguardian.com, November 27, 2015)

BHP, which is listed in London and Australia, has seen its shares **fall** sharply in the wake of the disaster and as commodity prices **have weakened** in recent months. (www.theguardian.com, November 28, 2015)

After a rebound in the economy in 2010, growth **decelerated** every year since then. (www.bloomberg.com, February 15, 2015)

Unfortunately, however, that quick response nearly **exhausted** governments' economic arsenals. (www.economist.com, June 13, 2015)

Տնտեսական աշխարհի փոփոխությունները հանրությունն ընկալում և դասակարգում է նաև՝ ըստ անհատի/անհատների հուզական արժեհամակարգի՝ հաղորդելով տարբեր երանգավորումներ՝ վատ, հոռետեսական, անհանգստացնող, վտանգավոր, վախեցնող կամ հակառակը.

There was also **bad** news for the chancellor in the detail of the latest GDP figures which showed growth of 0.5% in the third quarter of the year, down from 0.7% in the second quarter. (www.theguardian.com, November 27, 2015)

Landlords **are in shock** after a second huge tax assault on buy to let by the chancellor which will force investors to pay thousands more in stamp duty on new properties – on top of the loss of tax reliefs unveiled in July. (www.theguardian.com, November 28, 2015)

A large proportion of the £27bn improvement in the public finances comes from a correction in the model that the OBR uses to predict the government's VAT take. It decided that it was being too **pessimistic** about how much would be raised through VAT. (www.bbc.com, November 25, 2015)

The chancellor's **hopeless** offers of assistance extend into the distance. (www.theguardian.com, November 26, 2015)

Before the spending review, councils in England and Wales were **anxiously** modeling cuts to their spending of between 25% and 40%, and **worrying** about increases in demand for the services they have to provide as a matter of law, which are forecast to add £10bn to their costs by 2020. (www.theguardian.com, November 26, 2015)

The market was very **happy** when the Federal Reserve at the end of last year emphasized it would be “patient” when it comes to raising interest rates. (www.ft.com, January 28, 2015)

Inflation that is a little too high is a lot less **dangerous** for an economy than premature rate rises are. (www.economist.com, June 13, 2015)

Combining the three measures yields a **worrying** picture. (www.economist.com, June 13, 2015)

Italy allegedly ran out of fiscal space during the crisis. Yet its borrowing costs, which rose to **alarming** levels in 2011, actually began falling in 2012, after investors became **convinced** that the European Central Bank would buy Italian debt if necessary. (www.economist.com, June 13, 2015)

Լեզվաբանական տեսանկյունից, հետաքրքրական է տնտեսական իրադարձության ամբողջական անվանումը համաիրադարձային լեզվամիավորներով,

քանի որ վերջիններիս իմաստային կառուցվածքում արդեն իսկ առկա են արժևորող նշույթներ, որոնց շնորհիվ էլ դրանք կիրառվում են, որակելով իրադարձությունը, տալով սեղմ, բայց միաժամանակ չափազանց բովանդակալից տեղեկություն: Օրինակ՝ ներքոհիշյալ նախադասության մեջ լրագրողը, կիրառելով «turmoil» գոյականը, որի սահմանումն է «a state of extreme confusion or agitation; commotion or tumult», ընթերցողին իրազեկում է համաշխարհային տնտեսությունում առկա քառասյին վիճակի մասին, հաղորդելով, որ այս իրադրությունը 2014 թ. առաջացած և իր դիրքերը չզիջող ճգնաժամի հետևանք է, որի պատճառով նավթի գինը մոտավորապես երկու անգամ անկում է գրանցել:

Mr Sechin spoke at length about the current **turmoil** of the global market, saying that the speed of the 2014 crisis exceeded anything before. Oil has crashed from \$115 a barrel in June to just \$57 today. (www.independent.com, February 12, 2015)

The **collapse** of Lehman Brothers, a sprawling global bank, in September 2008 almost brought down the world's financial system. (www.economist.com, September 7, 2015)

Հոդվածի առաջին իսկ նախադասությունից, «collapse» բառույթի շնորհիվ, որի սահմանումն է՝ «a sudden, complete failure, breakdown», իսկույն ընկալում ենք՝ վերոնշյալ զարգացող բանկը հանկարծակի տապալվել է, և, համապատասխանաբար, ստանում ենք տվյալ իրադրությանը հարիր բնութագրերի ամբողջական պատկերը:

Հաջորդ նախադասության մեջ «folly» բառով, որի սահմանումն է՝ «a foolish action, mistake, idea, etc.», որպես չարդարացված քայլ ենք ընկալում կենտրոնական բանկի և այլ կարգավորող կազմակերպությունների կողմից մեծաքանակ վարկերի տրամադրումը, որի հետևանքով էլ տեղի է ունեցել «Lehman Brothers»-ի տապալումը՝

Central bankers and other regulators also bear blame, for it was they who tolerated this **folly**. (www.economist.com, September 7, 2015)

Ուսումնասիրենք հաջորդ նախադասությունը: «Boom» լեզվամիավորի միջոցով, որի սահմանումն է՝ «a time of economic prosperity, a sudden increase, as in popularity», լրագրողը միտում ունի ընթերցողին փոխանցելու տեղեկություն Չինաստանի առցանց առևտրի կտրուկ աճի, ապա նաև հայտնի ընկերությունների համագործակցության մասին, որն արդյունք է վերոնշյալ տնտեսական վերելքի:

China's e-commerce **boom** also factored into a new partnership between Dentsu's Carat, Mondelez and internet giant Tencent to work together on data, research and content. (www.adage.com, November 25, 2015)

Այսպիսով՝ որոշ լեզվամիավորներ, որոնց իմաստային կառուցվածքին բնորոշ է արժևորման ինչ-ինչ երանգավորում, կիրառվում են տնտեսական աշխարհի մի շարք դրական կամ բացասական փոփոխություններ անվանելու համար: Այս առումով, վերջիններս կատարում են համաիրադարձային բառույթների գործառույթ՝ անվանելով իրադարձությունը բավական ընդհանրական ձևով: Միաժամանակ, այս բառերը որոշակի երանգավորում են հաղորդում տվյալ տնտեսական իրադարձությանը:

Տնտեսական իրադարձությունը անվանելով և հետևաբար՝ որակելով այն նշութավորված լեզվամիավորով, հոդվածագիրն արդեն իսկ արժևորում և դասակարգում է դա՛ ըստ տվյալ հասարակությանը հարիր արժեհամակարգի և կարծրատիպերի: Այսկերպ լրագրողը կանխավ սահմանում է տվյալ իրադարձության հետ կապված տեղեկույթի ընկալումը: Այս լեզվամիավորներից յուրաքանչյուրն առանցքային է արժևորում իրականացնելու գործընթացում, քանի որ ներունակորեն պարունակում է մի ամբողջական տեղեկություն, դատողություն և համոզման առանձնահատուկ ուժ՝ ուրույն ազդեցություն թողնելով ընթերցողի վրա:

Ե. Բեյլանսկայան նշում է, որ մեդիադիսկուրսի հաղորդագրությունները նպատակաուղղված կերպով են կառուցվում՝ ըստ որոշակի ճանաչողական կաղապարների: Համաձայն առաջին կաղապարի՝ ամփոփ տեղեկատվական հաղորդագրության մեջ ներմուծվում է հուզական-արժևորող բառապաշար: Նշվում է, որ նույնիսկ առանձին արժևորող բառերի կիրառումը չեզոք տեքստում թույլ է տալիս էականորեն փոխել ի սկզբանե չեզոք կերպով նկարագրվող իրադարձությունը՝ հաղորդելով դրան պահանջվող գնահատողական նրբերանգ: Լրագրողի կողմից իրադարձությունների մեկնաբանման երկրորդ կաղապարը ենթադրում է տեքստում փոխաբերությունների կիրառում: Մեկնաբանման երրորդ կաղապարը բնութագրվում է մեջբերումների օգտագործմամբ: Առանձին բառեր կամ արտահայտություններ, ամբողջացնելով մեջբերված հայտարարությունների իմաստը, համարվում են շատ հարմար հնար ողջ տեքստի արժևորումը ձևավորելու համար [7]: Մեդիադիսկուրսում իրադարձությունների մեկնաբանման չորրորդ կաղապարը նոր վարկանշային

ասանդակների ներմուծումն է, ինչը թույլ է տալիս արմատապես փոխել ընթերցողի վերաբերմունքը նկարագրվող դեպքերի նկատմամբ (Беляевская, 2015: 5-11):

Քննարկենք մեկ օրինակ՝ վերլուծելու համար վերոնշյալ հնարներն ու միջոցները, որոնց դիմում է հողվածագիրը հասցեատիրոջ վրա իրեն ցանկալի՝ արժևորման ներգործությունն ունենալու նպատակով: Հողվածը, որին ցանկանում ենք անդրադառնալ, վերաբերում է Մեծ Բրիտանիայի՝ Եվրամիության կազմից դուրս գալու հանրաքվեի հետևանքներին, մասնավորապես՝ երիտասարդների բողոքի ցույցին և, հետևապես, սերունդների տարանջատման խնդրին: Հրապարակման վերնագիրը հարցական նախադասություն է, որի միջոցով հեղինակը փորձում է ընթերցողի մեջ հետաքրքրություն արթնացնել արծարծվող հարցի նկատմամբ, միաժամանակ, «generation gap» բառակապակցությամբ իրազեկել սերունդների միջև առկա տարածայնությունների մասին:

Brexit: How much of a generation gap is there?

Ներածական մասից հասցեատերը տեղեկանում է, որ Միացյալ Թագավորության՝ Եվրամիության կազմում մնալու կողմնակիցները՝ երիտասարդները, մեղադրում են տարեցներին հանրաքվեի նման արդյունքի համար: Այստեղ եզրափակիչ հարցական նախադասությունը, լինելով տեղեկույթի ելակետ, կատարում է իր բնականոն գործառույթը. առաջադրվում է հարց՝ պարզելու համար, թե որքանով է տարիքային գործոնն անդրադարձել հանրաքվեի արդյունքի վրա:

Many young Remain supporters have been blaming older voters for Brexit. But was there really a generational divide?

Այնուհետև հասցեագրողը դիմում է բավական հմուտ հնարի՝ մեջբերելով որոշակի անձանց խոսքը:

Remain supporter Elizabeth Mayfield, 19, looked on in despair as the referendum results came in.

And she knew who she blamed - an older generation that she sees as having secure jobs and gold-plated generous pensions, people who had caused house prices to soar and plunged the country into debt.

"I'm annoyed that baby boomers have messed things up for us again," says Mayfield, a student at Staffordshire University.

"They've voted for something that's not going to really affect them. They're not going to have to deal with the consequences."

«Despair» (հուսահատ) բացասական հարանշանակությամբ լեզվամիավորի կիրառմամբ հրապարակման հեղինակը փորձում է հասցեատիրոջը փոխանցել մի երիտասարդ աղջկա հիասթափության զգացումն ավագ սերնդի նկատմամբ: Աղջկա կարծիքով՝ տարեցներն ապահովված են կայուն աշխատանքով, ստանում են բարձր կենսաթոշակ (gold-plated և generous բառերի օգնությամբ արտացոլվում է տարեց մարդկանց բավական բարեկեցիկ ապրելակերպը), սակայն նրանց դիրքորոշման հետևանքով բարձրացել են բնակարանների գները (to soar բայը շեշտադրում է զգալի աճի գործոնը), և երկիրը ներքաշվել է պարտքերի մեջ (plunged բայը նույնպես ունի բացասական արժևորում): Այնուհետև մեջբերվում է աղջկա խոսքն ուղղակիորեն. նա արտահայտում է իր զայրույթը՝ ավագ սերնդին կոչելով «baby boomers»: Ինչպես հայտնի է, նշյալ արտահայտությամբ որակվում է բնակչության այն խումբը, որ ծնվել է 1946-1964 թթ. Եվրոպայում և Հյուսիսային Ամերիկայում և համարվում է հասարակության արտոնյալ շերտ, քանի որ օգտվում է հետպատերազմյան տարիներին սահմանված՝ կառավարության նպաստներից և աջակցությունից գրեթե բոլոր ոլորտներում՝ բնակարանային հարց, կրթություն, բարձր եկամուտ: Աղջիկը վրդովված է, քանի որ տարեցներն ամեն ինչ տակն ու վրա են արել (have messed things up for us again), սակայն դրա հետևանքներն իրենք չէ, որ կրելու են:

Այնուհետև հոդվածագիրը մեջբերում է «Թվիթեր» սոցիալական կայքում տեղ գտած մի երկտող, ընդգծելով, որ նմանատիպ բովանդակությամբ նշումներ սոցիալական կայքերում վաղուց արդեն կրկներգի նման տարածված են (a common refrain): Հասցեագրողն այս հնարի գործադրմամբ նպատակ է հետապնդում դժգոհության ընդհանրական պատկերը փոխանցել հասցեատիրոջը, և, այս առումով, ներքոհիշյալ մեջբերումների ներառումը լրագրողի կողմից կրում է գաղափարախոսական բնույթ: Մասնավորապես՝ Բրեքզիտը կկործանի մի ողջ սերնդի ապագան, հեգնալից շնորհակալություն «baby boomers» սերնդին, որին հաջորդող փոխաբերական բառակապակցությունը՝ the last nail in my generation's coffin էլ ավելի է ուժգնացնում ներկայացվող դժգոհությունները.

It has been a common refrain on social media. Brexit would ruin "a whole generation's future despite them voting against", said one Tweeter. Another added: "Thank you baby boomers for the last nail in my generation's coffin."

Հոդվածագիրը մեջբերում է նաև «The Financial Times» սոցիալական կայքի՝ լայնորեն տարածված մի մեկնաբանություն, ըստ որի՝ ազատությունը կորզվել է (snatched away) մի սերնդից, որ առանց այն էլ արդեն խեղդվում է իր նախնիներից ժառանգած պարտքերի մեջ:

A screen grab of a comment on the Financial Times website was widely shared. Young people's freedom of movement, it said, had been (snatched away from "a generation that was already drowning in the debts of our predecessors").

Գաղափարախոսական գործառույթի իրականացումը շարունակելով՝ հասցեատերն անդրադառնում է նաև նախորդիվ անցկացված հարցումներին, ապա նշում, որ, համաձայն դրանց, տարիքային գործոնն իրոք մեծ ազդեցություն է ունեցել հանրաքվեի արդյունքի վրա, քանի որ տարեցների մեծ մասը հավանություն է տվել Եվրամիության կազմից դուրս գալու առաջարկին: Ասվածը հաստատվում է նաև մեջբերված գծանկարի օգնությամբ.

A survey by Lord Ashcroft of 12,369 referendum voters after they had cast their ballot suggested that the older they were, the more likely they were to have voted Leave (www.bbc.com June 24, 2016).

Լրագրողը չի շրջանցում անգամ 2011 թ. մարդահամարի վերաբերյալ տեղեկատվությունը, որտեղ պատկերը նույնն է: Պրոֆեսոր Ռոբ Ֆորդի կարծիքով՝ այն վայրերում, որտեղ մեծաթիվ են տարեց մարդիկ, քվեարկության արդյունքը Եվրամիության կազմից դուրս գալու օգտին է, մինչդեռ երիտասարդներով խիտ բնակեցված վայրերում պատկերը հակառակն է:

Ինչպես տեսնում ենք, դիտարկվող հոդվածում հասցեագրողը կիրառում է լրագրողական մի շարք հնարներ (նշութավորված բառապաշար, փոխաբերություններ), այդ թվում՝ մեջբերումներ, որոնք այս դեպքում իրականացնում են արժևորման, արտահայտչականության ու հիմնավորման գործառույթներ՝ ազդելով հասցեատիրոջ վրա, փոխելով նրա վերաբերմունքը տարեցների նկատմամբ և նրա համար ընկալելի դարձնելով դիրքորոշումը Բրեքզիտի արդյունքի վերաբերյալ:

Այսպիսով՝ տնտեսական իրադարձության ֆրեյմ-սցենարի արժևորման սլոթի ուսումնասիրությունը թույլ տվեց վեր հանել այն հիմնական հնարները, որոնք կիրառում են լրագրողները հասցեատիրոջ վրա իրեն ցանկալի՝ արժևորման ներգործություն ունենալու նպատակով: Տնտեսական իրողություններին առավել բնորոշ արժևորման սանդղակներն են կարևորության, օգտակարության/արդյունավետության, կայունության/անկայունության, չափի, կարգի, իրատեսության/հավանականության, խելամտության, հարաշարժության, հուզական երանգավորման չափանիշները:

4.8. Կանխատեսումը՝ որպես տնտեսական իրադարձության ֆրեյմ-սցենարի պայմանական սլոթ

Տնտեսական իրադարձություններ նկարագրող լրագրային հոդվածների գերիշխող մասը տեղեկություններ է տալիս իրադարձությունների հետագա զարգացումների վերաբերյալ՝ կրելով վերլուծական կամ խորհրդատվական բնույթ: Նման տեղեկությունները կարող են համարվել տնտեսական իրադարձության կանխատեսման տարրեր: Տնտեսական կանխատեսումը որակական և քանակական բնույթի գիտական հետազոտությունների համակարգ է, որն ուղղված է ուսումնասիրելու ամբողջական տնտեսության կամ նրա հատվածների զարգացման միտումները և գտնելու նշված նպատակներին հասնելու արդյունավետ միջոցներ [8]: Բացի այն հաստատություններից, որոնց գործունեության բուն նպատակը կանխատեսման գործընթացն է, անհատները, այդ թվում՝ տնտեսական իրադարձություններ լուսաբանող լրագրողները, շատ հաճախ, հոդվածներում ներառում են նաև իրենց մշակած վերլուծությունները, ենթադրությունները և հաշվարկները, որոնք միտված են բացահայտելու և նկարագրելու ստեղծված տնտեսական իրավիճակի արդյունքները: Դա ներկայացվում է որպես տվյալ տնտեսական իրադարձության ենթադրյալ հետևանքի/հետևանքների շարադրանք: Այս առումով, տնտեսական իրադարձության կանխատեսման ներկայացումը համընկնում է առաջին գլխում նշված՝ Վ. Դեմյանկովի առաջարկած իրադարձություն-գաղափարների հետ: Ըստ էության, լեզվաբանն առանձնացնում է իրադարձության հետևյալ տեսակները.

1. Իրադարձությունն ինքնին կամ նշյալ իրադարձությունը, որի նմանակն է որոշակի նշյալը: Նշյալ իրադարձությունը համարվում է իրադարձություն–գաղափարների նախատիպը:
2. Իրադարձություն–գաղափարներ, որոնց մասին խոսում են իբրև իրականում կատարվող կամ հորինված, որոնք, գոյություն ունենալով ժամանակի և տարածության մեջ, հատվում են, ամբողջովին կամ մասամբ համընկնում են, հակասում են, ինչպես օրինակ՝ պատերազմի, արհավիրքների պատճառների տարբերակներ մշակելիս:
3. Տեքստային իրադարձություններ, որոնք կարող են հանդես գալ կազմակերպված իրադարձությունների հարթ ընթացքի տեսքով կամ, հակառակը, լինել հակասական տարրերով լի՝ հարկադրելով ընտրել նշյալ իրադարձությունների և իրադարձություն–գաղափարների այս կամ այն վարկածային մեկնաբանություններ (Демьянков, 2004: 68–83):

Ըստ Վ. Դեմյանկովի՝ կարևորագույն տարբերությունն իրադարձություն–գաղափարի, տեքստային իրադարձության և նշյալ իրադարձության միջև այն է, որ վերջինս, ի տարբերություն նախորդների, օբյեկտիվ իրականության մեջ ունի իր նշյալը:

Այսպիսով՝ տնտեսական իրադարձության կանխատեսման տեքստը հանդես է գալիս որպես իրադարձություն–գաղափար, որը օբյեկտիվ իրականության մեջ չունի իր նշյալը, հորինված, ենթադրվող իրադարձային զարգացում է, վարկած, որը կարող է տեղի ունենալ կամ տեղի չունենալ իրական կյանքում՝ կախված տարբեր հանգամանքներից: Հարկ է նաև նշել, որ կանխատեսումը գործարար նորությունների մեկնաբանման անքակտելի մաս չէ. բազմաթիվ տնտեսական իրադարձություններ լուսաբանվում են առանց հետագա զարգացում նկարագրող ենթադրությունների:

Կանխատեսման տարրի արտահայտման համար ամենատարածված միջոցը հիմնականում ապառնի ժամանակաձևերի կիրարկումն է, օրինակ՝ Future Simple (անորոշ ապառնի, որը ցույց է տալիս ապառնի գործողություն՝ առանց սահմանափակումների): Այնուամենայնիվ, կանխատեսման իրական լինելը պարտադիր պայման չէ, քանի որ տվյալ ժամանակաձևի գործառույթներից մեկը ենթադրյալ ապագայի ցուցանշումն է՝ առանց ժամանակային սահմանափակումների:

Հետևյալ օրինակը կանխատեսում է, որ տվյալ գործողությունը կատարվելու է բավական ուշ ապագայում, քանի որ նշված չեն հստակ ժամանակային սահմաններ.

An economy at full employment and with a healthy level of inflation **will be** better positioned to withstand a bout of financial instability than one that is flirting with deflation. (www.economist.com, June 13, 2015)

Հաջորդ նախադասությունում «ավելի շուտ կամ ուշ» (sooner or later) արտահայտությունը չի կարելի համարել հստակ ժամանակահատված նշող տարր, որի պատճառով էլ տվյալ կանխատեսումն այնքան էլ իրականանալի չի թվում.

Sod's law decrees that, **sooner or later**, policymakers **will face** another downturn. (www.economist.com, June 13, 2015)

Մեկ այլ միջոց է Future Continuous (շարունակական ապառնի) ժամանակաձևը, որը ցույց է տալիս գործողություն, որն անպայմանորեն ընթացքի մեջ է լինելու ապառնի ժամանակի որոշակի պահի, հիմնականում՝ մոտ ապագայում.

Comcast, which recently dropped its bid to buy a rival cable company, Time Warner Cable, because of antitrust worries, has cash to spare and **will be wondering** where else to spend it. (www.economist.com, May 9, 2015)

The Swanscombe peninsula, a wasteland strewn with rubbish south-east of London, draws few tourists. But if all goes according to a plan announced on April 27th, by 2020 throngs of them **will be coming** to visit London Paramount, a film-and-television theme park costing \$3.8 billion. (www.economist.com, May 9, 2015)

The company **will be having discussions** with its existing stakeholders and new third-party investors regarding recapitalising. (www.ft.com, January 7, 2015)

Վերոնշյալ օրինակներում արտահայտվում են հստակ մտադրություն և համոզվածություն տվյալ գործողությունների կատարման առումով:

Կանխատեսման մեկ այլ արտահայտություն է «to be going to» կառույցի կիրառումը, որն արտահայտում է գործողության կատարման մեծ հավանականություն, անխուսափելիություն՝ հիմնված տրված փաստերի և կատարված իրադարձության հետևանքների վրա, ինչպես այս օրինակներում.

“No matter what I do, people **are going to** take my brand message and reinterpret it. I might as well work with somebody on my side and help craft what happens.” (www.ft.com,

January 7, 2015)

We live in a technology age. We live in an information age. But the one age that **is going to** make a profound difference is this age of consumerism. (www.economist.com, February 28, 2015)

Տնտեսական իրադարձությունների կանխատեսումը հաճախ ներկայացվում է պայմանական նախադասություններով (Conditional 1, Conditional 2), որտեղ առաջադրվում են ենթադրություններ, որոնք կիրականան որոշակի պայմանների կատարման դեպքում: Օրինակ.

If any of these worries causes a downturn the world **will be** in a rotten position to do much about it. (www.economist.com, June 13, 2015)

Even **if 2015 is better** than 2014, hardware **will remain** a hard business. (www.ft.com, January 7, 2015)

“Some of the share prices are starting to reflect almost a state of bankruptcy,” said Mr Haavaldsen. “**If rates stay** where they are now for another year most of these names [listed dry-bulk ship owners] **will have** issues,” he added. (www.ft.com, January 30, 2015)

Conditional 2 պայմանական նախադասություններն արտահայտում են անհավանական կամ քիչ հավանական ենթադրություններ: Դրանք նույնպես վերաբերում են ներկա կամ ապառնի ժամանակին: Հետևյալ օրինակներում ցուցանվում են ապագային վերաբերող գործողություններ, որոնց իրականացման հավանականությունը կախված է որոշակի հանգամանքներից և պայմաններից.

€60bn of bond purchases a month represents about €2,050 a year for each of the 350m citizens of the eurozone. **If that was distributed** directly to those citizens, it **would create** the sort of inflation everyone seems to be looking for. (www.ft.com, January 28, 2015)

The expense **would** be worth it **if patents brought** innovation and prosperity. (www.economist.com, June 13, 2015)

Գործարար նորությունների կանխատեսման համար լայն տարածում են գտել նաև եղանակավորող բայերը (modal verbs), որոնք ցույց են տալիս գործողություն կատարողի վերաբերմունքը տվյալ գործողության նկատմամբ՝ սահմանված խոսողի կողմից: Դրանք ցուցանում են գործողության կատարման հնարավորություն,

ունակություն, հավանականություն, անհրաժեշտություն՝ արտահայտված իմաստային բայով [9]: Ըստ Շ. Բալիի՝ յուրաքանչյուր ասույթում կարելի է առանձնացնել հիմնական (диктум) և մոդալ մասեր (модус), որտեղ արտահայտվում է խոսողի ինտելեկտուալ, հուզական կամ կամային վերաբերմունքը հիմնական մասի նկատմամբ: Մոդալ մասը լինում է ներակա և արտակա: Եղանակայնությունը շարահյուսական կարգ է, որտեղ կարևոր դեր են կատարում մոդալ բայերը (Балли, 2001: 69–82):

Վերլուծենք որոշ եղանակավորող բայեր, որոնք կիրառվում են տնտեսական իրադարձության կանխատեսման համար:

Այսպես՝ «may», «might» եղանակավորող բայերն արատահայտում են ենթադրություն, անորոշություն, տվյալ գործողության կատարման հավանականության ցածր աստիճան.

The decision by Japan Airlines, Air Asia, Qantas and Virgin Australia among others **may** encourage European and US peers to follow suit. (www.ft.com, January 7, 2015)

The price of a simple wireless sensor will soon be as low as £1, a price point at which this could become a mass-market proposition. But other parts of the kit, including communications and battery modules, **might** come in at £20 to £40, which, Mr Pilu says, is too high. (www.ft.com, January 7, 2015)

Ինչպես երևում է, ի տարբերություն «may»-ի, «might» եղանակավորող բայն էլ ավելի է ուժգնացնում անորոշության տարրը կանխատեսման մեջ՝ ցուցանշելով գնային բավականաչափ տատանում՝ £20-ից մինչև £40: Այսպիսով՝ տվյալ բայը փոխարինում է «may» բային, երբ ավելի մեծ կասկածի տակ է դրվում ապագա հեռանկարների իրականացումը: Օրինակ.

The economic critique of the euro zone is well-known. It is foolish to create a single currency without political or fiscal union. But would Greeks really like the kind of European superstate that could easily make big fiscal transfers? They **might** find themselves just as powerless as they now feel in their negotiations with creditors. (www.economist.com, June 13, 2015)

Հաջորդ՝ «could» եղանակավորող բայը ցույց է տալիս հանգամանքներից բխող հնարավորություն և անորոշ դերբայի հարադրությամբ կարող է վերաբերել ներկային, եթե գործողության կատարումը կախված է որոշ ոչ իրական պայմաններից.

Brazil's parlous finances leave no room for debt-financed stimulus. At 66% of GDP its gross public debt is the highest of the BRIC countries. Its bonds yield 13% – more than Russia's. Rates **could rise** further. (www.economist.com, February, 2015)

This is a fearful world in which geopolitical risk, competitive devaluations and protectionist pressure **could bring** a descent into intractable deflation and long depressed yields in the absence of robust policy. (www.ft.com, January 7, 2015)

«Should» եղանակավորող բայի գործառույթներից մեկը հավանական ենթադրության ցուցանշումն է: Այս բայի օգնությամբ գործարար նորության հոդվածի հեղինակը, կարծես թե, ընթերցողի ուշադրությունը կենտրոնացնում է տվյալ իրադարձության իրագործմանն անհրաժեշտ իր ենթադրյալ խորհրդի վրա: Օրինակ՝ հետևյալ նախադասությունում «should»-ը իրեն հաջորդող իմաստային բայով առաջարկում է ենթադրություն՝ շվեյցարական ֆրանկի արժեզրկման գործընթացը կկանխվի շուկայում նշանակալի գնային հարմարեցումների արդյունքում.

We expect significant price adjustment in the real market over the months ahead, which in turn **should cool off** buying pressure in the franc. (www.ft.com, January 7, 2015)

The European Commission said that “positive economic tailwinds” such as cheaper oil and the European Central Bank's quantitative-easing programme mean that GDP **should increase** in the euro zone by 1.5% this year, slightly higher than had been previously forecast. (www.economist.com, May 9, 2015)

Վերոնշյալ նախադասությունում should բայը կրկին տրամաբանական հավանականություն է արտահայտում ՀՆԱ աճի վերաբերյալ:

«Should» եղանակավորող բային հարիր է «ought to» բայը, որը նույնպես արտահայտում է ենթադրություն.

If fossil fuels are still overused after removing subsidies to allow the logic of the market to prevail, then one **ought to discuss** a carbon tax. (www.ft.com, January 7, 2015)

Եղանակավորող «to be to» բայն արտահայտում է նախատեսված կամ փոխադարձ համաձայնությունից բխող անհրաժեշտություն և հնարավորություն: Օրինակ՝

Vitol, one of the world's leading commodities traders, **is to** develop a \$7bn offshore oil and gas project in Ghana with Eni, the Italian energy group. (www.ft.com, January 7,

2015)

Գործարար նորություններում ենթադրությունների մեծ հավանականությունը հաճախ ներկայացվում է «to be likely/unlikely to», «to be bound to», «to be about to» բառակապակցություններով և մի շարք եղանակավորող բառերով: Օրինակ.

Rich-world growth should exceed 2% for the first time since 2010 and America's central bank **is likely** to raise its rock-bottom interest rates. (www.economist.com, June 13, 2015)

The dangerous approach is to push Greece towards default. This **is likely** to create a situation in which the European Central Bank would no longer feel able to operate as Greece's central bank. That then would force an exit. The result for Greece would certainly be catastrophe in the short term. (www.ft.com, January, 2015)

Hawkish voices at the Fed argue that, with unemployment below 6% and hiring continuing at a torrid pace, it is plainly time to start raising interest rates. In this view, wages and prices **are bound** to pick up in future. (www.economist.com, June 13, 2015)

This disparity is greatest for the well-off. Those with a private income of £40,000 receive about £4,000 from the state, whereas workers on a similar income pay in over £10,000. That is worrisome, as the number of rich pensioners **is about** to get larger. (www.economist.com, February 28, 2015)

The Bank of England will **probably** have to take further action if the UK is to avoid a damaging slowdown following the Brexit vote, according to one of its deputy governors (www.theguardian.com, September 28, 2016).

Broadbent told Guardian Australia on Monday Turnbull could not **possibly** make that claim, given the consequences of the current policy (www.theguardian.com, September 19, 2016).

Dec 18 Volkswagen AG Chief Executive Martin Winterkorn said Europe's largest carmaker would **definitely** be able to improve its results by 5 billion euros by 2017 as planned (www.reuters.com, December 18, 2014)

Վերոնշյալ նախադասություններում տվյալ բառակապակցություններն արտացոլում են այն իրադարձությունները, որոնք, հավանական է, տեղի կունենան

ապագայում, և հողվածագիրը, օգտագործելով դրանք նորությունների տեքստում, շեշտում է դրանց իրագործման հնարավորությունը:


Այսպիսով՝ կանխատեսման տարրի առկայությունը գործարար նորություններում պայմանական բնույթ է կրում և միշտ չէ, որ տնտեսական իրադարձությունը մեկնաբանվում է կանխատեսմամբ: Կանխատեսման տարբեր վարկածներ և ենթադրություններ համապատասխանում են «իրադարձություն–գաղափար» հասկացությանը, որը չունի նշյալ/նշյալներ օբյեկտիվ իրականության մեջ: Վերջինս մարդու կողմից հորինված՝ իրականանալի կամ ոչ իրականանալի ենթադրություն է, որ կարող է տեղի ունենալ կամ տեղի չունենալ իրական կյանքում՝ կախված տարբեր հանգամանքներից: Հողվածագիրը ներկայացնում է տնտեսական իրադարձությունը՝ համեմելով այն իր մշակած զարգացումներով: Կանխատեսումը կարող է ունենալ լեզվական տարբեր դրսևորումներ՝ արտահայտվելով հիմնականում ապառնի ժամանակաձևերով, պայմանական նախադասություններով, եղանակավորող բայերով, եղանակավորող լեզվամիավորներով և բառային որոշակի կառույցներով:

4.9. Տնտեսական իրադարձության ֆրեյմ-սցենարի առկայացումը տնտեսական մեդիադիսկուրսում

Նախորդիվ, քննության առնելով տնտեսական իրադարձության ճանաչողական մոդելավորման արդյունքում վերհանված ֆրեյմ-սցենարի միջուկային և պայմանական սլոթները, կատարեցինք դրանց լեզվականացման, մտապատկերման և վերձանման առանձնահատկությունների ուսումնասիրություն: Միջուկային սլոթների շնորհիվ հնարավոր է սցենարի ճանաչում իրադրության մեկնաբանության գործընթացում, իսկ պայմանական մասն այլընտրանքային տեղեկույթի կրողն է: Շրջակա աշխարհի հետ մարդու փոխազդեցության ժամանակ կատարվում է ֆրեյմ-սցենարի հարմարակցում՝ ըստ որոշակի իրադրության, կախված անհատի՝ օբյեկտիվ իրականության մասին գիտելիքից: Միջուկային՝ իրադարձությանն կատարմանն անհրաժեշտ սլոթներն են սուբյեկտը (գործողություն կատարողը), փոփոխությունը, վայրը, ժամանակը: Որպես պայմանական սլոթներ (այսինքն՝ տեղեկույթ, որի բացակայությունը չի խափանում

տվյալ իրադարձության հիմնական ընկալումը՝ կարող են լինել տնտեսական իրադարձության օբյեկտը, պատճառը, հետևանքը, արժևորումը, կանխատեսումը և այլն: Այդուհանդերձ, իրադարձության ամբողջականության ապահովման համար հաճախ անհրաժեշտ են ոչ միայն միջուկային, այլև որոշ պայմանական սլոթներ, որոնք այս կամ այն դեպքում ակտիվանում և առաջին պլան են մղվում՝ համապարփակ դարձնելով տվյալ իրադարձության ընկալումը: Այս փուլին հաջորդում է անհատի կողմից իրողության վերածումը փաստի: Տնտեսական իրադարձության ֆրեյմ-սցենարը կարելի է ներկայացնել հետևյալ գծապատկերով՝

Գծապատկեր 9.



Վերլուծենք www.theguardian.com կայքում տեղ գտած մի հոդված՝ պարզաբանելու համար, թե ինչպես են իրենց դրսևորում և միմյանց հետ համագործակցում նախորդիվ վերլուծված սլոթները՝ ստեղծելով տնտեսական իրադարձության ֆրեյմ-սցենարի ամբողջական պատկեր: Քանի որ այս տնտեսական իրադարձությունը լուսաբանող հոդվածը ծավալուն է, այն ներկայացվում է մակրոսցենարով, որը պարունակում է 6 միկրոսցենար: Դրանցից առաջինն առանցքային է տվյալ իրադարձության ընկալման համար, մինչդեռ մնացյալը լրացնում են իրադարձությունը՝ դրան առնչվող տարբեր տեսակի տեղեկատվությամբ: Հոդվածի վերնագիրն է «EU and US impose sweeping economic sanctions on Russia» (Եվրամիությունն ու ԱՄՆ-ն կիրառում են լայնածավալ պատժամիջոցներ Ռուսաստանի նկատմամբ), որտեղ արդեն իսկ նշված են սուբյեկտի սլոթը՝ բաղկացած երկու ենթասլոթից (EU, USA), փոփոխության սլոթն (impose) իր գործիքի ենթասլոթով (sweeping economic sanctions) և օբյեկտի պայմանական սլոթը (Russia), որն այս պարագայում կարևորվում և առաջ է մղվում իրադարձության պատճառները հասցեատիրոջն ընկալելի դարձնելու համար: Սուբյեկտի սլոթում, նշելով Եվրամիության և ԱՄՆ-ի անվանումները և շրջանցելով կիրառվող պատժամիջոցների հեղինակներին, լրագրողական ռազմավարական հնարով ընդհանրացվում է տվյալ տնտեսական գործողության պատասխանատու անձանց ինքնությունը և շեշտադրվում իրադարձության լրջությունը (թեև հոդվածի հաջորդ մասում արդեն առկա են որոշակի անձանց անուններ՝ Barack Obama, Herman van Rompuy, José Manuel Barroso): Փոփոխության սլոթի ժամանակաձևը ցույց է տալիս, որ իրադարձությունը կանխամտածված ու ծրագրավորված է և սույն բովանդակային լրակազմում բնութագրվում է որպես բացասական: Իրադարձության ժամանակային սլոթը նշվում է առցանց կայքում՝ «29.07.2014», այսինքն՝ հոդվածի լրակազմում դա ներակա կերպով է արտահայտված: Տարածական տեղորոշման սլոթը նույնպես ներակայորեն է արտահայտված, և ընթերցողը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն որոշումը կայացրել է Եվրամիությունը, գլխի է ընկնում, որ դա տեղի է ունեցել Բրյուսելում: Հոդվածի ներածական մասում նկարագրվում է 2 սլոթ՝ նպատակի (կասեցնել Ռուսաստանի կողմից Ուկրաինայի ապստամբներին զենքի տրամադրման գործընթացը) և կանխատեսման: Վերջինս ներառում է երկու նախադասություն:

Առաջինում «to be to» բայով արտահայտվում է նախատեսված, ծրագրավորված գործողություն, ըստ որի՝ եվրոպական կապիտալի շուկաները կփակվեն ռուսաստանյան բանկերի համար, իսկ երկրորդում, որը պայմանական նախադասություն է, առաջադրվում են ենթադրություններ, մասնավորապես՝ Մեծ Բրիտանիան կկիրարկի ավելի խիստ պատժամիջոցներ իրավիճակի անփոփոխ մնալու դեպքում.

European capital markets to be closed to Russian banks

Sanctions intended to stop supply of arms to Ukraine rebels

Downing St to push for harsher sanctions if no change

Հոդվածի սկզբում ներկայացվում է նաև պատճառի սլոթ. պատժամիջոցները կիրառվել են՝ ի պատասխան Մոսկվայի կողմից Արևելյան Ուկրաինայի անջատողականներին ցուցաբերվող շարունակական աջակցության: Մանրամասն տեղեկատվություն է հաղորդվում նաև օբյեկտի սլոթի վերաբերյալ, նշելով այն ոլորտները, որոնք կտուժեն պատժամիջոցներից:

EU governments have agreed to impose sweeping sanctions on Russia, targeting state-owned banks, imposing an arms embargo and restricting sales of sensitive technology and the export of equipment for the country's oil industry, in response to Moscow's continued backing for separatists in eastern Ukraine.

Հաջորդ պարբերությունում ի հայտ է գալիս նաև արժևորման սլոթը. հոդվածագիրը կիրառում է «լայնածավալ» ածականի գերադրական աստիճանը (the most extensive) և մատնանշում, որ պատժամիջոցները ամենաարմատականն են սառը պատերազմին հաջորդող ժամանակաշրջանում, ապա նշում՝ այս որոշմանը համաձայնել են 28 անդամ երկրների դեսպաններ՝ յոթամյա քննարկումից հետո՝ այսկերպ փորձելով ընդգծել իրավիճակի լրջությունը: Նույնքան մանրամասնորեն է ներկայացված նաև պատճառի սլոթը. Մոսկվան չի կատարել արտաքին գործերի նախարարների առաջ քաշած պայմանները՝ դադարեցնել ապստամբներին զենքի տրամադրման գործընթացը և համագործակցել մալայզիական ավիաուղիների MH17 թռիչքն իրականացնող ինքնաթիռի խոցման հետաքննությանը.

The punitive measures, the most extensive EU sanctions imposed on Russia since the cold war, were agreed by ambassadors from the 28 member states after a seven-hour

debate. They decided that Moscow had not fulfilled the conditions laid down by foreign ministers last week, to stop the supply of arms to the rebels and provide full cooperation in the investigation into the shooting down of Malaysia Airlines flight MH17.

Հողվածի երկրորդ միկրոսցենարում որպես սուբյեկտի սլոթ է հանդես գալիս ԱՄՆ նախագահը, ով միացել է Եվրամիությանը և հայտարարել նոր պատժամիջոցների կիրառման մասին (փոփոխության սլոթ), որոնք կանդրադառնան Ռուսաստանի տնտեսության կարևոր ոլորտների՝ մասնավորապես՝ բանկային համակարգի վրա: Արժևորման սլոթը ԱՄՆ-ի նախագահի մեջբերված խոսքն է (Ռուսաստանը մեկուսանում է միջազգային համայնքից՝ անտեսելով տասնամյակների իրական առաջընթացը), որը խթանում է հասցեատիրոջ արժևորող գործունեությունը՝ նրա մեջ ձևավորելով բացասական վերաբերմունք Ռուսաստանի նկատմամբ.

US president Barack Obama joined the EU in sharply escalating economic pressure on Moscow. He announced new measures, targeting major sectors of the Russian economy, including weapons, energy and finance. Three large banks – VTB Bank OAO, Bank of Moscow and the Russian Agricultural Bank – were cut off from the US economy.

"Today, Russia is once again isolating itself from the international community, setting back decades of genuine progress," the president said.

Արժևորման սլոթը լրացվում է Եվրախորհրդի և Եվրոպական հանձնաժողովի նախագահների ուղղակի խոսքով. 21-րդ դարում Եվրոպան անընդունելի է համարում տարածքի անօրինական բռնակցումը (խոսքը Ղրիմի մասին է) և հարևան երկրների նպատակաուղղված ապակայունացումը: Ինքնաթիռի խոցման հետ կապված՝ նախագահների խոսքում կիրառվում է շարահյուսական կառույցների կրկնման հնարը՝ էլ ավելի ընդգծելով վրդովմունքի բարձր աստիճանը (Եվրամիությունը կկատարի իր քաղաքացիների անվտանգության ապահովման պարտականությունները: Եվրամիությունը կսատարի իր հարևաններին ու գործընկերներին).

The president of the European Council, Herman van Rompuy, and the head of the European Commission, José Manuel Barroso, issued a joint statement describing the EU measures as a strong warning that "Illegal annexation of territory and deliberate destabilisation of a neighbouring sovereign country could not be accepted in 21st-century Europe.

"When the violence created spirals out of control and leads to the killing of almost 300 innocent civilians in their flight from the Netherlands to Malaysia, the situation requires urgent and determined response," they said. "The European Union will fulfill its obligations to protect and ensure the security of its citizens. And the European Union will stand by its neighbours and partners."


Կանխատեսման սլոթը լրացվում է տեղեկատվությամբ (Եվրամիության պատժամիջոցներն ամենադաժան կերպով կհարվածեն Ռուսաստանին, քանի որ վերջինս ավելի լայն առևտրային կապեր ունի Եվրոպայի հետ քան ԱՄՆ-ն).

The EU sanctions will hit Russia the hardest. The bloc does 10 times more trade with it than the US (www.theguardian.com, July 29, 2014).

Այսպիսով՝ տնտեսական իրադարձություն լուսաբանող այս հրապարակման մեջ առկա են ինչպես միջուկային, այնպես էլ պայմանական՝ օբյեկտի, պատճառի, նպատակի, արժևորման և կանխատեսման սլոթներ: Ընդ որում, օբյեկտի, պատճառի և նպատակի սլոթներն առաջմղվելով ակտիվանում են և իրադարձության ընկալումը համապարփակ դարձնում: Տվյալ տնտեսական իրադարձության ֆրեյմ-սցենարը կարելի է ներկայացնել հետևյալ գծապատկերով.

Գծապատկեր 10. (Տե՛ս էջ 202)

Միջուկային սլոթներ



Օբյեկտի սլոթ
 1. Russia
 2. state-owned banks, an arms embargo, sensitive technology and the export of equipment for the country's oil industry
 3. major sectors of the Russian economy, including weapons, energy and finance.

Պատճառի սլոթ
 1. in response to Moscow's continued backing for separatists in eastern Ukraine.
 2. Moscow had not fulfilled the conditions laid down by foreign ministers last week, to stop the supply of arms to the rebels and

Նպատակի սլոթ
 Sanctions intended to stop supply of arms to Ukraine rebels.

Ակտիվացված պայմանական սլոթներ

Կանխատեսման սլոթ
 1. European capital markets to be closed to Russian banks
 2. Downing St to push for harsher sanctions if no change
 3. The EU sanctions will hit Russia the hardest.

Արժևորման սլոթ
 1. the most extensive EU sanctions imposed on Russia since the cold war
 2. "Today, Russia is once again isolating itself from the international community, setting back decades of genuine progress," the president said.
 3. "Illegal annexation of territory and deliberate destabilisation of a neighbouring sovereign country could not be accepted in 21st-century Europe.
 "When the violence created spirals out of control and leads to the killing of almost 300 innocent civilians in their flight from the Netherlands to Malaysia, the situation requires urgent and determined response," they said. "The European Union will

Պայմանական սլոթներ

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Իրադարձությունների և ժամանակի միջև կապը բավական հանգամանալից կերպով ուսումնասիրվում է Ա.Քվինթոնի աշխատության մեջ (Quinton, 1979):
2. Ժամանակի կարգը ցուցանող լեզվամիավորների անվանական հնարավորությունների առավել մանրամասն ուսումնասիրություն է ներկայացված Ս. Չալաբյանի աշխատության մեջ (Чалабян, 1991):
3. Պետք է նշել, որ «today» բառային միավորը միշտ չէ, որ նշանակում է իրական ժամանակի այսօրը, այլ համարեքստում այն կարող է իրականացնել իր երկրորդ իմաստը՝ այժմ, մեր օրերում նշանակությամբ: Օրինակ.
*In the 1950s, the fattest profits were stamped out by manufacturers and heavy industry; the scene **today** is more raucous, with technology, healthcare, finance and telecoms among the biggest earners. (www.ft.com, January 30, 2015)*
***Today**, long after the fabled police of political correctness patrolled academic and public life in the late 1980s and 1990s, liberals are – according to Mr Chait – afraid of speaking up for fear of bullies denouncing them as bigots. (www.ft.com, January 30, 2015)*
4. Հարկ է նշել, որ Ս. Ռեզնիկովան, ուսումնասիրելով քաղաքական իրադարձությունների լուսաբանումը ՋԼՄ-ներում (մասնավորապես՝ ահաբեկչական գործողություններ լուսաբանող հոդվածներ), իրադարձության ֆրեյմ-սցենարի կառուցվածքում առանձնացնում է հետևյալ միջուկային սլոթները՝ օբյեկտ, վայր, արդյունք, գործողություն կատարող՝ մնացյալը համարելով պայմանական սլոթներ: Այսպիսի փոխդասավորվածությունը, մեր կարծիքով, անմիջականորեն կապված է ուսումնասիրվող իրադարձությունների բնույթի հետ, քանի որ ահաբեկչական գործողությունները պլանավորված են, կատարվում են կանխամտածված կերպով և միտված են որոշակի անհատների, կազմակերպությունների, կառույցների գործունեության խաթարմանը: Այդ իսկ պատճառով լեզվաբանը կարևորում է օբյեկտի, վայրի և արդյունքի սլոթները այսօրինակ իրադարձությունների մեկնաբանման և ընկալման գործընթացում (Резникова, 2006: 12):

5. Կարծրատիպերը, որպես որոշակի դատողություններ, բովանդակային առումով միօրինակ պատկերացումներ են որոշակի իրադարձությունների, փաստերի, երևույթների, ինչպես նաև միօրինակ կարծիք՝ հասարակական խմբերի կամ դրանց ներկայացուցիչների՝ առանձին անձանց մասին (Рыжков, 1981):
6. Նշյալ դրույթը հաստատել են նաև մի շարք գիտնականներ (Martin 1969: 71, Dretske, 1967: 481–482, Quinton, 1979):
7. Մեջբերումը, որպես հասցեատիրոջ մեջ զգացմունքայնություն առաջացնող դիմելաձև, հաղորդակցական ներգործության բավական ընդունված հնարներից է՝ տեքստում «ուրիշի խոսքի» նպատակաուղղված, շահամիտված հեղինակային ներմուծում: Հեղինակը, լրագրային տեքստ ներմուծելով որևէ մեջբերում, իրականացնում է բազմաթիվ մտադրություններ, որոնց գլխավոր նպատակն է հասցեատիրոջ վրա ազդեցություն գործել: Ի. Ալեշանովան առանձնացնում է մեջբերումների հետևյալ գործառույթները՝
 1. Արժևորման նպատակ. մեջբերումը որակավորում է տեքստին առնչվող որոշակի իրադարձություն (երևույթ, միջոցառում, փաստ, առարկա)՝ խթանելով հասցեատիրոջ արժևորող գործունեությունը:
 2. Արտահայտչականության նպատակ. սա ազդեցությունն է հասցեատիրոջ վրա՝ հիմնված ուրիշի խոսքում առկա արտահայտչականության վրա:
 3. Նկարագրման նպատակ. մեջբերումն հիմնավորում է հաղորդագրության մեջ առկա տեղեկատվությունն այլ աղբյուրներից քաղված փաստական տվյալներով:
 4. Փաստարկման նպատակ. փաստարկման կառուցվածքում «ուրիշի խոսքը» միտված է հեղինակային դատողությունների և եզրահանգումների ընդունելիության հաստատմանը:
 5. Համոզման նպատակ. մեջբերման աղբյուրի մատնանշումը նպաստում է տեղեկատվության հուսալիության և արժանահավատության աստիճանի բարձրացմանը:
 6. Ընկալունակության նպատակ. հոգեբանական գիտելիքների վրա հիմնվելով՝ դյուրացվում է հաղորդագրության ընկալումը (Алещанова, 2001):

8. Կանխատեսումը կիրառվում է խոշոր տնտեսական որոշումների նախնական (նախապլանային) փուլում և օժանդակում է տնտեսական զարգացման հեռանկարային ռազմավարության մշակմանը: Դա անհատների և ինստիտուտների գործունեության հետևանք հանդիսացող օգուտների և ծախսերի հաշվառման հիման վրա իրատես կամ նպատակաուղղված վճիռներ ընդունելու ունակությունն է (Տնտեսագիտական բացատրական բառարան, 1999: 405):
9. Եղանակայնությունը (модальность), ըստ էության, «հասկացական կարգ է, որն արտահայտում է խոսողի վերաբերմունքն ասույթի բովանդակության նկատմամբ և ասույթի բովանդակության հարաբերակցությունն իրականությանը (հաղորդագրության հարաբերակցությունն իր իսկ իրագործմանը): Դա ներկայացվում է փարբեր քերականական ու բառային միջոցներով, ինչպիսիք են բայի եղանակը, մոդալ բայերը, հնչերանգը և այլն (Ахманова, 1969: 244):

ԳԼՈՒԽ V

ՀԱՄԱԻՐԱԴԱՐՁԱՅԻՆ ՓՈԽԱՆՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅԱՆ ԸՆԿԱԼՄԱՆ ՀԻՄՆԱՐԱՐ ՀՆԱՐ

5.1. Ճանաչողական փոխանունությունը՝ տարբեր տեսությունների դիտանկյունից

Մարդու՝ աշխարհընկալման, իմաստավորման, կարգայնացման, ինչպես նաև իմացության բարդ ու տարաբնույթ երևույթները մտապահելու ունակությունները հիմնվում են փոխանունության և փոխաբերության երևույթների վրա: Այս գործընթացներում գիտելիքի որևէ կառույց կարող է գիտակցության մեջ արթնացնել համապատասխան առարկաների ու երևույթների հետ կապված տարբեր զուգորդումներ և տեղեկություններ: Ըստ Ռ. Յակոբսոնի՝ մարդու խոսքային գործունեությունն ամբողջապես հիմնված է այս երկու հիմնարար հնարների վրա: Ընդ որում, փոխանունության և փոխաբերության հիմքն են տարաբնույթ մտավոր և հոգեբանական գործընթացները: Այսպես՝ փոխաբերությունն ապահովում է մարդու կարողությունը՝ ընտրելու որոշակի նշանակությամբ բառեր կամ բառերը փոխարինելու իմաստով մոտ այլ լեզվամիավորներով, մինչդեռ փոխանունության երևույթը հնարավորություն է ընձեռում անհատին բառերից հաջորդական շղթաներ կազմելու և բառերը շարահյուսորեն ճիշտ դասավորելու (Якобсон, 1990) [1]:

Ավանդական լեզվաբանության տեսանկյունից, փոխանունությունը դիտարկվում է որպես իմաստի անցում, որի հիմքում գոյություն ունեն առարկաների կամ երևույթների միջև իրական հարակից կապեր՝ հիմնված տարածական, ժամանակային, պատճառահետևանքային և այլ զուգորդումների վրա: Այս տարածված տեսակետն այս կամ այն չափով ընդունելի է այն լեզվաբանների համար, որոնք փոխանունությունը դիտարկում են զուտ լեզվաբանական տեսության տեսանկյունից (Реформатский, 1967: 80, Арнольд, 1973, Гинзбург, 1985, Апресян, 1995: 178–179, Попова, 2000, Маслов, 2005: 114 և այլք): Այսպես՝ փոխանունության տարածված օրինակ են համարվում The Kremlin, Whitehall, Washington, Baghdad բառերը, որպես փոխանուններ, հիմնված

տարածական զուգորդման վրա: Այսպիսի փոխանունն անվանում է այն բնութագրիչը կամ հայեցակետը, որը զուգորդվում է առարկայի հետ (crown king-ի համար կամ the government rules by a king) (Fromkin, 2003: 184–185):

Հատկանշական է, որ փոխանունության մեկ այլ տեսակ էլ ենթադրում է իրական և զուգորդվող նշյալների միջև համաժամանակյա տարածական և ժամանակային հարակից կապերի առկայություն: Օրինակ՝ *The White House*՝ ԱՄՆ-ի գործող նախագահն ու նրա վարչակազմը. տվյալ դեպքում զուգորդումը հիմնված է ինչպես տարածության, այնպես էլ ժամանակային հարաբերությունների վրա, քանի որ ենթադրվում է, որ խոսքը որոշակի նախագահի և որոշակի ժամանակահատվածի մասին է (Stockwell, 2001):

Փոխանունության տեսության շրջանակներում առանձնակի ընդգծվում է դրա մի տեսակը՝ սինեկդոխան, որի դեպքում ընկալումը ձևավորվում է ոչ թե ամբողջի, այլ, ավելի հաճախ, դրա փոքր մասի միջոցով, որով իմաստավորվում է ամբողջը. օրինակ՝ *bricks and mortar*-ը որպես շենքերի, անշարժ գույքի և նույնիսկ ֆինանսական անվտանգության մի ողջ համալիրի փոխանվանական անվանում է (Punter, 2007: 147–148): Սինեկդոխայի բնորոշ դեպք է համարվում *պատրաստվածք–պատրաստվածքի նյութ* սկզբունքով փոխանցումը. *a cork, an iron, a glass* (Brinton, 2000: 155):

Այսպիսով՝ լեզվաբանական մոտեցման տեսանկյունից փոխանունությանը նվիրված հետազոտությունների մեծ մասն այն սահմանում է որպես իմաստի անցում, որը հիմնված է երևույթների հարակից կապերի վրա:

Ճանաչողական լեզվաբանության զարգացումն ընդլայնում է փոխանունության մեկնաբանությունը՝ իմաստային կանոնավոր մեխանիզմը վերածելով ճանաչողական կանոնավոր գործընթացի: Փոխանունության նկատմամբ ճանաչողական մոտեցումը դրան վերագրում է աշխարհի մասին մտավոր հատուկ կառույցների տեսքով գիտելիքի ձևավորման ձևերից մեկի՝ փոխանվանական հասկացույթի կարգավիճակ: Ճանաչողական առումով՝ փոխանունությունը մտածողության հիմնական բնութագրերից մեկն է: Արտաքին աշխարհից ստացվող տեղեկույթը հավաքվում և վերամշակվում է անհատի ուղեղում, ինչի արդյունքում ձևավորվում է տեղեկության ինտերնալ կառույց, որն արտացոլում է մարդու իմացական փորձը գիտելիք–հասկացույթ՝ ինչ–որ «քվանտների» տեսքով (Кыбрякова et al., 1996: 90):

Փոխանվանական հասկացությունները, որոնք թույլ են տալիս իմաստավորել մի երևույթը այլ երևույթների միջոցով, առօրեական մտածողության, խոսքի և վարքի ձևերի բաղադրիչ մաս են (Lakoff, Johnson, 1980, 36-40): Փոխանվանական անցումները դիտարկվում են որպես իմաստների միջև հարաշարժ, բովանդակային հարաբերություններ, որոնք միատեղվում են ճանաչողաբար, «ձգվելով մոտենում են» իրար՝ անկախ իրենց որակական տարբերությունից կամ նմանությունից (Новиков, 1996: 21):

Փոխանունությունը, որպես հասկացության երևույթ, ճանաչողական լեզվաբանների ուշադրությանն առաջին անգամ արժանացավ 1980 թ., երբ լույս տեսավ Զ. Լակոֆի և Մ. Ջոնսոնի «Փոխաբերությունները, որոնցով ապրում ենք» հիմնարար աշխատությունը: Ըստ հեղինակների՝ փոխանունության լեզվաբանական գործառույթն անուղղակի հղում է (reference), որի դեպքում մի էությունը փոխարինում է մյուսին: Մյուս կողմից, փոխանունությունը դուրս է գալիս լեզվական երևույթի շրջանակից և մեր հասկացության համակարգում գործում փոխանվանական կայուն, կանոնավոր հասկացությունների ձևով (օրինակ՝ ամբողջ-մաս), որոնք մեր գիտակցության մեջ համակարգված են և արտացոլվում են լեզվի միջոցով: Փոխանվանական հասկացությունները մեզ հնարավորություն են ընձեռում ընկալելու մի էության հասկացության դաշտը մեկ այլ էության հետ դրա հարաբերության միջոցով: Դրանք կազմորոշում են ոչ միայն մեր լեզուն, այլև մեր մտքերը, գործողությունները և հիմնված են մեր փորձի վրա: Այդ հիմքն ավելի ակնհայտ ու «շոշափելի» է, քան փոխաբերական հասկացություններինը, քանի որ ենթադրում է անմիջական ֆիզիկական կամ պատճառական զուգորդումներ (Lakoff, Johnson, 1980: 35-39): Այսպիսով՝ փոխանունությունն ընկալվում է որպես իմաստի ընդլայնման ամենից հիմնարար գործընթացներից մեկը և հնարավոր է ավելի կարևոր, քան փոխաբերությունը (Taylor, 1995: 124) [2]:

Հետագայում Զ. Լակոֆը կարգայնացման գործընթացի վերլուծությանը նվիրված՝ «Կանայք, կրակը և վտանգը» աշխատության մեջ խոսում է նախատիպերի տեսության մասին (Lakoff, 1987, Лаккофф 1988: 12-51): Հեղինակը կարգերում նախատիպային էֆեկտների (ազդեցությունների) առաջացման աղբյուր է համարում փոխանունությունը, որի դեպքում կարգի անդամները (օրինակ՝ տիպային

ներկայացուցիչը կամ նախատիպը) ներկայացնում են ողջ կարգը. օրինակ՝ արևմուտքի մշակույթում mother հասկացույթը նախատիպային հիմքով զուգորդվում է «housewife mother» հասկացույթի հետ: «Mother»-ի և «housewife»-ի միջև հարաբերությունները փոխանվանական են և գոյություն ունեն միայն հասկացության մակարդակում. «mother» կարգը փոխանվանաբար ներառում է «housewife mother» ենթակարգը: Հասարակական կարծրատիպերը, մասնավորապես, ներկայացնում են փոխանվանական կաղապարների տեսակներից մեկը, որտեղ կարգի ներկայացուցիչը հանդես է գալիս ողջ կարգի փախարեն: Նույն աշխատության մեջ Զ. Լակոֆը գործածության մեջ է դնում նոր հասկացություն՝ «իդեալականացված ճանաչողական կաղապարներ» (ԻՃԿ)՝ որպես բարդ համակարգված գիտելիքային կառույցներ, որոնք ներկայացնում են անհատների հասկացության իմացությունը: ԻՃԿ-ները իդեալականացված են համարվում, քանի որ ստեղծված են մարդկանց կողմից և կարող են մշակույթից մշակույթ տարբերվել: Մեկ այլ կարևոր հատկանիշն այն է, որ ԻՃԿ-ները մասերից կազմված ամբողջություններ են, օրինակ՝ իդեալականացված կաղապարում շաբաթը ներկայացվում է որպես յոթ՝ իրար հաջորդող մասերից ամբողջություն, ամեն մի մասը կոչվում է օր և երրորդ օրը երեքշաբթին է: Կարգայնացման գործընթացի նկարագրության համար հեղինակը բացահայտում է ԻՃԿ չորս տեսակ՝ նախադասական (propositional), սխեմատիկ (image schematic), փոխաբերական (metaphorical) և փոխանվանական (metonymic), որից վերջինը նախատիպային էֆեկտների հիմքն է: «Նախատիպային էֆեկտների» ձևով նախատիպության դրսևորումների էությունն այն է, որ կարգի կենտրոնական անդամները, որոնք ավելի մոտ են նախատիպին, ավելի արագ են ճանաչվում, հաճախ գործածվում, քան ոչ կենտրոնականները, այսինքն՝ օգտագործվում են կարգն ընդհանուր առմամբ ընկալելու համար: Ամեն անգամ, երբ ենթակարգի կամ կարգի առանձին անդամ կիրառվում է ընդհանուր կարգի համար, այն դառնում է նախատիպային էֆեկտների ներունակ աղբյուր: Այդ պատճառով փոխանվանական կաղապարները կարևոր դեր ունեն նախատիպերի տեսության շրջանակներում (Lakoff, 1987: 67–70):

Այսպիսով՝ խոսքը մի առարկայի կամ իրադրության ընկալման կանոնավոր մեխանիզմի և տարբեր տեսանկյուններից դրա իմաստավորման հնարավորության մասին է, որը կարգավորվում է փոխանունության գործընթացով: Փոխանունության

ճանաչողական և գործնական գործառության հիմքում է եզրահանգման (инференция) ճանաչողական գործառույթը (մարդկային մտածողության ճանաչողական կարևորագույն գործողություններից մեկը, որի ընթացքում մարդը դուրս է գալիս տրվածի սահմաններից՝ հիմնվելով այն տեղեկությունների վրա, որոնք կան արտահայտության մեջ, և նոր տեղեկություն է ստանում) (Кыбрякова et al., 1996: 33), որը հնարավորություն է ընձեռում մարդուն ստեղծելու առարկաների կամ իրադրությունների նոր իմաստներ և հետևաբար՝ իրականությունը տարբեր կերպով ընկալելու: Այս գործընթացում բառը, որը սահմանակցում է հին նշյալի հետ ժամանակի և տարածության մեջ կամ դրա հետ ներառված է նույն իրադրությունում, կիրառվում է նոր առարկան անվանելու նպատակով (Кронгауз, 2001: 156): Ընդ որում, փոխանվանական անցումներն իրագործվում են անհատների՝ առարկաների և իրադրությունների աշխարհընկալման նախատիպային կաղապարների շնորհիվ: Ինչպես նշում է Լ. Լիպկան, փոխանվանական անցումը «իրականության մեջ լեզվամիավորների նշյալների հարակցությունն է կամ, ավելի ստույգ, նշյալներին վերաբերող մեր ճանաչողական կաղապարները, ինչպես նաև աշխարհընկալման նմանությունը» (It is contiguity of the referents or denotata of linguistic signs in reality, or rather our cognitive models of it, as well as similarity in our view of the world) (Lipka, 1992: 122):

Լեզվաբանության մեջ փորձ է արվել փոխանունությունը դիտարկել նաև ֆրեյմների իմաստաբանության տեսանկյունից: Այսպես՝ Ա. Բարանովը և Դ.Դոբրովոլովսկին կարծում են, որ որպես փոխաբերական իմաստի ձևավորման աղբյուր հանդես են գալիս ոչ թե բազմիմաստ բառի իմաստները, այլ դրանց հետ կապված ֆրեյմները և սցենարները: Այս դեպքում բառերի փոխանվանական իմաստները նկարագրվում են որպես ֆրեյմների (սցենարների) և դրանց սլոթների/ենթասլոթների հասկացությային փոխակերպումների արդյունք (Баранов, Добровольский, 1997: 3):

Բառի իմաստային կառուցվածքի նկատմամբ նման մոտեցումը կարևոր է սույն աշխատության համար, քանի որ փաստական նյութի վերլուծությունը թույլ է տալիս մեզ հիմնավորել այն դրույթը, ըստ որի՝ ճանաչողական փոխանունության անցումները տեղի են ունենում համաիրադարձային լեզվամիավորների իմաստային առանձնահատուկ կառուցվածքի շնորհիվ, որը ներկայանում է որպես ֆրեյմ իրեն

համապատասխան սլոթներով՝ իմաստներով [3]:

Ճանաչողական լեզվաբանության տեսության շրջանակներում նորովի է ուսումնասիրվում նաև փոխանունության միջոցով բառի նոր իմաստի ձեռքբերման մեխանիզմը, որն իրագործվում է հասկացության ածանցման շնորհիվ (դերիվացիա): Հասկացության ածանցումը ենթադրում է երկու և ավելի նախնական (լեզվական ձև ունեցող) տիրույթների առկայություն, որոնց փոխներգործության արդյունքում, ինչպես նաև այս կամ այն մեխանիզմի հաշվին նոր հասկացությամբ է առաջանում: Որպես գործոններ, որոնք իրականացնում են հասկացության ածանցում, առաջարկվում է դիտարկել հասկացության փոխազդեցությունը և հասկացությամբ՝ մտավոր տիրույթներ և մտավոր գոտիներ ձևավորելու ունակությունը: Ի դեպ, վերջինս մարդկային գիտակցության՝ մաս/ամբողջի բաժանելու հիմնարար հատկության արդյունք է: Դրա շնորհիվ մարդն ունակ է այս կամ այն լեզվամիավորով ներկայացված հասկացությից անցում կատարելու դեպի հասկացության կառույց (մտավոր գոտի), որի հիման վրա էլ ընկալվում է տվյալ լեզվամիավորը: Լեզվամիավորով արտահայտված հասկացությից սերտորեն կապված է վերացարկման ավելի բարձր մակարդակի հասկացությի հետ, որը հանդես է գալիս որպես մտավոր տիրույթ և ապահովում է նոր հասկացությի առաջացումը: Միաժամանակ, դա լրացուցիչ տեղեկության աղբյուր է, որն անհրաժեշտ է նոր հասկացությի (հասկացության կառույցի) առաջացման համար, քանի որ վերջինս միշտ չէ, որ առաջանում է նախնական հասկացությներից ակնհայտորեն փոխառված բնութագրերի հաշվին (Бабина, 2003: 14) [4]:

Այսպիսով՝ վերջին տարիների մի շարք աշխատությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ փոխանունությունը, որպես իրականության ընկալման խորքային մեխանիզմ, ավելի հաճախ է հայտնվում ճանաչողական լեզվաբանության ուշադրության կենտրոնում և դրանով իսկ՝ հետզհետե դուրս գալիս ավանդական բառագիտության կամ ոճաբանության հետաքրքրությունների շրջանակներից [5]:

Ճանաչողական տեսության շրջանակներում բոլորովին այլ բացատրություն է ստանում նաև «հարակցություն» եզրույթը, որը փոխանունության ավանդական սահմանումներից մեծ մասի հիմքում է: Գ. Ռադենի և Զ. Կովեչեսի կարծիքով, ավանդական մոտեցմամբ հարակից հարաբերություններն իրական աշխարհ են

գալիս, իսկ ճանաչողականով՝ մղվում դեպի հասկացութային մակարդակ (Radden, Kövecses, 1999: 19): Այս հարթակում, հարակցությունը ձեռք է բերում հասկացութային հատկանիշներ, որոնք «միշտ չէ, որ օբյեկտիվորեն են արտացոլում իրական հարաբերությունները» (Koch, 1999: 139–167): Հասկացութային հարակցության հիմքում այն գաղափարն է, որ իմաստը ոչ թե հայտնաբերվում, այլ ստեղծվում է անհատների կողմից, և «իրականության ճանաչողական մոտեցումը գոյություն չունի առանց անհատների գիտելիքների և ընկալման» (Feyaerts, 1999: 317): Սա նշանակում է, որ անհատներից է կախված այն իրողությունը, թե ինչ են նրանք ըմբռնում, ինչ հարակցային կապեր են նշմարում փոխանվանական անցումների ժամանակ: Հետևաբար՝ վերահանվող հարակցային կապերի բնույթը կարող է տարբեր անհատների կողմից տարբեր կերպ ընկալվել:

Ըստ ճանաչողաբանության հենքի փոխանունության ուսումնասիրությունները հիմնականում անդրադառնում են վերոնշյալ հարակից զուգորդումների տիպաբանության մշակմանը: Այստեղ, առաջին հերթին, հարկ է խոսել Զ. Լակոֆի և Մ. Ջոնսոնի առաջարկած փոխանվանական անցումների տեսակների մասին, որոնք են.

1. մասն՝ ամբողջի փոխարեն (The part for the whole). օրինակ՝ We don't like longhairs.
2. արտադրողը՝ ապրանքի փոխարեն (Producer for product). օրինակ՝ He bought a Ford.
3. առարկան՝ օգտագործողի փոխարեն (Object used for user). օրինակ՝ The gun he hired wanted fifty grand.
4. վերահսկողը՝ վերահսկվողի փոխարեն (Controller for controlled). օրինակ՝ A Mercedes rear-ended me.
5. հաստատությունը՝ պատասխանատու մարդկանց փոխարեն (Institution for people responsible). օրինակ՝ The army wants to reinstitute the draft.
6. վայրը՝ հաստատության փոխարեն (The place for the institution). օրինակ՝ Hollywood isn't what it used to be.
7. վայրն՝ իրադարձության փոխարեն (The place for the event). օրինակ՝ Watergate changed our politics. (Lakoff, Johnson 1980: 38–39)

Փոխանավանական անցումները դասակարգող հետագա բոլոր ուսումնասիրությունները, կարելի է ասել, հիմք ընդունելով վերոնշյալ տիպաբանությունը, առաջարկել են իրենց մոտեցումները: Այսպես՝ դիտարկվում է «հասկացույթը ներկայացնում է իր հակապատկերը» (a concept stands for its opposite) փոխանավանական անցումը (օրինակ՝ terrible-wonderful)՝ հիմնված այն գաղափարի վրա, որ գոյություն ունի A և B հասկացույթներ պարունակող կառույց, որտեղ B-ն A-ի համեմատ ավելի դյուրին է ճանաչվում, ընկալվում և հիշվում: Փոխանավանական այսպիսի անցումն ավելի բնորոշ է հեգնական արտահայտություններին, որտեղ փոխանունությունն ունի արտահայտչական գործառույթ: Օրինակ՝ X-ը դավաճանել է իր ընկերոջը՝ Y-ին, և Y-ն ասում է. «X-ը լավ ընկեր է» կամ «big idea»՝ որպես անպիտան գաղափար, առաջարկ և այլն (VoBhagen, 1999: 290-297): Նմանատիպ փոխանավանական անցումը հիմնված է «մասնամբողջի փոխարեն» հարաբերության վրա, քանի որ հակադիր հասկացույթները պատկանում են միևնույն տիրույթին, որտեղ հարակցության զուգորդումն առավել հեշտորեն է առաջանում, և միևնույն տիրույթի մեկ հասկացույթը ներկայացվում է մյուսի փոխարեն՝ հաղորդելով դրան նաև արտահայտչականություն:

Որպես փոխանունության մեկ այլ տեսակ՝ առաջարկվում է «հնարավորությունը իրականության փոխարեն» (potentiality for actuality) անցումը, որտեղ հիմնականում դիտարկվում են հետևյալ հասկացութային տիրույթներում առկա հարաբերությունները.

1. զգայական ընկալման հասկացութային տիրույթում՝ «զգայական ընկալման հնարավորությունն իրական ընկալման փոխարեն» (ability to perceive for actual perception) փոխանավանական անցումը. օրինակ՝ Can you see well? I can taste the vanilla.
2. մտավոր գործընթացների հասկացութային տիրույթում՝ «մտավոր գործընթացներ իրականացնելու հնարավորությունն իրականում դրանք կատարելու փոխարեն» (ability to process for actual mental process) փոխանավանական անցումը. Օրինակ՝ I can remember when we got our first TV. I can imagine how it happened.
3. գործողությունների հասկացութային տիրույթում՝ «գործելու հնարավորությունն իրական գործողության փոխարեն» (ability to act for action) փոխանավանական անցումը. Օրինակ՝ John was able to finish his paper before deadline.

(Panther, Thornburg, 1999: 340–348)

Նմանապես, ուշադրության են արժանացել «արդյունքը պատճառի փոխարեն» (effect for cause) (slow road = վատ/անսարք ճանապարհի պատճառով առաջացած դանդաղ երթևեկություն) և «պատճառն արդյունքի փոխարեն» (cause for effect) (healthy complexion = լավ կազմվածքը ամուր առողջության արդյունք է) փոխանվանական անցման տեսակները (Radden, Kövecses, 1999: 38):

Այսպիսով՝ փոխանունությունը հնարավորություն է տալիս ներկայացնելու ամբողջական իրադարձությունը՝ համատեղելով գոյաբանորեն փոխկապված մի քանի հասկացության տիրույթներ. օրինակ՝ շարժում և ձայն՝ ճաղավանդակները դղրդում էին (ставни грохотали), շարժում և լուսարձակում՝ փամփուշտը սուլեց (пуля просвистела), հուզական վիճակ և դրա ֆիզիկական արտացոլումը՝ ձայնը դողում էր (голос дрожал) (Болдырев, 2002: 11):

Փոխանվանական անցումների բավական ընդարձակ տիպաբանությունից ակնհայտ է դառնում մի օրինաչափություն. հասկացության հարակցության կամ զուգորդման հարաբերությունների առաջացման դասակարգելի կանոնավորության հայեցակերպը ճանաչողական փոխանունության մեխանիզմի անքակտելի մասն է: Դա է նշում Ս. Գասպարյանը՝ սահմանելով ճանաչողական փոխանունությունը որպես «անվանումների փոխարինում զուգորդումների հիման վրա, որոնք հեշտությամբ են առաջանում և ենթակա են դասակարգման» (Гаспарян, 2013: 70–72): Այս դրույթը հիմնավորվում է նաև մեր աշխատանքում, որտեղ փաստական նյութի հիման վրա կանոնավոր հիմքերով գոյացող զուգորդումների վերհանումը և դասակարգումը թույլ են տալիս մեզ համակողմանի կերպով ուսումնասիրել համաիրադարձային փոխանունության ճանաչողական մեխանիզմը և եզրակացնել, որ այն անհրաժեշտ և հիմնարար հնար է իրականության որևէ հատվածի՝ ամեն մի իրողության, այդ թվում՝ տնտեսական իրադարձության ընկալման համար:

Ճանաչողաբանության տեսանկյունից, փոխանունությունը դիտարկվում է ոչ միայն որպես հասկացության երևույթ, այլև ճանաչողական գործընթաց, որի ժամանակ մտավոր մի էությունը հասանելի է դառնում մյուսի միջոցով, և փոխանվանական անցման ժամանակ «հասկացույթ–աղբյուրը «մտավոր ներթափանցում է» հասկացույթ–նպատակ կամ «ակտիվացնում է» հասկացույթ–

նպատակը» (...the source provides "mental access to" or "activates" the target) (Barcelona, 2007: 104): Ընդգծվում է, որ փոխանունությունը մարդու առօրեական մտածողության մաս է, որը կառուցվածքայնացնում է նրա մտքերն ու գործողությունները: Փոխանվանական անցման ժամանակ բառը որոշակի իմաստ է ձեռք բերում շեշտադրման, այսինքն՝ հասկացությանին որոշակի տիրույթում որևէ տարրի առանձնացման արդյունքում: Բառի փոխանվանական նշանակությունը համապատասխանում է շեշտադրվող տարրի, այսպես կոչված, ակտիվ մասին, որն անմիջականորեն մասնակցում է նկարագրվող իրադրությանը (She heard the piano – piano – sound պրոֆիլի ակտիվ գոտի): Ռ. Լենքերը, նկարագրելով փոխանունության բնույթը, նշում է, որ դրա միջոցով անվանում ստացած էությունը ծառայում է որպես «հղման կետ» (reference point), որը մտավոր ազատ մուտք է բացում ցանկալի արդյունքի համար (այն էության համար, որին հղում են կատարում) (Langacker, 1991: 189–201, 1993: 30): Այսպիսով՝ մի անունը ոչ թե ուղղակիորեն օգտագործում ենք մյուսն անվանելու համար, այլ կատարում ենք բարդ մտավոր գործողություն՝ մի էության միջոցով այլ էությունների հասնելու համար:

Միաժամանակ հարկ է նշել, որ գիտնականները տարբեր կարծիքներ են արտահայտում ճանաչողական փոխանունության գործընթացում ներգրավված հասկացությանին տիրույթների քանակի վերաբերյալ: Այսպես՝ Ջ. Ռադենը և Ջ. Կովեչեսը, կիրառելով Ջ. Լակոֆի առաջարկած՝ իդեալականացված ճանաչողական կադապարի (ԻՃԿ) գաղափարը, նշում են, որ փոխանունության հիմքում փոխանվանական անցման գործընթացն է, որն իրականացվում է մեկ ԻՃԿ շրջանակում: Այսպիսով՝ փոխանունությունը դիտվում է որպես ճանաչողական գործողություն, որի դեպքում աղբյուրի բովանդակային մասն ապահովում է ներթափանցում նպատակի բովանդակային մաս ճանաչողական մեկ տիրույթի կամ ԻՃԿ սահմաններում (Lakoff, 1987, Radden, Kövecses, 1999):

Փոխանունության այսպիսի ըմբռնում առկա է նաև առանց ԻՃԿ հիմքի՝ փոխանունությանը նվիրված ուսումնասիրություններում: Այսպես՝ Ի. Կոբոզևայի աշխատությունից պարզվում է, որ, ի տարբերություն փոխաբերության, փոխանունությունը ճանաչողական կառույցի տարրերից մեկին համապատասխան լեզվական արտահայտության անցումն է մեկ այլ տարրի, և դրանով իսկ

փոխանունության դեպքում գիտակցությունը մնում է հասկացութային մեկ ոլորտի սահմաններում (Кобоzeва, 2002) [6]:

Այդուհանդերձ, գոյություն ունի տեսակետ, ըստ որի՝ փոխանվանական անցումը կարող է կատարվել ոչ միայն մեկ տիրույթի, այլև տիրութային մատրիցի (domain matrix) ներսում: Հասկացույթը պայմանականորեն կարող է մի քանի տիրույթ ունենալ, և փոխանվանական տեղաշարժը կարող է հանգեցնել տիրութային մատրիցի ներսում տիրույթների տեղաշարժի: Օրինակ՝ *Պրուստը՝ որպես մարդ և հեղինակ*. Proust is tough to read. = *Պրուստի ստեղծագործությունները դժվար են ընթերցվում* (Croft, 2006: 269–302):

Ինչպես հետագայում կտեսնենք, ճանաչողական-փոխանվանական անցումները կարող են իրականանալ՝ ներգրավելով ինչպես մեկ, այնպես էլ, միաժամանակ, մեկից ավելի հասկացութային տիրույթներ:

Փոխանվանական անցման՝ որպես տիրութային մատրիցի շրջանակներում կատարվող տեղաշարժի մեկնաբանությանն անդրադարձել են մի շարք լեզվաբաններ: Որոշակի ճշգրտմամբ այդ մեկնաբանությունները տեղ են գտել փոխանունության նոր սահմանումներում: Օրինակ՝ «հասկացութային տիրույթ-աղբյուրի ասիմետրիկ անցում դեպի այլ տիրույթ-նպատակ» (Barcelona, 2011: 52): Լրացուցիչ մեկնության է ենթարկվել նաև փոխանվանական՝ *հեղինակ-ստեղծագործություն* ընդունված անցումը, որի կանոնավոր կերպն ընդգծվում է մինչճանաչողական շրջանում: Այսպես՝ Ռուիս դե Մենդոսայի աշխատությունում տարբերակվում են փոխանունության երկու հիմնական տեսակներ, որոնցից մեկի դեպքում աղբյուրը նպատակի ենթատիրույթն է (source-in-target). օրինակ՝ փոխանվանական կաղապար՝ *գործիք-երաժիշտ*, որն այն նվագում է. «The sax won't come to today's rehearsal» (սաքսոֆոնն այսօր փորձի չի գալու), որտեղ «the sax»-ը համարվում է «the sax player»-ի ենթատիրույթ: Փոխանվանական մյուս կաղապարի դեպքում նպատակն աղբյուրի ենթատիրույթն է (target-in-source). օրինակ՝ «*He always enjoys Shakespeare*», որտեղ «*Shakespeare*» նշանակում է նրա ստեղծագործությունները և համարվում հայտնի դրամատուրգի մասին մեր գիտելիքների ենթատիրույթ: Փոխանունության այս երկու տեսակները համընկնում են ճանաչողական երկու հիմնական գործողությունների հետ՝ *տիրույթի ընդլայնում* (domain expansion), որը համապատասխանում է աղբյուրը նպատակի

ենթատիրոջն է (source-in-target) կաղապարին և *տիրոջի կրճադում* (domain reduction), որտեղ նպատակն է աղբյուրի ենթատիրոջը (target-in-source) (Ruiz de Mendoza, 2007: 15):

Փոխանունության և փոխաբերության գործընթացները դիտարկվում են նաև Ժ.Ֆոկոնյեի և Մ. Թըրների մշակած մտավոր տարածությունների (mental spaces) տեսության շրջանակներում: Մտավոր տարածությունները հասկացությանն ոչ մեծ կառույցներ են, որոնք առաջանում են ինչպես մտավոր, այնպես էլ հաղորդակցման գործունեության գործընթացներում (Fauconnier, Turner, 2002: 40):

Մտավոր տարածությունը մտավոր գործունեության իմաստավորման միջոց է: Հիշողության մեջ ամրագրված կամ տվյալ պահի իրադրությունը ներկայացվում է մտավոր տարածությունների ձևով: Մտավոր տարածությունները բնութագրվում են.

1. մտավոր օբյեկտների (mental entities) բովանդակությամբ,
2. մտավոր կապերի (mental connectors) միջոցով այլ տարածությունների հետ հարաբերակցությամբ, որոնց օգնությամբ համապատասխանություն է հաստատվում ելակետային տարածության և նոր տարածություններում դրանց համանմանների միջև,
3. ճանաչողական գործողությունների ընդլայնման և լրացման ունակությամբ (Lakoff, 1987: 282):

Հարկ է նշել, որ հաճախ մտավոր տարածությունների առաջացման աղբյուր է տեսած կամ լսած տեղեկությամբ, այսինքն՝ անհատի անմիջական փորձն «այստեղ և հիմա»: Տարածություններ կառուցելու համար կարևոր աղբյուր են ֆրեյմները, որոնք ամրագրված են հիշողության մեջ ու ակտիվանում են մտածելու և խոսելու պահին: Ժ.Ֆոկոնյեի և Մ. Թըրների «հասկացության խառնուրդների» տեսության (conceptual blending theory) համաձայն՝ միասնացման կաղապարը կազմված է մտավոր չորս տարածությունից (four-space model)՝ երկու մուտքային (input space 1, input space 2), ընդհանուր և ելքային կամ խառը (blended space): Մուտքային տարածությունն օգտագործվում է իրական իրադրության նկարագրության համար, հետևաբար՝ զրուցակիցներին ծանոթ է: Ընդհանուր տարածությունը պարունակում է գիտելիքներ, որոնք ընդհանուր են մուտքային տարածությունների համար: Այն ընդհանուր տարրերը համակարգող մի տարածություն է ելքային նոր տարածության համար (blended space): Խառնուրդը (blend) հասկացության նոր կառույց է, որը պահպանում

է էլքային տարածությունների հատկանիշները, բայց չի հանգեցվում միայն տարրերի հանրագումարին: Ըստ էության, խառնուրդն ինքնազարգացող, մուտքային տարածություններից անկախ գործող կառույց է: Ըստ սույն տեսության հիմնադիրների՝ միասնացման ցանցի ստեղծումը ներառում է մտավոր տարածությունների հիմնում, դեպի խառնուրդ (blend) դրանց արտապատկերում (projecting), նորընկալ կառույցների տեղորոշում, հետ արտապատկերում դեպի մուտքային տարածություն, նորաստեղծ կառույցի հավաքագրում (recruiting) դեպի մուտքային տարածություն կամ խառնուրդ և տարբեր մտավոր մշակումների (operations) կազմակերպում խառնուրդում: Գոյություն ունի խառնուրդի ձևավորման երեք փուլ՝ բաղադրում (composition) (մուտքային տարածություններում խառնուրդի կառուցմանն անհրաժեշտ տարրերի առանձնացում), ավարտ (completion) (ձևավորված կառույցին համատեքստային բովանդակության հաղորդում, որն ինքնաբերաբար խառնուրդի մեջ է մտնում), խառնուրդի մշակում և կատարելագործում (elaboration) (խառնուրդում տարրերի ձևաչափավորում՝ հաշվի առնելով հասկացության նոր բովանդակությունը) (Fauconnier, Turner, 2002: 40–48): Ճանաչողական միասնացման մեխանիզմի արդյունքը խառնուրդն է: Դա նշանակում է, որ մենք նոր տարածություն, նոր հասկացույթ ենք ստանում, որը գործում է նոր պայմաններում [7]:

Ճանաչողական իմաստաբանության տեսանկյունից, փոխանունության մեկնաբանումն արտացոլված է Ե. Պադուչևայի ուսումնասիրություններում, որտեղ դա դիտարկվում է որպես գործընթաց (ուշադրության կիզակենտրոնի տեղաշարժ) և արդյունք: Նա հետազոտում է փոխանունությունը «նշյալ իրադրություն» հասկացության համատեքստում, որն դիտարկվում է որպես ընկալվող իրականության հատված: Ընդ որում, միևնույն իրադրությունը լեզվում կարող է տարբեր կերպ ընկալվել: Լեզվաբանը նշում է, որ փոխանվանական տեղաշարժերի համար հիմք կարող է լինել մարդու ընկալման ընտրողականությունը: Իրականության որևէ հատվածի հասկացության դաշտի ձևավորման ընթացքում իրականության որոշ կողմեր շեշտադրվում են, առանձնանում, մյուսները՝ քողարկվում, դառնում ֆոն. կարծես կատարվում է իրականության կառուցվածքայնացում: Սակայն, իրադրության կողմերը, որոնք սքողվել են տվյալ հասկացության դաշտի ձևավորման դեպքում, ոչ բացահայտորեն առկա են այդ արտահայտության համատեքստում: Քողարկված

կողմերը հարակից հարաբերություններով կապված են գործող (актуализированные) կողմերի հետ մաս-ամբողջ, պարամետր-նշանակություն, պարճառ-հետևանք և այլ սկզբունքներով: «Եվ այստեղ մտաբերվում է փոխանունության հասկացությունը», – եզրակացնում է Ե.Պադուչևան (Падучева, 2004: 157): Ուսումնասիրելով հասկացութային փոխանունությունը՝ լեզվաբանը նշում է, որ հարակից կապեր գոյություն ունեն ոչ թե իմաստների միջև, այլ իրականում: Այնուամենայնիվ, անցում կատարելով իրական իրադրությունից դեպի դրա հասկացությոները, կարելի է խոսել իրադրության բաղադրիչների միջև համապատասխան փոխանվանական կապերի մասին (Падучева, 2000: 242, 2003: 240):

Այսպիսով՝ փոխանունությունն աշխարհի լեզվական պատկերի ձևավորման մեխանիզմներից մեկն է, իրականության որևէ հատվածի ճանաչողական արտացոլումն ամբողջի և նրա մասերի միջև՝ հարաբերությունների հիման վրա:

Վերոնշյալ աշխատությունների քննարկումը թույլ է տալիս եզրակացնել, որ եթե ավանդական տեսանկյունից փոխանունությունը դիտարկվում է որպես առարկայի անվանման միջոցների զուտ փոխարինում՝ հիմնված հարակից կապերի վրա, ապա ճանաչողական մոտեցումն էականորեն ընդլայնում է դրա՝ որպես բառույթի ներսում իմաստային անցումների մեխանիզմներից մեկի մասին պատկերացումը և նկատելիորեն վերանայում վերջինիս էությունը՝ այն ներկայացնելով որպես ճանաչողական գործընթաց, երևույթի հասկացութային դաշտի մոդելավորման ճանաչողական մեխանիզմ: Այդպիսով՝ փոխանունությունը սահմանվում է որպես իրականության ընկալման և կարգայնացման ձև, այսինքն՝ աշխարհի մասին գիտելիքի, իմացության, իմաստավորման և կազմակերպման հիմնարար հնար:

Սույն աշխատության շրջանակներում կիրառելով «համաիրադարձային փոխանունություն» եզրույթը՝ դիտարկում ենք այն որպես բարդ մտավոր գործընթաց, որի ժամանակ գործի ենք դնում մեր ճանաչողական մեխանիզմները մի երևույթի միջոցով այլ էությունների, մասնավորապես տնտեսական իրադարձությունների հասկացութային դաշտը ձևավորելու և իմաստավորելու համար: Կարելի է ասել, որ փոխանվանական անցումները զուգորդման հիման վրա առաջացած ճանաչողական գործընթացների արդյունք են, աշխարհընկալման միջոց: Աշխատանքում ելակետային ենք համարում այն տեսակետը, որի համաձայն՝ համաիրադարձային

փոխանունության դեպքում հասկացույթ–աղբյուրը՝ ծառայելով որպես «հղման կետ», «մտավոր ներթափանցում» է իրականացնում հասկացույթ–նպատակ կամ «ակտիվացնում» է հասկացույթ–նպատակը: Նման մոտեցումը հնարավորություն է ընձեռում տնտեսական մեդիադիսկուրսի փաստական նյութի հիման վրա համակողմանիորեն ուսումնասիրելու համաիրադարձային փոխանունության՝ որպես տնտեսական իրադարձության հասկացութային դաշտի ձևավորման համար անհրաժեշտ հնարի գործադրման մեխանիզմը, ինչպես նաև վեր հանելու և դասակարգելու կանոնավոր հիմքերով առաջացող կաղապարները, որոնք առաջանում են դիսկուրսում տնտեսական բնույթի իրադարձություններ անվանող համաիրադարձային գոյականների շնորհիվ, որոնց իմաստային առանձնահատկությունների վերլուծությանը անդրադառնում ենք հաջորդիվ:

5.2. Համաիրադարձային գոյականները՝ որպես տնտեսական իրադարձության անվանման միջոց

«Իրադարձություն» հասկացույթի բազմատարրությունը բարդացնում է այն անվանող լեզվամիավորների ընտրության գործընթացը: Իրադարձության համար որպես անվանական միավոր, սովորաբար, դիտարկվում է նախադասությունը, թեև չի ժխտվում այն փաստը, որ դա կարող է անվանվել առանձին բառով (Кацнельсон, 1972: 142–143):

Այսպես՝ Վ. Գակը, լեզվական անվանումների տիպաբանությունը մշակելիս՝ հակադրելով տարրային և իրադարձային անվանումները (элементная и событийная номинация), հետևյալ բացատրությունն է տալիս. «Տարրային անվանումը նշանակում է իրականության որոշակի տարր՝ առարկա, գործընթաց, հարաբերություն, իրական կամ մտացածին ցանկացած օբյեկտ: Նշյալի դերում կարող է լինել բառը կամ բառակապակցությունը (այս դեպքում խոսքը բառային անվանման մասին է): Իրադարձային անվանումը ցուցանշում է միկրոիրադարձություն, այսինքն՝ այնպիսի իրադարձություն, փաստ, որը միավորում է տարրերի մի շարք: Այն ունի նախադասության ձև, հետևաբար՝ դրա համար կիրառելի է ստորոգումային անվանում (пропозитивная номинация) եզրույթը» (Гак, 1977: 230–293):

Այսպիսի մոտեցումը, թերևս, անտեսում է մի շարք լեզվամիավորների՝ իրադարձությունը համապարփակ կերպով անվանելու հատկությունը: Մինչդեռ այս գոյականները կարևոր տեղ են գրավում բառիմաստների համակարգում (Качнельсон, 1972: 143):

Իրադարձային լեզվամիավորների կարևորությունը շեշտադրող մոտեցում առկա է նաև ճանաչողական լեզվաբանության մեջ, որտեղ իրադարձությունը դիտարկվում է որպես լեզվական գիտակցությամբ կարգավորվող և աշխարհի մասին մեր գիտելիքները համակարգող հասկացություն: Իրադարձությունը լեզվում արտացոլվում է նախադասության, իրադարձային լեզվամիավորների կամ անորոշ դերբայի տեսքով: Միաժամանակ, ի տարբերություն անորոշ դերբայի, իրադարձային լեզվամիավորներն ավելի համապարփակ ձևով են ներկայացնում իրադարձությունները (Ли, 2000: 151):

«Իրադարձություն» հասկացոյթն ուսումնասիրելիս հարկ է դիտարկել նաև, թե ինչպես են տեղեկոյթն ու գիտելիքը խտացվում և ներկայացվում իրադարձային լեզվամիավորների իմաստներում, ինչպես նաև բացահայտել, թե տնտեսական իրադարձությունների որ հատկանիշներն են դրանք արտացոլում և ինչպես են փոխազդում ու հատվում գործողության և գործընթացի հասկացությունները՝ կազմորոշելով տվյալ բարդ երևույթը լեզվում:

Փաստական նյութի վերլուծությունը ցույց է տալիս, որ տնտեսական իրադարձությունները հիմնականում անվանվում են որոշարկված իրադարձություն ցուցանշող գոյականներով, որոնց իմաստները տնտեսական բնույթի են: Օրինակ՝ «increase», «collapse», «merger», «dive» և այլ բառային միավորներ, որոնք, անվանելով իրադարձությունը, միաժամանակ որոշակիացնում են տվյալ եղելությունը: Այսպես.

increase – a rise in the size, amount, or degree of something

collapse – a sudden failure of an institution or undertaking

merger– a combination of two things, especially companies, into one (OED)

Անշուշտ, աշխարհում, մասնավորապես՝ գործարարության բնագավառում տեղի են ունենում բազմաթիվ իրադարձություններ, որոնք անվանելու նպատակով կիրառվում են որոշարկված իրադարձություն ցուցանշող մեծաքանակ լեզվամիավորներ: Ավելին,

միևնույն իրադարձությունը կարող է ցուցանվել մի շարք տարբեր բառերի օգնությամբ: Օրինակ.

About the time President Barack Obama was sternly discussing the BP **oil spill** with the Prime Minister, David Cameron, by telephone yesterday, a protest group known as the South Florida Raging Grannies was plastering its latest video across the internet.... The agreement was reached in a 4 – 1/2– hour meeting at the White House – although President Obama said it did not represent a cap on BP’s liability over **the environmental catastrophe**. BP is also setting up a \$100 million fund to compensate oil workers laidoff because of **the disaster**. (www.thetimes.co.uk, June 13, 2010)

The financial crisis had many causes – too much borrowing, foolish investments, misguided regulation – but at its core, **the panic** resulted from a lack of transparency. ... **The loss** emanated from a little-known corner of the bank called the Chief Investment Office. (www.theatlantic.com, January, 2013)

Now, Hutchison Whampoa’s Three is proposing to buy a rival network, O2, for some 10bn. As ever with large mergers, the companies say **the activity** will benefit customers... The bidders are brimful of assurances about the advantages that will flow from **consolidation**. Hutchison, for instance, claims that its **acquisition** will release capital that can be reinvested in improving service quality... Three’s **deal** is particularly troubling from the consumer’s perspective. (www.ft.com, January 27, 2015)

Միևնույն իրադարձությունը զանազան բառային միավորներով ներկայացնելը պայմանավորված է մի շարք հանգամանքներով: Առաջին հերթին, դա կրկնություններից խուսանավելու միջոց է: Ավելին, ունենալով տարբեր իմաստային ծավալ, միևնույն լեզվամիավորը յուրովի է բնորոշում այս կամ այն եղելությունը: Այսինքն՝ տնտեսական իրադարձությունը կարող է անվանվել այն բառույթներով, որոնք արտացոլում են տնտեսության ոլորտի վարընթաց (collapse, crash, cut, decline, decrease, deflation, reduction, shrinkage, slide, slump, fall, disruption և այլ գոյականներ) և վերընթաց (advance, amelioration, development, enhancement, improvement, progress, promotion և այլ գոյականներ) փոփոխություններ [8]:

Տնտեսական իրադարձության անվանման համար կիրառվող լեզվամիավորների ուսումնասիրությունը տնտեսական մեդիադիսկուրսում թույլ տվեց եզրակացնել, որ

բացի որոշարկված իմաստներով գոյականներից, այն մեծապես անվանվում է իրադարձություն ցուցանող լայնիմաստ գոյականների (համաիրադարձային գոյականների) միջոցով, որոնք իրենց լայնիմաստության շնորհիվ տնտեսական մեդիադիսկուրսում կատարում են կարևոր գործառույթ՝ առաջացնելով ճանաչողական-փոխանվանական անցումներ: Այսպիսով՝ վերլուծության արդյունքում պարզել ենք, որ դիսկուրսում տնտեսական իրողությունների անվանման համար հիմնականում կիրառվում են այնպիսի համաիրադարձային միավորներ, որոնց ֆրեյմները կարող են առավելագույնս համալրվել տարբեր տնտեսական իրադարձությունների հատկանիշներով: Այս նպատակով բացի այնպիսի լեզվամիավորներից, ինչպիսիք են *event, happening, occurrence* և այլ բառեր (գոյականներ, որոնց նշանակություններում առկա չեն հստակ, որոշարկված հասկացույթներ՝ բացառությամբ «իրադարձություն» հասկացույթի) տնտեսական իրադարձության անվանման նպատակով կիրառվում են նաև համաիրադարձային լեզվամիավորներ, որոնք ցուցանում են պատճառահետևանքային կապեր (*result, cause, outcome, reason* և այլն), ինչպես նաև մարդու մտավոր գործունեության արդյունք հանդիսացող իրողություններ (*decision, idea, thought* և այլն), նպատակ/առաջնահերթություն անվանող բառույթներ (*goal, target, priority* և այլն), տնտեսական աշխարհում կատարվող գործարքներ (*deal, consolidation, project* և այլն) և գործողություն/գործունեություն ցուցանող գոյականներ (*act, activity* և այլն) [9]:

Հարկ է նշել, որ համաիրադարձային գոյականները, շնորհիվ իրենց իմաստային առանձնահատկությունների առավելագույն չափով համագործածական են, ուստի կիրառվում են բազմաթիվ դիսկուրսներում և անվանում են տարբեր իրադարձություններ՝ ըստ որոշակի դիսկուրսների ոլորտային պատկանելության: Այսպես՝ Ս. Ռեզնիկովան, ուսումնասիրելով քաղաքական իրադարձությունների մտապատկերման առանձնահատկությունները, անդրադառնում է դրանց անվանման համար կիրառվող լեզվամիավորներին և տարբերակում համաիրադարձային (օրինակ՝ *event, occurrence, incident, happening, episode* և այլն) և որոշարկված լեզվամիավորներ (օրինակ՝ *war, attack, scandal, summit, election* և այլն), այսինքն՝ իրենց բնորոշ հատկությունների միատեղմամբ որոշակի իրադարձություններ արտացոլող բառույթներ (Резникова, 2006: 5): Մեր վերլուծությունը ցույց է տալիս, որ

համաիրադարձային գոյականները տնտեսական մեդիադիսկուրսում, շնորհիվ իրենց լայնիմաստության և, հետևաբար՝ տեղեկատվական ներուժի, ունակ են համատեքստային տվյալներից հավաքագրելու տնտեսական իրադարձության մի ամբողջական պատկեր. այսինքն՝ տվյալ դիսկուրսում համաիրադարձային լեզվամիավորներն անվանում են տնտեսական բնույթի իրադարձություններ: Լեզվամիավորի տեղեկատվական ներուժ ասելով՝ նկատի ունենք ամեն տեսակի տեղեկատվության համակենտրոնացում, որտեղ մեկտեղվում են ինչպես լեզվական, այնպես էլ արտալեզվական գործոնները:

Լայնիմաստ լեզվամիավորների ունակությունն անվանելու իրադարձությունն ընդհանրացված ձևով ուղղակիորեն պայմանավորված է նրանց իմաստային առանձնահատկություններով: Սույն աշխատության մեջ ելակետային ենք համարում Ե. Երզնկյանի առաջարկած բառիմաստի սահմանումը, որը բնորոշում է այն որպես «լեզվամիավորով ցուցանշվող մտածողական (мыслительное) բովանդակություն, գիտակցության մեջ առարկայի՝ լեզվական փաստի վերածված այնպիսի արտացոլում, որն իր ու որոշակի հնչողության միջև հասարակության կողմից ամրագրված հաստատուն և անքակտելի կապի առաջացման հետևանք է» (Ерзинкян, 2013: 21):

Հարկ է նշել, որ լայնիմաստ բառերի դեպքում վերոնշյալ՝ «հասարակության կողմից ամրագրված հաստատուն և անքակտելի կապի» գաղափարը փոքր-ինչ թույլ է արտահայտված, քանի որ տվյալ գոյականներն ամեն անգամ այս կապը հաստատում են տարբեր իմաստային բովանդակությամբ միավորների հետ՝ ըստ համատեքստի տեղեկությունների վեր հանելով ինչ-ինչ հատկանիշներ: Դեռ ավելին, ընդհանրացված և անորոշ կերպով են տրվում նաև տվյալ բառերի բառարանային սահմանումները: Լայնիմաստ բառային միավորները բնութագրվում են իմաստային ունայնությամբ և հարաբերակցվում են այն հասկացությունների հետ, որոնք օբյեկտիվ իրականությունն արտացոլում են առավելագույնս ընդհանրացված ձևով (առավելագույն չափով ընդհանրացված բառիմաստ) (Медникова, 1989: 10–17):

Մի շարք աշխատություններում լայնիմաստությունը դիտարկվում է որպես բառիմաստային հատուկ տեսակ, որի հիմքում հասկացություն–կարգերն ու սեռանիշային հասկացություններն են: Այստեղ հարկ է առանձնացնել Ս. Դիմովայի տեսակետը, ըստ որի՝ լայնիմաստ բառի նշանակությունը կապված է առանձնակի

տիպի հասկացության հետ: Այդ հասկացություն–կարգի կամ սեռանիշային հասկացության ծագումն ու գոյությունը կապված են մարդկային մտածողության վերացարկման մի տեսակի՝ տեսականիշային ընդհանրացման հետ: Այդ պատճառով լայնիմաստության վերացարկումը սկզբունքորեն այլ բնույթ ունի, քան դրա մյուս տեսակները (Димова, 1971): Յուրաքանչյուր բառի նշանակության հիմքում ընդհանրացումն է, այսինքն՝ այն ընդհանուրի ու հաստատունի արտացոլումը, որ գտնվում է իրականության առարկաների ու երևույթների մեջ: Միաժամանակ, ընդհանրացումը, որպես չափանիշ, մշտապես նույնը չէ: Որոշ դեպքերում բառը հստակ արտահայտում է որևէ հատկություն, որն առանձնանում է միանման, միասեռ առարկաներում (միասեռ դասին պատկանող բառերի ընդհանրացում, օրինակ՝ «house», «book»): Այլ դեպքերում բառն առանձնակի բովանդակության կրող է, ինչը վերաբերում է այլատիպ, այլասեռ առարկաներին: Օրինակ՝ thing գոյականը կարող է նշանակել և՛ «house», և՛ «book», և՛ ցանկացած այլ երևույթ կամ առարկա: Այսպիսով՝ երկու օրինակում էլ առկա է ընդհանրացնող, նույնացման վերացարկումը, սակայն առաջին դեպքում բառը կապ ունի սեռանիշային, իսկ երկրորդում՝ կարգ հասկացության հետ:

Ինչպես երևում է ներկայացված որակումներից, լայնիմաստությունը դիտարկվում է որպես բառիմաստի առանձին տեսակ, որին հատուկ է անսահման վերացարկումը, ինչը թույլ է տալիս տվյալ լեզվամիավորներին ունենալ բազմաթիվ նշյալներ և համապատասխանել մտածողության, իրադարձությունների և այլնի «ցանկացած ընդհանրացնող պատկերացման»: Այստեղից կարելի է եզրակացնել, որ բառի լայնիմաստության գլխավոր հատկանիշներից մեկը նրա բազմանշալությունն է: Ֆրեյմներում նվազագույն քանակությամբ հատկանիշների առկայությունը հնարավորություն է ընձեռում տվյալ բառերին ունենալու գրեթե անսպառ թվով նշյալներ, որոնց բովանդակությունը որոշակի է դառնում միայն համապատասխան համատեքստում: Օրինակ՝ event բառն արտահայտում է իրադարձություն՝ առանց որակող հատուկ հատկանիշների (երեկույթ, հարսանիք, երեխայի ծնունդ, քննություն և այլն):

Տվյալ դասի բառերի բազմանշալության հետ կապված՝ հետաքրքրական է անդրադառնալ լայնիմաստության մեկնաբանությանը ճանաչողական

լեզվաբանության տեսանկյունից: Այստեղ ասվում է, որ լայնիմաստ բառերը որոշակի իմաստով «մաքուր տեսքով ճանաչողական կաղապարներ են, որոնք դրվելով նշալի ֆրեյմի վրա (ամեն անգամ տարբեր), ձևավորում են նրա իմաստը» (Беляевская, 1992: 22): Բառի ճանաչողական կաղապարն ընդհանրացված և վերացական կերպով ներկայացվող հասկացություն է, մինչդեռ ֆրեյմը լայնիմաստ լեզվամիավորի իմաստի համատեքստային իրագործումն է: Տարբեր լայնիմաստ բառերի միջոցով միևնույն հասկացության տիրույթի անվանման հնարավորությունը թույլ է տալիս ենթադրել, որ տվյալ դեպքում միևնույն նշալի տարբեր կերպ է «երևում»՝ շնորհիվ զանազան ճանաչողական կաղապարների: Վերջիններս լայնիմաստ բառերի իմաստային կառուցվածքում առանձնակի դեր են կատարում՝ որպես դրանց ամբողջական իմաստը բնորոշող նախադրյալներ (Беляевская, 2007: 10):

Այսպիսով՝ խոսելով լայնիմաստ գոյականների իմաստային կառուցվածքի մասին, կարող ենք ընկալել դա որպես «բաց» ճանաչողական կաղապար՝ ֆրեյմ, որը կարող է համալրվել նշալի իրադարձությանը բնորոշ տեղեկությամբ, և որում կարող են համատեղվել, զուգորդվել կամ հատվել մի շարք հասկացություններ: Համեմատենք, օրինակ, «result» կամ «deal» բառերը: Որպես դրանց ֆրեյմ է հանդես գալիս «արդյունք»-ը առաջին և «գործարքը»՝ երկրորդ դեպքում: Սակայն, ի՞նչ արդյունք կամ ի՞նչ գործարք: Տվյալ լեզվամիավորների սահմանումներում նշվող երևույթի կառուցվածքը չի բացահայտվում և չի որոշարկվում, և իրադարձությունը ներկայացվում է ընդհանրացված ձևով՝ առանց հատկանիշային բաղադրիչների բաժանելու: Այս դեպքում տվյալ բառերի սլոթների բովանդակությունը հստակեցվում է դիսկուրսի միջոցով՝ ակտիվացնելով և առաջին պլան մղելով այս լեզվամիավորներում տեղ գտած համապատասխան հատկանիշները, որոնք, իրենց հերթին, զուգորդվում են դիսկուրսում առկա նշալի/նշալիների հատկանիշների հետ:

Այս առումով, հետաքրքրական է նաև Խ. Շմիդի տեսակետն առ այն, որ լայնիմաստ գոյականները (նա դրանց տվել է փոխաբերական՝ shell nouns անվանումը) իրականացնում են ժամանակավոր հասկացության ձևավորման ճանաչողական գործառույթ: Դրանք խոսակցին թույլ են տալիս «ներապարունակել» (encapsulate) իր կառուցվածքով բարդ տեղեկությամբ հստակ գծագրված սահմաններով ժամանակավոր անվանական հասկացությունների մեջ (Schmid, 2000: 47):

Լայնիմաստ գոյականների անվանման նպատակով Խ. Շմիդի առաջարկած «shell nouns» փոխաբերությունը ներառում է տվյալ խմբի գոյականներին բնորոշ բոլոր առանձնահատկությունները: Դրանցից առաջինը ներպարունակող գործառույթն (encapsulation) է, որը ստեղծում է հասկացության կոնցեպտուալ շրջանակները: Երկրորդը բովանդակային գործառույթն է (containment), որը թույլ է տալիս «հասկացության պատյանի» մեջ պահել որոշակի բովանդակություն, իսկ երրորդը՝ ազդանշանայինը (signalling), որի միջոցով «պատյանի» տեսքից կարելի է կռահել, թե ինչ կա ներսում: Եվ, վերջապես, «shell» փոխաբերությունը իրականացնում է ամենակարևոր՝ կոնտեյնների գործառույթը. այսինքն՝ դատարկ «պատյանը» կարող է լցվել որևէ բանով: Նույնը shell nouns-ի դեպքում է. նրանց իմաստային կառուցվածքը դատարկ է և այն կարելի է լցնել տեղեկությամբ (Schmid, 2000: 30):

Հարկ է նշել, որ ոչ բոլոր լայնիմաստ գոյականներն ունեն ազդանշանի (signalling) գործառույթ: Այսպես՝ գոյություն ունի գոյականների մի խումբ (thing, affair, matter, stuff, fact և այլն), որոնց իմաստի որոշարկումը համատեքստից դուրս գրեթե անհնար է քանի որ այն այնքան լայն է, որ անհրաժեշտ են բարենպաստ պայմաններ «պատյանները» (shells) բացելու համար: Ե. Երզնկյանն այս մասին գրում է. «Լայնիմաստ բառը <...> պահանջում է բովանդակության որոշակիացում, հստակեցում, հակառակ դեպքում նրա հաղորդակցական արժեքը կհասնի նվազագույնի: Այդ պատճառով այլ բառերի հետ վերջինիս զուգակցումը պարտադիր բնույթ է կրում: Լայնիմաստ բառը սինսեմանտիկ է, քանի որ պահանջում է շարութային կապերի առկայություն, որոնք բացահայտում, հստակեցնում են դրա իմաստը» (Ерзинкян, 1988: 28): Հետևաբար՝ կարելի է ասել, որ լայնիմաստ բառերը կարծես թե «բաց» են իմաստային լրացման համար:

Լայնիմաստ բառերը որակապես տարբերվում են ինչպես վերացական, այնպես էլ բազմիմաստ բառերից: Առաջինները պատկերացում են տալիս հատկության, հատկանիշի մասին, ի տարբերություն լայնիմաստի, որն արտացոլում է բառի դասին բնորոշ առանձնահատկությունները (Джоламанова, 1978: 5–6): Ինչ վերաբերում է բազմիմաստությանը, ապա յուրաքանչյուր լայնիմաստ բառ իր էությանը բազմիմաստ է, սակայն լայն իմաստը արտահայտվում է բառիմաստային տարբերակների մակարդակում: Բազմիմաստ բառի իմաստային կառուցվածքը բնութագրվում է

մասնատվածությամբ, այսինքն՝ որակապես իրարից տարբերվող որոշակի իմաստների առկայությամբ: Ի տարբերություն բազմիմաստի, լայնիմաստ լեզվամիավորի իմաստային կառուցվածքին հատուկ է ամբողջականությունը, ինչն արտահայտվում է նրա իմաստների ներառական բնույթով: Լայնիմաստ և բազմիմաստ բառերի հիմնական տարբերությունը նաև նրանց իմաստային հիմքի էության մեջ է: Այսպես՝ բազմիմաստ բառերում առկա է առավել որոշակի ու համանման հատկանիշների ամբողջություն, իսկ լայնիմաստ բառային իմաստային հիմքում թույլ արտահայտված, ընդհանրացնող հատկանիշներն են (С. Димова, 1971, Б. Джоламанова, 1978 և այլք):

Լայնիմաստ բառերն առանձնանում են իրենց ապաիմաստավորման ենթարկվելու ունակությամբ. դա նշանակում է, որ առաջին պլան են մղվում ոչ թե նրանց բառային, այլ քերականական հատկանիշները՝ կատարելով սպասարկու գործառույթ: Ընդ որում, ապաիմաստավորումը չի որակվում որպես բառիմաստի ամբողջական բացակայություն և շեղում իր ուղղակի անվանական գործառույթից, այլ դիտվում է որպես բառիմաստի թուլացում, բառայինների համար օժանդակ հնարավորություն՝ կատարելու որոշակի գործառույթներ շարահյուսական մակարդակում:

Խոսքնաբանությամբ լայնիմաստ բառերը բնութագրվում են անչափ բարձր հաճախականությամբ՝ ստեղծելով հաղորդվող տեղեկության բովանդակության որոշակի խտացում: Այսպիսով՝ կարելի է ասել, որ տվյալ լեզվամիավորներն իրականացնում են նաև լեզվական տնտեսման գործառույթ:

Այսպիսով՝ վերլուծությունը ցույց է տալիս, որ տնտեսական մեդիադիսկուրսում տնտեսական իրողությունների անվանման համար բացի որոշարկված տնտեսական իրադարձություններ ցուցանող գոյականներից, մեծապես կիրառվում են նաև համաիրադարձային գոյականներ, որոնք ունակ են ներկայացնելու իրադարձությունն ամենից ընդհանրացված և վերացական ձևով՝ ճշգրտելով կամ հստակեցնելով իրենց բովանդակությունը համատեքստից արտամղվող տվյալների հիման վրա: Տվյալ լեզվամիավորների իմաստային կառուցվածքը նման է «բաց» ֆրեյմի, որում կարող են համատեղվել կամ հատվել նշյալ տնտեսական իրադարձության մի շարք

հասկացույթներ՝ կազմորոշելով վերջինիս ամբողջական պատկերը: Դրանք իրադարձության, հանգամանքների և հաջորդող փոփոխությունների որոշակի բնութագրերը չեն նշում, սակայն կարող են օգտագործվել հանգամանքային ցանկացած կադապարով իրադարձություններ անվանելու համար: Տվյալ լեզվամիավորների իմաստային ներուժը՝ լայնիմաստությունը, հնարավորություն է ընձեռում վերջիններիս տնտեսական մեդիադիսկուրսում համաիրադարձային փոխանունության ճանաչողական մեխանիզմի շրջանակներում կանոնավոր կերպով առաջացնելու ճանաչողական-փոխանվանական անցումներ, որոնց տիպաբանության մշակմանը անդրադառնում ենք ստորև:

5.3. Ճանաչողական-փոխանվանական կադապարների տիպաբանությունը

Հայտնի է, որ յուրաքանչյուր տեքստում առկա տեղեկությունը հարաբերակցվում է ինչ-որ իրական կամ երևակայական իրադարձության հետ: Դա բարդ երևույթ է՝ իր հատկանիշների և առանձնահատկությունների ողջ բազմազանությամբ և կարող է նկարագրվել տարբեր լեզվական միջոցների կիրառմամբ: Յուրաքանչյուր լեզվամիավոր իրադարձությունը նկարագրում է՝ առանձնացնելով վերջինիս որոշակի հատկանիշները: Միևնույն իրադարձությունը կարող է նկարագրվել բնորոշ հատկանիշների տարբեր զուգորդումներով: Իրադարձությունն անվանելու համար այս կամ այն հատկանիշի կամ տարրի ընտրությունը պայմանավորված է անհատի նպատակներով, ով ընտրում է համապատասխան լեզվամիավորներ լրացուցիչ տեղեկություն հաղորդելու նպատակով: Հոդվածագիրն ընտրում է այն տարրը, որի վրա ուզում է սևեռել ընթերցողի ուշադրությունը, և այդ համատեքստում տվյալ լեզվամիավորը ստանում է լրացուցիչ կարևորություն և իմաստային տարողունակություն, ինչն էլ թույլ է տալիս հասցեատիրոջը նկարագրվող իրադարձությունը մեկնաբանել որպես որևէ կարգի պատկանող երևույթ:

Այսպիսով՝ որոշակի իրադարձության կարգայնացումը տեղի է ունենում համապատասխան կարգն արտացոլող լեզվամիավորների կիրառմամբ, որտեղ վերջիններիս համակարգային նշանակությունն ակտիվանում է համապատասխան

հասկացույթի միջոցով՝ ապահովելով անհրաժեշտ իմաստի ձևավորում ու ընկալում: Բառի կարգայնացումը նախադասության իմաստը ձևավորելիս սահմանվում է որպես գործառնության կարգայնացում, որն իրականացվում է երեք սկզբունքների հիման վրա. առկայացում, վերակարգայնացում և բազմակարգայնացում: Առկայացումը ենթադրում է տվյալ կարգի նախատիպային բնութագրերի իրականացում, որին պատկանում է կիրառվող լեզվամիավորը համակարգային մակարդակում: Վերակարգայնացումը համակարգված ելակետային իմաստի փոփոխությունն է այլ կարգի նախատիպային բնութագրերի իրականացմամբ: Բազմակարգայնացումը ենթադրում է մի քանի կարգերի նախատիպային բնութագրերի միաժամանակյա իրագործում (Болдырев, 2001):

Անշուշտ, դիսկուրսում իրադարձություն անվանող լեզվամիավորների իմաստի ճիշտ ընկալումը կախված է համապատասխան տեղեկատվության պատշաճ ընտրությունից, որի վերձանումը ենթադրում է ինչպես լեզվական, այնպես էլ արտալեզվական գիտելիքների առկայություն: Լեզվական գիտելիքի հավաքագրումը տեղի է ունենում դիսկուրսի տեքստային բազայի և դրա տարրերի հաշվին՝ բառեր, բառակապակցություններ, նախադասություններ և այլն, մինչդեռ արտալեզվական գիտելիքն արտացոլված է անհատի գիտակցության մեջ՝ աշխարհի վերաբերյալ տեղեկույթի միավորների՝ ֆրեյմների տեսքով: Այսպիսով՝ դիսկուրսի որոշակի հատվածը և մտավոր տեղեկույթի այն հավաքակազմը, որի հաշվին բացահայտվում է բառի իմաստային բովանդակությունը, անվանում ենք նշյալի ճանաչողական-հասկացության ֆրեյմ (ՆՃՀՖ) (когнитивно-концептуальный фрейм денотата) (Ерзинкян, Арутюнян, 2006: 101): Այս ֆրեյմներից յուրաքանչյուրի հիմքում ճանաչողական որոշակի կառույց է, որի միջոցով կատարվում է համապատասխան տեղեկույթի վերակարգայնացում կամ բազմակարգայնացում: Ընդ որում, խոսակիցների ֆրեյմային գիտելիքների առավելագույն համընկնումն ապահովում է իրադարձություն անվանող լեզվամիավորներով փոխանցվող տեղեկույթի առավելագույն ընկալում:

Փորձելով կառուցել համապատասխան երևույթի մտավոր կաղապարը՝ մարդը մշտապես դիմում է մտածողության դեդուկտիվ (արտածության) և ինդուկտիվ (մակածության) եղանակներին: Հայտնի է, որ դեդուկցիան և ինդուկցիան, լինելով

մտածողության ամենակարևոր տեսակներից, մեծ դեր ունեն նոր գիտելիքների ձեռքբերման, մասնավորապես՝ մտահանգման գործընթացում (Johnson-Laird, 1991; Sternberg, 2009):

Դեդուկցիան իմացության գործընթացում որոշակի կարգի առարկաների և երևույթների մասին ընդհանուր գիտելիքներից անցումն է մասնավորի և եզակիի: Ինդուկցիան իմացության գործընթացում անցումն է մասնավոր գիտելիքներից ընդհանուրին, ցածրաստիճան ընդհանրական գիտելիքից՝ բարձրաստիճան ընդհանրական գիտելիքի: Այլ կերպ ասած, սա ճանաչողական մեթոդ է՝ կապված դիտարկումների և փորձարկումների արդյունքների ընդհանրացման հետ: Ճանաչողական գործընթացում ինդուկցիայի հիմնական գործառույթն ընդհանուր եզրակացությունների կատարումն է, ընդհանրացված գիտելիքների ձեռքբերումը: Այսպիսով՝ մտածական այս երկու եղանակների օգնությամբ անհատը կատարում է իրեն անհրաժեշտ հետևությունները կամ եզրակացությունները, որոնց կառուցումը պայմանավորված է մի շարք գործոններով: «Երբեմն ենթադրվում է, որ եզրահանգումը կատարվում է տեքստի կաղապարի հենքի վրա, երբեմն էլ համարվում է, որ դա կախված է նրանից, թե անհատը տվյալ դիպաշարում որ ֆրեյմի կամ սցենարի իրականացումն է դիտարկում որպես հավանական, և, համապատասխանաբար, այդ ամբողջության մեջ որ սլոթն է համարվում դեռևս չլրացված: Երբեմն մեծ նշանակություն է տրվում խոսողի/լսողի իմացությանը, ինչն օգնում է վերջիններիս վերականգնել նշյալ իրադարձությունների տրամաբանական շղթայի բացակայող օղակները՝ նույնիսկ այն դեպքում, երբ լեզվական հստակ արտահայտություն առկա չէ տեքստում» (Кыбрыкова et al., 1996: 33):

Այսպիսով՝ տնտեսական մեդիադիսկուրսում համաիրադարձային գոյականների միջոցով անվանվող նշյալ իրադարձության բովանդակության վերձանման նպատակով անհատը կիրառում է մի շարք վերլուծական եղանակներ, այդ թվում՝ դեդուկտիվ և ինդուկտիվ մտածողության մեթոդները. այսկերպ համալրվում է տվյալ լեզվամիավորների ֆրեյմների չլրացված սլոթների պարունակությունը և ստեղծվում տվյալ իրադարձության վերջնական մտավոր կաղապարը: Իրադարձություն ցուցանող բառերը խոսքում կիրառման պահին հստակեցմամբ, վերակարգայնացմամբ կամ բազմակարգայնացմամբ բացահայտում են տեղեկույթը՝

հագեցվելով որոշակի կարգին հատուկ նշալի/նշալների տեղեկատվությամբ: Այս բոլորը հանգեցնում է այն մտքին, որ նմանատիպ լեզվամիավորների գործառույթային կարգայնացման ժամանակ, այսինքն՝ խոսքում կիրառման պահին, գործի է դրվում մի բարդ ճանաչողական մեխանիզմ, որը սույն աշխատանքում անվանում ենք *համահրադարձային փոխանունություն*: Այս գործընթացում տնտեսական իրադարձության նկարագրման համար կիրառվող լեզվամիավորների իմաստային կառուցվածքում նշմարվում են առավել նշանակալի հատկանիշներ, որոնք սվյալ պահին մոտ կամ կից հարաբերության մեջ են որոշակի հասկացութային տիրույթների հատկանիշների հետ, այսպիսով՝ առավել նպատակահարմար լինելով անհրաժեշտ տեղեկույթը նկարագրելու համար: Շնորհիվ իրենց ուրույն իմաստային կառուցվածքի այս համահրադարձային լեզվամիավորները ունակ են տարբեր համատեքստերում ձեռք բերելու տարբեր իմաստային բովանդակություն՝ նշանակություն: Այս բառերի ճանաչողական-հասկացութային ֆրեյմները կրում են փոփոխական բնույթ և խոսքի մեջ հստակեցման ճանաչողական մեխանիզմի ներգործության ներքո ժամանակավորապես հարաբերակցում են զանազան հասկացութային տիրույթների հետ [10]: Համալրվելով տարաբնույթ բովանդակությամբ՝ համահրադարձային լեզվամիավորները կատարում են ճանաչողական-փոխանվանական անցումներ ու ձևավորում են նոր մտքեր ու նշանակություններ: Հետևապես՝ դիսկուրսում բառերն, իրենց առանձնահատկություններին համապատասխան շարունակաբար համագործակցում են այլ բառերի հետ: Այս առումով, իրավացիորեն է նշում Ե. Երզնկյանը, որ բառը բազմաթիվ տարրասեռ բնորոշումների խտացում է, և միևնույն բառը տարբեր կապեր է հաստատում այլ լեզվամիավորների հետ՝ համարվելով տարբեր ենթահամակարգերի տարր: Տարբեր հիմունքներով դասակարգվող այս ենթահամակարգերից յուրաքանչյուրում բառը ներկայանում է իր հատկություններից մեկի շնորհիվ, իր ինչ-որ մի կողմով (Ерзинкян, 2013: 26):

Այսպիսով՝ համահրադարձային փոխանունության ճանաչողական մեխանիզմը կից հասկացությունների փոխանցում է, որի ժամանակ հասկացույթ-աղբյուրը, ծառայելով որպես հղման կետ, մտավոր ներթափանցման ճանապարհով անցում է կատարում դեպի հասկացույթ-նպատակ կամ ակտիվացնում է հասկացույթ-

նպատակը: Այսինքն՝ համաիրադարձային բառերը, անվանելով նշյալ իրադարձությունը և ծառայելով միաժամանակ որպես հղման կետ և հասկացույթ-աղբյուր, պատճառում են ճանաչողական-փոխանվանական անցումներ և մտավոր ուղի են հարթում դեպի հասկացույթ-նպատակ/ հասկացույթ-նպատակներ՝ այսկերպ ամբողջական դարձնելով նշյալ տնտեսական իրադարձության պատկերը [11]:

Փաստական նյութի ուսումնասիրությունը թույլ տվեց մեզ եզրակացնել, որ գործառույթային առումով տնտեսական իրադարձություն ցուցանշող լեզվամիավորներն իրականացնում են որոշակի ճանաչողական-փոխանվանական անցումներ, որոնց հիման վրա աշխատանքում մշակել ենք հետևյալ կաղապարները՝

1. ամբողջ – մաս/կոնտակտային վերակարգայնացում
2. ամբողջ – մաս/դիստանցիոն վերակարգայնացում
3. ամբողջ – մաս/դիստանցիոն բազմակարգայնացում
4. մաս – ամբողջ/կոնտակտային վերակարգայնացում
5. մաս – ամբողջ/դիստանցիոն վերակարգայնացում
6. մաս – ամբողջ/կոնտակտային բազմակարգայնացում
7. մաս – ամբողջ/ դիստանցիոն բազմակարգայնացում

Նշյալի ճանաչողական-հասկացութային ֆրեյմի (ՆՃՀՖ) վերակարգայնացման կամ բազմակարգայնացման սահմաններից կախված՝ առանձնացնում ենք կոնտակտային (մեկ նախադասության սահմաններում) և դիստանցիոն (ավելի քան մեկ նախադասության սահմաններում) ճանաչողական-փոխանվանական անցման կաղապարներ: Ամբողջ-մաս կաղապարում լեզվամիավորը հաջորդում է ՆՃՀՖ-ին, և այստեղ հասցեատերը, փորձելով վերձանել նշյալ իրադարձության բովանդակությունը, մեր կարծիքով, դիմում է դեդուկտիվ մտածողության մեթոդին: Մինչդեռ մաս-ամբողջ կաղապարում ցուցանշող բառը նախորդում է ՆՃՀՖ-ին, և անհատն ուղղորդվում է ինդուկտիվ մտահանգման մեխանիզմով, որպեսզի լիարժեք դարձնի նշյալ իրադարձության մտապատկերումը: Ինչպես վերը նշվել է, ՆՃՀՖ-ն այն շրջանակն է, որի սահմաններում բացահայտվում է համաիրադարձային լեզվամիավորի՝ աղբյուր նպատակի կողմից ակտիվացվող հասկացութային տիրույթների բովանդակությունը: Այն դեպքում, երբ հասկացույթ-աղբյուրը մտավոր ներթափանցում է իրականացնում մեկ հասկացութային տիրույթ՝ հասկացույթ-նպատակ, կատարվում է

վերակարգայնացման գործառույթը: Բազմակարգայնացման ժամանակ հասկացույթ-աղբյուրը մտավոր ներթափանցում է իրականացնում մեկից ավելի հասկացույթ-նպատակներ:

Ներկայացնենք վերոնշյալ կաղապարների գործառութային առանձնահատկությունները.

1. Ամբողջ-մաս/կոնտակտային վերակարգայնացում.

At a ceremony yesterday to mark *the start of work on the first dedicated US high-speed rail line*, Jerry Brown, California's governor, acknowledged that the vast **project** had its critics. (www.ft.com, January 7, 2015)

Տվյալ նախադասության մեջ, «project» բառը հասկացույթ-աղբյուրն է, որը ակտիվացնում է հասկացույթ-նպատակը՝ առաջին ամերիկյան արագընթաց երկաթուղու աշխատանքի մեկնարկը և իրականացնում է ամբողջ-մաս/կոնտակտային վերակարգայնացման գործառույթ, քանի որ իր ՆՃՀՖ-ը գտնվում է նույն նախադասության մեջ, որին և project լեզվամիավորը հաջորդում է:

As recently as the beginning of January, most big donors and Republican political operatives had expected Mr Romney to remain on the sidelines *after his 2012 election defeat by Barack Obama*, **a result** that weighed heavily on him and his family. (www.ft.com, January 31, 2015)

Այս օրինակում հասկացույթ-աղբյուրը «result» բառն է, որը մտավոր ներթափանցում է իրականացնում հասկացույթ-նպատակ՝ 2012 թ. ընտրություններում պարտությունը և նույնպես կատարում է ամբողջ-մաս/կոնտակտային վերակարգայնացման գործառույթ, քանի որ իր ՆՃՀՖ-ը նույն նախադասության մեջ է, որին և հաջորդում է «result» լեզվամիավորը:

2. Ամբողջ – մաս/դիստանցիոն վերակարգայնացում.

Three German carmakers – Audi, BMW and Daimler – joined together to secure the winning bid for Nokia's Here, the Finnish company's digital mapping and location

intelligence business, which is based in Berlin. Here supplies the most detailed maps available of road networks in 196 countries as well as navigation services that are essential to the future of autonomous cars. The **deal** is a big victory for the car makers, which were worried that Here's technology could fall into the hands of Uber or Google. (www.economist.com, August 8, 2015)

Վերոնշյալ տեղեկույթն իրազեկում է գերմանական ավտոարտադրության երեք նշանավոր ընկերությունների գործարքի մասին. նրանք գնել են «Nokia's Here» ֆիննական քարտեզագրման ձեռնարկությունը: Հաջորդ նախադասության մեջ նշվում է, որ այս գործարքը՝ (deal) մեծ հաղթանակ է ավտոարտադրողների համար: Այստեղ ամբողջ-մաս/դիստանցիոն վերակարգայնացման ճանաչողական-փոխանվանական անցումն իրականանում է «deal» հասկացույթ-աղբյուրի օգնությամբ, որը գտնվում է իր ՆՃՀՖ-ից մեկ նախադասություն հեռավորության վրա, այսինքն՝ հեռակայրեն է հարաբերակցվում իր հասկացույթ-նպատակը ներկայացնող ֆրեյմի հետ:


Now, Hutchison Whampoa's Three is proposing to buy a rival network, O2, for some £10bn. As ever with large mergers, the companies say the activity will benefit customers. But the reality is that it raises questions requiring firm answers from those in charge of the rules. The bidders are brimful of assurances about the advantages that will flow from **consolidation**. (www.ft.com, January 28, January 2015)

Վերոնշյալ օրինակում, խոսքը «Hutchison Whampoa's Three» և «O2» մրցակից ընկերության միավորման մասին է, և «consolidation հասկացույթ-աղբյուրի շնորհիվ առկա է ամբողջ-մաս/դիստանցիոն վերակարգայնացման ճանաչողական-փոխանվանական անցում, քանի որ այն մտավոր ներթափանցում է իրականացնում հասկացույթ-նպատակի ՆՃՀՖ երկու նախադասությունից հետո ընկած հատվածում:

Այսպիսով՝ ամբողջ-մաս կոնտակտային/դիստանցիոն վերակարգայնացման կաղապարում համաիրադարձային լեզվամիավորը հաջորդում է ՆՃՀՖ-ին, որտեղ առկա է տեղեկույթ մեկ իրադարձության մասին, և այստեղ հասցեատերը, փորձելով վերձանել նշյալ իրադարձության բովանդակությունը, դիմում է դեդուկտիվ մտածողության մեթոդին: Սխեմատիկորեն տնտեսական իրադարձության մտապատկերի վերականգնման գործընթացը ամբողջ-մաս կոնտակտա-

յին/դիստանցիոն վերակարգայնացման կաղապարի շրջանակներում կարելի է ներկայացնել հետևյալ կերպ.

Գծապատկեր 11.



3. Ամբողջ–մաս/դիստանցիոն բազմակարգայնացում.

Տվյալ կաղապարն ուսումնասիրենք «It is only a matter of time before the next recession strikes. The rich world is not ready» վերնագրի ներքո ներկայացվող հոդվածով, որտեղ նշվում է, որ 2015 թ. առաջին անգամ 2007 թ. ի վեր, կարելի է խոսել ֆինանսական քաոսի և դեֆլյացիայի դեմ պայքարի հաջող հանգուցալուծման մասին: Այդուհանդերձ, դեռևս շատ խնդիրներ են ծառայած, և ևս մեկ տնտեսական ճգնաժամն անդառնալի հետևանքներ կունենա տնտեսության համար: Այնուհետև, հոդվածում մանրամասնորեն նկարագրվում է ԱՄՆ–ի տնտեսական վիճակը՝ հաղորդելով տնտեսական աճ ցուցանշող այնպիսի տվյալներ, ինչպիսիք են մեքենաների վաճառքի և աշխատատեղերի նշանակալի ավելացումը, ամերիկյան ձեռնարկությունների կողմից 280000 նոր աշխատողներ վարձելը և գործատուների համար ցանկալի աշխատողներ գտնելու նպատակով մեծ գումարներ տրամադրելը՝ հավելելով, որ տնտեսական աճի տեմպը վերականգնվում է.

The good news comes mainly from America, which leads the rich–world pack. Its unexpected contraction in the first quarter looks like a blip, owing a lot to factors like the weather. The most recent data, including surging vehicle sales and another round of robust employment figures, show that the pace of growth is rebounding. American firms took on

280,000 new workers last month. Bosses at last have to pay more to find the workers they need...

Վերոնշյալին հաջորդում է մեկ այլ տեղեկույթ՝ նվիրված մի շարք զարգացած երկրների՝ ներառյալ Անգլիայի, Ճապոնիայի, Ռուսաստանի, Չինաստանի և Բրազիլիայի տնտեսական վիճակին առնչվող համեմատական լրահոս: Այստեղ խոսվում է նաև Եվրոպական կենտրոնական բանկի այս երկրներին վերաբերող գործունեության մասին: Սույն տեղեկույթը բովանդակում է 5 պարբերություն (մոտավորապես՝ 30 նախադասություն), որին հաջորդում է ԱՄՆ-ի տնտեսական ապաքինման (recovery) մասին տեղեկույթը.

Because America's **recovery** is strongest, that is where debate about how fast to return monetary policy to normal is the fiercest. (www.economist.com, June 13, 2015)

Ինչպես երևում է, «recovery» հասկացույթ-աղբյուրը այստեղ իրականացնում է ամբողջ-մաս/դիստանցիոն բազմակարգայնացման ճանաչողական-փոխանվանական անցում, քանի որ տվյալ դեպքում ակտիվանում են մի շարք հասկացույթ-նպատակներ՝ որոշակի իրադարձություններ.

1. Its unexpected contraction in the first quarter looks like a blip,
2. Surging vehicle sales,
3. Another round of robust employment figures,
4. The pace of growth is rebounding,
5. American firms took on 280,000 new workers last month,
6. Bosses are at last having to pay more to find the workers they need:

Վերլուծենք ևս մեկ օրինակ, որտեղ «factor» լեզվամիավորը հանդես է գալիս որպես հասկացույթ-աղբյուր և կատարում է ամբողջ-մաս/դիստանցիոն բազմակարգայնացման ճանաչողական-փոխանվանական անցում, քանի որ մտավոր ներթափանցում է իրականացնում մի քանի հասկացույթ-նպատակներ, որոնք տեղ էին գտել նախորդ նախադասություններում.

Central bankers and other regulators also bear blame, for it was they who tolerated this folly. The macroeconomic backdrop was important, too. The “Great Moderation” – years of low inflation and stable growth – fostered complacency and risk-taking. A “savings glut” in Asia pushed down global interest rates. Some research also implicates


*European banks, which borrowed greedily in American money markets before the crisis and used the funds to buy dodgy securities. All these **factors** came together to foster a surge of debt in what seemed to have become a less risky world. (www.economist.com, September 7, 2013)*

Դիցուք՝ «factor» հասկացույթ-աղբյուրի ՆՃՀՖ-ը ներառում է հետևյալ հասկացույթ-նպատակները, որոնք համաշխարհային ճգնաժամի հինգ հիմնական պատճառներն են. կենտրոնական բանկի հանդուրժողականությունը, մակրոտնտեսական անկումը, ցածր ինֆլյացիան և հաստատուն տնտեսական աճը, որոնց արդյունքում խրախուսվել էր ձեռներեցությունը, Ասիայում խնայողությունների մեծաքանակությունը, որն, իր հերթին, իջեցրել էր համաշխարհային տոկոսադրույքների մակարդակը և, վերջապես, եվրոպական բանկերի գործելաճը, որոնք ազահորեն գումարներ էին վերցրել և օգտագործել դրանք կասկածելի արժեթղթերի գնման համար.

1. Central bankers and other regulators also bear blame, for it was they who tolerated this folly,
2. The macroeconomic backdrop was important, too,
3. The “Great Moderation”– years of low inflation and stable growth – fostered complacency and risk-taking,
4. A “savings glut” in Asia pushed down global interest rates,
5. Some research also implicates European banks, which borrowed greedily in American money markets before the crisis and used the funds to buy dodgy securities.

Ամբողջ-մաս դիստանցիոն բազմակարգայնացման կաղապարում համահրադարձային լեզվամիավորը հաջորդում է ՆՃՀՖ-ին, որտեղ առկա է մեկից ավելի իրադարձությունների բովանդակությանը վերաբերող տեղեկույթ, և այստեղ հասցեատերը, փորձելով վերծանել նշյալ իրադարձությունների բովանդակությունը, կրկին դիմում է դեդուկտիվ մտածողության մեթոդին: Սխեմատիկորեն տնտեսական իրադարձության մտապատկերի վերականգնման գործընթացը ամբողջ-մաս դիստանցիոն բազմակարգայնացման կաղապարի շրջանակներում կարելի է ներկայացնել հետևյալ կերպ.

Գծապատկեր 12.



4. Մաս-ամբողջ/կոնկրետության վերակարգայնացում.

Ուսումնասիրենք ճանաչողական-փոխանվանական կաղապարը, որը իրականացվում է «priority» լեզվամիավորի օգնությամբ: Նույն նախադասությունից տեղեկանում ենք, որ Հունաստանի Սիրիզա կուսակցության առաջնահերթություններից է երկրի տնտեսությունում օլիգարխների գերակայության նվազեցումը: Առաջնահերթության հասկացության տիրույթը հասկացույթ-նպատակն է, որն ակտիվացվում է «priority» հասկացույթ-աղբյուրի կողմից՝ իրագործելով մաս-ամբողջ վերակարգայնացումը.

Greece’s hard-left Syriza party says one of its top **priorities** if it comes to power in the January 25 general election will be *to tackle the “oligarchs” grip on the Greek economy, starting with their strangle hold on the media.* (www.ft.com, January 7, 2015)

Քննարկենք ևս մեկ օրինակ.

For example, Intelis also part of the Industrial Internet Consortium, along with AT&T and Cisco, which has a stated **goal** “*to influence the global development standards process for internet and industrial systems*”. (www.ft.com, January 7, 2015)

Այստեղ, «goal» հասկացույթ-աղբյուրը մտավոր ներթափանցում է իրականացնում հասկացույթ-նպատակ (ազդել համացանցի և արդյունաբերական համակարգերի համաշխարհային չափանիշների զարգացման գործընթացի վրա)՝ կատարելով մաս-ամբողջ/կոնտակտային վերակարգայնացման ճանաչողական-փոխանվանական անցում, քանի որ դա իր ՆՃՀՖ-ի հետ միևնույն նախադասության մեջ է:

Հաջորդ օրինակում «target» հասկացույթ-աղբյուրը իրականացնում է մաս-ամբողջ/կոնտակտային վերակարգայնացման ճանաչողական-փոխանվանական անցում՝ ակտիվացնելով իր ՆՃՀՖ-ի մեկ հասկացութային տիրույթը՝ հասկացույթ-նպատակը (ծայրահեղ աղքատության ամբողջական վերացում մինչև 2030 թ.):

This conspicuous success has set the stage for a more audacious **target**: *the complete elimination of extreme poverty by 2030*. (www.economist.com, February 28, 2015)

5. *Մաս-ամբողջ/դիստանցիոն վերակարգայնացում.*


Start with the **folly** of the financiers. *The year before the crisis saw a flood of irresponsible mortgage lending in America*. (www.economist.com, September 7, 2013)

«The Economist» պարբերականի սույն հոդվածում քննարկվում են 2008 թ. ֆինանսական ճգնաժամի պատճառները: Դրանցից մեկը ֆինանսիստների անմիտ սխալն էր (folly)՝ ԱՄՆ-ում մինչճգնաժամային տարիներին մեծաքանակ գրավադրման փոխառությունների տրամադրումը, որն, իր հերթին, որակվում է որպես անպատասխանատու քայլ: Այսպիսով՝ այստեղ «folly» հասկացույթ-աղբյուրը մտավոր ներթափանցում է կատարում հասկացույթ-նպատակ՝ «The year before the crisis saw a flood of irresponsible mortgage lending in America»՝ իրականացնելով մաս-ամբողջ/դիստանցիոն վերակարգայնացման ճանաչողական-փոխանվանական անցում:

Այսպիսով՝ մաս-ամբողջ կոնտակտային/դիստանցիոն վերակարգայնացման կաղապարում համաիրադարձային լեզվամիավորը նախորդում է ՆՃՀՖ-ին, որտեղ առկա է մեկից ավելի իրադարձությունների բովանդակությանը վերաբերող տեղեկույթ, և այստեղ հասցեատերը, փորձելով վերձանել նշյալ տնտեսական

իրադարձությունների բովանդակությունը, դիմում է ինդուկտիվ մտածողության մեթոդին: Սխեմատիկորեն տնտեսական իրադարձության մտապատկերի վերականգնման գործընթացը մաս-ամբողջ կոնտակտային/դիստանցիոն վերակարգայնացման կադապարի շրջանակներում կարելի է ներկայացնել հետևյալ կերպ.

Գծապատկեր 13.



6. *Մաս-ամբողջ/կոնտակտային բազմակարգայնացում.*

Հաջորդ օրինակում «decision» հասկացույթ-աղբյուրի շնորհիվ իրականանում է մաս-ամբողջ/կոնտակտային բազմակարգայնացման ճանաչողական-փոխանվանական անցում, քանի որ միևնույն նախադասության մեջ նշվում են «decision» լեզվամիավորին հաջորդող ՆՃՀՖ-ի հասկացույթ-նպատակները՝ «Yahoo» ընկերության որոշման բովանդակությունը (տրամադրել \$40 միլիարդ «Alibaba» ընկերությանը, ինչպես նաև տվյալ որոշման մեկնաբանումը): Այսպիսով՝ «decision» հասկացույթ-աղբյուրը մտավոր ներթափանցում է իրականացնում երկու հասկացույթ-նպատակ՝

1. *decision 1.* – to spin off its \$40bn stake in Alibaba into a separate, public company
2. *decision 2.* – marks one of the most dramatic shareholder victories in recent memory

Yahoo’s **decision** to spin off its \$40bn stake in Alibaba into a separate, public company marks one of the most dramatic shareholder victories in recent memory. (www.ft.com, January 28, 2015)

Մաս-ամբողջ/կոնտակտային բազմակարգայնացման ճանաչողական-փոխանվանական անցում է իրականացվում նաև «factor» (գործոն) բառի միջոցով, քանի որ հետևյալ նախադասության մեջ դա հանդես է գալիս որպես հասկացույթ-աղբյուր, որն ակտիվացնում է երկու հասկացույթ-նպատակ՝

1. factor 1. the still low probability attached by the markets to Greek exit

2. factor 2. confidence in the European Central Bank's ability and willingness to limit contagion:

“This sanguine response reflects a number of **factors**, including *the still low probability attached by the markets to Greek exit and confidence in the European Central Bank's ability and willingness to limit contagion*,” said Julian Jessop at Capital Economics. (www.ft.com, January 28, 2015)

Հաջորդ օրինակում condition գոյականը ակտիվացնում է երկու հասկացույթ-նպատակ՝ կատարելով մաս-ամբողջ/կոնտակտային բազմակարգայնացման ճանաչողական-փոխանվանական անցում, քանի որ տվյալ լեզվամիավորի ֆրեյմը համալրվում է երկու իրադարձություններին վերաբերող տեղեկույթով՝

1. condition 1. to stop the supply of arms to the rebels

2. condition 2. *provide full cooperation in the investigation into the shooting down of Malaysia Airlines flight MH17:*

The punitive measures, the most extensive EU sanctions imposed on Russia since the cold war, were agreed by ambassadors from the 28 member states after a seven-hour debate. They decided that Moscow had not fulfilled the **conditions** laid down by foreign ministers last week, *to stop the supply of arms to the rebels and provide full cooperation in the investigation into the shooting down of Malaysia Airlines flight MH17.* (www.theguardian.com, July 29, 2014)

7. Մաս-ամբողջ/դիստանցիոն բազմակարգայնացում.

Վերլուծենք մաս-ամբողջ/դիստանցիոն բազմակարգայնացման ճանաչողական-փոխանվանական անցումը «success» գոյականի օրինակով, որտեղ դա, ներկայանալով որպես հասկացույթ-աղբյուր, միաժամանակ ակտիվացնում է չորս

հասկացույթ-նպատակ, որոնց ՆՃՀՖ-ի սահմանները տեղակայված են հաջորդող նախադասություններում.

1. Alone in the European Union, Poland did not suffer a recession after the financial crisis,
2. Its economy has grown by 33% since 2007, compared with 2% for the euro zone,
3. Its transport and energy infrastructure has been transformed,
4. Poland has been a dependable partner for policymakers in Berlin, Brussels and Washington, DC.

It is one of Europe's shining **successes**. *Alone in the European Union, Poland did not suffer a recession after the financial crisis. Its economy has grown by 33% since 2007, compared with 2% for the euro zone. Its transport and energy infrastructure has been transformed. Poland has been a dependable partner for policymakers in Berlin, Brussels and Washington, DC.* (www.economist.com, August 8, 2015)

Դիտարկենք ևս մեկ մաս-ամբողջ/դիստանցիոն բազմակարգայնացման ճանաչողական-փոխանվանական անցման օրինակ, որտեղ «milestone» հասկացույթ-աղբյուրը մտավոր ներթափանցում է կատարում երեք հասկացույթ-նպատակ, որոնց ՆՃՀՖ-ը տեղակայված է հաջորդող նախադասություններում.


1. In 1990, 36% of the world's population lived in abject poverty,
2. By 2010 this was down to 18%,
3. The number of those in such desperate straits has fallen from 1.9 billion to about 1billion today.

An unwieldy forum, the United Nations struggles to get nations to agree to firm targets, let alone achieve them. So it is deservedly proud of having already met its goal of halving the share of people living in extreme poverty by the end of this year, compared with the level of 1990. In fact, the **milestone** was reached five years early. *In 1990, 36% of the world's population lived in abject poverty. By 2010 this was down to 18%. In absolute terms, the number of those in such desperate straits has fallen from 1.9 billion to about 1billion today.* (www.economist.com, February 28, 2015)

Այսպիսով՝ մաս-ամբողջ կոնտակտային/դիստանցիոն բազմակարգայնացման ճանաչողական-փոխանվանական կաղապարում համաիրադարձային լեզվամիավորը

նախորդում է ՆՃՀՖ-ին, որտեղ առկա է մեկից ավելի իրադարձությունների բովանդակությանը վերաբերող տեղեկույթ, և այստեղ հասցեատերը, փորձելով վերականգնել նշյալ իրադարձությունների բովանդակությունը, կրկին դիմում է ինդուկտիվ մտածողության մեթոդին: Սխեմատիկորեն տնտեսական իրադարձության մտապատկերի վերականգնման գործընթացը մաս-ամբողջ կոնտակտային/դիստանցիոն բազմակարգայնացման կադապարի շրջանակներում կարելի է ներկայացնել հետևյալ կերպ.

Գծապատկեր 14.



Այսպիսով՝ հաղորդակցման ընթացքում, տեղեկույթը հաճախ հաղորդվում է լրագրողի կողմից ընտրված համաիրադարձային լեզվամիավորներով, որոնք, շնորհիվ իրենց լայնիմաստային ներուժի, ստանում են լրացուցիչ կարևորություն և իմաստային տարողունակություն: Իրադարձությունը/իրադարձությունները փոխանվանաբար անվանելու նպատակով այս կամ այն լեզվամիավորի ընտրությունը պայմանավորված է մի շարք գործոններով: Առաջին հերթին, բառային միավորների իմաստային բովանդակությունից ելնելով, լրագրողը որոշում է, թե դրանցից որն է առավել նպատակահարմար որոշակի իրադարձություններ նկարագրելու համար: Այս լեզվամիավորներն ունեն ուրույն ֆրեյմներ և, ներկայանալով որպես հասկացույթ-աղբյուրներ, մտավոր ներթափանցում են իրականացնում մեկ կամ միաժամանակ

մեկից ավելի հասկացույթ-նպատակներ՝ հարաբերակցվելով դրանց հարակից հատկանիշների հետ, որոնք առավել տեղին են այս կամ այն իրողության բացահայտման համար:

Հատկանշական է, որ այս համաիրադարձային բառերի ֆրեյմների բովանդակությունը փոփոխական է և շնորհիվ ճանաչողական-փոխանվանական անցումների, ամեն անգամ հստակեցվում է: Դիսկուրսում այս լեզվամիավորների իմաստային բովանդակությունը կազմորոշվում է նշյալի ճանաչողական-հասկացութային ֆրեյմի (ՆՃՀՖ) սահմաններում, որտեղ կատարվում է համապատասխան տեղեկույթի վերակարգայնացում կամ բազմակարգայնացում: Վերակարգայնացման գործընթացում հասկացույթ-աղբյուրը մտավոր ներթափանցում է իրականացնում մեկ հասկացույթ-նպատակ, մինչդեռ բազմակարգայնացման գործընթացը ենթադրում է մեկից ավելի հասկացույթ-նպատակների ակտիվացում:

Համաիրադարձային փոխանունության ճանաչողական մեխանիզմը նշյալ օբյեկտիվ իրականության հատվածի համար մուտք է ապահովում դեպի անհատի մտավոր աշխարհ՝ ձևավորելով վերջինիս հասկացութային դաշտն այն գործոնների միջոցով, որոնք նա ընտրում է՝ հաշվի առնելով հաղորդակցական և խոսութային առանձնահատկությունների յուրօրինակ համադրությունը: Այսպես՝ հենվելով դիսկուրսից արտամղվող տեղեկատվության և անհատի հենքային գիտելիքների վրա, համաիրադարձային փոխանունության ճանաչողական մեխանիզմի շնորհիվ, համալրվում է օբյեկտիվ իրականության հատված անվանող համաիրադարձային միավորների տեղեկատվական ներուժը: Այս պարագայում համաիրադարձային լեզվամիավորները հանդես են գալիս որպես բարդ ֆրեյմային համալիրներ, որոնք ներկայացնում են երևույթների և իրադարձությունների մի շարք առանձնահատկություններ:

Համաիրադարձային լեզվամիավորների շնորհիվ կանոնավոր կերպով առաջացող ճանաչողական-փոխանվանական կաղապարների բացահայտումը և դասակարգումը թույլ են տալիս եզրակացնել, որ համաիրադարձային փոխանունության ճանաչողական մեխանիզմն անհրաժեշտ հնար է իրականության որևէ հատվածի՝ ամեն մի իրողության, այդ թվում՝ տնտեսական իրադարձության ընկալման համար:

Աշխատանքում ճանաչողական-փոխանվանական կադապարների վերլուծության արդյունքների հիման վրա որոշարկել ենք համաիրադարձային փոխանունության հիմնական գործառույթները:

Անշուշտ, առաջին հերթին, առաջնային կարելի է համարել *ճանաչողական գործառույթը*, քանի որ ճանաչողական փոխանունության գործընթացն ուղղակիորեն կապված է տեղեկատվության ընդունման, մշակման և վերամշակման հետ, որի արդյունքում հասանելի են դառնում նոր երևույթների և իրողությունների ընկալումը, իմաստավորումը, ինչպես նաև դրանց կարգայնացման հնարավորությունը:

Բացի այդ, ճանաչողական-փոխանվանական մեխանիզմը գործում է որպես կապող օղակ տարբեր իրադարձությունների միջև, որոնք շարադրվում են դիսկուրսում՝ այսպիսով իրականացնելով *դիսկուրսի ձևավորման գործառույթ*, որն էլ ապահովում է խոսընթացի շարունակականությունը:

Ճանաչողական-փոխանվանական անցումների առաջացման համար համաիրադարձային լեզվամիավորների կիրառումը դիսկուրսում հետապնդում է ևս մեկ նպատակ՝ նվազագույն լեզվական միջոցների կիրառմամբ փոխանցել բովանդակային և քանակական առումով առավելագույն չափի տեղեկատվություն: Այսպիսով՝ ճանաչողական փոխանունության մեխանիզմը իրականացնում է նաև *լեզվական միջոցների տնտեսման գործառույթ* [12]:

Վերը նշված գործառույթից բխում է ճանաչողական փոխանունության շրջանակներում համաիրադարձային լեզվամիավորների *ընդհանրացնող գործառույթը*: Իրադարձություն ցուցանող բառույթներն ընդհանրական կերպով անվանում են երևույթներ, գործողություններ՝ հղում կատարելով մի ամբողջական կարգի [13]:

Նշենք նաև, որ ճանաչողական-փոխանվանական անցումները հնարավորություն են ընձեռում հասցեատիրոջը բացահայտելու համաիրադարձային լեզվամիավորի՝ հասկացույթ-աղբյուրի ակտիվացրած հասկացույթ-նպատակի տեղեկույթը՝ դա վերամշակելու և իմաստավորելու համար: Այսպիսով՝ ճանաչողական փոխանունությունն իրականացնում է նաև *բացատրական գործառույթ*:

Ի վերջո, ճանաչողական-փոխանվանական անցմանը բնորոշ է *գործաբանական գործառույթը*, քանի որ որոշակի իրադարձության նկարագրման նպատակով

ընտրված լեզվամիավորը կարող է ազդել տեղեկատվության ընկալման հետագա գործընթացների վրա՝ ընթերցողի կամ, առհասարակ, հասցեատիրոջ մեջ արթնացնելով որոշակի դիրքորոշում տվյալ իրադարձության նկատմամբ [14]:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ուսումնասիրելով մարդու խոսքի խանգարման (աֆազիա) բնույթը՝ Ռ. Յակոբսոնն ուշադրություն է դարձնում այն հանգամանքին, որ դա առաջանում է երկու պատճառով. նախ՝ մարդը չի կարողանում բառերը փոխարինել իմաստով մոտ այլ բառերով, երկրորդ՝ ի վիճակի չէ բառերից հաջորդական շղթաներ կազմելու: Առաջին դեպքում, ենթադրաբար, խախտվում է մարդու ուղեղի փոխաբերության, երկրորդ դեպքում՝ փոխանունության կարողությունը (Якобсон, 1990): Ռ. Ուֆիմցևը, իր մենագրությունում անդրադառնալով այս երկու հնարների և մարդու խոսքային գործունեության սերտ կապին, նշում է, որ մարդու ընկալման գործընթացի դիտարկումները ևս մեկ անգամ ապացուցում են Ռ. Յակոբսոնի՝ լեզվի և խոսքի վերլուծության արդյունքում առաջ քաշված վարկածը (Уфимцев, 2010: 186):
2. Լեզվաբանների մի պատկառելի խումբ հստակորեն սահմանազատում է փոխաբերության և փոխանունության երևույթները, սակայն որոշ գիտնականներ փորձում են բացատրել վերջիններիս համատեղման սկզբունքները: Հասկացությային փոխաբերությունը և փոխանունությունը հիմնված են բարդ աստիճանակարգային ցանցի վրա, որը կարող է առաջացնել փոխաբերա-փոխանվանական անցումներ: Այսպես՝ մի հասկացությային տիրույթի մեկ այլ տիրույթ ներթափանցման ժամանակ հնարավոր է տիրույթի ինչ-որ հատվածի՝ հարակցային կապերի վրա հիմնված ակտիվացում, կամ տիրույթի հարակցային կապերի ակտիվացման համար կարող է պահանջվել նմանության զուգորդումների վրա հիմնված լրացուցիչ տեղեկություն: Փոխաբերության և փոխանունության այստեսակ համատեղումը Լ. Գուսենսը անվանել է փոխաբերա-փոխանունություն /metaphtonomy/: Ըստ էության, լեզվաբանը տարբերակում է փոխաբերարության և փոխանունության փոխազդեցության հետևյալ տեսակները՝
 - ա. Փոխաբերության առաջացում փոխանունությունից, որտեղ փոխանունությունը վերածվում է փոխաբերության /to beat one's breast/:

բ. Փոխանունությունը՝ փոխաբերության սահմաններում, օրինակ՝ *to bite one's tongue*, որտեղ *tongue* գոյականը նշանակում է անհատի խոսելու ունակություն:

գ. Փոխանունության հատկությունների կորուստ /*demetonymization*/ փոխաբերության սահմաններում, օրինակ՝ *to pay lip service*, որտեղ *lip service* արտահայտությունը, որը նշանակում է խոսել, կորցնում է իր փոխանվանական հիմքերը՝ արտահայտությունը ընկալելի դարձնելու համար:

դ. Փոխաբերությունը փոխանունության սահմաններում, երբ փոխաբերությունը կիրառվում է փոխանունությանը արտահայտչականություն փոխանցելու համար: Օրինակ՝ *to be on one's hind legs*, որտեղ *hind* արտահայտությունն առաջացնում է մարդկանց՝ կենդանի լինելու փոխաբերական իմաստը (Goossens, 1990):

3. Ավանդական լեզվաբանության մեջ բառի իմաստային կառուցվածքը սահմանվում է որպես ընդհանրացված վերացական կաղապար, բառիմաստային տարբերակների կանոնակարգված մի շարք, որը ձևավորում է փոխկապակցված տարրերի աստիճանակարգային համակարգ (Уфимцева, 2002): Սակայն համաիրադարձային լեզվամիավորների դեպքում ավելի ճիշտ է ընկալել վերջիններիս իմաստային համակարգը որպես ֆրեյմ, որի սլոթներն ունակ են համալրվելու նշյալ իրադարձությանը վերաբերող տարաբնույթ տեղեկույթով:

4. Հարկ է նշել, որ որոշ գիտնականների կարծիքով ոչ բոլոր փոխանվանական անցումներն են առաջացնում բառիմաստի փոփոխություն կամ նոր բառիմաստ: Այսպես՝ Դ. Շմելյովը, դիտարկելով փոխանունությունը որպես բառիմաստային և իմաստային-շարահյուսական երևույթ, նշում է, որ «գլուխ» լեզվամիավորի կիրառումը գլխացավի իմաստով բավարար պայման չէ «գլուխ» բազմիմաստ բառին ևս մեկ՝ գլխացավի (*боль в голове*) նշանակություն ավելացնելու համար (Шмелев, 2006):

5. Հետաքրքիր է նշել, որ գոյություն ունեն նաև «գործնական փոխանունություն և փոխաբերություն» հասկացություններ, որոնք, ըստ Ա. Սերիկովի, թույլ են տալիս մեզ կողմնորոշվել տարբեր իրավիճակներում: Ընդհանուր առմամբ, երբ մենք ընկալում ենք տվյալ իրադրությունը և նմանեցնում այն մեկ այլ իրադրության, գործում և մտածում ենք փոխաբերաբար: Երբ մենք հասկանում և շարունակում

ենք իրադրությունների հաջորդականությունը, գործում և մտածում ենք փոխանվանաբար: Իրադրությունը հասկանում ենք փոխանվանաբար, օրինակ, հետևյալ դեպքերում. եթե հյուրեր են եկել, նրանց հարկավոր է հյուրասիրել, եթե Նոր փարի է, ապա երեխաների հետ պետք է գնալ ամանորյա հանդեսի, եթե արձակուրդ է, ապա պետք է բնության գիրկը գնալ՝ հանգստանալու: Այնուհետև փոխաբերաբար մի փարը փոխարինում ենք մյուսով. հյուրերին թեյի փոխարեն սուրճ ենք առաջարկում, թափրոնի փոխարեն՝ կրկես գնում և այլն: Գործնական փոխաբերության էությունն այն է, որ ամբողջական իրադրության մի կողմը փոխարինվում է մեկ այլ կողմով, այլ գործողությամբ, որոնք նման են և՛ ձևով, և՛ նշանակությամբ: Գործնական փոխանունությունը կարելի է ընկալել որպես այն գործողությունների կրկնություն, որոնք, ըստ ինչ-որ մեկի անձնական փորձի կապված են նմանօրինակ հանգամանքների հետ: Եթե կրկնվեն իրադրության տեղը, ժամանակը, եղանակը, խոսակցի անունը, կարգը, ապա մարդը կգործի մոտավորապես այնպես, ինչպես նախկինում գործել է ինքը կամ իրեն ծանոթ մեկ այլ մարդ՝ նույնպիսի հանգամանքներում: Մենք նոր գիրք ենք վերցնում, եթե խանութում կամ գրադարանում այն նույն դարակում է դրված, որտեղ մեզ հետաքրքրող գրքերն են: Եթե ձեռքի տակ ունենք միևնույն հրատարակչության մի քանի հետաքրքրաշարժ գրքեր, ապա ուշադրություն ենք դարձնում նաև նույն հրատարակչության այլ գրքերին: Եթե հետաքրքրել է ամսագրի որևէ հոդված, ապա աչքի կանցկացնենք այդ ամսագրի այլ համարներ ևս: Եթե հետաքրքրել է թեման, կորոնենք նույն թեմային առնչվող այլ հեղինակների գրքեր: Եվ այսպես՝ գործնական փոխանունության էությունն այն է, որ իրադրության որևէ մասով ճանաչվում է մի որոշ հատված կամ իրադրությունն ամբողջությամբ, կամ էլ ամբողջական իրադրությամբ ճանաչվում են դրա առանձին մասերը (Сериков, 2007: 140–142):

6. Հասկացությային ածանցման տեսության շրջանակներում Լ. Բաբինան նույնպես նշում է, որ անհրաժեշտ է փարբերակել ածանցումը փոխաբերության դեպքում, երբ մասնակցում են ճանաչողական երկու փարբեր փիրույթներ, որոնք առաջանում են նոր բառիմաստի ձեռքբերման գործընթացում, և ածանցումը

- փոխանունության ժամանակ, որտեղ կատարվում է բառիմաստի ընդլայնում կամ նեղացում հասկացության մեկ տիրույթի հիման վրա (Бабуна, 2003: 14):
7. Շ. Կոուլսոնի և Տ. Օքլիի կարծիքով՝ հասկացության միասնացման սկզբունքը հիշեցնում է Գ. Միլլերի (Miller, 1956) մասնատման (chunking) հասկացությունը, որի համաձայն՝ մարդը կարող է կլանել տեղեկույթի մեծ քանակություն՝ դա միացնելով երկարաժամկետ հիշողության մեջ առկա գիտելիքի կառույցներին: Հեղինակները նշում են, որ ճանաչողական միասնական կաղապարի առանձնահատկությունն այն է, որ դա ինտեգրում է մի քանի մտավոր տարածություն: Միասնացման մեխանիզմը միայն ելակետային տարրերի գծային գումարման արդյունք չէ: Խառնուրդը մտավոր տարածությունների «ամալգամա» (համաձուլվածք) է, որը, դիսկուրսի զարգացմանը զուգընթաց, ենթակա է փոփոխությունների (Coulson, Oakley, 2000: 177, 2003: 56):
8. Հարկ է նշել նաև, որ կան աշխարհություններ, որոնք նվիրված են իրադարձային լեզվամիավորների առանձին խմբերի ուսումնասիրությանը: Այսպես՝ Ի. Յակուշևան, կատարելով որոշակի իրադարձություններ ցուցանող լեզվամիավորների դասակարգում, առանձնացնում է այնպիսիները, որոնք բնորոշում են հասարակական-քաղաքական (revolution, revolt), իրավական նորմերի խախտումներին (massacre, crime), քաղաքացիական արարողություններին (wedding, funeral), սպորտին (contest, race) և արվեստին (ball, concert) վերաբերող, ինչպես նաև բնության երևույթներ արձանագրող իրադարձություններ (cyclone, typhoon, earthquake) (Якушева, 1984):
- Հետաքրքրական է նաև Օ. Իրիսխանովայի պայմանական-իրադարձային լեզվամիավորների գաղափարը, համաձայն որի՝ դրանք իրադարձային կարգավիճակ են ձեռք բերում միայն որոշակի համատեքստում: Օրինակ՝ "What was your family life like, Savannah?" I asked, pretending I was conducting an interview. – "**Hiroshima**", she whispered (Ирисханова, 1997: 19):
- Իր հերթին, Օ. Դուբրովսկայան կատարել է անգլերենում և ռուսերենում տարբեր ոլորտների (կրոնական, կրթական, քաղաքական, իրավական, մշակութային և այլն) խոսքային իրադարձություններ (речевые события) անվանող գոյականների համեմատական վերլուծություն (Дубровская, 2001):

9. Ավանդական լեզվաբանության մեջ բառիմաստը դիտարկվում է որպես բարդ բազմաբաղադրիչ համակարգ, որի տարրերը կարող են ենթարկվել տրոհման և առանձին վերլուծման: Այս գործընթացի համար ընդունված է կիրառել Ջ. Կապրի և Ջ. Ֆոդորի կողմից մշակված բաղադրիչային վերլուծության մեթոդը (componential analysis), որը թույլ է տալիս տրոհել բառիմաստի տարրերը մանրագույն բաղադրիչների (իմաստություններ, իմակներ, իմաստային նշույթներ, տարբերակիչ հատկանիշներ, իմաստային բաղադրիչներ), որոնք ձևավորում են լեզվամիավորի իմաստը (Katz, Fodor, 1963): Միաժամանակ, հարկ է նշել, որ Ե. Բեյլանսկայան, հակադրելով բաղադրիչային և հասկացության վերլուծության մեթոդները, եզրակացնում է, որ բառի իմաստային կառուցվածքի (հեղինակի սահմանմամբ՝ բառի հասկացության սխեմայի) հասկացության վերլուծության դեպքում վեր է հանվում տվյալ լեզվամիավորով արտացոլված հասկացությի՝ առավելագույնս ընդհանրացված մտավոր կառույցը, որում առկա են ավելի փոքր կամ, այսպես կոչված, հիմնական (բազային) հասկացություններ: Վերջիններս նման են իմաստությունների, ուստի շատ հաճախ բաղադրիչային և հասկացության վերլուծության մեթոդները լեզվաբաններն ընկալում են նույնկերպ: Սակայն, ըստ հեղինակի, հասկացության վերլուծությունն ուղղված է համապատասխան հասկացության կառույցի «խորքային» առանձնահատկությունների, լեզվամիավորների կիրառման պայմանների և իմաստային ներուժի բացահայտմանը: Մինչդեռ, բաղադրիչային վերլուծության մեթոդը, որպես լեզվամիավորների իմաստների մանրագույն տարրերի ուսումնասիրություն, հետազոտում է բառերի իմաստներն ու նշանակությունները մակերեսային մակարդակում: Ե. Բեյլանսկայան ընդգծում է հասկացության վերլուծության մի շարք առավելություններ: Նախ՝ հիմնական հասկացությունները, ի տարբերություն իմաստությունների, ավելի ընդհանրական բնույթի են, և դրանց իմաստը հստակեցվում է համատեքստում: Հասկացության վերլուծության դեպքում, ըստ տարբեր բառարանների սահմանումների, ապահովվում է առավելագույն տեղեկատվություն տվյալ լեզվամիավորի համատեքստային կիրառման վերաբերյալ: Այսպիսի մոտեցմամբ միևնույն հիմնական հասկացությի կարող է հարվել այլ բառերի սահմանումներում առկա մի քանի

հասկացույթների հետ: Բացի այդ, ըստ բառի հասկացութային սխեմայի, հիմնական հասկացույթների բովանդակությունը սահմանվում է՝ շնորհիվ տրամաբանական եզրահանգման գործընթացների, այսինքն խոսողի մտապատկերում դրանց ունեցած նշանակության (Беляевская, 2008: 143): Ուստի, կարող ենք ասել, որ համաիրադարձային լեզվամիավորների դեպքում, հասկացութային սխեման ընդհանրական բնույթի է, գերիշխում են չորոշարկված և ոչ հստակ հասկացույթները:

Աշխատանքում կիրառելով հասկացութային վերլուծության մեթոդը՝ փորձել ենք ականառու և խորաքնին կերպով հետազոտել համաիրադարձային լեզվամիավորների իմաստային այն առանձնահատկությունները, որոնց շնորհիվ դիսկուրսի շրջանակներում հիմնական հասկացույթները հատվում են այլ երևույթներ անվանող համապատասխան հասկացույթների հետ՝ այս հավաքական խորապատկերում անվանելով տնտեսական իրադարձություններ և միաժամանակ իրագործելով համաիրադարձային փոխանունության ճանաչողական մեխանիզմը:

10. Հստակեցման ճանաչողական մեխանիզմը ենթադրում է որևէ առարկայի ճանաչողական պատկերի հագեցումը որոշարկված հատկանիշներով (Кондаков, 2003: 508):
11. Հարկ է նաև նշել, որ ճանաչողական փոխանունության այսպիսի մեկնաբանումը որոշակի իմաստով համընկնում է Պ. Կոխի առաջարկած՝ նշյալամետ (referent-oriented) փոխանունության գաղափարին (Koch, 2001) այն առումով, որ համաիրադարձային բառերը դիսկուրսում ունեն նշյալներ (մեր դեպքում՝ տնտեսական իրադարձություններ), և այստեղ իրենց հիմնական գործառույթը այդ նշյալներին հղում կատարելն է և դեպի նրանց հասկացութային դաշտ մտավոր ուղի հարթելը:
12. Չնայած փոխանունության գործաբանական հայեցակերպին նվիրված աշխատությունների սակավությանը, գրեթե բոլոր ուսումնասիրություններում շեշտադրվում է այն գաղափարը, որ դա մեծապես կիրառվում է լեզվական տնտեսման գործառույթ իրականացնելու նպատակով (Warren 1999: 128, Ruiz de Mendoza, Pérez 2001: 325):

13. Հասկացության փոխանունության ընդհանրացնող հատկանիշի մասին նշում է նաև Ն. Բոլդիրևը: Ամեն մի իրադարձություն կամ իրադարձությունների հաջորդականություն նկարագրելիս մենք անվանում ենք այն իրադարձությունները, որոնք ներգրավում, միասնացնում են ավելի որոշակի իրադարձություններ՝ այսպես ակտիվացնելով միջհասկացության կապերը և ապահովելով համապարփակ ընկալում: Օրինակ՝ «Կինը նստեց ավտոբուս:» նախադասությունը չի պահանջում լրացուցիչ մեկնաբանություն և մանրամասնում, որ կինը նստեց նստարանին, սկզբում ավտոբուսը կանգ առավ, վարորդը բացեց դուռը, կինը բարձրացավ աստիճաններով և այլն: Ինչպես և լեզվամիավորի իմաստը, նախադասության իմաստն ընդհանրացնում է գործողությունների մի կուռ ամբողջություն, և այս ընդհանրացման հիմքում գործում է հասկացության փոխանունության մեխանիզմը (Болдырев, 2002: 14):
14. Փոխանունության այս գործառույթը կապված է հարակից կապերի շեշտադրման, առանձնացման գաղափարի հետ: Օրինակ՝ «She is just a pretty face.» նախադասության մեջ «pretty face» արտահայտությունը ոչ միայն պարզապես նշանակում է գեղեցիկ անձ, այլև շեշտադրում է տվյալ անհատի բարեփոխությունը (*is not just a substitute expression for a pretty person but also highlights the prettiness of the person's face*) (Panther, Thornburg, 2007: 238):

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Սույն ատենախոսությունը նվիրված էր օբյեկտիվ իրականության մի հատվածի՝ տնտեսական իրադարձության լեզվաճանաչողական մոդելավորմանը:

Տնտեսական իրադարձություն է համարվում այն ամենը, ինչ կատարվում է համաշխարհային, ինչպես նաև առանձին վերցրած երկրների տնտեսություններում և ներառում է տնտեսական անկում և վերելք առաջացնող յուրաքանչյուր իրավիճակ, որը հասարակությունն արժևորում է որպես տնտեսական աշխարհում էական, կարևոր փոփոխություն: Տնտեսական իրադարձությունների ազդեցության ոլորտները բազմաթիվ են. վերջիններս ներգործում և իրենց անմիջական հետքն են թողնում անհատների, հանրության կենսակերպի, ինչպես նաև կազմակերպությունների, ընկերությունների գործունեության վրա: Իրազեկվելով տնտեսական աշխարհի իրադարձություններին՝ անհատն անմիջականորեն փորձում է կերտել համապատասխան երևույթների մտավոր կաղապարները, ներգրավվում է դրանք վերլուծելու գործընթացի մեջ, այսինքն որոշում է դրանց հնարավոր հեռանկարները, հետևանքներն ու վերջնական նպատակները, արդյունքում՝ կառուցում կամ ամբողջացնում է աշխարհի տնտեսական իր պատկերը:

Տնտեսական իրադարձությունների լուսաբանումը ՁԼՄ-ներում իրականացվում է տնտեսական դիսկուրսի միջոցով, որը սահմանվում է որպես տնտեսության և տնտեսագիտության ոլորտին առնչվող բանավոր կամ գրավոր խոսք, որն արտացոլում է տնտեսական աշխարհի իրողությունները և պատկերում դրանում տեղի ունեցող յուրաքանչյուր հաղորդակցում: Արդյունքում ի հայտ է գալիս մի յուրօրինակ՝ տնտեսական և մեդիադիսկուրսի համաձուլվածք, մի առանձնահատուկ այլընտրանքային աշխարհ, որն ունի իր սեփական կանոնները, խնդիրներն ու նպատակները: Տնտեսական մեդիադիսկուրսի նպատակն է հասարակության տնտեսական կյանքի իրադարձությունների լուսաբանումը, տնտեսության վիճակի մասին տեղեկատվությունը, տարբեր փոփոխությունների նկատմամբ որոշակի վերաբերմունքի ձևավորումը, տնտեսության զարգացման ուղղությունների ուսումնասիրությունը և այլն:

Տվյալ ուսումնասիրության մեջ, վերլուծելով տնտեսական իրադարձությունը

տնտեսական մեդիադիսկուրսի՝ այլընտրանքային աշխարհի համատեքստում, փորձ է արվել դիտարկելու այն ոչ միայն «իրադարձություն» եզրույթի գոյաբանական տեսանկյունից, այլ բոլոր այն գործոնների, որոնք որոշարկում են լրագրողի կողմից կիրառվող մի շարք առանձնահատուկ հնարներ՝ միտում ունենալով ընթերցողին հաղորդելու տնտեսական իրադարձության մասին որոշակի տեղեկույթ:

Իրադարձության գոյաբանական կադապարի ուսումնասիրությունը հնարավորություն ընձեռեց եզրակացնելու, որ վերջինիս հիմքում փոփոխության գաղափարն է, այն առումով, որ յուրաքանչյուր իրադարձության ավարտ ենթադրում է անցում նոր վիճակի, որն էապես տարբերվում է ելակետայինից: Իր հերթին, փոփոխությունը ներառում է գործընթացներ և գործողություններ: Տարածաժամանակային տեղորոշումը և գործողություն կատարողը ևս պարտադիր տարրեր են իրադարձության կայացման գործընթացում: Բացի այդ, իրադարձության համար կարևոր է նշանակալիության տարրը, քանի որ յուրաքանչյուր եղելություն, որպես կանոն, իր հետևանքն ու ազդեցությունն ունի անհատի, հանրության աշխարհընկալման կադապարի վրա և այս առումով էլ արդեն վերածվում է փաստի:

Տնտեսական իրադարձության ճանաչողական մոդելավորումը թույլ տվեց եզրակացնել, որ դա հարաշարժ իրողություն է, որն ընթանում է որոշակի հանգամանքներում, ըստ որոշակի սցենարի և հետևաբար՝ ընկալվում է ֆրեյմ-սցենարի միջոցով: Վերջինս պարունակում է սլոթներ, որոնք իրենց էությամբ երկու տեսակի են՝ միջուկային և պայմանական: Միջուկային մասի շնորհիվ հնարավոր է սցենարի ճանաչում իրադրության մեկնաբանության գործընթացում, իսկ պայմանական մասն այլընտրանքային տեղեկույթի կրողն է: Շրջակա աշխարհի հետ մարդու փոխազդեցության ժամանակ կատարվում է ֆրեյմ-սցենարի հարմարակցում որոշակի իրադրությանը՝ կախված անհատի՝ օբյեկտիվ իրականության մասին գիտելիքից: Միջուկային, այսինքն՝ իրադարձության համար պարտադիր սլոթներն են՝ սուբյեկտը (գործողություն կատարողը), փոփոխությունը, վայրը, ժամանակը: Պայմանական սլոթներ կարող են լինել տնտեսական իրադարձության օբյեկտը, պատճառը, հետևանքը, նպատակը, արժևորումը, կանխատեսումը և այլն: Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ տնտեսական մեդիադիսկուրսի համապարփակ ընկալման համար հաճախ անհրաժեշտ են ոչ միայն միջուկային, այլև որոշ

պայմանական սլոթներ, որոնք այս կամ այն դեպքում ակտիվանում են, առանձնանում և առաջ են մղվում տվյալ իրադարձության ընկալումը համապարփակ դարձնելու համար: Տնտեսական իրադարձության ընկալման ամբողջականությունն ապահովելու նպատակով անհատները կիրառում են նաև ճանաչողական այլ կառույցներ՝ իրադրային կաղապարներ, որոնք ներկայացնում են մարդկանց գիտելիքները, կենսափորձը: Անհատն, իրազեկվելով տնտեսական իրադարձություններին, ամեն անգամ համալրում և վերափոխում է այս իրադրային կաղապարները, նաև ստեղծում նորերը, որոնք, ի վերջո, հանգրվանում են նրա գիտելիքների շտեմարանում:

Առավել ծավալուն տնտեսական իրադարձությունների հոդվածային տարբերակներն արտացոլվում են մակրոսցենարներով, որոնք կարող են պարունակել մեկից ավելի միկրոսցենարներ: Դրանցից առաջինն առանցքային է տվյալ իրադարձության ընկալման համար, մինչդեռ մնացյալը ընթերցողին հաղորդում է իրադարձությանն առնչվող հավելյալ տեղեկություններ:

Տնտեսական իրադարձության ֆրեյմ-սցենարի սլոթների մանրազնին ուսումնասիրությունը թույլ տվեց վեր հանել վերջիններիս բովանդակային առանձնահատկությունները: Այսպես՝ տնտեսական իրադարձության սուբյեկտի դերում ամենից հաճախ հանդես են գալիս անհատը/անհատները, մասնավոր ընկերությունները և պետական կազմակերպությունները, տնտեսական աշխարհին վերաբերող իրողությունները, ինչպես նաև երկրներն ու քաղաքները: Տնտեսական իրադարձության փոփոխության սլոթն օրինաչափորեն կապված է այն առարկաների և երևույթների հետ, որոնք ներգրավված են տվյալ գործընթացի մեջ: Տնտեսական իրադարձության փոփոխությունը կարող է հանդես գալ որպես չիրականացված, բայց ծրագրավորված իրույթ: Դա կարող է դեռ գտնվել քննարկման փուլում, ինչպես նաև կրել դրական կամ բացասական բնույթ: Ժամանակի միջուկային սլոթը կապող օղակ է տեղեկույթի և իրականության միջև: Ժամանակային նշոթավորման լեզվական միջոցներն ի հայտ են գալիս քերականական և բառային մակարդակներում: Գործարար նորություններում դրանք ապահովում են տեղեկույթի ճշգրտությունը, հավաստիությունը, ինչպես նաև արդիականությունը: Տարածական տեղորոշման միջուկային սլոթն իրականացնում է մի շարք գործառույթներ՝ ընթերցողի վրա թողնել նպատակային ազդեցություն, փոխել որոշ երևույթների նկատմամբ նրա

աշխարհընկալումը, ընդհանրական բնույթ հաղորդել իրական գործող անձին՝ սուբյեկտին և այլն:

Պայմանական սլոթներից իր կարևորությամբ առաջնային է համարվում գործողությունն իր վրա կրողի՝ օբյեկտի սլոթը: Չնայած այն հանգամանքին, որ վերջինս կարող է արտահայտվել նաև ներակա ձևով, հատկանշական է, որ տնտեսական իրադարձությունը ինքնին մարդակենտրոն է և ունի անմիջական ազդեցություն անհատների, հանրության կենսակերպի վրա: Օբյեկտի սլոթը հանդես է գալիս անհատների, քաղաքների, պետությունների, հաստատությունների, ընկերությունների, տնտեսական աշխարհի իրույթների տեսքով:

Պատճառահետևանքային սլոթը կարող է նշվել անմիջապես վերնագրում, կարող է ստանալ բացասական կամ դրական արժևորում՝ ունենալով իր ուրույն ազդեցությունն անհատի, հանրության կենսամակարդակի և ընկերությունների ու կազմակերպությունների գործունեության վրա: Տնտեսական իրադարձության հետևանքը կարող է լինել իրական՝ տեղի ունեցած և ենթադրյալ: Լեզվական մակարդակում պատճառահետևանքային կապերը կարող են արտահայտվել մի շարք միջոցներով, այդ թվում՝ համապատասխան գոյականների, բայերի, մակբայների, ինչպես նաև շաղկապների օգնությամբ:

Արժևորման պայմանական սլոթը կարևոր է ընթերցողի կողմից տնտեսական իրադարձության ընկալման, ինչպես նաև լրագրողի կողմից իրադարձության ներկայացման առումներով: Տնտեսական իրադարձությունն անվանելով կամ որակելով նշուֆավորված լեզվամիավորով, ինչպես նաև կիրառելով այլ հնարներ՝ հողվածագիրն արդեն իսկ արժևորում և դասակարգում է դա՝ ըստ տվյալ հասարակությանը հարիր արժեհամակարգի և կարծրատիպերի: Այսպես նա կանխավ սահմանում է տվյալ իրադարձության հետ կապված տեղեկույթի ընկալումը: Այս լեզվամիավորներից յուրաքանչյուրի դերն առանցքային է արժևորման գործընթացում, քանի որ ներունակորեն պարունակում է մի ամբողջական տեղեկություն, որն իր ուրույն ազդեցությունն է թողնում ընթերցողի վրա: Ուսումնասիրությունը թույլ տվեց առանձնացնել տնտեսական իրողություններին առավել բնորոշ արժևորման սանդղակներ, որոնք են կարևորության, օգտակարության/արդյունավետության, կայունության/անկայունության, չափի, կարգի,

իրատեսության/հավանականության, խոհամտության, հարաշարժության, հուզական երանգավորման չափանիշները:

Կանխատեսման տարրի առկայությունը գործարար նորություններում ևս կրում է պայմանական բնույթ, և միշտ չէ, որ յուրաքանչյուր տնտեսական իրադարձություն լուսաբանվում է կանխատեսման տեսանկյունից: Կանխատեսման տարբեր վարկածներ և ենթադրություններ, չունենալով նշալներ օբյեկտիվ իրականության մեջ, համապատասխանում են «իրադարձություն–գաղափարներ» հասկացությանը: Դրանք մարդու կողմից հորինված՝ իրականանալի կամ ոչ իրականանալի ենթադրություններ են, որոնք կարող են տեղի ունենալ կամ տեղի չունենալ իրական կյանքում՝ կախված տարբեր հանգամանքներից: Հոդվածագիրը ներկայացնում է տնտեսական իրադարձությունը՝ համալրելով դա իր մշակած զարգացումներով: Կանխատեսումը կարող է դրսևորվել լեզվական տարբեր հարթակներում, ներառյալ, հիմնականում, ապառնի ժամանակաձևեր, պայմանական նախադասություններ, եղանակավորող բայեր, բառեր և բառային որոշակի կառույցներ:

Տնտեսական իրադարձության (ինչպես նաև դիսկուրսում արտացոլվող յուրաքանչյուր իրադարձության) հասկացութային դաշտի ձևավորման ճանաչողական մոտեցումը ենթադրում է մարդու մտածական կարևորագույն հնարներից մեկի՝ համաիրադարձային փոխանունության ճանաչողական մեխանիզմի ուսումնասիրություն: Ներկայանալով որպես հիմնարար գործընթաց՝ իրադարձության մոդելավորման ճանաչողական մեխանիզմ, վերջինս հանդես է գալիս իբրև իրականության ընկալման և կարգայնացման, աշխարհի մասին գիտելիքի և իմացության իմաստավորման ու կազմակերպման գերակա ձև, որի միջոցով ամբողջանում են մեր մտքերը, կազմվում է մեր կարծիքը, մտավոր կաղապարների ստեղծմամբ ձևավորվում է պատկերացում աշխարհի մասին ընդհանրապես և, մասնավորապես ամբողջանում է աշխարհի տնտեսական պատկերը:

Աշխատանքում առաջարկված «համաիրադարձային փոխանունություն» եզրույթը դիտարկվում է որպես բարդ մտավոր գործընթաց, որի ժամանակ հասկացութադրյուրը (համաիրադարձային լեզվամիավորը), ծառայելով որպես հղման կետ, մտավոր ներթափանցման ճանապարհով անցում է կատարում դեպի հասկացութանպատակ կամ ակտիվացնում է հասկացութանպատակը:

Տարբեր համաիրադարձային լեզվամիավորների միջոցով իրադարձության հասկացության դաշտի ձևավորումը տեղի է ունենում ճանաչողական-փոխանվանական՝ կանոնավոր կերպով առաջացող կադապարների օգնությամբ: Այս լեզվամիավորների յուրատիպ «բաց» ֆրեյմները ակտիվանում են ճանաչողական-փոխանվանական անցումներ կատարելիս և համապատասխան տեղեկույթը վերակարգայնացնելիս կամ բազմակարգայնացնելիս: Հատկանշական է, որ այս ֆրեյմների բնույթը խոսընթացում փոփոխական է, հետևաբար՝ հստակեցման, վերակարգայնացման կամ բազմակարգայնացման ճանաչողական մեխանիզմների ներգործությամբ նրանք ամեն անգամ հագեցվում են լրացուցիչ բովանդակությամբ:

Դիցուք՝ տնտեսական իրադարձություն ցուցանող բառերը խոսքում կիրարկման պահին բացահայտում են տեղեկույթը՝ հագեցվելով որոշակի կարգին հատուկ նշյալի/նշյալների տեղեկատվությամբ: Այս ամբողջ գործընթացն իրականանում է համաիրադարձային փոխանունության ճանաչողական մեխանիզմի շնորհիվ, որն ապահովում է իրադարձություն ցուցանող լեզվամիավորների կողմից առավել նշանակալի հատկանիշների որոշարկում և վերջիններիս հարաբերակցում որոշակի հասկացության տիրույթների հարակից հատկանիշների հետ, որոնք առավել նպատակահարմար են անհրաժեշտ տեղեկույթը նկարագրելիս. իրադարձային բարդ համալիրից ընտրվում են առավել կարևոր հատկանիշները, որոնք հարաբերակցվում են առանձին կարգերի և հասկացությունների հետ (փոփոխություն, տարածություն, ժամանակ, մասնակիցներ և այլն) և դառնում բարդ կառուցվածք ունեցող համալիրի՝ իրադարձության ներկայացուցիչներ:

Համաիրադարձային փոխանունության ճանաչողական մեխանիզմը նշյալ օբյեկտիվ իրականության հատվածի համար մուտք է ապահովում դեպի անհատի մտավոր աշխարհ՝ ձևավորելով վերջինիս հասկացության դաշտն այն գործոնների միջոցով, որոնք նա ընտրում է՝ հաշվի առնելով հաղորդակցական և դիսկուրսիվ առանձնահատկությունների յուրօրինակ համադրությունը: Այսպես՝ հենվելով դիսկուրսից արտամղվող տեղեկատվության և անհատի հենքային գիտելիքների վրա, համաիրադարձային փոխանունության ճանաչողական մեխանիզմի շնորհիվ, համալրվում է օբյեկտիվ իրականության հատված անվանող համաիրադարձային միավորների տեղեկատվական ներուժը: Այս պարագայում համաիրադարձային

լեզվամիավորները հանդես են գալիս որպես բարդ ֆրեյմային համալիրներ, որոնք ներկայացնում են երևույթների և իրադարձությունների մի շարք առանձնահատկություններ:

Հատկանշական է այն փաստը, որ համաիրադարձային գոյականների միջոցով անվանվող նշյալ տնտեսական իրադարձության բովանդակության վերձանման նպատակով անհատը կիրառում է դեդուկտիվ և ինդուկտիվ մտածողության մեթոդներ. այսկերպ համալրվում է տվյալ լեզվամիավորների ֆրեյմների չլրացված սլոթների պարունակությունը և ստեղծվում տվյալ իրադարձության վերջնական մտավոր կաղապարը:

Ճանաչողական-փոխանվանական անցման գործընթացում կարող են ակտիվանալ ինչպես մեկ, այնպես էլ միաժամանակ մեկից ավելի հասկացության խմբեր: Վերակարգայնացման ժամանակ հասկացույթ-աղբյուրը մտավոր ներթափանցում է իրականացնում մեկ հասկացույթ-նպատակ, մինչդեռ բազմակարգայնացման գործընթացը ենթադրում է մեկից ավելի հասկացույթ-նպատակների ակտիվացում:

Կանոնավոր կերպով առաջացող վերոնշյալ ճանաչողական-փոխանվանական անցումների ուսումնասիրության հիման վրա աշխատանքում առաջարկվել է ճանաչողական-փոխանվանական կաղապարների համապարփակ տիպաբանություն:

Համաիրադարձային փոխանունության ճանաչողական մեխանիզմը, որպես օբյեկտիվ իրականության որոշակի հատվածի մտապատկերման հիմնարար հնար, իրականացնում է որոշակի գործառույթներ՝ ճանաչողական, դիսկուրսի ձևավորման, լեզվական միջոցների տնտեսման, ընդհանրացնող, բացատրական և գործաբանական: Այս բոլոր գործառույթները նպաստում են անհատի կողմից տնտեսական իրադարձության հասկացության դաշտի ձևավորման գործընթացին:

Սույն աշխատության մեջ, ուսումնասիրելով տնտեսական իրադարձության լեզվաճանաչողական մոդելավորման սկզբունքները, վեր է հանվել վերջինիս հայեցակարգը, բացահայտվել դրա, որպես տնտեսական մեդիադիսկուրսի միավորի, կարգայնացմանը և ընկալմանն անհրաժեշտ լեզվական և ճանաչողական առանձնահատկությունները, որոշվել այն ռազմավարությունները, մեխանիզմներն ու մեթոդները, որոնցով առաջնորդվում է անհատն այս երևույթի մտավոր կաղապարը

ստեղծելու, կատարելագործելու, այլ կերպ ասած՝ տնտեսական աշխարհի պատկերն ամբողջացնելու նպատակով:

Աշխատանքում առաջ քաշված և մշակված որոշ դրույթներ կարող են հեռանկարային լինել լեզվաբանական տարբեր գիտակարգերի սահմաններում կատարվող հետազա ուսումնասիրությունների համար: Այսպես՝ դիսկուրսի տեսության շրջանակներում կատարվող հետազա ուսումնասիրությունները կարող են միտված լինել բացահայտելու տարբեր դիսկուրսների հատման այլ հնարավորություններ (քաղաքական մեդիադիսկուրս, դիվանագիտական մեդիադիսկուրս, իրավագիտական մեդիադիսկուրս և այլն) և վեր հանելու վերջիններիս բնորոշ առանձնահատկություններն ու գործառույթները: Լեզվաբանական դիտանկյունից, հետաքրքիր ձեռքբերումներ կարելի է արձանագրել տնտեսական մեդիադիսկուրսի համատեքստում ուսումնասիրելով տնտեսական իրադարձությունների տարատեսակները, ինչը թույլ կտա որոշարկել և դասակարգել այն լեզվամիավորները և դրանց առանձնահատկությունները, որոնք նպաստում են տվյալ իրադարձությունների լեզվականացմանը: Ճանաչողական լեզվաբանության հենքով կատարվող հետազա ուսումնասիրությունները հնարավորություն կընձեռեն վերլուծելու իրականության հատվածների իմաստավորման այլ միջոցներ և բացահայտելու ու դասակարգելու երևույթների մտապատկերման այլ կաղապարներ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աթայան Է.Ռ. Լեզվական աշխարհի ներքին կերպավորումը և արտաքին վերաբերությունը, Երևան, ԵՊՀ հրատ., 1981, 390 էջ:
2. Գալստյան Է. Լեզվի քաղաքական գործառույթի դրսևորումը խոսույթում, Երևան, Լինգվա հրատ., 2009, 182 էջ:
3. Նազարյան Ա.Հ., Բաղդասարյան Հ.Գ. Թարգմանաբանական ուսումնական ձեռնարկ, Երևան, Ամարաս, 2000, 240 էջ:
4. Պարոնյան Շ.Հ. Խոսքային փոխներգործության ճանաչողական-գործաբանական հայեցակերպը անգլերենում. Ատենախոսություն բան. գիտ. դոկտորի գիտ. աստ. հայցման համար, Երևան, 2010, 312 էջ:
5. Պարոնյան Շ.Հ. Լեզվաճանաչողություն և դիսկուրս, Երևան, ԵՊՀ հրատ., 2011, 297 էջ:
6. Սարգսյան Ա. Փիլիսոփայության դասընթաց, Երևան, Տնտեսագետ, 2010, 522 էջ:
7. Алещанова И.В. Способы выражения цитации в газетном тексте // Языковая личность: проблемы коммуникативной деятельности: Сб. науч. тр. / ВГПУ.- Волгоград: Перемена, 2001. – с. 110-117.
8. Андерсон Д.Р. Когнитивная психология. СПб: Питер, 2002. – 496 с.
9. Апресян Ю.Д. Лексическая семантика: Избранные труды в 2 т. Т. 1. М.: Языки русской культуры, 1995. – 472 с.
10. Арнольд И.В. Стилистика современного английского языка. Л.: Просвещение, 1973. – 304 с.
11. Арутюнова Н.Д. Сокровенная связка (к проблеме предикативного отношения) // Изв. АН СССР, серия лит. и яз., т. 39, N 4, 1980. – с. 347–358.
12. Арутюнова Н.Д. Типы языковых значений: Оценка. Событие. Факт. М.: Наука, 1988. – 341 с.
13. Арутюнова Н.Д. Дискурс // Лингвистический энциклопедический словарь. М., 1990. – с. 136–137.
14. Арутюнова Н.Д. Язык и мир человека. М.: Языки русской культуры, 1998. – 896 с.

15. Арутюнова Н.Д. Предложение и его смысл: Логико–семантические проблемы. М.: Едиториал УРСС, 2002. – 384 с.
16. Астафурова Т.Н. Стратегии коммуникативного поведения в профессионально–значимых ситуациях межкультурного общения (лингвистический и дидактический аспекты). Автореф. дис. ... докт. филол. наук. М., 1997. – 41 с.
17. Бабина Л.В. Когнитивные основы вторичных явлений в языке и речи: монография. Тамбов – М.: Изд. ТГУ им. Г. Р. Державина, 2003. – 264 с.
18. Бабушкин А.П. Типы концептов в лексико–фразеологической семантике языка. Воронеж: Изд. Воронеж. гос. ун–та, 1996. – 345 с.
19. Балли Ш. Общая лингвистика и вопросы французского языка. М.: Едиториал УРСС, 2001. – 416 с.
20. Баранов А.Н. Введение в прикладную лингвистику: Учеб. пособие. 2–е изд., испр. М.: Едиториал УРСС, 2003. – 360 с.
21. Баранов А.Н., Караулов Ю.Н. Русская политическая метафора: Материалы к словарю. М.: Ин–т русского языка АН СССР, 1991. – 193 с.
22. Баранов А.Н., Добровольский Д.О. Постулаты когнитивной семантики // Изв. РАН, серия лит. и яз., 1997, т. 57, N 1. – с. 11–21.
23. Бахтин М. М. Проблема текста // Вопр. литературы. М.: Гослитиздат, 1976, N 10. – с. 122–151.
24. Бахтин М. М. Эстетика словесного творчества. М., Искусство. 1979. – 424 с.
25. Беляевская Е. Г. Семантическая структура слова в номинативном и коммуникативном аспекте. Дис. ... докт. филол. наук. М., 1992. – 401 с.
26. Беляевская Е. Г. Когнитивные основания изучения семантики // Структуры представления знаний в языке. М., 1994. – с. 87–110.
27. Беляевская Е. Г. Воспроизводимы ли результаты концептуализации? (К вопросу о методике когнитивного анализа) // Вопр. когнитивной лингвистики, 2005, N 1. – с. 5–14.

28. Беляевская Е.Г. Семантика широкозначных существительных с когнитивной точки зрения // Вестник Московского государственного лингвистического университета. Серия: Лингвистика, вып. 532: Теория и практика лексикологических исследований. М.: Рема, 2007. – с. 4–14.
29. Беляевская Е. Г. Компонентный анализ vs концептуальный анализ // Вестник Московского государственного лингвистического университета, N 554, 2008. – с. 140-146.
30. Беляевская Е.Г. Медийный дискурс: когнитивные модели интерпретации события (на материале английского языка) // Вопросы когнитивной лингвистики, 2015, N 3 (44). – с. 5-13.
31. Блакар Р.М. Язык как инструмент социальной власти (теоретико–эмпирические исследования языка и его использования в социальном контексте) // Язык и моделирование социального взаимодействия. М.: Прогресс, 1987. – с. 88–125.
32. Богданов В.В. Текст и текстовое общение. СПб.: Изд. СПбГУ, 1993. – 67 с.
33. Болдырев Н.Н. Перекатегоризация глагола как способ формирования смысла высказывания // Известия АН РФ, серия лит. и яз., 2001, т. 60, N 2. – с. 40–55.
34. Болдырев Н.Н. Когнитивная семантика: Курс лекций по английской филологии. Тамбов: Изд. Тамб. ун–та, 2001. – 123 с.
35. Болдырев Н.Н. Концептуальная метонимия на разных уровнях языка: система и реализация // Материалы докладов международной научной конференции. Минск, 2002, ч. 1. – с. 11–14.
36. Болдырев Н.Н. Интерпретация мира и знаний о мире в языке // Когнитивные исследования языка. Вып. XIX. Когнитивное варьирование в языковой интерпретации мира: сборник научных трудов. М.: Ин-т языкознания РАН; Тамбов: Изд. ТГУ им. Г.Р. Державина, 2014. – с. 20-28.
37. Борботько В.Г. Элементы теории дискурса. Грозный: Изд. Чечено-Ингуш. гос. ун-та, 1981. – 113 с.
38. Бородулина Н.Ю. Метафорическая репрезентация экономических понятий в семиотическом аспекте. Автореф. дис. ... докт. филол. наук. Курск, 2009. – 46 с.

39. Брандес М.П., Проворотов М.П. Предпереводческий анализ текста. Курск: РОСИ, 1999. – 222. с.
40. Брудный А.А. Понимание как философская и психологическая проблема // Вопросы философии, N 10, 1975. – с. 109–117.
41. Булыгина Т.В. К построению типологии предикатов в русском языке // Семантические типы предикатов. М.: Наука, 1982. – с. 7–84.
42. Булыгина Т.В., Шмелев А.Д. Языковая концептуализация мира (на материале русской грамматики). М., 1997. – 576 с.
43. Валько Н.А. Футуральность в газетном тексте экономической тематики. Автореф. дис. ... канд. филол. наук. Краснодар, 2006. – 30 с.
44. Вежбицкая А. Семантические универсалии и описание языков. / Пер. с англ. под ред. Т.В. Булыгиной. М.: Языки русской культуры. 1999. – 780 с.
45. Витгенштейн Л. Логико–философский трактат. М.: Иностранная литература, 1958. – 133 с.
46. Владимирская Л.М., Хантакова В.М. Оценочный компонент в реализации коммуникативных интенции // Герценовские чтения. Иностранные языки. Материалы конференции. СПб.: Изд. РГПУ им.А.И. Герцена, 1998. – с. 63–65.
47. Володина М.Н. Язык массовой коммуникации – особый язык социального взаимодействия // Язык средств массовой информации. Под общей редакцией М.Н. Володиной. М.: Альма Матер, 2008. – с. 22– 47.
48. Вольф Е.М. Функциональная семантика оценки. М.: Наука, 1985. – 228 с.
49. Вольф Е.М. Функциональная семантика оценки. Изд. 2–е, доп. М.: Едиториал УРСС, 2002. – 280 с.
50. Воркачев С.Г. Лингвоконцептология и межкультурная коммуникация: истоки и цели // Филологические науки. М.: Изд. Московского гос. ун-та, 2005, N 4. – с. 76–82.
51. Выготский Л.С. Педагогическая психология. М., 1996. – 493 с.
52. Гак В.Г. К типологии лингвистических номинаций // Языковая номинация: Общие вопросы. М.: Наука, 1977. – с. 230–293.
53. Гак В.Г. Языковые преобразования. М.: Языки русской культуры, 1998. – 768. с.

54. Гальперин И.Р. Текст как объект лингвистического исследования. М.: Наука, 1981. – 139 с.
55. Гаспарян Г.Р. Может ли высказывание любой протяженности считаться текстом? (к вопросу дефиниции текста) // Օտար լեզուները բարձրագույն դպրոցում, N 9, Երևան, ԵՊՀ, 2008. – с. 75–89.
56. Гаспарян С.К. Фигура сравнения в функциональном освещении. Ереван, Лусакн, 2013. – 323 с.
57. Гегель Г.В. Ф. Наука логики. // Энциклопедия философских наук: В 3 т. Т. 1. М.: Мысль, 1975. – 452 с.
58. Гинзбург Е.Л. Конструкции полисемии в русском языке: таксономия и метонимия. М.: Наука, 1985. – 223 с.
59. Городецкий Б.Ю. Компьютерная лингвистика: моделирование языкового общения // Новое в зарубежной лингвистике, вып. 24: Компьютерная лингвистика. М.: Прогресс, 1989. – с. 5–31.
60. Губик С.В. Когнитивно-дискурсивное исследование английского экономического массмедийного дискурса. Автореф. дис. ... канд. филол. наук. Уфа, 2006. – 25 с.
61. Гуревич А.Я. Категории средневековой культуры. М.: Искусство, 1972. – 318 с.
62. Данюшина Ю.В. Многоуровневый анализ англоязычного сетевого бизнес-дискурса. Дис. ... докт. филол. наук. 2011. – с. 411.
63. Дейк Т.А. ван. Язык. Познание. Коммуникация. / Пер. с англ. / Сост. В.В. Петров; под ред. В.И. Герасимова; вступ. ст. Ю.Н. Караулова и В.В. Петрова. М.: Прогресс, 1989. – 312. с.
64. Демьянков В.З. Интерпретация как инструмент и как объект лингвистики. М.: МГУ, 1997. – 65 с.
65. Демьянков В.З. Англо-русские термины по прикладной лингвистике и автоматической переработке текста, вып. 2: Методы анализа текста. М.: Всесоюзный центр переводов ГКНТ и АН СССР, 1982. – 288 с.
66. Демьянков В.З. Семиотика событийности в СМИ // Язык СМИ как объект междисциплинарного исследования, ч. 2. М.: Изд. Московского ун-та, 2004. – с. 68–83.

67. Джоламанова В.Д. Имя существительное с широким значением в лексической системе современного английского языка. Автореф. дис. ... канд. филол. наук. М., 1978. – 22 с.
68. Дилтс Р. Фокусы языка: Изменение убеждений с помощью нейролингвистического программирования. СПб.: Питер, 2000. – 320 с.
69. Димова С.Н. К проблеме широкого значения слова (на материале существительного way) // Синтаксические исследования по английскому языку. Уч. зап. МГПИ им. В.И.Ленина, т. 416, 1971. – с. 120–135.
70. Добросклонская Т.Г. Вопросы изучения медиатекстов: (опыт исследования современной английской медиаречи). М.: Едиториал УРСС, 2005. – 287 с.
71. Донец П.Н. К типологии стереотипов // Социальная власть языка. Воронеж: Изд. Воронежского гос. ун-та, 2001. – с. 183–188.
72. Дроздова Т.В. Проблемы понимания научного текста (англоязычные экономические тексты). Астрахань: АГТУ, 2009. – 224 с.
73. Дубровская О.Н. Имена сложных речевых событий в русском и английском языках. Автореф. дис. ... канд. филол. наук. Саратов, 2001. – 22 с..
74. Евтушина Т.А., Ковальская Н.А. Экономический дискурс как объект лингвистического исследования // Вестник Челябинского государственного университета, 2014, N 6 (335). Филология. Искусствоведение. Вып. 88. – с. 42–46.
75. Ерзинкян Е.Л. Дейктическая семантика слова. Ереван: Изд. ЕГУ, 1988.
76. Ерзинкян Е.Л. Широкозначность как особый тип лексической семантики // «Դժվանագեղանկան բանասիրության և օտար լեզուների դասավանդման մեթոդիկա» 1-ին միջազգային գիտաժողովի թեզիսներ: Երևան, 2002թ. հոկտեմբերի 31 – նոյեմբերի 2, Երևան, 2002. – с. 7–8.
77. Ерзинкян Е.Л. Сочетаемость широкозначного слова как характеристика его семантики // Тезисы докладов международной научно-методической конференции «Проблемы романо-германской филологии: теория и методика преподавания иностранных языков», Ереван, 11–12 апреля 2006г. Ереван, 2006. – с. 39.

78. Ерзинкян Е.Л. Дейксис слова. Семантика и прагматика. Ереван: ЕГУ, 2013. – 479 с.
79. Ерзинкян Е.Л., Арутюнян Л.А. Широкозначные слова в свете когнитивной теории // Иностранные языки в высшей школе, вып. 7, Ереван: ЕГУ, 2006. – с. 96–102.
80. Ефремов Г.А. Социально-экономическая картина мира // Грани познания. Электронный научно-образовательный журнал ВГПУ, N 3 (13), 2011. // <http://grani.vspu.ru/files/publics/1325060691.pdf>
81. Жаботинская С. А. Концептуальный анализ языка: фреймовые сети // Мова. Науково–теоретичний часопис з мовознавства. N 9: Проблеми прикладної лінгвістики. Одесса: Астропринт, 2004. – с. 81–92.
82. Желтухина М.Р. Тропологическая суггестивность масс–медиального дискурса: о проблеме речевого воздействия тропов в языке СМИ. Москва–Волгоград: ВФ МУПК, 2003. – 656 с.
83. Залевская А.А. Введение в психолингвистику. М.: РГГУ, 2000. – 381 с.
84. Землянова Л.М. Зарубежная коммуникативистика в предверии информационного общества. М.: МГУ, 1999. – 300 с.
85. Зильберт Б.А. Социопсихолингвистическое исследование текстов радио, телевидения, газеты. Саратов, 1986. – 210 с.
86. Зиновьева А.Ф., Данюшина Ю.В. Межкультурная бизнес-коммуникация. М.: ГУУ, 2009. – 226 с.
87. Зотов В.В., Пресняков В.Ф., Розенталь В.О. Институциональные проблемы функционирования и преобразования экономики России // Экономическая наука современной России, 1999, N 1. – с. 7–21.
88. Зяблова О.А. Принципы исследования языка для специальных целей: На примере языка экономики. Дис. ... докт. филол. наук. М., 2005. – 314 с.
89. Иванова С.В., Артемова О.Е. Сценарный фрейм как когнитивная основа текстов прецедентного жанра «лимерик» // Вопросы когнитивной лингвистики. Тамбов, 2005, N 3. – с. 46–52.
90. Ирисханова О.К. Семантика событийных имен существительных в языке и речи. Автореф. дис. ... канд. филол. наук. М., 1997. – 24 с.

91. Ирисханова О.К. О теории концептуальной интеграции // Известия АН РФ, серия лит. и яз., т. 60, 2001, N 3. – с. 44–49.
92. Каменская О.Л. Текст и коммуникация. М.: Высшая школа, 1990. – 147 с.
93. Карасик В.И. О типах дискурса // Языковая личность: институциональный и персональный дискурс. Волгоград: Перемена, 2000. – с. 5–20.
94. Карасик В.И. О категориях дискурса, 2006. // <http://homepages.tversu.ru/~ips/JubKaras.html>.
95. Карасик В.И. Языковая матрица культуры. М.: Гнозис, 2013. – 320 с.
96. Карпинский К.В. Психология жизненного пути личности. Гродно: ГрГУ, 2002. – 167 с.
97. Кацнельсон С.Д. Типология языка и речевое мышление. Л.: Наука, 1972. – 213 с.
98. Кибрик А.А., Плунгян В.А. Функционализм и дискурсивно–ориентированные исследования // Фундаментальные направления современной американской лингвистики. М., 1997. – с. 307–323.
99. Кланщачова А.Ю. Проблема типологизации дискурса на примере анализа экономического дискурса // Лингвистические парадигмы и лингводидактика: Материалы VII междунар. науч.–практ. конф., Иркутск, 24–27 июня 2002г. Иркутск, 2002. – с. 67–75.
100. Кланщачова А.Ю. Метафора в структуре экономического дискурса: опыт комплексного исследования. Автореф. дис. ... канд. филол. наук. Иркутск, 2003. – 18 с.
101. Клушина Н.И. От стиля к дискурсу: новый поворот в лингвистике // Язык, коммуникация и социальная среда, вып. 9. Воронеж, 2011. – с. 25–33.
102. Кобозева И.М. К формальной репрезентации метафор в рамках когнитивного подхода // Труды международного семинара ‘Диалог 2002’ по компьютерной лингвистике и ее приложениям. М.: РГТУ, 2002. // <http://www.dialog-21.ru/materials/>
103. Кожина М.Н., Дускаева Л.Р., Салимовский В.А. Стилистика русского языка. М.: Флинта: Наука, 2008. – 464 с.

104. Козлова Е. А. Метонимия как концептуальная основа функциональной категоризации английского глагола. Автореф. дис. ... канд. филол. наук. Тамбов, 2001. – 22 с.
105. Колшанский Г.В. Объективная картина мира в познании и языке. М.: Наука, 1990. – 105 с.
106. Комиссаров В.Н. Теория перевода (лингвистические аспекты). М.: Высшая школа, 1990. – 253 с.
107. Красных В.В. «Свой» среди «чужих»: миф или реальность? М.: ИТДГК. Гнозис, 2003. – 375 с.
108. Кронгауз М. А. Семантика. М.: Рос. гос. гуманит. ун-т, 2001. – 399 с.
109. Кубрякова Е.С. Роль словообразования в формировании языковой картины мира // Роль человеческого фактора в языке: Язык и картины мира. М.: Наука, 1988. – с. 141–172.
110. Кубрякова Е.С. Понимание текста: инференция и области ее действия // Семантика языковых единиц. Доклады V международной конференции. М., 1996. – с. 20–23.
111. Кубрякова Е.С. Новые пути исследования феномена значения в современной лингвистике // Функциональная семантика языка, семиотика знаковых систем и методы их изучения: Тез. докл. междунар. конф.: ч. 1. М., 1997. – с. 61–62.
112. Кубрякова Е.С. О понятиях дискурса и дискурсивного анализа в современной лингвистике // Дискурс, речь, речевая деятельность: функциональные и структурные аспекты: Сб. обзоров ИНИОН РАН. М., 2000. – с. 7–25.
113. Кубрякова Е.С. Язык и знание: На пути получения знаний о языке: Части речи с когнитивной точки зрения. Роль языка в познании мира. М.: Языки славянской культуры, 2004. – 560 с.
114. Кубрякова Е.С., Александрова О.Е. Виды пространства текста и дискурса // Категоризация мира: пространство и время. М.: Диалог МГУ, 1997. – с. 17–20.
115. Кубрякова Е.С. Об установках когнитивной науки и актуальных проблемах когнитивной лингвистики // Вопросы когнитивной лингвистики. 2004, N 1. – с. 6–17.

116. Кубрякова Е.С., Цурикова Л.В. Вербальная деятельность СМИ как особый вид дискурсивной деятельности // Язык средств массовой информации. М.: Альма Матер, 2008. – с. 183–209.
117. Лакофф Дж. Лингвистические гештальты // Новое в зарубежной лингвистике, вып. 10. М.: Прогресс, 1981. – с. 350–368.
118. Лакофф Дж. Мышление в «зеркале» классификаторов // Новое в зарубежной лингвистике, вып. 23. М.: Прогресс, 1988. – с. 12–51.
119. Лангер С. Философия в новом ключе: Исследование символики разума, ритуала и искусства. М.: Республика, 2000. – 287 с.
120. Лебедева Л.Б. Функциональные особенности имен существительных широкой семантики // Теоретические проблемы семантики и ее отражение в однозначных словарях. Кишинев: Штииница, 1982. – с. 86–89.
121. Лейбниц Г.В. Сочинения в четырех томах, т. 1. М.: Мысль, 1982. – 636 с.
122. Леонтьев А.А. Психолингвистическая модель речевого воздействия // Психолингвистические проблемы массовой коммуникации. М., 1974. – с. 34–43.
123. Леонтьев А.А. Основы психолингвистики. М.: Смысл / Академия, 2005. – 288 с.
124. Ли В.С. О категориальном статусе инфинитива и событийных имен // Фортунаровский сборник. Материалы научной конференции, посвященной 100-летию Московской лингвистической школы 1897–1997гг. М.: Едиториал УРСС, 2000. – с. 146–151.
125. Ломов Б.Ф. Методологические и теоретические проблемы психологии. М.: Наука, 1984. – 444 с.
126. Лосев А.Ф. Введение в общую теорию языковых моделей. М.: Едиториал УРСС, 2004. – 296 с.
127. Лотман Ю.М. Внутри мыслящих миров. Человек – текст – семиосфера – история. М.: Языки русской культуры, 1990. – 896 с.
128. Максютова О.М. О некоторых способах выражения оценки как формы реализации прагматической установки в английском газетном заголовке // Сб. научных трудов МГПИ им. М.Тореза, вып. 197. М., 1982. – с. 53–65.

129. Малышева А.А. Категория "оценки" и категория "странности" в коммуникативно–прагматическом аспекте // Коммуникативные и номинативные аспекты единиц языка. Межвуз. сб. науч. трудов. Ленинград: ЛГПИ им. А.И. Герцена, 1989. – с. 149 – 155.
130. Маслов Ю. С. Введение в языкознание. М.: Академия, 2005. – 304 с.
131. Маслова В.А. Когнитивная лингвистика, 3–е изд., перераб. и доп. Минск: ТетраСистемс, 2008. – 272 с.
132. Матвеева Т.В. Функциональные стили в аспекте текстовых категорий. Свердловск: Изд. Уральского ун-та, 1990. – 170 с.
133. Махницкая Е.Ю. Метафора в современном экономическом дискурсе и принципы ее лексикографического описания. Дис. ... канд. филол. наук. Саратов, 2002. – 191 с.
134. Махницкая Е.Ю. О современном экономическом дискурсе // Речевая деятельность: межвуз. сб. науч. тр. Таганрог, 2002. – с. 158–161.
135. Медникова Э.М. Семантика слова. Новые аспекты // Формальные и семантические аспекты слова. Калинин, 1989. – с. 10–17.
136. Минский М. Фреймы для представления знаний. М.: Энергия, 1979. – 152 с.
137. Михайлова А.В. Когнитивно–семантические свойства наименований средств финансового обмена (на материале англоязычного медийного экономического дискурса). Автореф. дис. ... канд. филол. наук. Пятигорск, 2014. – 33 с.
138. Мишанкина Н.А. Лингвокогнитивное моделирование научного дискурса. Автореф. дис. ... докт. филол. наук. Томск, 2010. – 43 с.
139. Моргун Н.Л. Научный сетевой дискурс как тип текста. Автореф. дис. ... канд. филол. наук. Тюмень, 2002. – 20 с.
140. Москальская О.И. Грамматика текста. М.: Высшая школа, 1981. – 183 с.
141. Назарова Т.Б. Функциональные разновидности речи в деловом английском // Вопросы лингвистики и лингводидактики иностранного языка делового и профессионального общения: Сборник материалов конференции. М.: РУДН, 2008. – с. 40–49.

142. Неуймин Я.Г. Модели в науке и технике: история, теория и практика. Ленинград: Наука, 1984. – 187 с.
143. Нечаева Н.А. Интегративность экономической картины мира // Вестник МГОУ. Серия: Лингвистика. 2015, N 6. – с. 16-22.
144. Никитин М.В. Основания когнитивной семантики. СПб.: Изд. РГПУ им. А.И. Герцена, 2003. – 277 с.
145. Никитин М.В. Развернутые тезисы о концептах // Вопросы когнитивной лингвистики, 2004, N 1. – с. 53–69.
146. Николаева Т.М. «Событие» как категория текста и его грамматические характеристики // Структура текста. М., 1980. – с. 198 – 210.
147. Нишанов В.К. Коммуникативная и когнитивная природа понимания. М.: ИНИОН, 1989. – 47 с.
148. Новиков Л.А. Метонимия в русском языке: Семантическая структура. Словообразовательный потенциал. Стилистические функции. Дис. ... канд. филол. наук. М., 1996. – 179 с.
149. Ньютон И. Математические начала натуральной философии. М., 1989. – 690 с.
150. Олешков М. Ю. Системное моделирование институционального дискурса (на материале устных дидактических текстов). Автореф. дис. ... докт. филол. наук. Н. Тагил, 2007. – 42 с.
151. Орлова О.В. Проблема соотношения понятий стиля и дискурса в лингвистике начала ХХIв. в контексте идей М.Н. Кожинной // Вестник Томского государственного университета: Филология, 2013, N 4 (24). – с. 19–25.
152. Падучева Е.В. Пространство в облики времени и наоборот (к типологии метонимических переносов) // Логический анализ языка. Языки пространств. М., 2000. – с. 239–255.
153. Падучева Е.В. К когнитивной теории метонимии // Диалог 2003: доклады международной конференции. М., 2003. – 239 с.
154. Падучева Е.В. Динамические модели в семантике лексики. М., 2004. – 609 с.
155. Папина А.Ф. Текст. Его единицы и глобальные категории. М.: Едиториал УРСС, 2002. – 368 с.

156. Переверзев К.А. Высказывание и ситуация: об онтологическом аспекте философии языка // Вопросы языкознания, 1998, N 5. – с. 24–52.
157. Петрова Н.В. Текст и дискурс // Вопросы языкознания, 2003, N 6. – с. 123–131.
158. Петушинская Е.Г. Язык популярного экономического дискурса. Автореф. дис. ... канд. филол. наук. М., 2008. – 25 с.
159. Плоткин В.Я., Гросул Л.Я. Широкозначность как лексико–семантическая категория // Теоретические проблемы семантики и ее отражение в одноязычных словарях. Кишинев: Штииница, 1982. – с. 81–86.
160. Попов А.Ю. Основные отличия текста от дискурса // Текст и дискурс. Проблемы экономического дискурса: Сб. науч. ст. СПб.: Изд. СПбГУЭФ, 2001. – с. 38–45.
161. Попова Е.А. Человек как основополагающая величина современного языкознания // Филологические науки, 2002, N 3. – с. 69–77.
162. Попова Е.С. Структура манипулятивного воздействия в рекламном тексте // Известия Уральского государственного университета. Екатеринбург, 2002, N 24. – с. 276–288.
163. Попова З.Д. Метонимия и метафора в семантеме глагола // Когнитивная семантика. Материалы школы–семинара по когнитивной лингвистике, ч. 2. Тамбов: Изд. Тамб. ун–та, 2000. – с. 127–129.
164. Попова З.Д., Стернин И.А. Когнитивная лингвистика. М.: АСТ: Восток–Запад, 2010. – 314 с.
165. Раевская О.В. Метонимия в слове и в тексте // Филологические науки. М., 2000, N 4. – с. 49–55.
166. Рассел Б. Человеческое познание. М.: Ин-т общегуманитарных исследований, 1957. – 555 с.
167. Резникова С.С. Концепт "событие" и способы его репрезентации в СМИ. Автореф. дис. ... канд. филол. наук. Санкт-Петербург, 2006. – 24 с.
168. Реформатский А.А. Введение в языковедение. М.: Просвещение, 1967. – 542 с.
169. Рубинштейн С.Л. Основы общей психологии. М.: Педагогика, 1989. – 328 с.
170. Рыжков В.А. Стереотип как инструмент воздействия на сознание личности // Проблемы организации речевого общения. М., 1981. – с. 54 – 62.

171. Сазонова Т.Ю. Моделирование процессов идентификации слова человеком: психолингвистический подход. Тверь: Твер. гос. ун-т, 2000. – 134 с.
172. Салатова Л.М. Метафорическое моделирование экономического кризиса 2008 года в массмедийных дискурсах России и США. Автореф. дис. ... канд. филол. наук. Челябинск, 2013. – 22 с.
173. Самойленко Н.А. Семантика событийности и способы ее выражения. Автореф. дис. ...канд. филол. наук. Алма-Ата, 1991. – 24 с.
174. Селиверстова О.Н. Второй вариант классификационной сетки и описание некоторых предикатных типов русского языка // Семантические типы предикатов. М.: Наука, 1982. – с. 86–157.
175. Селиверстова О.Н. Контрастивная синтаксическая семантика. Опыт описания // Труды по семантике. М., 2004. – с. 557– 718.
176. Сериков А.Е. Метафора и метонимия в практическом действии. Вестник Самарской гуманитарной академии. Серия: Философия. Филология, вып. 1, 2007. – с. 132–142
177. Силантьев И.В. Ансамбли текстов в словесной культуре Средневековья и Нового времени // Дискурс. Новосибирск, 1996, N 1. – с. 61–66.
178. Симонян А.А. Когнитивно-прагматический аспект теории политического дискурса (на материале выступлений американских и британских политических деятелей). Дис... докт. филол. наук. Ереван, 2011. – 284 с.
179. Снетков Н.Н. Имитационное моделирование экономических процессов. М., 2008. – 228 с.
180. Степанов Ю.С. Альтернативный мир, дискурс, факт и принцип причинности // Язык и наука конца XX века. Сб. статей. М.: РГГУ. 1995. – 432 с.
181. Степанов Ю.С. Константы: Словарь русской культуры М.: Академический проект, 2004. – с. 42–67.
182. Степанова Е.Д. Прагматические особенности коммуникативного акта «Кредитный договор» в экономическом дискурсе // Дискурсивный аспект языковых единиц. Иркутск: ИГЛУ, 2006. – с. 434–486.

183. Стернин И.А. Когнитивная интерпретация в лингвокогнитивных исследованиях // Вопросы когнитивной лингвистики. Тамбов, 2004, N 1. – с. 65–69.
184. Стивенсон Ч. Некоторые прагматические аспекты значения // Новое в зарубежной лингвистике, вып. 16. М.: Прогресс, 1985. – с. 129–154.
185. Сусов И.П. Введение в языкознание. М.: АСТ: Восток–Запад, 2007. – 379 с.
186. Сухих С.А., Зеленская В.В. Прагмалингвистическое моделирование коммуникативного процесса. Краснодар: Кубанск. гос. ун-т, 1998. – 159 с.
187. Татевосов С.Г. Рецензия. Events as grammatical objects. The converging perspectives of lexical semantics and syntax // Вопросы языкознания. М.: Наука, 2005, N 3. – с. 125–133.
188. Тертычный А.А. Жанры периодической печати. М., 2000. – 310 с.
189. Томашевская К.В. Лексическая составляющая экономического дискурса современника. СПб.: Изд. СПбГУЭФ, 2000. – 153 с.
190. Трухановская Н.С. Метонимический сдвиг при концептуализации денотативной ситуации. Автореф. дис. ... канд. филол. наук. М., 2009. – 24 с.
191. Тульчинский Г.Л. В каком смысле возможна теория смысла: Постановка вопроса // Философские основания научной теории. Новосибирск, 1985. – с. 108–127.
192. Успенский П.Д. Tertium Organum. Ключ к загадкам мира. СПб.: Андреев и сыновья, 1992. – 241 с.
193. Уфимцев Р. Хвост ящерики: Метафизика метафоры. Калининград: Оттокар, 2010. – 294 с.
194. Уфимцева А. А. Лексическое значение: Принцип семиологического описания лексики. М.: Едиториал УРСС, 2002. – 240 с.
195. Ученова В.В. Гносеологические проблемы публицистики. М., 1971. – 147 с.
196. Филиппов А.В., Ковалев С.В. Ситуация как элемент психологического тезауруса // Психологический журнал, 1986, N 1. – с. 14–21.
197. Филлмор Ч. Фреймы и семантика понимания // Новое в зарубежной лингвистике, вып. 23. М.: Прогресс, 1988. – с. 52–93.

198. Флджян Л. Об основных формах реализации категории связности в англоязычном виртуальном газетном дискурсе // *Օրսար լեզուները բարձրագույն դպրոցում*, N 9, Երևան, ԵՊՀ, 2008. – с. 122–132.
199. Фролов С.С. Социология. М.: Наука, 1994. – 256 с.
200. Хантимиров С.М. Фреймовая структура семантики слова // *Вопросы филологических наук*, 2005, N 2. – с. 67–69.
201. Хэар П.М. Дескрипция и оценка // *Новое в зарубежной лингвистике*, вып. 16: *Лингвистическая прагматика*. М.: Наука, 1985. – с. 183–195.
202. Цивьян Т.В. Лингвистические основы балканской модели мира. М., 1990. – 208 с.
203. Чалабян С.А. Особенности временного дейксиса в современном армянском и английском языках. Дис... канд. филол. наук. Ереван. 1991. – 191 с.
204. Чернейко Л.О. Лингво–философский анализ абстрактного имени. М., 1997. – 319 с.
205. Чернявская В.Е. Дискурс как фантомный объект: от текста к дискурсу и обратно? // *Когниция, коммуникация, дискурс*, 2011, N 3. – с. 86–95.
206. Чудинов А.П. Политическая лингвистика. М.: Наука, 2006. – 254 с.
207. Шабес В.Я. Событие и текст. М.: Высшая школа, 1989. – 175 с.
208. Шейгал Е.И. Семиотика политического дискурса. Волгоград: Перемена, 2000. – 368 с.
209. Шереметьева А.А. Метафоры немецкого экономического дискурса. Автореф. дис. ... канд. филол. наук. Иркутск, 2009. – 17 с.
210. Ширяева Т.А. Когнитивное моделирование институционального делового дискурса. Автореф. дис. ... докт. филол. наук. Краснодар, 2008. – 50 с.
211. Шмелев А. Д. 'Общие' слова // *Слово в тексте и в словаре*. Сборник статей к семидесятилетию Ю.Д. Апресяна. М.: Языки русской культуры, 2001. – с. 266– 280.
212. Шмелев Д. Н. Современный русский язык. Лексика. М.: КомКнига, 2006. – 336 с.
213. Щирова И.А., Тураева З.Я. Тексты и интерпретация: взгляды, концепции, школы. СПб: РГПУ им. А.И. Герцена. 2005. – 156 с.
214. Щитцова Т. В. Событие в философии Бахтина. Минск: Изд. И. П. Логвинов, 2002. – 299 с.

215. Щукина И.Н. Текстовые методики исследования религиозного дискурса (на материале телевизионных проповедей митрополита Кирилла, проповедей протоиерея Димитрия Смирнова) // Медиаскоп, 2011, вып. 2 // URL: <http://www.mediascope.ru/node/776>.
216. Эпштейн М. Н. Идеология и язык (построение модели и осмысление дискурса) // Вопросы языкознания, 1991, N 6. – с. 19–33.
217. Этноспецифические концепты // Введение в когнитивную лингвистику, вып. 4. Кемерово: Графика, 2004. – 206 с.
218. Якобсон Р.О. Два аспекта языка и два типа афатических нарушений // Теория метафоры. М., 1990. – с. 110–132.
219. Якушева И.В. Типология и семантико–функциональные характеристики событийных существительных английского языка. Автореф. дис. ... канд. филол. наук. М., 1984. – 23 с.
220. Ярцева В.Н. Взаимоотношение грамматики и лексики в системе языка // Исследования по общей теории грамматики. М., 1968. – с. 5–57.
221. Anderson J. R. Cognitive psychology and it implications. New York: Worth Publishers, 2015. – 427 p.
222. Barcelona A. The multi-level role of metonymy in grammar and discourse: A case study // Proceedings of the international conference "Perspectives on metonymy", Lodz: Peter Lang, 2007. – p. 103–132.
223. Barcelona A. Reviewing the properties and prototype structure of metonymy // Benczes R., Barcelona A., Ruiz de Mendoza Ibanez F.J. (eds.) Defining metonymy in cognitive linguistics: Towards a consensus view. Amsterdam/Philadelphia: John Benjamins Publishing Company, 2011. – p. 7–57.
224. Bargiela-Chiappini F., Gotti, M. Asian business discourse. Bern: Peter Lang. 2005. – 350 p.
225. Bargiela-Chiappini F., Nickerson C., Planken B. Business discourse. Basingstoke: Palgrave, Macmillan, 2007. – 288 p.
226. Bazerman C. Shaping written knowledge. The genre and activity of experimental article in science. University of Wisconsin Press, 1988. – 356 p.

227. Bednarek M. Evaluation in media discourse: Analysis of a newspaper corpus. London: Continuum, 2006. – 253 p.
228. Benczes, R. Putting the notion of “domain” back in metonymy: Evidence from compounds // Benczes R., Barcelona A., Ruiz de Mendoza Ibanez F.J. (eds.) Defining metonymy in cognitive linguistics: Towards a consensus view. Amsterdam/Philadelphia: John Benjamins Publishing Company, 2011. – p. 197–215.
229. Bennett J. Events and their names. Oxford: Clarendon Press, 1988. – 243 p.
230. Brinton L.J. The structure of modern English: a linguistic introduction. Amsterdam / Philadelphia: John Benjamins Publishing Company, 2000. – 335 p.
231. Campbell S., Franklin J. Randomness and the justification of induction // *Synthese*, 2004, 138 (1) – p. 79–99.
232. Caws P. Operational, representational and explanatory models // *American anthropologist*, 1974, N 76. – p. 1–11.
233. Chesher Ch. Colonizing virtual reality: Construction of the discourse of virtual reality, 1984–1992 // *Cultronix*, 1994, v. 1, N 1 // <http://cultronix.eserver.org/chesher/>.
234. Coulson S., Oakley T. Blending basics // *Cognitive linguistics* 11 (3–4), 2000. – p. 175–196.
235. Coulson S., Oakley T. Metonymy and conceptual blending // *Metonymy and pragmatic inferencing*. Amsterdam/Philadelphia: John Benjamins Publishing Company, 2003. – 51–79 p.
236. Croft W. 1991 Syntactic categories and grammatical relations. Chicago, IL.: University of Chicago Press, 1991. – 328 p.
237. Croft W. The role of domains in the interpretation of metaphors and metonymies // *Cognitive linguistics: Basic Readings*. Geerarts D. (ed.). Berlin, New York: Mouton de Gruyter, 2006. – p. 269–302.
238. Crystal D. A dictionary of linguistics and phonetics. Oxford, UK: Basil Blackwell. 1991.
239. Davidson D. On events and event – description // *Fact and existence*. Oxford: Basil Blackwell, 1969. – p. 74–84.
240. Davidson D. The individuation of events // *Essays in honor of Carl G. Hempel*. Dordrecht: Humanities Press, 1970. – p. 216–234.

241. Dijk van T.A. Text and context. Explorations in the semantics and pragmatics of discourse. London and New York: Longman, 1980. – 261 p.
242. Dijk van T.A. Episodic models in discourse processing // Horowitz R., Samuels S.J. (eds.) Comprehending oral and written language. New York: Academic Press, 1987. – p. 161–196.
243. Dijk van T.A. News as discourse. Hillsdale, NJ: Erlbaum, 1988. – 200 p.
244. Dijk van T.A. The interdisciplinary study of news as discourse // Jensen K.B., Jankowski H.P. (eds.) A handbook of qualitative methodologies for mass communication research / London–New–York, 1991. – p. 108–119.
245. Dijk van T.A. Discourse as social interaction. London: Thousand Oaks, New Delhi: SAGE Publications, 1997. – 320 p.
246. Dijk van T.A., Kintch W. Strategies of discourse comprehension. New York: Academic Press, 1983. – 413 p.
247. Dik S.C. Functional grammar. Amsterdam: North–Holland Publishing Company, 1978. – 230 p.
248. Dobel C., Glanemann R., Kreysa H., Zwitterlood P., Eisenbeiss S. Visual encoding of coherent and non-coherent scenes // Bohnemeyer J., Pederson E., (eds.) Event representation in language: Encoding events at the language cognition interface. Cambridge: Cambridge University Press, 2011. – p. 189–215.
249. Dretske F. Can events move? *Mind*, 1967, v. 76, – p. 479 – 492.
250. Duchan J.F. Everyday events: Their role in language assessment and intervention // Pragmatics of language. Clinical Practice Issues. T. Gallagher (ed.). San Diego: Singular Publishing Group, 1991. – p. 43–98.
251. Eggins, S., Martin, J. R. Genres and registers of discourse // Discourse as structure and process. London: Sage, 1997. – p. 230-256.
252. Fairclough N. Critical discourse analysis. The critical study of language. L.: Longman, 2010. – 591 p.
253. Fauconnier G., Turner M. The way we think: Conceptual blending and the mind's hidden complexities. N.Y: Basic Books, 2002. – 440 p.

254. Ferguson C. Dialect, register and genre: Working assumptions about conventionalization // Sociolinguistic perspectives on register. New York: Oxford University Press, 1994. – p. 15-30.
255. Feyaerts K. Metonymic hierarchies: The conceptualization of stupidity in german idiomatic expressions // Panther K.-U., Radden G. (eds.) Metonymy in Language and Thought. Amsterdam/Philadelphia: John Benjamins Publishing Company, 1999. – p. 333 – 357.
256. Fisher E. Media and New Capitalism in the Digital Age The Spirit of networks. Palgrave Macmillan, 2010. – 272 p.
257. Friedenberg J. Artificial psychology: The quest for what it means to be human, 2011. – 296 p.
258. Fromkin V., Rodman R., Hyams N. An introduction to language. 7th ed. Thomson / Heinle, 2003. – 620 p.
259. Fuchs C. Foundations of critical media and information studies. New York: Routledge, 2010. – 400 p.
260. Geeraerts D. Introduction: A rough guide to cognitive linguistics // Cognitive linguistics: Basic readings. Geerarts D. (ed.). Berlin, New York: Mouton de Gruyter, 2006. – p. 1–28.
261. Gibbs R. Speaking and thinking with metonymy // Metonymy in language and thought. Papers presented at a workshop held June 23–24, 1996, Hamburg University. Amsterdam/Philadelphia: John Benjamins Publishing Company, 1999. – p. 61–76.
262. Goffman E. Frame analysis: An essay on the organisation of experience. N.Y.: Northeastern, 1974. – 600 p.
263. Goldstein E.B. Cognitive psychology: connecting mind, research, and everyday experience. Belmont, CA: Cengage Learning, 2011. – 444 p.
264. Goossens L. Metaphonymy: The interaction of metaphor and metonymy in expressions for linguistic action // Cognitive linguistics, 1990, N 1. – p. 323 – 340.
265. Hafri A., Papafragou A., Trueswell J. C. Getting the gist of events: Recognition of two-participant actions from brief displays // Journal of experimental psychology: General 142, 2013. – p. 880–905.

266. Halliday M.A.K. Language, context, and text: Aspects of language in a social-semiotic perspective. Oxford: Oxford University Press, 1989. – 127 p.
267. Hawking S. A brief history of time. Bantam Books, 1998. – 212 p.
268. Jackendoff R. Foundations of language: brain, meaning, grammar, evolution. Oxford: Oxford University Press, 2002. – 477 p.
269. Jackendoff R. Sense and reference in a psychologically based semantics // Talking minds: The study of language in cognitive science. Cambridge (Mass.); London: MIT press, 1984. – 283 p.
270. Johnson-Laird P., Byrne R. M. J. Deduction. Hove, UK, and Hillsdale, NJ: Lawrence Erlbaum Associates, 1991. – 243 p.
271. Just M.A., Carpenter P.A. A capacity theory of comprehension: Individual differences in working memory // Psychological review, 1992, N 99. – p. 122–148.
272. Katz J., Fodor J. The structure of semantic theory // Language, 30, 1963. – p. 170–210.
273. Kim D. Causation, nomic subsumption, and the concept of event // Journal of philosophy, 1973, v. 70. – p. 217–236.
274. Kintsch W. The Role of knowledge in discourse comprehension and production // Psychological review, 1988, N 95. – p. 163–182.
275. Koch P. Frame and contiguity: On the cognitive bases of metonymy and certain types of word formation // Panther K.-U., Radden. G. (eds.) Metonymy in language and thought. Amsterdam/Philadelphia: John Benjamins Publishing Company, 1999. – p. 139–167.
276. Koch P. Metonymy: unity in diversity // Journal of historical pragmatics, v. 2–2, 2001. – p. 201–244.
277. Kövecses Z., Radden G. Metonymy: Developing a cognitive linguistic view // Cognitive linguistics 9–1, 1998. – p. 37–77.
278. Kress G. Genre as social process. The powers of literacy: A genre approach to teaching writing. London: Falmer Press, 1993. – p. 22–37.
279. Lakoff G., Johnson M. Metaphors we live by. Chicago, IL.: The University of Chicago Press, 1980. – 256 p.

280. Lakoff G. Women, fire, and dangerous things. What categories reveal about the mind. Chicago: The University of Chicago Press, 1987. – 614 p.
281. Lakoff G., Turner M. More than cool reason: a field guide to poetic metaphor. Chicago: The University of Chicago Press, 1989. – 230 p.
282. Langacker R.W. Active zones // Concept, image, and symbol: The cognitive basis of grammar. Berlin and New York: Mouton de Gruyter, 1991. – p. 189–201.
283. Langacker R.W. Foundations of cognitive grammar. v. 2: Descriptive application. Stanford, CA: Stanford University Press, 1991. – 395 p.
284. Langacker R.W. Reference–point constructions // Cognitive linguistics 4, 1993. – p. 1–38.
285. Lee D. Genres, registers, text types, domains, and styles: Clarifying the concepts and navigating a path through the BNC jungle // Language learning and technology, 2001, v. 5, N 3. – p. 37–72.
286. Lipka L. An outline of English lexicology: lexical structure, word semantics, and word–formation. Tübingen: Niemeyer, 1992. – 211 p.
287. Lyons J. Semantics. Cambridge: Cambridge University Press, 1977, v. 1–2. – 897 p.
288. Martin R.M. On events and event–descriptions // Fact and existence. Oxford: Basil Blackwell, 1969. – p. 63–74.
289. Menzel P. Semantics and syntax in complementation. The Hague–Paris: Mouton, 1975. – 213 p.
290. Miller G.A. The magical number seven, plus or minus two: Some limits on our capacity for processing information // Psychological review 63 (2), 1956. – p. 81–97.
291. Miller C.R. Genres as social action // Quarterly journal of speech, v. 70, 1984. – p. 151–167.
292. Minsky M.A. Framework for representing knowledge, 1974 // <https://dspace.mit.edu/handle/1721.1/6089> (retrieved on 07.02.2015).
293. Mkhitaryan Y., Chubaryan A. Theoretical English grammar (seminars). Yerevan: YSU Press, 2008. – 521 p.

294. Nelson K. Event knowledge. Structure and function in development. Hillsdale, New Jersey: Lawrence Erlbaum Associates, Publishers, 1986. – 240 p.
295. Orlikowsky W. J., Yates J.A. Genres repertoire: the structuring of communicative practices in organizations // *Administrative science quarterly*, v. 39, 1997. – p. 541–574.
296. Palmer G.B. *Toward a theory of cultural linguistics*. Austin, USA: University of Texas Press, 1995. – 348 p.
297. Panther K-U., Thornburg L. Metonymy // Geeraerts D., Cuyckens H. (eds.) *The Oxford handbook of cognitive linguistics*. Oxford University Press, 2007. – p. 236–263.
298. Paradis C. Where does metonymy stop? Senses, facets and active zones // *Metaphor and symbol*, 19 (4), 2004. – p. 245-264.
299. Punter D. *Metaphor*. London, N.Y.: Routledge, 2007. – 158 p.
300. Quinton A.M. Objects and events // *Mind*, 1979, v. 88. – p. 197–215.
301. Radden G., Kövecses Z. Towards a theory of metonymy // Panther K.-U., Radden. G. (eds.) *Metonymy in language and thought*. Amsterdam/ Philadelphia: John Benjamins Publishing Company, 1999. – p. 17–59.
302. Radden G. Generic reference: An instance of the instance for type metonymy // Panther K.-U., Thornburg L., Barcelona A. Sánchez (eds.) *Metonymy and metaphor in grammar. (Human cognitive processing)* Amsterdam/Philadelphia: John Benjamins, 2009. – p. 199-228.
303. Ruiz de Mendoza Ibáñez F.J. Metaphor, metonymy and conceptual interaction: *Atlantis*, v. 19, 1997. – p. 281–295.
304. Ruiz de Mendoza Ibáñez, F.J., Pérez Hernández L. Metonymy and grammar: motivation, constraints and interaction // *Language and communication*, 2001. 21–4. – p. 321–357.
305. Ruiz de Mendoza Ibáñez F.J. High-level cognitive models: In search of a unified framework for inferential and grammatical behavior // *Proceedings of the international conference "Perspectives on metonymy"*, Lodz: Peter Lang, 2007. – p. 11 – 30.

306. Schank R.C. Dynamic memory: A theory of reminding and learning in computers and people. Cambridge University Press, 1982. – 272 p.
307. Schank R.C., Abelson R.P. Scripts, plans, goals, and understanding: An inquiry into human knowledge structures. Hillsdale (N. J.), 1977. – 236 p.
308. Schmid H. English abstract nouns as conceptual shells. From corpus to cognition. Topics in English linguistics, N 34. Berlin: Mouton de Gruyter, 2000. – 470 p.
309. Steen G. Genres of discourse and the definition of literature // Discourse processes, 28, 1999. – p. 109-120.
310. Sternberg R. J. Cognitive Psychology. Belmont, CA: Wadsworth, 2009. – 578 p.
311. Stockwell R.P., Minkova D. English words: history and structure. UK: Cambridge University Press, 2001. – 208 p.
312. Swales J. Genre analysis: English in academic and research settings. Cambridge: Cambridge University Press, 1990. – 261 p.
313. Taylor J. Linguistic categorization. Prototypes in linguistic theory. Great Britain: Oxford University Press, 1995. – 312 p.
314. Traugott E.C., Dasher R.B. Regularity in Semantic Change. Cambridge: Cambridge University Press, 2002. – 362 p.
315. Tulving E. What is episodic memory? // Current directions in psychological science, v. 2, N 3, 1993. – p. 67–70.
316. Ungerer F., Schmid H. An introduction to cognitive linguistics. London/New York, 1996. – 306 p.
317. Vendler Z. Linguistics in philosophy. Ithaca, N.Y.: Cornell University Press, 1967. – 203 p.
318. VoBhagen C. Opposition as a metonymic principle // Panther K.-U., Radden G. (eds.) Metonymy in language and thought. Amsterdam/Philadelphia: John Benjamins Publishing Company, 1999. – p. 289-308.
319. Warren B. Aspects of Referential Metonymy // Panther K., Radden G. (eds.) Metonymy in language and thought. Amsterdam/Philadelphia: John Benjamins Publishing Company, 1999. – p. 121–135.

320. Widdowson H.G. Directions in the teaching of discourse // Corder S.P. (ed.) Theoretical linguistic models in applied linguistics. New York: Pantheon Books, 1973. – p. 34–56.
321. Wilson N.L. Facts, events and their identity conditions // Philosophical studies, 1974, v. 25, N 5, – p. 303–321.
322. Yaros R. Is it the medium or the message? Structuring complex news to enhance engagement and situational understanding by non-experts. Communication research, 2006, 33 (4), – p. 285–309.
323. Ytreberg E. Moving out of the inverted pyramid: narratives and descriptions in television news. Journalism studies, 2001, 2 (3). – p. 357–371.

ԲԱՌԱՐԱՆՆԵՐ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՈՒՆԵՐ

1. Ахманова О.С. Словарь лингвистических терминов. М.: Советская энциклопедия, 1969. – 608 с.
2. Головин С.Ю. Словарь практического психолога. М.: АСТ, Харвест, 1998.
3. Кондаков Н.И. Логический словарь-справочник. М.: Наука, 1975. – 720 с.
4. Кондаков И.М. Психология. Иллюстрированный словарь. СПб.: Прайм – ЕВРОЗНАК, 2003. – 512 с.
5. Краткий словарь когнитивных терминов /Кубрякова Е.С., Демьянков В.З., Панкрац Ю.Г., Лузина Л.Г. / Под общей ред. Е.С. Кубряковой./ М.: МГУ, 1996. – 248 с.
6. Лингвистический энциклопедический словарь // Гл. ред. В.Н.Ярцева. М.: Советская энциклопедия, 1990.
7. Словари и энциклопедии на Академике. <http://www.dic.academic.ru/>
8. Советский энциклопедический словарь / Гл. ред. А. М. Прохоров. 4-е изд. М.: Советская энциклопедия, 1988. – 1600 с.
9. British National Corpus <http://corpus.byu.edu/bnc//>
10. Cambridge Advanced Learner's Dictionary. Cambridge University Press, 2005.
11. Cambridge Dictionary Online <http://www.cambridge.org/>
12. Collins Cobuild English Dictionary. GB.: Harper Collins Publishers, 1998.
13. Longman English Dictionary Online <http://www.ldoceonline.com/>
14. Macmillan Dictionary and Thesaurus <http://www.macmillandictionary.com/>
15. Merriam–Webster’s New Dictionary of Synonyms. USA: Merriam Company Publisher, 1978.
16. Oxford Advanced Learner’s Dictionary of Current English, Oxford, N.Y.: Oxford University Press, 2009.
17. Oxford English Dictionary <http://www.oed.com/>
18. The Corpus of Contemporary American English <http://corpus.byu.edu/coca/>
19. The Random House Unabridged Dictionary of the English Language. New York:

Random House, 1976.

20. Webster's New Dictionary of Synonyms. G&C. Merriam Company Publishers, 1984.
21. Webster's Ninth New Collegiate Dictionary. Springfield, Mass., 1990.
22. Կիրակոսյան Գ., Ղուշյան Հ., Տիգրանյան Ի. Տնտեսագիտական բացատրական բառարան, Երևան, Տնտեսագետ, 1999. – 460 էջ.

ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՑԱՆԿ

1. The Adage <http://www.adage.com>
2. The Atlantic <http://www.theatlantic.com>
3. The BBC <http://www.bbc.com>
4. The Bloomberg <http://www.bloomberg.com>
5. The Business Insider <http://www.businessinsider.com>
6. The Economist <http://www.economist.com>
7. The Financial Times <http://www.ft.com>
8. The Forbes <http://www.forbes.com>
9. The Fortune <http://www.fortune.com>
10. The Guardian <http://www.theguardian.com>
11. The Independent <http://www.independent.co.uk>
12. The Reuters <http://www.reuters.com>
13. The Telegraph <http://www.telegraph.co.uk>
14. The Times <http://www.thetimes.co.uk>
15. The Wall Street Journal <http://www.wsj.com>